

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՅՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**


**ՌԱՀՀԿ-Ի՝**

**15**

**ՏԱՐԵԿԱՆ**

**ՆՈՐ  
ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ**

**ՈՒԺԸ**



**ARMENIAN CENTER FOR NATIONAL AND  
INTERNATIONAL STUDIES**

ACNIS


AT

15

THE

POWER

OF NEW IDEAS



**АРМЯНСКИЙ ЦЕНТР СТРАТЕГИЧЕСКИХ И  
НАЦИОНАЛЬНЫХ ИССЛЕДОВАНИЙ**

**АЦСНИ**

**15**

**СИЛА  
НОВЫХ ИДЕЙ**

ՀՏԴ 32.001 : 327 (479.25) : 323 (479.25)  
ԳՄԴ 66 + 66.4 (2Հ) + 66.3 (2Հ)  
Ռ 153

Խմբագրակազմ՝ Գեորգ Լալայան  
Ռիչարդ Կիրակոսյան  
Կարապետ Կալենչյան  
Ձեռավորում՝ Աշոտ Թուրազյան

Ռ 153 ՌԱՀՀԿ-ն՝ 15 սարեկան. Նոր գաղափարների ուժը. —Եր.: Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, 2009.—496 էգ:

Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) ներկա հրատարակությունը Կենտրոնի ու Նրա հետ համագործակցաբար աշխատող վերլուծաբանների, փորձագիտական խմբի նոր պրոպոզիցիաների արգասիքն է: Իր հիմնադրման 15-ամյակի նախաշեմին ՌԱՀՀԿ-ը ֆազաբակաևությամբ հետախոյրվող շրգանակների, ընթերցողական լայն լսարանի գաշին է ներկայայնում աշխարհի, սարաձաշրգանի վերգին պարգայումների համասեմսում Հայասանի սերի ու դերի կարեւորման, մեր երկրին նեւվաձ մարսահրավերների հաղթահարման և առազընթայի արագայման ուղիները: Աշխատության մեգ համակողմանիորեն և վերլուծաբար արձարձվաձ են ներխղաբական ու ներազգային հրամայականները, սոյիալ-սեւեսական, մշակութային խնդիրները, արսաֆին ֆաղաբակաևության գերակայությունները, ապազգայի ուղենիշները և օրախնղիիր այլ թեմաներ: Հոբեյանական սարեգիրքը եզրափակում է ՌԱՀՀԿ-ի հովանավորաձ անշանյ ու կազմակերպությունների ամբողգական պանկը:

© 2009 Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ)  
© 2009 Armenian Center for National and International Studies (ACNIS)


Հողվաձազիրների սեասկեւները կարող են շհամընկեւել ՌԱՀՀԿ դիրքորոշումներին:  
The views of the authors do not necessarily reflect those of the Center.

Տարեգրի կամ Նրա առանշին հասվաձների հրապարակումը առանյ ՌԱՀՀԿ-ի գրավոր թույլսվության՝ արգեվում է:  
This publication may not be reproduced or published, in whole or in part, without the express written consent of the Center.

ԳՄԴ 66 + 66.4 (2Հ) + 66.3 (2Հ)

ՌԱՀՀԿ-ն՝ 15 սարեկան. Նոր գաղափարների ուժը  
Տպագրվել է 800 օրինակով և վաաաոֆի եւրակա շ:

ISBN 978-99941-2-297-4



**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՅՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ**



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## TABLE OF CONTENTS

ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ / INTRODUCTION / ВВЕДЕНИЕ .....10

ՄԵԿԱԲԱՆՈՒՄ. ՄԵՐ ԴԺԳՈՂՈՒԹՅԱՆ ՁՄԵՌԸ. ....17

COMMENTARY: THE WINTER OF OUR DISCONTENT. ....19

### ՄԱՍ I / CHAPTER I

#### ՆԵՐՔԻՆ/ՆԵՐԱԶԳԱՅԻՆ ԹԵՄԱՆԵՐ / DOMESTIC AND NATIONAL TOPICS

*Արմինե Ղազարյան*

ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՃՆՇՈՒՄԸ ..... 22

*Armine Ghazaryan*

THE PSYCHOLOGICAL PRESSURE OF THE POLITICAL  
MYTH IN ARMENIAN-TURKISH RELATIONS ..... 36

*Սիրանուշ Գալստյան*

ԿԻՆՈՆ ԵՎ ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
21-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ. .... 48

*Irina Ghaplanyan*

CONFLICT RESOLUTION: EMPOWERING AND ENGAGING CIVIL SOCIETY  
*THE CASE OF NAGORNO KARABAGH* ..... 76

*Ռիչարդ Կիրակոսյան*

ԳՆԱՀԱՏԵԼՈՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀՐԱԳԱԴԱՐԸ. .... 111

*Richard Giragosian*

ASSESSING THE NAGORNO KARABAGH CEASEFIRE. .... 115

**ՄԱՍ II / CHAPTER II**  
**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ / SOCIO-ECONOMIC TOPICS**

*Մարտտ Ատոփյան*  
ՄԱՐԴՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ . . . . . 119

*Թաթուլ Մանասերյան*  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ «ԳՐԻՊԻ» ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ԵՎ  
ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ . . . . . 165

*Ջոյա Թադևոսյան, Գիանու Գալոյան*  
ՀՀ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՈՒ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ  
ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ  
ԳՐԱՆՑ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ . . . . . 183

*Օվսեն Խրիսյոյան*  
ԱՐՄԵՆԻԱ-ՈՒԿՐԱԿՆԱԿԱՆ ԴԻՍԻՊԼՈՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ  
ԵՎՐՈՊԱՅԻ ԴԻՍԻՊԼՈՄԱՏԻԿԱԿԱՆ ԲԱԼԱՆՍ . . . . . 205

*Tatoul Manasserian*  
INTELLECTUAL PROPERTY PROTECTION AND ECONOMIC PRIORITIES  
IN TRANSITION ECONOMIES: THE CASE OF ARMENIA. . . . . 229

*Richard Giragosian*  
THE ECONOMICS OF ARMENIAN-TURKISH DIPLOMACY. . . . . 242

**ՄԱՍ III / CHAPTER III**  
**ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ**  
**ՀՆԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ / FOREIGN POLICY CHALLENGES AND POSSIBILITIES**

*Ռիչարդ Կիրակոսյան*  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ . . . . . 256

*Манвел Саркисян*  
ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В ПЕРИПЕТИЯХ  
МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ: ОЧЕРКИ ИСТОРИИ  
ДИПЛОМАТИИ УРЕГУЛИРОВАНИЯ (1994-2009 ГГ.). . . . . 286

*Dzovinar Derderian*

THE OSCE'S ASSESSMENT OF ELECTIONS AND ITS SIGNIFICANCE:  
THE CASES OF ARMENIA AND UKRAINE. . . . . 328

*George Hewitt*

ABKHAZIA AND GEORGIA: TIME FOR REASSESSMENT . . . . . 347

*Ռիչարդ Կիրակոսյան*

ՎՐԱՅԱԿԱՆ ՌԱԶՄԱԳԵՏՆԵՐԻ ՍԽԱԼՆԵՐԸ՝ ԶԱԽՈՂՄԱՆ ՊԱՏՃԱՌ . . . . . 360

*Richard Giragosian*

AN OPERATIONAL ASSESSMENT OF THE FIVE-DAY  
GEORGIAN-RUSSIAN WAR . . . . . 366

*Ilenia Santin*

MODELS OF PEACEKEEPING: UN AND NATO IN THE FIELD . . . . . 372

*Masis Maylyan*

THE KARABAGH ISSUE IN THE CONTEXT OF  
ARMENIAN-TURKISH RELATIONS . . . . . 385

## **ՍՍՍ IV / CHAPTER IV**

### **ՆԱՅԵՆՈՎ ԴԵՊԻ ԱՊԱԳԱՆ. ՆՈՐ ՀՐԱՍԱՅԱԿԱՆՆԵՐ / LOOKING TO THE FUTURE: NEW IMPERATIVES**

*Րաֆֆի Կ. Հովհաննիսյան*

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅ ԱԶԳԻՆ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ. . . . . 390

*Raffi K. Hovannisian*

AN OPEN LETTER TO THE ARMENIAN NATION  
PROTOCOLS AND PRECONDITIONS . . . . . 394

*Roger N McDermott*

THE 'ILLUSION' OF MILITARY POWER  
IN RUSSIA'S STRATEGIC POSTURE . . . . . 397

*Ռիչարդ Կիրակոսյան*

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ . . . . . 408

*Richard Giragosian*

THE MILITARY BALANCE OF POWER IN THE SOUTH CAUCASUS . . . . . 415

**ՄԱՍ V / CHAPTER V**

**ՆԱՅԵԼՈՎ ԴԵՊՐ ԱՆՅՅԱԼԸ. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ / LOOKING TO THE PAST: A CHRONOLOGICAL SUMMARY**

THE SOUTH CAUCASUS SINCE INDEPENDENCE:  
A CHRONOLOGICAL SUMMARY 1991-2009

*Covering Events in Armenia, Azerbaijan, Georgia and Nagorno Karabagh . . . . . 421*

**ՄԱՍ VI / CHAPTER VI**

**ՀԱՎԵԼՎԱԾ / APPENDIX**

ՀԱՅ-ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ \

THE ARMENIAN-TURKISH PROTOCOLS . . . . . 444

ՔԱՐՏԵՂՆԵՐ \ MAPS . . . . . 451

ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ \

OUR STRATEGIC PARTNERS . . . . . 464

## Մ ՈՒ Տ Ք Ի Խ Ո Ս Ք

Շարունակելով հատուկ ժողովածուով ամենամյա իր հողվածներն ու վերլուծական ուսումնասիրություններն ամփոփելու ավանդույթը՝ Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնը (ՌԱՀՀԿ) հրատարակել է «ՌԱՀՀԿ-ն՝ 15 տարեկան. Նոր գաղափարների ուժը» խորագրով հերթական տարեգիրքը, որն ընդգրկում է 2009թ. ամենանշանակալից անցուդարձերը: Ներկա աշխատությունը, ի տարբերություն մյուս տարիների, ընդգրկում է ավելի լայն ժամանակահատված և թեմաներ, քանի որ 2009-ը Կենտրոնի կյանքում նշանավորվեց որպես հիմնադրման 15-ամյակի տարի:

Տասնհինգ տարի առաջ ՀՀ առաջին արտգործնախարար Բաֆֆի Կ. Հովհաննիսյանի հիմնադրած ՌԱՀՀԿ-ն այս ընթացքում բարի համբավ է ձեռք բերել իբրև ազգային և միջազգային նշանակության բազմապիսի հարցեր արծարծող, արհեստավարժ ու անկախ հետազոտության հիմնադրյուր: Ամրապնդելով Հայաստանում առաջատար հետազոտական հաստատության իր եզակի դիրքը, Կենտրոնը մեծ ջանքեր է ներդնում հայոց պետականության ու նրա նորահայտ հանրակարգերի ուժեղացման գործում՝ ներկայացնելով հավասարակշռված խորհրդատվություններ հայ հասարակության և սփյուռքի բոլոր հատվածների համար:


Հայաստանում առաջատար ռազմավարական հետազոտական հաստատություն կամ “think tank” լինելը ՌԱՀՀԿ-ին պարտավորեցնում է կենսահույզ բոլոր հարցերի և պաշտոնապես վարվող քաղաքական ուղեգծի անկողմնակալ ու կառուցողական դիտազննման տիրույթում ներգրավել հայտնի վերլուծաբանների, փորձագետների և պաշտոնյաների հնարավորինս լայն շրջանակներին: Այսպիսով՝ սույն հրատարակությունը ներառում է ուսումնասիրությունների համապարփակ մի շրջանակ՝ սկսած հայաստանյան արտաքին քաղաքականությունից, վերջացրած համաշխարհային ու տարածաշրջանային զարգացումներով:

Ժողովածուն միաժամանակ ազգային հարցերի վերաբերյալ իրազեկությունը և քննադատական երկխոսությունը քաջալերելու միջոցով հանրային բանավեճի մակարդակը բարձրացնելու ավելի ծավալուն աշխատանքի մի մասն է: Այն նաև արտացոլում է մեր հեռահար նպատակներից մեկը՝ հավասարակշռել Կենտրոնի դերակատարությունը որպես մտավորական ամբողջականության, վերլուծական խորության և արհեստավարժ անաչառության խստիվ չափանիշների վրա հիմնված ստեղծագործ ու նորարար մտածողության ծանրաչափի:

Ի հավելումն՝ ՌԱՀՀԿ-ն պատրաստում է մի շարք այլ հրատարակություններ ու զեկույցներ, պարբերաբար անց է կացնում խորհրդաժողովներ, սեմինարներ և կլոր սեղանի շուրջ տարաբնույթ քննարկումներ, որոնց նպատակն է բարձրացնել հանրային իրազեկությունը և խորացնել քաղաքացիական ներգրավվածությունը հրատապ շատ ոլորտներում:

Հորելյանական տարեգիրքն, ըստ էության, ՌԱՀՀԿ անձնակազմի, նրա շուրջ համախմբված վերլուծաբանների և Կենտրոնի հետ սերտորեն համագործակցող լավագույն փորձագետների հավաքական ներուժի ու ջանադրության արգասիքն է: Այսպիսի համագործակցությունը ծառայում է ընդհանուր մի նպատակի, որն ուղղված է գիտական հիմքի և փաստական նյութի հիման վրա աշխարհաքաղաքական լուրջ ու նշանակալից զարգացումների վերհանմանը և, մասնավորապես, Հարավային Կովկասի տարածաշրջանի առջև ծառայած մարտահրավերների համատեքստում հայ ազգի և Հայաստանի Հանրապետության կենսական շահերի հետապնդմանը:

**Ռիչարդ Կիրակոսյան**  
*ՌԱՀՀԿ տնօրեն*



## INTRODUCTION

Continuing its tradition of publishing an annual compilation of essays and analytical studies, the Armenian Center for National and International Studies (ACNIS) has published its latest yearbook, entitled “ACNIS at 15: The Power of New Ideas,” covering some of the most significant issues for 2009. Unlike previous years, this edition spans an even broader period and encompasses a wider range of topics and themes, as 2009 marked the 15th year anniversary of ACNIS.

Since its founding fifteen years ago by Raffi K. Hovannisian, Armenia’s first Minister of Foreign Affairs, ACNIS has acquired a prominent reputation as a primary source of professional independent research and analysis covering a diverse set of national and international policy issues. And reflecting our unique position as a leading research institution in Armenia, we actively contribute toward the strengthening of the Armenian nation and its institutions and offer balanced policy recommendations to all segments of Armenian society and the Armenian diaspora.

As a leading strategic research institute or “think tank” in Armenia, ACNIS is committed to engaging prominent analysts, experts and officials in an active and constructive assessment of all issues and policies. In this way, this publication presents a set of papers covering a number of significant issues, ranging from Armenian foreign policy to larger regional developments. This publication is also part of our broader effort to raise the level of public debate by raising awareness and encouraging critical discourse on issues of critical concern.

This publication also reflects one of our core longer-term goals-- to leverage our role as a catalyst for creative and innovative thinking, based on rigorous standards of intellectual integrity, analytical depth and professional objectivity. In addition, ACNIS also produces a number of other publications and reports and regularly convenes conferences, seminars and roundtable discussions aimed at raising public awareness and deepening civic engagement in many pressing policy areas.

This annual yearbook, “ACNIS at 15: The Power of New Ideas,” is a product of the collective capacity and commitment of the ACNIS staff, its professional analysts, and other exceptional policy specialists working in close cooperation with our Center. Such collaboration is based on the shared goal of producing significant and serious scholarship assessing many of the most relevant challenges facing the Armenian nation, the Republic of Armenia, and the larger South Caucasus region.

**Richard Giragosian**  
*ACNIS Director*

## ВВЕДЕНИЕ

5 октября 1994 года в доме-музее знаменитого армянского писателя Ованнеса Туманяна состоялась торжественная церемония открытия Армянского Центра Стратегических и Национальных Исследований. Для свободной и независимой Армении это был беспрецедентный случай. Впервые в новообразованном армянском государстве был создан исследовательский центр по изучению, анализу и прогнозу политической, экономической, социологической и культурной деятельности новорожденного армянского государства. Во времена Советского Союза ни в одной из республиканских столиц, кроме Москвы, подобных центров не существовало. На государственном уровне в Москве работали Институт США и Канады российской Академии Наук, бессменным руководителем которого вплоть до 1995 года был академик Г.А.Арбатов, и сорокалетие которого отмечалось в прошлом году, институт Востоковедения РАН, директором которого многие годы был академик Е.М.Примаков и некоторые другие. Однако подобные исследовательские центры в СССР имели государственное подчинение и не были независимыми в своих оценках и решениях. В Армении же был создан независимый центр. Его теоретические и практические исследования не зависели ни от партийной принадлежности, ни от проводимой государственной политики. Время показало, что именно независимый центр интеллектуальной мысли способен выдавать наиболее объективные оценки и прогнозы, которые с высокой долей вероятности впоследствии становились реальностью.

Идея создания Армянского Центра Стратегических и Национальных Исследований (АЦСНИ) принадлежит первому министру иностранных дел Республики Армения Раффи К. Ованнисяну. Раффи К. Ованнисян родился в США в семье выдающегося американского историка Ричарда Ованнисяна. Ованнисян получил блестящее юридическое и политологическое образование в лучших университетах США и имел бы большую перспективу в росте своей карьеры у себя на родине, если бы не произошло страшное Спитакское землетрясение в 1988 году. Бросив все свои дела и работу в престижной международной юридической фирме, Раффи К. Ованнисян вместе со своей матерью, доктором медицинских наук, профессором Вардистер Ованнисян приезжают в Армению для оказания помощи пострадавшим в землетрясении армянам. С этого времени он безвыездно проживает в Армении. Его талант, глубокие знания и огромная эрудированность были замечены новым руководством РА, и он был назначен министром иностранных дел страны. Фактически создавать министерство иностранных дел пришлось с нуля. Опыта самостоя-

тельной международной дипломатической работы не было. Поэтому он широко стал привлекать к работе в министерстве кадровых армянских дипломатов, которые работали до этого в различных дипломатических миссиях СССР. После своего прошения об отставке с поста министра, Ованнисян, как многие предполагали и даже хотели, не возвращается в США, а остается со своей семьей в Армении.

Начиная с лета 1994 года, Ованнисян совместно с Тиграном Айрапетяном начинают разрабатывать концепцию создания Центра стратегических исследований и план воплощения этой идеи. Здесь необходимо отметить, что при поиске помещения для Центра, Айрапетян и Ованнисян столкнулись со значительными проблемами, поскольку как политический деятель, Ованнисян находился в опале и многие в этой связи боялись давать ему помещение в аренду. Например, руководство ереванского Метрополитена, с которым уже была достигнута договоренность об аренде помещения в их административном здании, впоследствии отказало им в этом. В этом вопросе помог бывший мэр города Еревана, который, кстати, к этому времени также был в опале, Амбарцум Галстян. Центр прописался в помещении театра им. Пароняна. В своем первоначальном виде кадровый состав Центра состоял из пяти человек. Это были Раффи Ованнисян – учредительный и исполнительный директор Центра, Тигран Айрапетян – заместитель директора и руководитель научных исследований Центра, Эмма Бегиджаниян – ирановед, Акоп Чакрян – турковед, Агаси Енокян – журналист и Карапет Каленчян – ответственный за техническое оснащение и административное функционирование Центра. Вся оргтехника, оборудование и мебель была предоставлена учредителем. Через несколько месяцев после этого в Центр пришли новые специалисты. Необходимо отметить преданность и увлеченность в работе «первопроходцев». Ведь все приходилось начинать с нуля. Опыта в подобной работе не было ни у кого. Однако было огромное стремление добиться признания и показать себя. Иногда даже ночевали в Центре ради выполнения намеченных планом работ.

Необходимо отдельно отметить неоценимый вклад, который внес Раффи Ованнисян в деле обучения и становления кадрового состава экспертов Центра. Дело в том, что на первом этапе эксперты Центра имели в основном историческое образование. У них были дипломы историков и востоковедов. Они прекрасно разбирались в новейшей истории. Однако для уровня экспертов стратегических центров этого мало. Самое главное для такого эксперта – на основе анализа того или иного явления дать собственную оценку и прогноз развития того или иного процесса. Это сумел привить Ованнисян своим работникам. Пусть на первом этапе политические оценки были не совсем точные, прогнозирование развития ситуации могло быть ошибочным, но самое главное – специалисты

постепенно научились анализировать и прогнозировать именно как эксперты стратегического центра, а не как историки или востоковеды. Заслуга первого в стране стратегического центра, основанного Раффи Ованнисяном, и состоит в том, что он стал первым научным центром в Армении, где были воспитаны полноценные кадры политологов, экономистов, социологов, которые могли давать прогнозы на перспективу. Лучшим подтверждением этому впоследствии стало совпадение с высоким процентом вероятности прогнозов, которые давали эксперты Центра в своих аналитических исследованиях. Заслуга Центра состоит еще и в том, что многие специалисты, прошедшие его школу, впоследствии сами открывали подобные центры, становились работниками МИДа, депутатами НС РА, советником президента НКР и занимали другие ответственные посты.

Сегодня Центр возглавляет известный политолог Ричард Киракосян. За последний год Центр заметно прибавил в активности. Широко проводятся семинары по самым актуальным проблемам внутренней и внешней политики нашего государства, его взаимоотношений с соседями и великими державами. Подробно рассматриваются вопросы безопасности в области информационных технологий, энергетики, обороны и экономики. Центр консультирует многие министерства, в частности, министерство обороны, депутатский корпус Национального собрания Армении и другие организации. Аналитические работы Центра в открытом режиме выставляются на сайте Центра. Ведущие эксперты Центра почти каждый день дают интервью, комментарии и оценки по тем или иным процессам внутриполитической и внешнеполитической деятельности государства и, что важно, представляют рекомендации по решению актуальных вопросов жизнедеятельности страны. Некоторые работы Центра переводятся и печатаются на страницах изданий подобных стратегических центров за рубежом.

Помимо этого, Центр является эффективной кузницей кадров и проводит огромную работу по подготовке и совершенствованию своих профессиональных возможностей молодых специалистов, решивших посвятить свою профессиональную деятельность политологии, экономике, социологии и вопросам безопасности. В центре стажировются студенты армянских вузов и из других стран, например, – США, Франции.

Центр финансируется благодаря пожертвованиям армянской диаспоры, которая верит в наши возможности и полностью нам доверяет. Пожелаем же нашему Центру дальнейших успехов и удач в своей научной деятельности.

**Карпет Каленчян**

*Административный директор АЦСНИ*



## ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ. ՄԵՐ ԴԺԳՈՒԹՅԱՆ ՁՄԵՌԸ

**Մ**ենք ավարտեցինք մեր հանրային ծառայության 15-րդ տարին, և ՌԱՀՀԿ-ն՝ որպես Հայաստանի առաջատար անկախ «think tank»-ներից մեկը, թեակոխեց նշանակալից նոր փուլ: Հայաստանում իր աշխատանքային ոճին ու ոգուն հավատարիմ՝ Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը շարունակում է նոր փութաջանությամբ և վճռականորեն լծվել հանրային տեղեկացվածության շենք բարձրացնելու, հրատապ այն խնդիրների ու մարտահրավերների շուրջ ազգային բանավեճ ծավալելու առաքելությանը, որոնց այսօր Հայաստանը բախվում է:

Ինչպես ցույց տվեց տարին, պետության դեմ ծառայած մարտահրավերները միայն կարծրանում են: Եվ դրան համեմատ ՌԱՀՀԿ-ը կրկնապատկում է ջանքերը՝ նպաստելու համար լուրջ մարտահրավերներից յուրաքանչյուրի դիմագրավմանն ու հանգուցալուծմանը: Իսկ առկա մարտահրավերները, որոնք երբեք այսքան լուրջ չեն եղել, կարող են հարցականի տակ դնել Հայաստանի՝ որպես ժողովրդավարական արդի պետության, սպագա ընթացքը և վտանգել հայ ազգի ամբողջականությունն ու անվտանգությունը: Ներկա սպառնալիքների ու մարտահրավերների դաժանությունը միեւնույն ժամանակ համակցված է ներքին և արտաքին ճնշումների միահյուսման սարսափազդու տեսլականով:

Ի հետևանս ժողովրդավարական բարեփոխումների ուղուց մեր երկրի ամենախոր հետընթացներից մեկի՝ 2008թ. մարտյան իրադարձությունների, որոնք ավարտվեցին նախագահական ընտրությունների արդյունքների հետ կապված իշխանությունների և ընդդիմության միջև ուժգին ընդհարմամբ, Հայաստանը պարուրվեց վստահության ճգնաժամով:

Ներքին կյանքում ավելի խորը ժողովրդավարության և ազգային երկխոսության հրամայականը՝ իբրև այս ճգնաժամի քաղաքական ճգնաժամը հաղթահարելու համադարման, համառորեն մերժվում է իշխանությունների կողմից: «Դժգոհության ձմեռվա» այս ընթացքում հայաստանյան հասարակությունը բախվում է բնակչության մեծամասնության դժգոհությանը, ապատիային կամ էլ քաղաքական անտարբերությանը, ինչը խոստանում է քաղաքական փակուղի, հաշվետու ու թափանցիկ կառավարման բացակայություն և ժողովրդավարության «դեֆիցիտ»:

Եվ քաղաքական փակուղու այս հենքին Հայաստանը տակավին մնում է խիստ բեռնացված ու քաղաքականացված: Ողջ տարվա ընթացքում ՌԱՀՀԿ-ը պաշտպանել է ազգային երկխոսության պահանջը՝ ոչ միայն առաջացած փակուղու խնդիրը լուծելու, այլև ահագնացող

այս ճնշման դեմ Հայաստանի դիրքը եւ կայունությունը վերականգնելու համար:

Բայց 2009 թվականը նաեւ ջրբաժան էր Հայաստանի արտաքին քաղաքականության համար: Որոշ առումով կարիք ունենալով լեզիտիմության պակասը փոխհատուցելու հաջող արտաքին քաղաքականությամբ, Հայաստանի կառավարությունը ծանրաբեռնվել է դիվանագիտության մի նոր ուղեգծով՝ փնտրելով Թուրքիայի հետ հարաբերությունների «կարգավորում»: Անկախ նրանից, թե դրսի համար ինչքան գորեղ կարող է թվալ նման քաղաքականությունը, հայկական ինքնության հիմնարար սկզբունքների անխոհեմ գրավադրմանը բնորոշ վտանգները՝ ներառյալ Հայոց ցեղասպանության ժառանգությունը, հարցականի տակ են դնում Թուրքիայի հետ «առանց նախապայմանների» քաղաքականության ողջամտությունը:

Ի հավելումն՝ Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը շարունակում է ենթարկվել նոր ճնշումների, որոնք շատ հստակ արտահայտվում են Ադրբեջանի ռազմատենչ հռետորաբանությամբ եւ պատերազմի չդադարող սպառնալիքներով:

Հաշվի առնելով այս սպառնալիքներն ու մարտահրավերները, ՌԱՀՀԿ-ն, ինչպես միշտ, ջանադիր է անաչառ հետազոտություններ եւ վերլուծություններ արժարժելիս, հանրային քննարկումներ ու միջոցառումներ կազմակերպելիս, մեր խորաթափանց հայացքն ու խորհրդատվությունները են հայ ժողովրդին, են Սփյուռքին, ինչպես նաեւ միջազգային հանրությանը մատուցելիս: Բայց սա համազգային ջանք է, եւ միայն ձեր աջակցությամբ մենք կարող ենք հաղթահարել արդի դժվարությունները, որոնց բախվում է հայ ազգը:

**Ռիչարդ Կիրակոսյան**  
*ՌԱՀՀԿ տնօրեն*

## COMMENTARY: THE WINTER OF OUR DISCONTENT

As we have just completed our fifteenth year of public service, ACNIS has surpassed a significant new milestone as one of Armenia’s leading independent “think tanks.” Matching our previous record of work in Armenia, ACNIS has continued in its fifteenth year to garner a renewed sense of activism and even greater commitment to raising public awareness and elevating the national debate of the many issues and challenges facing Armenia today.

Yet as this year has only further demonstrated, the scale and scope of the challenges facing Armenia are only mounting. But ACNIS is only redoubling its efforts to contribute to addressing, and resolving, each of these serious challenges.

The challenges now facing Armenia have never been so serious, questioning the course of Armenia’s future as a modern democratic state and threatening the very integrity and security of the Armenian nation. At the same time, the severity of these threats and challenges are also matched by a daunting combination of internal and external pressure.

In the wake of one of the country’s most profound setbacks to democratic reform, the crisis of March 2008 culminated in a violent clash between the authorities and opposition over the results of yet another presidential election that was anything but free and fair. Internally, Armenia’s need for deeper democracy and national dialogue remains hindered by a stubborn refusal by the Armenian authorities to acknowledge and accept the imperative to resolve this lingering political crisis.

During this “winter of our discontent,” Armenian society is also plagued by this stalemate, with much of the population no longer content with its prior apathy or political disinterest but is now burdened by a lack of accountable and transparent governance and plagued by a “deficit of democracy.”

Against this backdrop of political stalemate, Armenia remains far too polarized and overly politicized. Throughout the year, ACNIS has advocated the need for a national dialogue, to not only resolve this stalemate but to also restore Armenia’s standing and stability in the face of mounting pressure.

But 2009 was also a watershed year in Armenian foreign policy. In some ways desperate for a foreign policy success in the face of its lack of legitimacy, the Armenian government has embarked on a new course of diplomacy seeking to “normalize” relations with Turkey. No matter how bold such a policy may seem to outsiders, the dangers inherent in a reckless mortgaging of the fundamental tenets of Armenian identity, including the legacy of the Armenian Genocide, call into the question the prudence of pursuing a policy of “no preconditions” toward Turkey.

In addition, the security of Mountainous Karabagh continues to be assailed, coming under renewed pressure, as demonstrated by Azerbaijan’s repeated warmongering rhetoric and militant threats of war.


In light of these diverse threats and challenges, ACNIS is as active as ever in producing objective research and analysis, convening public discussions and events, and providing regular analysis to both the Armenian people and the Diaspora, as well as to the international community. But this is a national effort, and only with your support can we hope to surmount the present difficulties facing the Armenian nation.

**Richard Giragosian**

*ACNIS Director*



**ՆԵՐՔԻՆ/ՆԵՐԱԶԳԱՅԻՆ ԹԵՄԱՆԵՐ**  
**DOMESTIC AND NATIONAL TOPICS**



## Արմինե Ղազարյան

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի փորձագետ

### ՀԱՅ-ԹՈՒՐ ԲԱՆԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՆԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՃՆՇՈՒՄԸ

Այո, մենք խուսափում ենք հայերի Յեղասպանության թեմայով լուրջ քննարկումներից՝ վախենալով մեր նկատմամբ սեփական հավաստի եւ ինքնավստահության կորստից:

...եթե մենք սեփական պատմությունը դիտարկենք հայերի Յեղասպանության տեսանկյունից, ապա կպարզվի, որ մեր ազգային կերպարը բավականին խնդրահարույց է:

Թաներ Ալչամ

Հայ-թուրքական քաղաքական հարաբերությունները Հայաստանի, ինչպես նաեւ Թուրքիայի արտաքին քաղաքականության դժվարագույն հարցերից են: Ավելին՝ այն հիմնարար եւ կարեւոր նշանակություն ունի Հարավային Կովկասի ապագա քաղաքական ու տնտեսական դիրքավորումների համատեքստում:

Ժամանակակից հայ-թուրքական հարաբերությունները, դրանց շարժընթացը վերլուծելիս պետք է հստակ պատկերացնել, թե երկու ժողովուրդների փոխհարաբերությունների պատմական փորձը եւ պատմական հիշողությունը որքանով են ընդունակ ազդելու ներկայիս առաջնորդների ու քաղաքական ընտրանու վարքագծի, քաղաքականության եւ կողմնորոշումների վրա: Մինչեւ 2008 թվականը հայ-թուրքական հարաբերությունների իրավիճակը բնութագրվում էր փոխադարձ անվստահության բարձր մակարդակով, տարածաշրջանային մի շարք կարեւորագույն խնդիրների վերաբերյալ երկու երկրների մոտեցումների տարբերություններով, անվտանգության տարբեր համակարգերի մեջ ընդգրկվելու ձգտմամբ եւ արտաքին քաղաքականության մեջ փոխադարձ բացառմամբ: Ներկայումս գոյություն ունեցող փոփոխությունները թերեւս միայն դիվանագիտական որոշակի հարաբերությունների հաստատումն են: Միեւնույն ժամանակ Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների իրական կարգավորումը բխում է հայ եւ թուրք ժողովուրդների արմատական շահերից:

Հայ-թուրքական հակասությունների ծանրակշիռ մասն ընկած է պատմական իրողությունների էության անհամապատասխան, ոչ համարժեք ընկալման հարթության վրա: Ազգերի եւ պետությունների մի-

ջեւ հարաբերությունները չեն կարող հիմնվել պատմական հիշողության ընտրողականության կամ ամբողջական ամենգիայի վրա:

«Երկար տարիների ընթացքում փոխադարձ անբարյացակամությունը (թշնամու կերպարը) երկու հասարակություններում գտնվել է կայուն բարձր մակարդակում: Մտադադությունն ու առաջընթացը ամենեւին էլ առանց այլընտրանքի արժեքներ չեն երկու հասարակություններում, որոնք ջանում են անցում կատարել «սառեցված պատերազմից» դեպի կայուն խաղաղություն: Միամտություն է կարծել (ինչպես դա անում են որոշ ոգետրված խաղաղարար-առասպելաստեղծներ), թե այժմ ամբողջ հայ եւ թուրք հասարակությունները ծարավի են խաղաղության՝ առանց նախապայմանների: Վտանգավոր միամտություն է, քանի որ մեծ ակնկալիքների ձեւավորումը հղի է նույնքան մեծ հիասթափություններով: Միեւնույն ժամանակ՝ շուտափույթ խաղաղության հակառակորդներին չարամիտ հետադիմականներ եւ առաջընթացի թշնամիներ համարելը պարզունակ կլինեք: Նրանք նույնպես ունեն իրենց ողջամիտ տրամաբանությունը, իսկ նրանց մտավախությունները հիմնված են պատմական որոշակի գիտելիքների ու փորձի վրա (այլ հարց է՝ կարելի եւ պէտք է արդյոք անցյալը բացարձակացնել):»

«Թշնամու կերպարի մասին հայերի պատկերացումների վրա անուղղելի հետեւանք ունեցավ Օսմանյան կայսրությունում հայերի Յեղասպանությունը՝ սկսած 19-րդ դարի 90-ական թվականներից եւ վերջացրած հայերի գրեթե ամբողջական ոչնչացմամբ՝ 1915 թվականին»<sup>2</sup>:

Հայ-թուրքական հարաբերությունների բնականոնացման արդյունավետությունը որոշվում է քաղաքական գործընթացների իրավիճակով եւ շարժընթացով, որը տեղի է ունենում Թուրքիայի եւ Եվրոպական Միության, Ռուսաստանի, Միացյալ Նահանգների միջեւ՝ իրենց տարածաշրջանային քաղաքականության մեջ հայկական գործոնի նշանակությանը հավասար: «Հայկական հարցը» շարունակում է ավանդաբար շահարկվել, օգտագործվել արեւմտյան գերտերությունների կողմից որպես Թուրքիային ճնշելու միջոց, ավելի բարենպաստ պայմաններ ապահովելու համար՝ Մերձավոր Արեւելքում եւ Հարավային Կովկասում իրենց ռազմավարությունն իրականացնելու ընթացքում: Դարասկզբին եւս գերտերությունների ռազմավարական շահերն այս տարածաշրջանում բախվել են, եւ կրկին բախման բացասական հետեւանքները գլխավորապես բաժին են հասել հայերին: Պատմական որոշ տեղեկությունների դիտարկումը վկայում է, որ հայերը եւ թուրքերը դարձել են այդ պետությունների շահերի զոհը, եւ մասնավորապես «թշնամու կերպարի» ձեւավորումը միտումնավոր ստեղծված երեւոյթ էր: Հասարակության մեջ թշնամու կերպարի առաջացման պայմանները եւ ձեւավորումը, ինչպես նաեւ երկրի ճակատագրի վրա նրա ազդեցությունն անցյալում, ապագայում հայ-թուրքական հարաբերությունների հետ կապված առաջնային խնդիր են: Եթե կա թշնամու կերպար կամ այն ստեղծվել է

Ժամանակին, այս դրա համար լուրջ պատճառներ են եղել:

Սակայն տեսանելի թվացող պատճառներն իրականում կարող են թշնամու ստեղծված կերպարի հետեւանքը լինել, այսինքն՝ թուրքի թշնամական կերպարը, որպես այդպիսին, հայերի մեջ ամրապնդվել է ոչ թե Ցեղասպանությունից հետո, այլ ավելի վաղ, երբ թուրքերի մեջ հայի՝ թշնամու կերպարի ձեւավորմամբ եւ անհանդուրժողականության սերմանմամբ ի կատար ածվեցին հայկական էթնիկ գտումները: Մտացածին կերպարը պատմաքաղաքական պատճառներով հաստատվում, խարսխվում է հոգեբանական որոշ օրինաչափությունների օգտագործմամբ:

«Լայնորեն տարածված եւ եռանդորեն շրջանառվում է Օսմանյան կայսրության մեջ հայերի եւ թուրքերի միջեւ դարավոր ատելության մասին առասպելը: Դրա հետ կապված՝ մասնավորապես հղում են կատարում հայերի զանգվածային կոտորածին, որն իրականացվել է սուլթան Աբդուլ Համիդ 2-ի կառավարման տարիներին»<sup>3</sup>:

«Ցեղասպանության իրականացմանը մասնակցել են ոչ միայն թուրքեր, սակայն սատարելու համար «դարավոր թշնամության» առասպելը, քարոզվում է «արյունոտ յաթաղանով թուրքի» կերպարը: Բայց եթե այդ առասպելը այդպես համառորեն պահպանում-ամրապնդում են, նշանակում է ինչ-որ մեկին դա պետք է/<sup>4</sup>: Իսկ դա պետք է նրանց, ում վրա ընկած է մարդկության դեմ հանցագործության, մասնավորապես՝ Ցեղասպանության մեղքը:

Միջազգային հասարակարգերի առանձին սուբյեկտների համար «հայերի եւ թուրքերի դարավոր թշնամության» այդքան «հարմար» առասպելը շարունակում է տարածում ունենալ դիվանագիտական շրջանակներում: «Հարմար» նրանով, որ, առաջին հերթին, այդպես հեշտ է կոծկել ճշմարտությունը Ցեղասպանության մասին, երկրորդ՝ հնարավորություն է տալիս խաղաղապահների քողի տակ անցկացնել իրենց համար շահավետ քաղաքականություն»<sup>4</sup>:

«Եվրոպայի քմահաճ խաղերը Հայկական հարցում դժվարացնում էին հայերի դրությունը Թուրքիայում: Եվրոպական տերությունների փոփոխական եւ հաճախ հակասական քաղաքականությունը չէր թեթեւացում հայերի վիճակը, ավելին՝ խորացնում էր սուլթանի կասկածներն իր հայ հպատակների նկատմամբ՝ որպես պատրվակ օտարերկրյա շարունակական միջամտության: Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ն՝ տեղի տալով եվրոպական ճնշմանը, 1895 թվականին հռչակեց Հայկական բարենորոգումների ծրագիր, սակայն, ինչպես արդեն պատահել էր նախկինում, արտաքին միջամտությունը չամրապնդվեց ուժային միջոցներով: Եվրոպական միջամտությանը Աբդուլ Համիդի պատասխանը եղավ 150.000-200.000 հայերի կոտորածը»<sup>5</sup>:

Ազգի հանդեպ թեկուզեւ փոքր տոկոսային հարաբերությամբ արտահայտված թշնամանքի պատճառները կարելի է փնտրել տեւապես

քարոզվող «թշնամու կերպարի» մեջ: Վաղ ձեւավորված դիրքորոշումների արմատական փոփոխությունները հոգեբանական ազդեցության օգնությամբ բավականին դժվար են: Խնդիրն այն է, որ դիրքորոշումները ձեւավորվում են երկար ժամանակահատվածի ընթացքում, ըստ ազգի արժեքային համակարգի՝ կրում են հաստատուն բնույթ: Դիրքորոշումները ձեւափոխելու համար անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել հոգեբանական ազդեցություն, օգտագործել տարբեր համոզիչ փաստարկներ, տարբեր առիթներով ամրապնդել դրանք եւ ժամանակ առ ժամանակ ուժեղացնել այդ փաստերի համոզիչ լինելը:

«Կերպարների կարծրատիպացման օրինակներից մեկը Երկրորդ աշխարհամարտի ժամանակ կոնֆլիկտային հարաբերությունների պայմաններում ամերիկացիների կողմից Ճապոնացիների ընկալումն էր: Այն բնութագրվում է նրանով, որ Ճապոնացին ամերիկացու աչքում կորցրեց իր անհատական գծերը եւ ընկալվում էր որպես «ընդհանրական Ճապոնացի», այսինքն՝ այդ տարիների պատմական իրադարձությունների համատեքստում որպես սոսկ թշնամի: **Դա հրահրեց ամերիկացիներին համապատասխան «գործողությունների»**<sup>6</sup>:

Թուրքերի կողմից հայերի (նաեւ հույների) կոտորածը մի շարք պատմաբաններ բացատրում են թուրք ժողովրդի կրոնական մոլեռանդությամբ, ազգայնամոլությամբ, պանթյուրքիզմի գաղափարախոսությամբ, իսկ մի շարք այլ պատմաբաններ հանգել են եզրակացության, որ հայերի կոտորածները պետք է կոչել ոչ այլ կերպ, քան «հայասպանություն», հայերի բնաջնջում: «Իթթիհադական դիկտատուրան օգտվեց Առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ ազատելու կայսրությունը Հայկական հարցից՝ բնաջնջելով հայերին»<sup>7</sup>:

Ավելի լայն թուրքական զանգվածները թերեւս կարիք ունեին «լուսավորվելու», քարոզվելու եւ նոր միայն ընդգրկվելու «գյավուրների» (իմա՝ անհավատների) ջարդերին: Այստեղ **հոգեբանական գրոհը՝ ազգայնամոլ գաղափարական քարոզչությունն այն «դրոշմ» է, որը «ծածանվեց» սեփական ժողովրդին հավաքագրելու եւ ընդգրկելու համար: Թշնամանքի ոգին տարածելու համար նպաստավոր էին թուրք ազգին կամ էթնիկական խմբին բնորոշ որոշ սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններ:** «Երկար տարիներ Թուրքիայում ապրած, թուրք հասարակական շատ գործիչների անձամբ ճանաչած հայ նշանավոր գրող, հրապարակախոս Ավետիս Ահարոնյանը բացարձակապես անտրամաբանական, վայրագ է համարել, որ ամոթալի այդ գործողությունները ղեկավարել են այն թուրք երիտասարդները, ովքեր տասնյակ տարիներ դաստիարակվել են Եվրոպայում: «Սորբոնն ավարտած, Ֆրանսիական մեծ հեղափոխության պատգամները սերտած՝ իրենց հայրենի մթնոլորտի մեջ մի-մի Չինգիզ խան ու Լենկթեմուր դարձան...»: Եվ պատասխանը Ահարոնյանը գտնում է պատմական անցյա-

լի ավանդույթների մեջ՝ այն բանում, որ թուրքը միայն 6-7 դար առաջ իր անապատները թողած՝ «տակավին պահում է այդ անապատների ոգին, այն անծիր ու դեղին հարթությունների, ուր քաղաքակրթությունը կարավանների թիկունքի վրա է ծվարած, ընտանիքը՝ վրանի տակ կամ ծածկված սայլերի մեջ, եւ առաքինությունը՝ միայն սրի ծայրին»<sup>8</sup>: Թերեւս Եվրոպայում ստացած կրթությունը նպաստել է իրենց էթնիկական տեսակի պահպանմանն ուղղված գիտակցության լայնացմանը, ազգային շահի գերակայությանը: Այլ խնդիր է գործունեության «մեթոդաբանական» ընտրությունը:

«Յուրաքանչյուր ռասա ունի նույնքան հաստատուն հոգեկան կառուցվածք, ինչպիսին իր անատոմիական կառուցվածքն է: Ազգի հոգին արտահայտվում է բարոյական եւ մտավոր առանձնահատկությունների ընդհանրությամբ (արտացոլում են ազգի հոգին), որոնք նրա ամբողջ անցյալի, նախնիների ամբողջ ժառանգության եւ նրա վարքը խթանող, ոգեշնչող պատճառների համադրությունն (սինթեզը) են»<sup>9</sup>:

**Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների տեսակետից բավականին պարզ է՝ արժեզրկել այն, ինչը պիտի ոչնչացվի, քանզի ազրեստրի կողմից պետք է «պատճառաբանված» լինի իր վարքը: Առհասարակ, «դահիճը» կարիք ունի հրեշացնելու (կա նաեւ հակադարձ հոգեբանական ֆենոմենը՝ ստորացնելու) իր զոհին, հարկադրելու նրան որեւէ արարք գործելու, որը մոտ լինի իր կատարածին, քանզի հենց դա է միակ արդարացումը, որ նա կարող է գտնել: Կամ էլ «դահիճին» քարոզվում է «զոհի» վտանգավոր, հրեշավոր լինելը: Ամեն դեպքում պետք է «աղավաղել»՝ արժեզրկել կամ ուռճացնել «օբյեկտը», որպեսզի հոգեբանորեն հնարավոր լինի ուժ կիրառել: «Ամենդ մարդկանց չարչարում էին, որ երեսակայական խոստումներ կորզեն՝ հետագայում իրենց բռնագաղթն արդարացնելու համար: Կային վայրեր, ուր հայերն ու թուրքերը համերաշխ ապրում էին կողք կողքի, բայց երիտթուրքերի պատգամաբերները միամիտ ժողովրդին խաբելու համար ամենաանհավանական լուրերն էին տարածում»<sup>10</sup>: «Բոլոր դահիճները,-պատմում է Մարզվանի քուլեջի մի ամերիկացի միսիոներ,- նախօրոք զոհին ասում էին, թե ինչ տեղեկություններ են սպասում նրանից եւ ծեծում էին այնքան, մինչեւ լսում էին իրենց ուզածը:**

...Տեր հորը մի քանի ուրիշ գյուղացի ավազակների նման զինել են մինչեւ ատամները եւ տարել Քերնախի մահմեդական թաղը՝ թուրքերին հայերի դեմ գրգռելու համար: Այս ամենից հետո բանտ են նետել»<sup>11</sup>:

Ահավասիկ թուրքական ազգային «Ես»-ի փնտրտուքներում եւ «ձեւավորման» ընթացքում հայերի նկատմամբ ազրեստիվ ու անմարդկային վարքագծի պաշտպանական արդարացման, ռացիոնալացման մի օրինակ. «Հայերն արժանի են կատարվածին (այստեղ՝ ջարդերը), վաստակել են: Տասնյակ տարիների ընթացքում ապրելով Օսմանյան

տան տանիքի ներքո, նրանք վայելել են դավանանքի այնպիսի ազատություն եւ մշակութային գործունեություն, որը գոյություն չի ունեցել արեւմուտքի ոչ մի երկրում: Անգամ պատերազմի ժամանակ նրանց հանգիստը չի խանգարվել, քանի որ նրանք բանակում չեն ծառայել: Չբաղվել են առետրով եւ ստացել մեծ շահույթներ: Իսկ թուրքերի որդիները մահանում էին ռազմաճակատում, որպեսզի հայերը լավ ապրեն: Իրենց համար այդպիսի պայմաններ ստեղծած պետությանը շնորհակալ լինելու փոխարեն հայերը ձգտում էին առանձնանալ Թուրքիայից եւ վճռել թուրքերին այդ հողերից. Պատմությունը չունի նման ապերախտության այլ օրինակ\*»: Պաշտոնական տարբերակում էլ տիրում է «վրեժի» եւ «պատժի» ոգին»<sup>12</sup>:

Առհասարակ թշնամու կերպարը տարբեր հասարակություններում եւ մշակույթներում ունի ինչպես որոշակի ընդհանրություններ, այնպես էլ առանձնահատկություններ: Ընդհանրությունների շարքում գործածվում են ընդունված կարծրատիպեր, օրինակ՝ դաժան, օտար, հանցագործ: Ընդհանուր չափանիշ է նաեւ էթնիկական պատկանելիությունը: Սակայն նույն էթնիկական պատկանելիության առանձին տարրեր, հատկանիշներ կարող են դուրս բերվել եւ առավել «անընդունելի համարվելով»՝ կոնկրետ թշնամու կերպարի մեջ, խորանալ: Օրինակ՝ հայ էթնոսի խելքի եւ աշխատասիրության արդյունքների շնորհիվ մեծ նախանձ եւ անհանդուրժողականություն, այնուամենայնիվ, առաջացել են հարեւան մի շարք պետությունների էթնիկական մեծամասնության կողմից (Թբիլիսիի, Բաքվի ամենանշանավոր ճարտարապետական կառույցները հայերի կողմից կառուցված լինելը, մշակութային, քաղաքական ընտրախավում նշանակալի դիրքեր գրավելը): Օսմանյան կայսրության մեջ նույնպես հայերն ապրել եւ աշխատել են, որոնց մեջ եղել է բավականաչափ հարուստ եւ կիրթ զանգված (ինչը փաստել են գաղթած շատ հայ ընտանիքներ): Այսինքն՝ նախքան կոտորածները «թշնամու կերպար» առասպելը գոյություն չի ունեցել հայ-թուրքական հարաբերություններում: «Բնական է, որ մշտապես հետապնդվող էթնիկական եւ կրոնական փոքրամասնությունը չէր կարող տիրապետել այդպիսի հարստության: Ավելին՝ չէր կարող լինել լոկոմոտիվը եւ հիմքը գյուղատնտեսության ոլորտում, արտադրությունում, արդյունաբերության եւ առետրի մեջ, մշակութային եւ պետության կյանքի այլ բնագավառներում: Եվ այս ողջ ընթացքում թուրքերն ու հայերը գտնվել են դարավոր թշնամանքում»<sup>13</sup>: Հայ-թուրքական թշնամանքը մինչեւ ջարդերը կարելի է դիտարկել, որպես թուրքերի կողմից քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ կրոնական անհանդուրժողականության, գուցե դիրքորոշումների ու կարծրատիպերի մակարդակում, որոնք, բնականաբար, կարող են նախադրյալներ հանդիսանալ «մեծ թշնամանքի», հատկապես՝ եթե զանգվածային գիտակցության մեջ տեսակի պահպանման «դրոշ» է բարձրացվում:

Առասպելաստեղծ «մեքենաներն» աշխատում են միշտ: Ինչ-որ առումով արդարացվում է պատկերացումը, որ զանգվածային գիտակցությունն իր էությանը առասպելական է: Ժամանակակից աշխարհում զանգվածային շփումը եւ զանգվածային մշակույթն աճեցրել են առասպելաբանության նոր դիտանկյուն<sup>14</sup>: Թուրքիայում հայ «թշնամու» կերպարը, ըստ «Հյուրիէթի» լրագրողի<sup>15</sup>, ամփոփվում է որպես՝

1. ԱՍԱԼԱ
2. ՀՅԴ (դաշնակ, «Հայ դատ»)
3. սփյուռք (որտեղ Ցեղասպանության խնդրի արժարժումն են տեսնում):

Հայաստանում, նույն մակարդակի դիտարկման դեպքում (արագ մոնիթորինգ) «թշնամու կերպարը» չի ամփոփվում որեւէ կառույցի «տեսքով» կամ «մեջ» եւ հիմնականում թվարկվում են հատկանիշներ, այն էլ՝ հուզական երանգներով: Հիմնականում դրանք են՝

1. դաժանություն (թուրքը դաժան է)
2. արյունարբու (յաթաղանով)
3. անմարդկային, անհոգի:

Հնարավորության սահմաններում ուսումնասիրությունը խորացնելու դեպքում կարելի է դիտարկումներ կակնկալվեն եւ հայ, եւ թուրք հասարակությունների մեջ: Մասնավորապես՝ ըստ վերը նշված վերլուծության, թուրքական հասարակության մեջ հայ թշնամու կերպարը դիտարկվում է որպես՝

1. ագրեսիվ, վրիժառու, վրեժխնդիր (ԱՍԱԼԱ)
2. ազգայնական (դաշնակները որպես ազգայնականներ)
3. պահանջատեր (հայկական սփյուռքը):

Ուշագրավ մի փաստ. հայ-թուրքական «դարավոր» թշնամության մասին առասպելը հետաքրքիր է նաեւ, երբ վերլուծում ենք հայի՝ թշնամու կերպարի մասին թուրքերի վերը նշված զուգորդությունները (այլ բան է այն մշտական «հրավիճակային» անհանդուրժողականությունը, որը բնորոշ է թուրք էթնոսին հատկապես քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ, կամ էլ ազգայնամու, կրոնամու «դրոշի» ներքո արագ հավաքագրվելը): Այսպես՝ «1975-1983թթ. տարբեր խմբավորումներ նախաձեռնել են ավելի քան 200 բռնարարք: Ամենաակտիվները «Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ» (ՀՅԱՄ) եւ «Հայաստանի ազատագրության հայկական գաղտնի բանակ» (ԱՍԱԼԱ) կազմակերպություններն էին: ՀՅԱՄ-ը վայելում էր Դաշնակցության հովանավորությունը եւ, փաստորեն, նրա զինված թեւն էր: Կազմակերպության պայքարը բացառապես ուղղված էր թուրք պաշտոնատար անձանց դեմ: Դրան հակառակ, ԱՍԱԼԱ-ն, որի ստեղծման մասին հայտարարվեց Բեյրութում 1975-ին, կուսակցական պատկանելիություն չունեւ, ինքնավար եւ անկախ միավորում էր, որի շարքերում էին հասարակական բոլոր խավերի, այդ թվում հայ ավանդական երեք կուսակ-

ցությունների անդամներ, մինչև անգամ համայնավարներ, որոնք ընդունում էին բանակի քաղաքական և ռազմավարական ծրագիրը: Այս երկու կազմակերպությունների գործունեությունը տարբերվում էր նրանով, որ առաջինները հարվածներն ուղղում էին ընդդեմ միայն Թուրքիայի ներկայացուցիչների, իսկ ԱՍԱԼԱ-ն՝ նաև եվրոպական այն կառավարությունների, որոնք մինչ այդ չէին ճանաչել Ցեղասպանությունը և դրանով «մեղսակից դարձել Թուրքիային»<sup>16</sup>:

Թշնամանքի «առասպելացվածության մթնոլորտը», որը գոյություն ուներ Թուրքիայում, ներարկվել էր 19-րդ դարավերջից սկսած, սակայն թուրք հասարակության մեջ այն «օբյեկտիվ դիմագիծ» ձեռք բերեց՝ կապված հայ վրիժառուների գործողությունների հետ՝ ի պատասխան մեկուկես միլիոն մարդկային կյանքերի ոչնչացման: Եթե **Ճիշտ և անաչառորեն առաջացած երեույթ լիներ** դարասկզբում ազգամիջյան թշնամանքը, ապա թուրք ազգի հավաքական հիշողության մեջ **նրա գոյությունը** կդրսետրվեր և կդրսետրվի թեկուզ մեկ դար անց՝ այս սերնդի զուգորդություններում: **Իսկ ներկա սերնդի հիշողությունները՝ կապված իրական թշնամանքի հետ, միայն մոտ 30 տարվա պատմություն ունեն:**

«Թուրքական հասարակությունը, իմ սերունդը, հայկական դեպքերի մասին իմացավ միայն այն ժամանակ, երբ 1975թ.-ից հայերը սկսեցին թուրք դիվանագետներ սպանել: Սկզբում մենք հարցնում էինք մեզ՝ ինչո՞ւ են նրանք մեր դիվանագետներին սպանում: Հետո հասկացանք: Սպանում էին, որովհետև Թուրքիայի պաշտոնական, պետական գաղափարախոսությունը թույլ չէր տալիս մեզ, իմ սերնդին՝ տեղյակ լինել հայկական դեպքերին: Իմ սերունդը հասկացավ, որ մեր նախնիները ստոր արարքներ են գործել հայերի նկատմամբ»<sup>17</sup>:

Քաղաքական առասպելներն այն ժամանակ են ներդաշնակ մշակույթային և կրոնական աշխարհայացքին, երբ լրացնում են դրանք և որոնք էլ առասպելի սկզբնաղբյուր են, այլ կերպ ասած՝ ազգային առասպելները պահպանողական և ավանդական են: Պատմաքաղաքական իրականություն մեջ հնարավոր չէ գտնել հստակ ձեւակերպված քաղաքական առասպել: Այն մշտապես վերականգնողական, վերածելավորման ընթացքում է՝ իր զարգացման փուլերով: Սկզբում նույնականացման փուլն է՝ համընդհանուր վերապրումներով, հետո խորհրդանիշների հաստատում՝ ավելի կառուցվածքային մոտեցում, այնուհետև առասպելը ծիսականացվում է տարբեր խորհրդանիշների միացությամբ: Եթե այս փուլերի միջով դիտարկենք Ցեղասպանությունից հետո հայ ազգային վշտի փաստը, ակնհայտ խորհրդանիշների մի ամբողջության հետ մեկտեղ այսօր կտեսնենք նաև ծիսակատարությունը կամ ծիսակարգը, որն ունի յուրահատուկ հոգեթերապեւտիկ նշանակություն: **Հայերի համար պատմական իրողությունը և դրա առասպելը հոգեբանորեն դարձել են յուրահատուկ ազգակենտրոն և համախմ-**

բող գաղափար եւ համայն հայերի միասնականության զգացողության հիմք: Դրա համար ազգային այս առասպելի նկատմամբ անձեռնմխելիությունը հատուկ է ոչ միայն սփյուռքին, այլ նաեւ Հայաստանի ժողովրդին, հասարակության բոլոր շերտերին անխտիր:

Եթե դիտարկենք հակառակ «Ճամբարը» թուրքական կողմը, ապա կարող ենք տեսնել պրոյեկտված նույն խորհրդանիշները՝ այլ գնահատականով կամ հակառակ իմաստով: Հայերի ծիսակարգային ապրիլի 24-ը խորհրդանշական է նաեւ ներկա թուրք հասարակության մեջ՝ այլ առասպելական մեկնաբանությամբ, քանի որ այս առումով հայերի հետ պատմություն են կիսում, նույն առասպելն են կիսում՝ վերոնշյալ փուլային տարբեր վերապրումներով եւ գոյություն չունեցող (համենայնդեպս՝ մինչեւ 1975 թվականը) խորհրդանիշներով, սեփական «չկայացած» առասպելով: Այդ պատճառով հենվում են հայկական խորհրդանիշների եւ ծիսակարգի վրա: Այսինքն՝ թե՛ աշխարհի այլ պետությունների կողմից հայ ժողովրդին հղվող ցավակցական ուղերձների նոր բառերի ու բովանդակության նկատմամբ թուրքերի սպասողական վիճակը, թե՛ «նոր դատապարտումները» եւ թե՛ լարվածության մթնոլորտում սեփական պատմական ժառանգության «ժխտումը»՝ մերժումը **հոգեբանական կախվածություն են ստեղծել հայկական խորհրդանիշներից եւ, կարծես, երկու տարբեր առասպելների գերին դարձել:** «Էթնիկական մշակույթի հիմնական գործառույթը հոգեբանական պաշտպանությունն է»<sup>18</sup>:

Առասպելը միանգամայն ազատ է «մտնում» մարդկային, հասարակական գործունեության մեջ՝ ընդունելով տարբեր կերպարներ ու ձեւեր, առավելեւս՝ նպատակաուղղված ձեւով եւ տարբեր միջոցներով: «Առասպելաբանական» տեքստերի առավել բնութագրական գործոններն են՝

1. Նրանք **ստուգման** ենթակա չեն: Սկզբունքորեն նրանց հնարավոր չէ ժխտել, այլ կարելի է նոր օրինակով հաստատել:

2. Նրանց բնութագրական է որոշակի **ճանաչվածությունը**: Այն նոր տեղեկատվություն չէ, այլ ծանոթ գծապատկերի իրականացում է: Երբեմն այդ կարծրատիպի, համակարգի մեջ մարդիկ փորձում են իրականությունը տեղավորել: (Օրինակ՝ տասնամյակներ քարոզվող հայերի «ռուսամետ կողմնորոշման» մասին առասպելը մեր հասարակության մեջ առանց քննադատության եւ առանց քննարկման է գործում: Ռուսաստանի կերպարը քարոզվել ու քարոզվում է որպես «բարեկամի», այդ երկրում յուրաքանչյուր հայի սպանության հանդեպ Հայաստանից հատուկ վերաբերմունք, դժգոհ կեցվածք եւ վիրավորանք չի դրսևորվում, ոչ էլ արդարության վերականգնման պահանջատիրությամբ են արձագանքում այն դեպքում, երբ հայտարարվում է, որ կատարված է ազգայնականների կողմից՝ էթնիկ պատկանելության սկզբունքներով: Իսկ պատկերացնել միայն, թե օրինակ՝ Թուրքիայում է հայ սպանվում,

եւ անգամ կենցաղային դրդապատճառներով՝ թալան, գողություն եւ այլն, մեծ «դարավոր թշնամանքի ալիքը» միաժամանակ երկու հասարակություններն էլ կողողի՝ հակադրելով «գոհ» եւ «հերոս» կերպարները):

Ըստ հայ պատմաբանների, Թուրքիան կատարած ոճիրն ընդունելու հետ կապված «ինքնության ճգնաժամի խնդիրներ ունի, ապահերոսականացման վախ»: Ներկայիս Թուրքիան ունի իր քաղաքակրթությունը՝ կառուցած իր պատմության վրա, ունի իր ավանդույթները, ունի նաեւ մոտակա եւ հեռահար քաղաքական նպատակները (տարածաշրջանում հզորանալու եւ կարելու դերակատարում ունենալու եւ այլն): «Առանց ավանդույթների չի կարող լինել քաղաքակրթություն, առանց ավանդույթները ջարդելու չի կարող լինել առաջընթաց: Խնդիրն այն է, որ գտնվի փոփոխության եւ մնայունության միջեւ անհրաժեշտ հնարավոր հավասարակշռությունը, որը, սակայն, շատ դժվար խնդիր է» Գ.Լեբոն):

Խորհրդային Միության փլուզումից հետո նրա կազմի մեջ եղած նորանկախ ու չճանաչված հանրապետությունները, փոքր ինքնավարությունները քաղաքական, ազգային, պետական, գաղափարախոսական ինքնահաստատման, նույնականացման խնդիր ունեին: Առաջնահերթությունը ազգային ինքնության հաստատումն ու դրսևորումն էր՝ էթնիկական նույնականությունը, պատկանելությունը: Բազմազգ ու բազմամշակութային խորհրդային պետությունը՝ փորձելով ամրապնդել միությունը, ստեղծել էր համընդհանուր գործող մի շարք քաղաքական առասպելներ (թշնամի իմպերիալիզմ, «եղբայրական հանրապետություններ» եւ այլն): Փլուզումից հետո հավաքական առասպելներից որոշակիորեն ազատվելով եւ էթնիկական կարծրատիպերի, առասպելների վերակենդանացմամբ սկիզբ դրվեց էթնիկական փոխադարձ անհանդուրժողականության մթնոլորտին, հրահրվեցին ազգամիջյան բախումներ, թշնամիներ՝ հին ու նոր կարծրատիպերով: Հայ-ադրբեջանական հարաբերությունների մեջ գոյություն ունի ուշագրավ երեւոյթ. երբ հայ-ադրբեջանական «եղբայրական» ժողովուրդների միջեւ սկսվեց հակամարտություն, եւ երբ այն վերածվեց պատերազմի՝ ընկալման մակարդակում դարձավ հայ-թուրքական: Գործեց հայ-թուրքական «դարավոր» թշնամանքի առասպելը: Առասպելը «ստեղծեց» մի նոր իրականություն՝ հայ-ադրբեջանական պատերազմը սկսեց «սնել» հայ-թուրքական թշնամանքը. 1992-1994թթ. ԼՂ-ում հայկական զինված ուժերի ազատագրական գործողությունները ջղաձիգ ու ագրեսիվ հակազդումներ առաջացրին Թուրքիայում: «Եղբայր» ժողովրդի եւ իր դարավոր թշնամու միջեւ պատերազմում Թուրքիան ոչ միայն սատար կանգնեց ռազմական, ռազմավարական տեսակետից, այլ նաեւ դիվանագիտական, «պահանջատիրական» դիրքերից՝ հայ-թուրքական երկխոսության դիմաց նախապայմաններ թելադրելով՝ կապված ԼՂ խնդրի

հետ: Տարածաշրջանի համար այս առասպելը եւ առասպելային մտածելակերպը բավականին մեծ խոչընդոտ են բարիդրացիական հարաբերությունների, կայունության եւ անվտանգության համար: Հատկանշական է, որ այն նոր «ուժ» ձեռք բերելով՝ հայ-ադրբեջանական հակամարտության մեջ զգայական-հուզական գերակշռությամբ խանգարում է երկրների փոխհարաբերություններում անգամ սեփական շահերի ու առաջնահերթությունների առանձնացման եւ որոշակիության համար:

### **Հայ-թուրքական «երկխոսության» ճիգերը**

Թուրքիան 1993 թվականից փակել է Հայաստանի հետ սահմանը, իսկ մինչեւ 2008 թվականը հայ-թուրքական հարաբերություններում բացառվել են դիվանագիտական շփումները: Միայն փոխադարձ նախապայմաններ շրջանառելով երրորդ երկրների միջոցով՝ այդ տարիների ընթացքում հայ-թուրքական հարաբերությունները որեւէ «աճ» չեն արձանագրել: Ավելին՝ ինչպես արդեն նշվեց, դարաբաղյան հակամարտության հետ կապված «պատմական թշնամության» «անշարժ ու հաստատուն» կերպարը «վերանորոգվեց» եւ դարձավ «իրական, գործող». երկկողմ «վերարժեւորումներ» կատարվեցին:

Նախքան որոշ ֆիլմերի վերլուծությանն անդրադառնալը, փորձենք հասկանալ եւ տալ «նոր հայկական կինո» երեսույթի ընդհանրական պատկերը եւ այն պայմանները, որոնք որոշիչ են եղել նրա ձեւավորման հարցում: Պետական ֆինանսավորմամբ աշխատող հին համակարգի քայքայումից հետո թերեւս խորհրդային ողջ տարածքում դիտվում էր մշակույթի, այդ թվում՝ կինոարվեստի անկում: Եվ առաջինն այդ ծանր վիճակից սկսեց դուրս գալ ռուսական կինոն, թեւս հարկ է նշել, որ նոր սերնդի կինեմատոգրաֆիստները հիմնականում թե՛ ժանրային, թե՛ սյուժետային իմաստով գնացին ամերիկյան կինոն ընդօրինակելու ճանապարհով: Իրենց աշխատառձն ու թեմաները փոխեցին նաեւ նախկինում կայացած կինոթեմադրիչները, ինչը բնական էր եւ անխուսափելի: Ճիշտ է, հատկապես տեխնիկական որակի առումով, առաջին շրջանի արտադրանքը շատ էր զիջում «բնօրինակներին», սակայն ժամանակի ընթացքում նորահայտ ֆիլմնեյթերները՝ ռեժիսորները, ավելի հղկվեցին ու հմտացան, եւ նոր կինոհերոսներն էլ ավելի տիպիկ, բնութագրական դարձան ստեղծված իրականությունն արտահայտելու առումով, առաջ եկան գեղարվեստական տեսանկյունից հետաքրքիր ֆիլմերի հեղինակներ, ինչպես նաեւ՝ դերասանների նոր սերունդ: Այդ ամենի շնորհիվ սկսեց ձեւավորվել նոր, արդի կինեմատոգրաֆ:

Երբ խոսքը վերաբերում է այնպիսի փոքր երկրի, ինչպիսին Հայաստանն է, ապա մեծածավալ կինոգործընթաց այստեղ ուղղակի լինել չի կարող: Բայց անկախ արտադրված ֆիլմերի գեղարվեստական մակարդակից եւ հեռուստատեսիվների առատությունից, կարելու է, որ պահպանվում է կողմնորոշումն առ մեծ էկրան: Եվ, առհասարակ, ազգային կինեմատոգրաֆի գոյատեւման համար անհրաժեշտ է ֆիլմերի որոշակի տարրապատկեր ունենալը, շատ կինոնկարներ հետո են առանձնանում: Կինոյի պատմության հետազոտումը ցույց է տալիս, որ շատ գործեր միանգամից չէ, որ նկատվում են եւ շատ գնահատականներ փոփոխվում են ժամանակի ընթացքում: Իհարկե, մեզ մոտ էլ փորձեր եղան ստեղծելու մարտաֆիլմի մեր տեսակը («Չգրված օրենք»,

Գ.Վարդանյան, Վ.Խաչատրյան, 2003, «Չկրակված փամփուշտներ», Ս. Թադևոսյան, 2006 եւ այլն): Այդ ժանրի տեղայնացմանն ուղղակի մղում էին պատմական նյութը՝ արցախյան ազատամարտը, եւ նրա հերոսները: Այդ թեման իր արտահայտությունը գտավ նաեւ Արամ Շահբազյանի «Մի վախեցիր» (սցենարի հեղինակներ՝ Լ.Գալստյան, Գ.Նալբանդյան) հինգմասանոց հեռուստաֆիլմում: Չնայած ֆիլմում տեղ գտած թերություններին, սխալ կլիներ չնկատել, որ այստեղ հեղինակները փորձ են արել իմաստավորել պատմության բեկումնային ընթացքը, նրա շրջադարձային պահերը եւ այն, թե ինչպես են դրանք արտացոլվել մարդկային ճակատագրերի վրա. նախկին կուսակցական բարձր պաշտոնյայի երես առած որդին (Ն.Լեւոնյան) հանցավոր միջավայրում ունենում է անլուծելի բախում, որից խուսափելու միակ ելքը դառնում է արցախյան մարտի դաշտում «պատսպարվելը», եւ դա այն ժամանակ, երբ շատերը «փախցնում էին» իրենց զավակներին՝ երկրից դուրս տանելով: Պատերազմական սուր դրամատիկ իրավիճակներում մարտակիցների մեջ տեսնելով մարդկային ու նաեւ հերոսական գծեր՝ փոխվում են տղայի պատկերացումները կյանքի արժեքների, ընդհանրապես գոյության իմաստի մասին: Բոլորովին անսպասելի կերպով երիտասարդը դրսևորում է մարդկային բարձր հատկանիշներ եւ վերջում զոհվում հերոսի մահով: Այս կինոնկարը՝ լինելով մեր հեռուստատեսությամբ ցուցադրված թերեւս առաջին հայկական սերիալը, լուրջ քննադատության արժանացավ, չնայած դրան հաջորդածները թե՛ արդի իրականության «մարսման» եղանակներով, թե՛ մասնագիտական հմտության տեսանկյունից, համենայնդեպս, առավել հաջողված չեն, եթե չասենք, որ զգալիորեն զիջում են: Ավելացնենք, որ «Մի վախեցիր»-ն ունի հերոսապատումին հատուկ որոշ գծեր եւ այս կամ այն չափով լուծել է նաեւ «մեր ժամանակի հերոսի» խնդիրը:

Այդ իմաստով արժե հիշատակել ֆրանսահայ ռեժիսոր Ռոբեր Գեդիգյանի «Ուղեւորություն դեպի Հայաստան» ֆիլմը, որը 2006թ. արժանացավ «Ոսկե ծիրան» երեսնյան միջազգային կինոփառատոնի արծաթե մրցանակին: Անշուշտ, ֆիլմի ձեռքբերումը Մերժ Ավետիքյանի ստեղծած ազատամարտիկի զուսպ, համոզիչ կերպարն է՝ «իսկական հայ հերոսի», որը նրա մարտակից ընկերոջ խոսքերով ասած՝ «պատերազմից չի օգտվել»: Թերեւս էպիզոդիկ այս հերոսը պետք է լիներ «մեր ժամանակի հերոսը», ում ունեցել ենք իրականում եւ, սակայն, ում մասին գրեթե մոռացել ենք: Դա այն կատարելատիպն է, որին այսօր կարոտ են թե՛ մեր իրականությունը, թե՛ կինոն: Կինոնկարը, որ նկարահանված է Հայաստանում, ինչ-որ տեղ արթնացող, երկչոտ ինքնության մասին է: Ֆիլմի՝ ողջ կյանքը Փարիզում ապրած հերոսուհին (Արիան Ասկարիդ) հոր հետքերով գալիս է իրեն անձանոթ երկիր՝ Հայաստան, որ կիսով չափ իր հայրենիքն է, եւ թաքուն, անսպասելի հարազատության զգացումներ է ունենում իր կարճատեւ ուղեւորության ընթացքում: Հարկ

է նշել, որ չնայած որոշ կլիշեներին ու շտամպներին, «թեթե» ժանրով արված այդ ֆիլմն իր մասամբ արկածային, մասամբ կոմիկական կողմերով հանդերձ, այնուամենայնիվ, արտահայտում է հետխորհրդային եւ հետպատերազմյան իրականության այն կողմերը, որոնց գրեթե չի անդրադարձել նոր ժամանակների հայ կինոն:

Արցախյան ազատագրական պատերազմի թեման իր արտացոլումը գտավ Ալբերտ Մկրտչյանի «Տխուր փողոցի լուսաբացը» (2008) ֆիլմում: Գործողությունները տեղի են ունենում հեղինակի հարազատ քաղաքում՝ Գյումրիում: Ֆիլմում կան նաեւ ռազմական տեսարաններ: Նույն ընտանիքում մեծացել են երկու տղա, որոնք հակադիր են իրենց պահվածքով, խիստ տարբեր է նրանց վերաբերմունքը հայրենիքի պաշտպանության հարցի հանդեպ: Ավագ որդին (Վ.Մկրտչյան), թողնելով սիրած աղջկան, հերոսական ոգեկոչւմով կամավոր գնում է արցախյան գոյամարտին մասնակցելու, իսկ կրտսերը (Ա.Սարգսյան) խնդրում է հորը (Գուժ Մանուկյան), որ ամեն գնով փրկի իրեն: Տղային «փախցնելու» մի քանի անհաջող փորձերից հետո հայրն ասում է, որ պետք է ներսում եղած վախը հաղթահարել: Պատանին հասկանում է, որ այդ վախը հաղթելով միայն կարելի է փրկվել: Եվ, ինչպես պահանջում են դասական դրամատուրգիայի օրենքները, հենց նա է զոհվում մարտի դաշտում: Այս տեսակ ընտանեկան պատումի կարիք շատ էր զգացվում վերջին տարիների հայ կինոյում, որն ուղղակիորեն կարտացոլեր պատերազմը, նրա ծանր բարոյահոգեբանական հետեւանքները: Սակայն հարկ է նշել, որ այս կինոնկարը չթողեց այնպիսի ազդեցություն, որպիսին կարող էր: Ֆիլմը ոճական տեսանկյունից միասնական չէ: Տրագիկոմեդիա այն չէս անվանի, որ ռեժիսորի նախընտրելի ժանրն է եղել տարիներ շարունակ: Կարծես ձգտում է դրամայի, բայց նրա մեջ էլ ներխուժում են մեկ տրագիկոմիկական տարրեր, մեկ՝ փոխաբերական (ռադիոյի նման պատերազմական աղմուկ գուժող ծովախեցին, որ վերջում փշրվում է հաղթական տանկի անիվների տակ): Վերջիվերջո, տարաբնույթ դրվագներն էլ կարող են ազուցվել գեղարվեստական համաչափության ինչ-որ ներքին սկզբունքներով եւ ամբողջականություն հաղորդել ֆիլմին, սակայն ցավով պետք է նշել, որ ռեժիսորին դա չի հաջողվել:

Նրա՝ 2000-ին էկրան հանած «Ուրախ ավտոբուսը» տրագիկոմեդիան դարձյալ նվիրված է Գյումրիին: Երկրաշարժից ավերված քաղաքի փողոցներով անցնում է «ուրախ ավտոբուսը»՝ իբրեւ ծիծաղելու ընդունակությունը երբեք չկորցնող մարդկանց հավաքական խորհրդանիշ: Այս փոխաբերական կերպարը հիմնականում կայացել է կիրառված պոմոլոգիայի մեթոդաբանական հնարքների եւ նրանում առկա հյուսթեղ բնավորությունների ու դերակատարումների շնորհիվ (Ա.Հարությունյան, Ժ.Բաղդասարյան, Ա.Գասպարյան, Մ.Պողոսյան): Ֆիլմն ավելի ամբողջական է, թեպետ այստեղ էլ հեղինակը զերծ չի մնացել

գրոտեսկային չափազանցություններից: Ալբերտ Մկրտչյանի այս ֆիլմը ցուցադրվել է Ֆրանսիայում եւ մի քանի ուրիշ երկրներում:

2001թ. վերջապես Սուրեն Բաբայանը ավարտին է հասցնում «Խենթ հրեշտակ» ֆիլմի նկարահանումները, որն արտադրություն էր իջեցվել դեռեւս 1993-ին: Լայնաթափ զանգվածային տեսարաններով այս ֆիլմը սկզբում նկարվում էր ըստ շվեդ գրող, Նոբելյան մրցանակակիր Պ.Լազերկվիստի «Բարաբա» վեպի: Կինոռեժիսորն առավել կենտրոնացել էր ոչ այնքան Բարաբայի, որքան հայ քրիստոնյա Սահակի կերպարի վրա, եւ ֆիլմն էլ պիտի նվիրվեր Հայաստանում Քրիստոնեության ընդունման 1700-ամյակին: Մակայն թանկարժեք ֆիլմի նկարահանումը տնտեսական ճգնաժամի եւ շրջափակման պայմաններում օրեցօր դառնում էր անիրագործելի: Միայն 1998-ին հնարավոր դարձավ շարունակել աշխատանքները, այն էլ՝ խորհրդանշական գումարով: Այդպիսով՝ հմուտ մոնտաժի միջոցով օգտագործելով արդեն նկարահանված տեսարաններն ու դրվագները, հեղինակն արեց մի ֆիլմ այն մասին, թե ինչպես է պատմական կինոժապավեն նկարվում մեր օրերում: Եվ այդտեղ արտացոլվեցին նաեւ մերօրյա կեցության հիվանդագին երևույթները: Ռեժիսորի դերում նկարահանվել է կինոռեժիսոր Հարություն Խաչատրյանը, իսկ «Խենթ» հրեշտակի՝ Գաբրիելի դերում՝ Միքայել Պողոսյանը: Այն երկվորյակը, որ կարելի է տեսնել դերասանի կերտած հրեշտակի կերպարում, արտահայտում է նոր ժամանակների բնորոշ արժեքների համակարգի տատանումները, երբ խախտվում կամ ջնջվում են մարդկության կողմից վաղուց սահմանազատված բարու եւ չարի, աստվածայինի եւ դիվայինի միջեւ սահմանները: Վերջինս հայկական հետխորհրդային կինեմատոգրաֆի առաջատար դերասաններից մեկն է, որի երաժշտական կարողությունները եւ պլաստիկան կարող էին նրան մեծ հաջողություններ բերել նաեւ կինոմյուզիքում, սակայն այդ ժանրը չունեցավ ցանկալի զարգացում մեր մշակույթում (այսօր ո՞վ է հիշում ըստ Հ.Պարոնյանի անմահ ստեղծագործության՝ Գրիգոր Մելիք-Ավագյանի 1976-ին նկարահանած «Պաղտասարը բաժանվում է կնոջից» երաժշտական կատակերգությունը՝ Միեր Մկրտչյանի, Ռաֆայել Քոթանջյանի եւ այլոց հրաշալի դերակատարումներով, Առնո Բաբաջանյանի եւ Մելիք Մավիսակալյանի հեղինակած երաժշտությամբ, Վանուշ Խանամիրյանի բեմադրած պարերով եւ Էլվինա Մակարյանի, Ջարա Տոնիկյանի, Գեորգի Մինասյանի փայլուն վոկալով): Արդյունքում «Երեւան բլուզ», «Երեւան ջան» եւ այդ տեսակ ուրիշ մանրապատումային գործերում պարզապես շահարկվում է դերասանի երաժշտական ձիրքը:

Հարկ է նշել, որ Միքայել Պողոսյանը գլխավոր դերակատարումներով հանդես է եկել նաեւ Վիգեն Չալոբանյանի «Ձայն բարբառոյ...», «Լռության սիմֆոնիա» կինոգործերում: 2001թ. «Լռության սիմֆոնիա» ֆիլմում մարմնավորած կերպարի համար Բելառուսի մայրաքաղաք

Մինսկում կայացած «Լիատոպադ» («Տերեւաթափ») միջազգային կինոփառատոնի ժամանակ դերասանն արժանացավ տղամարդու լավագույն դերակատարման համար նախատեսված մրցանակին:

Ֆիլմի հեղինակ Վիգեն Չալդրանյանը 90-ականներից սկսած իր աշխատանքներում փորձում է արտացոլել նոր ժամանակը, փոխված իրականությունը: «Տեր ողորմեա» կինոնկարում ռեժիսորը ներմուծեց նաև փաստավավերագրական կադրեր, որոնցում ամրագրված են մեր հիշողության մեջ մնացած որոշ պատմական իրադարձություններ. «հեղափոխության առաջնորդի» հուշարձանի ապամոնտաժման տեսարանի վավերագրական կադրերն էկրանին ընթերցվում են որպես ժամանակաշրջանի խորհրդանիշ: Այս կադրերը տարբեր մակարդակներում արձագանքում են ֆիլմի խաղարկային էպիզոդներին, եւ կոնկրետ փաստը կինոպատումի հյուսվածքում վերաճում է ընդհանրացման, մանավանդ երբ հերոսը կանգնում է դատարկ պատվանդանին եւ խաղում «առաջնորդի» ոճով՝ դեկավարելով հումանիտար օգնության մեր օրերի «շքերթը»: Մեկ ուրիշ վավերագրական դրվագում մուսալեռցիների եփած ավանդական հարիսայից փորձում են «բաժին» փախցնել աստիճանների վրա իրար հրմշտող մարդիկ:

Ֆիլմի գլխավոր հերոսը ստեղծագործող է, ռեժիսոր, ըստ էության, Չալդրանյանի alter-ego-ն է, եւ նա էլ հենց խաղում է: Կինոնկարն այդպես էլ սկսվում է՝ ինքն իր դերը խաղացող ռեժիսորի եւ իր «երկրորդ եսի» երկխոսությամբ, որը ոճական իմաստով՝ գնալով վերածվում է մենախոսության: Ֆիլմի հիմնական ներքին հակասությունը արվեստագետի բախումն է ծառացած անլուծելի խնդիրների հետ՝ ինչպես նյութական, այնպես էլ բարոյահոգեբանական: Երբ վերջինս, առաջին հայացքից անհոգ, թափառում է երեւանյան փողոցներով եւ գլուխը մի կողմ թեքելով՝ տեսնում է իրական գրահամեքենա՝ «ԵՄՊ» (որն այդ ժամանակ մեր առօրյայի բաղկացուցիչ մաս էր դարձել), դրվագն ակնհայտորեն արտահայտում է այդ հերոսի թե՛ հոգեվիճակը, թե՛ կարգավիճակը հասարակական կյանքի ու գիտակցության որոշակի շրջափուլում: Դա տեղի է ունենում նաև ի հաշիվ այն բանի, որ էպիզոդում հայտնվում է «պետական ռազմական մեքենայի» առարկայական խորհրդանշանը:

Պետք է ասել, որ չնայած ֆիլմում առկա հաջողված մի շարք տեսարաններին ու էպիզոդներին, հեղինակը կորցնում է իր իսկ գտած բանալին՝ գնալով մտահայեցողական կամ «ոճազարդված» տեսարաններ կառուցելու ճանապարհով: Ճիշտ է, հերոսի ձակատագիրը տեղ-տեղ պրոյեկտվում է երկրի ու ժամանակի կտրվածքի միջով, եւ այստեղ փորձ է արվել պատմականը որպես ինտիմ գործընթաց ներկայացնելու, հերոսի կենսափորձը եւ դիտարկումները «ընդհանուր զանգվածի» հետ հատելու, սակայն այդ կապը ամբողջության մեջ՝ լայն, ընդհանրացնող իմաստով, տեղի չի ունենում: Մինչդեռ կինոն ընդունակ է տեսնելու նույնիսկ այն, ինչ բանաստեղծի խոսքերով ասած՝ «ժամանակի

փակի տակ է»:

2001-ին էկրան բարձրացած «Լոռույան սիմֆոնիա» ֆիլմում անցյալի ու ներկայի բախումը տեղի է ունենում, երբ «հանդիպում են» հերոսի՝ նախկին երեսնամյակ հանցագործի, այնուհետեւ՝ Միացյալ Նահանգներում հարուստ գործարարի անցյալը եւ ներկան: Ժամանակին հայրենիքում պատժից խուսափելու համար նա հոգեկան հիվանդ է ձեւացել, իսկ հիմա, իմանալով, որ անբուժելի հիվանդությամբ է տառապում, դատապարտված է մահվան, աճուրդի ժամանակ գնել է իր նախկին կացարանը՝ հոգեբուժարանը, այն բարելավելու նպատակով: Բացի գլխավոր դերակատարից, ֆիլմում հարկ է առանձնացնել Ժան-Պիեր Նշանյանի, Կարեն Զանիբեկյանի, վրաց դերասանուհի Ն.Կասրաձեի եւ ոչ պրոֆեսիոնալ դերասան Վ.Գրիգորյանի խաղը, որը հոգեբուժարանի «պրեզիդենտի» ապշեցուցիչ կերպար է ստեղծել: Չնայած ֆիլմի որոշ արժանիքներին, այստեղ էլ Չալոբանյանը զերծ չի մնացել չափազանցություններից, հատկապես երբ բացահայտ կերպով նյութականացրել է «լոռույան սիմֆոնիայի» գաղափարը՝ դիրիժորական փայտիկ տալով հոգեբուժարանի ծեր բնակիչներից մեկի ձեռքը՝ Վլադիմիր Մարյանի դերակատարմամբ: Ամեն դեպքում, այս ֆիլմն արժեքավոր է մեր կինոյում նյութի, ներմուծված հերոսների թարմության տեսանկյունից: Այն արտադրված է Ֆրանսիայի հետ համատեղ, եւ Փարիզի կինոթատրոններում ցուցադրվելուց բացի, ընդգրկվել էր Սան-Պաուլոյի (Բրազիլիա) միջազգային կինոփառատոնի ծրագրում:

Թե ինչ հետք են թողնում նույն հերոսի կենսագրության մեջ անցյալի ու ներկայի հարաբերությունները, արտացոլված է նաեւ Տիգրան Խզմայանի «Պիեռլեկինո կամ օդից էլ թեթեւ» ֆիլմում, որի առանցքը ծեր ծաղրածուի (Վ.Մարյան) փշրված ճակատագիրն է, նրա կյանքի ու սիրո պատմությունը: Կինոնկարի նախերգանքը փողոցում դեմառդեմ հայտնված «հարսանիքի» եւ «թաղումի» բախումնային տեսարանն է, որը սակայն՝ իբրեւ ֆիլմի էքսպոզիցիա, ոճական իմաստով թելադրող չի դառնում: Պարզաբանենք. «ուրախության» եւ «սգո» հանդեսների արանքում հայտնված սրինգ նվագող ծաղրածուն, «հակադիր» բովանդակություն կրող թափոքների ճնշման տակ ինքն է սրինգ դառնում («որի վրա կարող են նվագել»), ինչն արտահայտվում է մեկ այս, մեկ այն կողմին երաժշտական «հարկադրված» նախապատվություն տալու մեջ: Այս չափազանցված՝ գրոտեսկային, փոքր-ինչ էքսցենտրիկ սկիզբը բոլորովին ուրիշ ֆիլմ է խոստանում, այնինչ գործողության հետագա ընթացքը բավականին տարանջատ է, տրոհվում է ժանրային իմաստով իրարից խիստ տարբեր կտորների: Ժանրերի «խառնումը» բնավ ժխտելի չէ, ինչպես որ անընդունելի չեն այն հեղինակները կամ ֆիլմերը, որոնց ոճի հիմքը այդ մեթոդն է կազմում: Խոսքը տարբեր ոճերի ներդաշնակ, համաչափ զուգակցման մասին է, ստեղծագործության՝ իբրեւ օրգանիզմի, ամբողջականության մասին, թեկուզ եթե այն խճան-

կարային բնույթ ունի:

«Պիեռլեկինոյի» առանձին «համարները» կարող էին միահյուսվել հերոսի իրական կյանքին՝ այդկերպ փոխաբերականը ձուլելով իրականին, ինչն օրինակ, հաջողվել է գրեթե կրկեսային պայմանականության հասնող այն դրվագում, երբ ինչ-որ ղեկավար պաշտոնյայի «պատշաճ» ընդունելություն ցուցաբերելու համար գազամատակարարման ընդհատման հետեւանքով (որ այն օրերի մեր կյանքի իրական փաստ է) հանգած «անմար կրակը» ժամանակավորապես վառելու նպատակով «գազի բալոն» է բերվում: «Արարողությունից» հետո լքված «անմար կրակը» շարունակում է «անօգուտ» վառվել: Մոտակայքից հայտնվում են սպիտակ խալաթավոր երկու խոհարարուհիներ՝ հսկայական կաթսայով, որն անմիջապես, առանց «բարդույթների» դրվում է «անմար կրակին»: Սա ֆիլմի ամենահաջողված էպիզոդն է թերեւս, եւ այստեղ կյանքի փոխաբերական երգիծանկարը եւ, ով գիտի, գուցեւ փաստացի դեպքը (այդ տարիների մեր կենցաղը լի էր գրոտեսկով եւ անհավանականով) հանդես են գալիս համատեղ, ու կերպարային իմաստով դրանք դժվար է զատել միմյանցից: Այս տեսարանը վկայում է, որ իրականությունն այնքան շերտեր ունի եւ ընդունակ է հաղորդելու ամենաընդարձակ վերացական, փոխաբերական մտքերը:

Դարձյալ մեկ հերոսի ճակատագրի բեկումների միջոցով նոր ժամանակների իրականությունն է պատկերված Սուրեն Բաբայանի «Ժանո» (գլխավոր դերում՝ Ժան-Պիեր Նշանյան) ֆիլմում, որի բեմելը կայացավ 2004թ. երեսնյան միջազգային առաջին «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շրջանակներում: Իր ոճով ու կառուցվածքով բավականին անսպասելի այս ֆիլմում տեղ են գտել դրվագներ, որոնք աղերսներ ունեն կինոյի «լայնէկրան» պատմության հետ. հեղինակի միտումնավոր «մեջբերումները» անցյալի հայկական ու ոչ հայկական ֆիլմերից հետաքրքիր վերաիմաստավորում են ստանում ժամանակակից այս ֆիլմում: Այդպիսով՝ նրբաձաշակ պատկերներով հագեցած հիշողություններ. «գեղագիտական» մանկություն ունեցած ռեժիսորը՝ Ժանոն, ստիպված է ապրուստ վաստակել՝ հարսանիք ու թաղում, ինչպես նաեւ գովազդներ նկարահանելով: Եվ ֆիլմի հենց առաջին դրվագներից մեկում թաղման ժամանակ տեսնում ենք մերօրյա «պրոֆեսիոնալ լացողների» (տեսարանն ուղղակի արձագանքում է Աղասի Այվազյանի սցենարով, ըստ Մունդուկյանի համանուն գործի Յուրի Երզնկյանի նկարահանած «Խաթաբալա» ֆիլմին, իսկ ավելի ուշ, գովազդի նկարահանման տեսարանն ընկալվում է իբրեւ ոճագարդված մեջբերում հարավսլավացի ռեժիսոր Դուշան Մակավեւի 1970-ականների հայտնի «Մոնտենեգրո» ֆիլմից): Այնուհետեւ, մի օր «հեռավոր մանկությունից» նրա մոտ է գալիս մի ծերունի, որին միանգամից չի կարողանում ճանաչել Ժանոն, եւ զարմանքով նայում է գյուղից եկած ծերուկի ճամպուկի պարունակությամբ, որ լեցուն է քաղաքում գնված կանացի մեծ չափսերի ներք-

նազգեստներով (վերհիշենք Արմեն Զիգարխանյանի մարմնավորած հերոսին, Էդմոն Քեոսայանի «Երբ գալիս է սեպտեմբերը» հանրահայտ ֆիլմում): Իսկ ծերունու ով լինելը հիշելուց հետո, ժանոն լողացնում է նրան հարազատի հոգատարությամբ (դարձյալ ուղղակի մեջքերում, այս անգամ՝ Հենրիկ Մայանի Հրանտ Մաթեոսյանի սցենարով նկարահանած «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմից): Սակայն այդպես էլ իր տեղը կյանքում չգտնելով՝ ժանոն սեփական մահվան լուրն է տարածում, եւ բանը հասնում է մինչեւիսկ իր հոգեհացին (դարձյալ ոճազարդված մեջքերում, այս անգամ՝ վրաց ռեժիսոր Գեորգի Դանելիայի ըստ Բ. Կոստանի պիեսի նկարահանած «Մի վշտանա» ֆիլմից): Այս ամենից հետո հերոսը ֆիլմի սկզբում կարծես իր հետեւից եկած անցյալի կենդանի հուշ հանդիսացող ծերունու հետ վերադառնում է գյուղ, որտեղ էլ դժբախտ պատահարի պատճառով կնքում է իր մահկանացուն...

Նկատի ունենալով ոճազարդումները եւ նրանց՝ որոշ առումով հեզմակն համատեքստը, պետք է ասել, որ անկախ այն բանից, թե ինչ ընդունելության է արժանացել հանդիսատեսի ու քննադատության կողմից, այս ֆիլմը բացառիկ է իր ոճի առումով հայկական կինեմատոգրաֆում, նման փորձ մենք դեռեւս չենք ունեցել:

Ինչեւէ, բոլոր այս ֆիլմերի սցենարներում դրամատուրգիական անկատարություն է նկատվում, հմուտ խմբագրական աչքի կարիք է զգացվում: Եվ դա պատահական չէ. այսօր կինոաշխարհում հաճախ են խոսում «սցենարական» ձգնաժամի մասին: Իսկ ինչ վերաբերում է մեր կինոյին, ապա սցենարիստների, կինոդրամատուրգների մեծ պակաս ունենք: Եվ մեր կինոռեժիսորներն էլ, կարծես, նրանց կարիքը բոլորովին չեն զգում: Համենայնդեպս, այդ են վկայում մեր դիտարկած խաղարկային ֆիլմերը, որոնց սցենարի հեղինակները միայն իրենք ռեժիսորներն են, թեւս համաշխարհային կինոյի փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ է լինում, երբ նրանք որպես սցենարի հեղինակ համագործակցում են արհեստավարժ սցենարիստների հետ:

Դեռ կանդրադառնանք ժամանակակից հայ կինոյի «ախտանիշերին»: Առայժմ շարունակենք վերլուծել վերջին տարիների ֆիլմերը:

Մեր ֆիլմարվեստում թե՛ ձեւի, թե՛ բովանդակության առումով եզակի գործերից է նաեւ հայտնի մուլտիպլիկատոր Լյուդմիլա Սահակյանցի «Նախաշեմին» ֆիլմ-միստերիան, որտեղ կինոն համադրված է անիմացիայի հետ: Ութ-իւր տարի պայքարելով ֆիլմը կայացնելու համար՝ հեղինակը վերջապես այն ավարտի հասցրեց 2002-ին: Հիրավի, զարմացնում է այն փաստը, որ էներգետիկ ամբողջականության առումով գործը չի տուժել, այսինքն՝ արտադրական դժվարությունները, աշխատանքային ջանքերը հետք չեն թողել. ֆիլմում գերիշխում են Գոյի հաղթահարման ճիգերը, որ հերոսին են (գլխավոր դերում՝ Ռեգինանտաս Ադոմայտիս), հետեւաբար՝ հեղինակինը, որ ընկած են նրա մտահղացման հիմքում: Ազգային ողբերգության ցավագին հիշո-

ղությունները մարդուն հասցրել են խելացնորության: Նա կորցրել է բարին եւ չարը գիտակցելու, սահմանազատելու կարողությունը: Եվ նրա գիտակցությունն ավետափ է զարկվում տառապանքի անծայր օվկիանոսում: Որոշ միզանսցեններում, օրինակ՝ մահճակալին նստած Ադամայտիսի կերպարի մեջ, դժվար է չտեսնել Կոմիտասի սովերը, եթե ոչ ուղղակի ճանաչել նրան... թեեւ ֆիլմի հեղինակը գերծ է մնացել կերպարային որոշակիացումից: Ինչ-որ միատիկ նախասկիզբ կա ֆիլմում, էներգիա, որ արձակվում է էկրանից, եւ արդյունքում, տառապագին բովանդակությամբ հանդերձ, ֆիլմը գերում է ոգեղենությամբ, կլանում է ու դիտվում մեկ շնչով: Սակայն այս ֆիլմի հանդիսատեսը մեծաքանակ լինել չի կարող. նա պետք է պատրաստ լինի 57 րոպե չարչարվելու: Սա այն ֆիլմերից է, որ հանդիսատեսից պահանջում է հոգեւոր ու մտավոր մեծ աշխատանք: Մարդկային հոգու անցնելիք ճանապարհի կինոպատում է սա, նրա ներքին կյանքի՝ աշխարհիկ պայմանականություններից գերծ հոգու պլոժեն, նրա դիալեկտիկան: Որքանով ենք կռահում, իմաստավորում մեր ներքին կյանքի շրջադարձերը: Աննկատ ենք թողնում, թե՞ դասեր ենք քաղում հանկարծահաս պայծառացման պահերին: Այնկողմնային աշխարհի նախաշեմին գտնվելով՝ մարդը դեգերում է մենթալ ու հոգեւոր տարածքներում եւ գալիս... ներումի շեմին: Իմաստություն կա այս ֆիլմում: Եվ նրա կայացմանը մեծապես նպաստել է Ավետ Տերտերյանի երաժշտությունը, որը հանդես է գալիս որպես պատկերին հավասարազոր գեղարվեստական ուժ, այլ ոչ թե նվագակցում է նրան:

2003թ. էկրան բարձրացավ Հարություն Խաչատրյանի «Վավերագրողը» ֆիլմը (սցենարի հեղինակներ՝ Հ.Խաչատրյան, Մ.Ստամբուլյան, Վ.Գասպարյան): Այստեղ ջնջված են խաղարկային եւ վավերագրական կինոյի սահմանները. այդպիսին է ֆիլմի հայեցակարգը: Եվ դա միգուցե պատահական չէ, քանի որ ֆիլմի ռեժիսորը խաղարկային կինո է եկել վավերագրականից եւ իր ոճի մեջ սկզբունքորեն պահպանում է վավերագրականությունը: Իսկ այս ֆիլմում դա առավել քան արդարացված է, քանի որ նրա գլխավոր հերոսը վավերագրող ռեժիսոր է, որի դերը կատարում է կինոռեժիսոր Սուրեն Բաբայանը (վերջինիս «Խենթ հրեշտակ» ֆիլմում, ինչպես նշել ենք արդեն, իր հերթին, ռեժիսորի դերում հանդես էր եկել Հ.Խաչատրյանը): Ֆիլմում նկարահանվել են նաեւ նկարահանող խմբի մյուս անդամները, ինչպես նաեւ Երեսնի մուրացկանները, անտուններն ու որբերը, կալանավորները, բժիշկները: Նկարահանող խումբը գնում է տարբեր տեղեր, «հանդիպում ունենում» կյանքի, իրականության տարբեր շերտերի հետ: Կիրառված դրամատուրգիական հնարքները, օրինակ, խեղճ ու կրակ մարդկանց խմիչք բաժանելն ու սպասված «ինտրիգը» ֆիլմի մեջ ներմուծելը իբրեւ «Չբավորների խնջույք», ինչ-որ տեղ վարկաբեկում է վավերագրող ռեժիսորի մասնագիտությունը: Սակայն, ըստ ֆիլմի, այդպես է վարվում նրա գործող անձ հանդիսացող վավերագրող ռեժիսորը: Այս ֆիլմն ու-

նեցավ փառատոնային կենսագրություն՝ ցուցադրվելով Ռոտրոդանում, Կատլովի Վարիում, Արգենտինայում եւ այլուր՝ միջազգային ճանաչում բերելով իր ռեժիսորին:

2005-ին Ռոտրոդամի միջազգային կինոփառատոնի Հյուբերտ Բալս հիմնադրամի աջակցությամբ նկարահանվեց «Պոետի վերադարձը» (սցենարի հեղինակ՝ Միքայել Ստամբուլցյան) ֆիլմը, որ նվիրված է մեծ բանաստեղծ եւ փիլիսոփա աշուղ Ջիվանուն: Դարձյալ վավերագրական ոճով նկարահանված այս խաղարկային կինոնկարում միաձուլված են ֆիլմի ստեղծման երկու տարբեր մեթոդները: Ջիվանին էկրանին հայտնվում է արձանի տեսքով. իր պոեզիայով՝ երգերով ներկայանալուց բացի, որ ժամանակ առ ժամանակ հնչում են ֆիլմում: Այսինքն՝ եթե խոսենք զուտ կինեմատոգրաֆիկ նյութի, կինեմատոգրաֆիկ կերպարի դիտանկյունից, ապա ֆիլմի «հերոսը» պոետի արձանն է, որի երկունքն ամրագրված է կինոժապավենի վրա: Մենք տեսնում ենք քանդակագործ Արտաշես Հովսեփյանի աշխատանքի տարբեր փուլերը՝ սկսած կավին «շունչ փչելուց» մինչեւ քարի ընտրությունը, նրա տեղափոխումը եւ այլն: Ահա հսկայական քարի ներսից «դուրս է բերված» պոետի կերպարը, իսկ նրա մեջքին փայտե խաչ հիշեցնող ամրակ է կապված: Մինչ բեռնատար մեքենայի մեջ տեղադրվելը, պարաններով կապկպված արձանը պտտվում, ասես, «ճախրում է» օդում՝ սակայն ի տես դնելով իր «խաչը», որ քանդակի ստեղծման որոշակի փուլ է հանդիսանում: Ֆիլմում արձանը ճամփորդում է Հայաստանի միջով՝ դեպի Ջիվանուն ծնած Ջավախք: Արձանը պոետի՝ քարի մեջ մարմնավորված ոգին է, հենց ինքը պոետն է՝ «տեսնում» է, «լսում», «ժպտում», խոժոռ կամ գոհ ու խաղաղ «նայում» եւ այլն: Ֆիլմի հեղինակները եւ օպերատորները (Վ.Պետրոսյան, Ա.Միրաքյան) նման գեղարվեստական արդյունքի են հասել՝ հմտորեն կիրառելով կինոարվեստի արտահայտչամիջոցները. ռակուրսները, տարբեր հղացումների սահուն մոնտաժային հերթագայումը եւ, իհարկե, լույսը՝ նրա հագիվ նկատելի ելեւէջները: Ֆիլմի բարձրակետը երկու պոետների «հանդիպումն» է անշուշտ: Գյումրիի միջով անցնելիս Ջիվանու արձանը մի պահ «կանգ է առնում» Իսահակյանի արձանի առջեւ, ու երկու մեծ պոետները, որ իրենց երկրային կյանքում չեն հանդիպել, դեմոնստրացիոն «նայում» են իրար: Արձանը, քանդակը ինքնին «անշունչ» չէ: Սակայն տվյալ դեպքում խոսքը զուտ կինեմատոգրաֆիկ միջոցներով այն «կենդանացնելու», «մարդեղեն» դարձնելու մասին է: Դեպի Կարգախ՝ Ջիվանու ծննդավայր ուղևորված պոետի արձանն ամենուր դիմավորում ու ճանապարհում են դիոլ-զուոնայով, ազգային ծիսակարգերով, սակայն վերջում Ջիվանու արձանը «հավերժական ուխտավորի» նման մնում է ճանապարհին՝ ձյան տակ, ասես, սպասելով վերադարձի համար առավել բարենպաստ ժամանակների... Մի կողմից, նրա ժամանակավոր հանգրվանը ներառած կադրը ամփոփում է պոետական «անվերջ վերադարձի» միտքը, մյուս

կողմից՝ այդ պատկեր-կերպարը կարող է առօրեական իմաստով ընկալվել, օրինակ, որ բեռնատարը պարզապես խրվել է ցեխերի մեջ եւ միգուցե կկարողանա դուրս պրծնել տարվա եղանակի փոփոխությունից հետո, կամ պատմական տեսանկյունով դիտվել՝ վերջնականորեն կորսվելու շեմին հայտնված Ջավախքին որքանով է պետք իր «պոետի վերադարձը»: Այնուամենայնիվ, դժվար է անվերապահորեն ընդունել կինոյի զուտ գեղագիտական հայեցակարգ-մոտեցումով հղացված այդչափ բազմանշանակ ու վերացարկված վերջաբանը: Ավարտի հասնելով՝ պատումը ձգձգվածության պատճառով կորցնում է իր որոշակիությունը, դառնում է աղոտ: Ճիշտ է, պոետն առհասարակ ժամանակից դուրս է՝ հավերժականի տիրույթում է, բայց որքանով է ֆիլմում պատկերված հենց Ջիվանու բանաստեղծական աշխարհը. միայն նրա որոշ երգերի կատարումներում: Վերջիվերջո, եթե վավերագրական մեթոդով նկարահանված այս հեղինակային ֆիլմ-ռեպորտաժը դիտի անտեղյակ հանդիսատեսը կամ մեզնից շատ ավելի հետո եկող սերունդը, ինչ պատկերացում կկազմի մեր ապրած ժամանակի մասին, ինչ կասի նրան այս «ժամանակի փաստաթուղթ», ինչին ընդհանուր առմամբ հավակնում է ցանկացած ֆիլմ:

2005-ին «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջանակներում կայացավ եւս մեկ հայկական ֆիլմի պրեմիերա. խոսքը Էդգար Բաղդասարյանի «Մարիամ» կինոժապավենի մասին է: Ֆիլմի հերոսուհին ուսուցչուհի է եւ աշխատում է խուլուհամբերի մասնագիտացված դպրոցում: Գլխավոր դերակատարմամբ հանդես է եկել Ժանեթ Հովհաննիսյանը, որի զուսպ, համոզիչ խաղը ֆիլմի ամենաակնհայտ ձեռքբերումներից է: Պրոֆեսիոնալ դերասանների կողքին այստեղ նկարահանվել են նաեւ լսողության խանգարում ունեցողների դպրոցի ուսուցիչներ, աշակերտներ ու շրջանավարտներ: Մենակությունից տանջվող հերոսուհին իր տանը գտնվելիս ինչ-որ սուր ձայն է սկսում լսել: Այդ ձայնի առաջացրած ուժգին արձագանքից փշրվում են ապակիները, եւ ներխուժում է տագնապալի-ագրեսիվ լույս... Երիտասարդ կնոջ մեջ կատարվող իրադարձությունների միստիկ բնույթը հասցնում է նրան հոգեկան հավասարակշռության խախտման եզրին: Հերոսուհին ազատվում, փրկվում է իրեն հալածող արտառոց երեւոյթներից, երբ հղիանում է, պատրաստվում մայր դառնալ: Մի կողմ դնելով ֆիլմի սցենարական թույլ եւ վիճելի կողմերը, անդրադառնանք նրա պատկերաշարին: Ֆիլմը տեխնիկապես նկարահանված է վարպետորեն (օպերատոր՝ Վ.Տեր-Հակոբյան), առկա է կինեմատոգրաֆիկ բարձրաձաշակ պատկերման մակարդակը, սակայն անվերջանալի երկար ձգվող, ձանձրալի տեսարանները, որ իրենց ասելիքը սպառելուց հետո էլ դեռ շարունակվում են, ֆիլմի համար բնավ շահեկան չեն, որքան էլ հմտորեն բեմադրված ու նկարահանված լինեն: Այդուհանդերձ, Էդգար Բաղդասարյանի «Մարիամը» նյութի ընտրության տեսանկյունից նորույթ էր մեր կինոյում:

Նյութի թարմությամբ աչքի ընկավ նաեւ Վիգեն Չալդրանյանի «Քրմուհին» ֆիլմը (2007, սցենարի հեղինակներ՝ Վ. Չալդրանյան, Ա. Աղասարյան), որ Հայաստանի եւ ԱՄՆ համատեղ արտադրություն է: Պատմական նյութի «գլամուրային» պատկերումը, հովվերգական ոճազարդումը, իրենց մակերեսայնությամբ հանդերձ, նոր երեսույթ են մեր կինոյի համար: Բացի դրանից, այստեղ մոնտաժային համադրումների միջոցով հարաբերվում ու կապվում են ներկան՝ XXI դարը, եւ հեռավոր IV դարը, որ կրում է հեթանոսության վախճանը եւ հայ ժողովրդի հոգետը վերածնունդը՝ անցումը քրիստոնեության: Հեթանոսական տաճարի քրմուհի-գուշակը (Ռուզան Մեսրոպյան), իրավունք չունենալով ապրել աշխարհիկ կյանքով, սիրահարվում է մի երիտասարդի՝ սովորական մահկանացուի, ինչն առաջ է բերում քրմապետի (Կ. Զանգիբեկյան) եւ ժողովրդի զայրույթը: Քրմուհու հոր (Կ. Զանգիբեկյան) սերն ու հոգատարությունն անկարող են նրան պաշտպանել: Սիրելին զոհվում է, իսկ ինքը՝ անիծված իր կրոնից ու աստծուց, խորթ եւ օտար՝ նոր կրոնին, դատապարտվում է հավերժական տառապանքի՝ ժամանակների միջեւ: Հայտնվելով մեր օրերում՝ նա ենթարկվում է ավտովթարի: Ճիշտ պահին, ճիշտ տեղում հայտնված պատմաբանը (Վ. Չալդրանյան) փորձում է օգնել նրան... Ֆիլմում փորձ է արվել ստեղծել մեր հեթանոսական անցյալի կորսված, ըստ էության, անհայտ տեսողական կերպարը, ինչը հնարավորություն է տվել հեղինակներին գնալ հորինվածքի, երեսակայության հետքերով:

Այսպիսով՝ քննարկման համար մենք ընտրեցինք մի քանի լիամետրաժ կինոնկարներ, որոնց հեղինակները մեր արդի կինոյի առավել հայտնի ու ակտիվ գործող դեմքերն են: Իսկ առանձին օրինակների դիտարկումն անհրաժեշտ է ներկա ֆիլմարվեստի ընդհանուր բնութագիրը տալու համար: Այսօր որքան էլ խոսում են միջոցների բացակայության մասին, 2000-ից ի վեր Հայաստանում նկարահանվել են մոտ 60 լիամետրաժ եւ կարճամետրաժ գեղարվեստական խաղարկային ֆիլմեր, այսինքն՝ երկու անգամ ավելի, քան անկախության առաջին տասնամյակում, մոտ քսան մուլտիպլիկացիոն եւ դարձյալ մեծ թվով վավերագրական ֆիլմեր: Իհարկե, մեր հեղինակներն աշխատում են հաճախ նվազագույն միջոցներով, բայց ֆիլմերի անկատարությունը, ինչպես տեսանք, միշտ չէ, որ կարելի է բացատրել՝ բերելով ֆինանսական պատճառաբանումներ: Ներկա գտնվելով իրարահաջորդ պրեմիերաներին ու նաեւ մեծ ընդմիջումներով ցուցադրվող հայկական ֆիլմերին, ընդհանուր առմամբ, քեզ համակում է անբավարարության զգացումը: Ու եթե ամբողջության մեջ դրանք հաջողված չես անվանի, համենայնդեպս, այդ ֆիլմերը մեր ազգային կինոյի ինչ-որ փուլ են ներկայացնում:

Մեծ ֆիլմեր դիտելիս համոզվում ես, թե որքան տարաբնույթ կարող են լինել տաղանդի, կատարելության դրսեւորումները, իսկ երբ ֆիլ-

մերն ինչ-որ առումով ստացված չեն՝ միտքդ զարմանալիորեն սկսում է փնտրել այն, թե ինչն է «միավորում» դրանք... Դիտարկված բոլոր ֆիլմերում կան առանձին հաջողված դրվագներ, տեսարաններ եւ, իհարկե, կերպարներ՝ մարմնավորված շնորհալի դերասանների ուժերով: Հեղինակներն էլ զուրկ չեն մասնագիտական հմտությունից, այս կամ այն չափով առկա է նաեւ ներշնչանքը: Սակայն, երբ ստեղծագործողը չափից դուրս է տարվում գտածով՝ կորցնում է չափի զգացումը, արդյունքում՝ հեռանում է իր իսկ նշանակետից: Այո, երբեմն արժե հրաժարվել շլացուցիչ թվացող մասերից՝ հանուն գործի ամբողջականության, ոճական միասնության՝ ստեղծագործական ազահություն ցուցաբերելու փոխարեն: Մի կարեւոր հանգամանք եւս. մեր ֆիլմերին հիմնականում պակասում է մթնոլորտը՝ այն, ինչ ընդունված է անվանել «գործողության երկրորդ պլան»: Կինոյում ամենադժվար տրվող բանը մթնոլորտի վերատեղծումն է երեւի թե: Իսկ պատճառներից մեկը հեղինակների ստեղծագործական մեկուսացումն է: Հիրավի, ինչ է ստացվում. ունենք ռեժիսորներ, բայց չունենք ռեժիսուրա՝ համակարգ: Հեղինակի մեկուսացման մեջ ծնված գործում առկա տառապանքն առավելագույն չափով անձնական բնույթ է կրում: Չկա մեր իրականության համընդհանուր տառապանքի իմացություն. կա դրա մասնակի գիտելիք: Չկա գեղարվեստական ընդհանրացում, համընդհանուր տառապանքի մեջ իր բաժին ապրումների որոնում ու երեւակում, կա կենտրոնացում սեփական անձի ու սեփական ապրումների շուրջ: Մի խոսքով՝ բացակայում է տառապանքի այն «ինքնուրույնությունը», որով արվեստագետը հարաբերվում է հավերժականի ու իր ժամանակի հետ: Իսկ սա բավականին ծանր «ախտորոշում» է: Եվ որքան էլ այսօր բարձրաձայնենք հայ հանդիսատեսի ու մեր կինոյի ընդհատված կապի մասին, վստահորեն կարելի է ասել, որ եթե հանկարծ հայտնվի մի տաղանդավոր գործ, որի մեջ շոշափվի ժամանակի զարկերակը, լավի նրա շնչառությունը, որը համընկնի ժողովրդի կենսառիթմերի հետ, այն հազիվ թե աննկատ մնա:

Հին առասպելներն ու մաշված գաղափարախոսությունները փլվել են, եւ արժեքների վերագնահատում էլ կարծես տեղի չի ունենում մեզանում: Այսօր, երբ հայտնվել ենք նոր, ազատ իրականության մեջ՝ առանց գաղափարների ու գաղափարախոսության, առանց շրջանակների ու կաղապարների, ակնհայտորեն գործ ունենք ոչ այնքան ազատության, որքան նրա վերասերման հետ: Դա նկատելի է ժամանակակից հեղինակների որոշ գործերում (լինի դա կինո, թե գրականություն), մանավանդ տարատեսակ հեռուստահաղորդումներում եւ այսպես կոչված՝ «շոուներում», որոնցում հաճախ է դիտվում չափի զգացման կորուստը, աչք են ծակում անձաշակությունն ու մտահորիզոնի սահմանափակությունը, հաճախ՝ պարզապես գրագիտության պակասը: Ինչ իմանանք, գուցե բնականոն ընթացք է. անազատությանը չի կարող հաջորդել բնօ-

րինակ ազատություն, եւ ժամանակ է պետք այդ ազատության ինքնագիտակցման համար: Իսկ ներկա փուլը, որ արդեն բավական երկար է ձգվում անցողիկ կոչվելու համար, ավելի շուտ որպես ճգնաժամային կարելի է բնութագրել ու դիտարկել:

Որքան էլ տարօրինակ թվա, ժամանակին՝ 1929-1933թթ. տնտեսական խոր ճգնաժամից՝ «Մեծ դեպրեսիայից» Միացյալ Նահանգները դուրս բերեց հենց կլինտոն, որ ամերիկացիներին էկրանից մատակարարում էր աննյութ, բայց շատ էական եւ հուսադրող անհրաժեշտությամբ՝ «երազանքով»: Դա ամրապնդում էր հանդիսատեսի հետ կապը, որն այն օրերին, ինչպես ասում էին՝ «կլինոթատրոնի տոմսը գերադասում էր մի կտոր հացին»: Փաստորեն, անցյալ դարի 30-ականների սոցիալական դրամաները ստեղծում էին «հաջողության դիցաբանություն» եւ դրանով իսկ մղում էին հաջողության, խթանիչ դեր ունեին այդ հասարակության համար: Առհասարակ, կարելու հարց է, թե ի՞նչն է ընկած ստեղծագործության, մասնավորապես ֆիլմի հիմքում՝ բախումը, թե՛ երազանքը: Խորհրդային շրջանում «կոմունիստական պայծառ գալիքի» գաղափարախոսությամբ ու իդեալներով պարտադրվող «բախումների» արանքից էկրան էր սողոսկում նաեւ մեր ազգային «երազանքը»՝ կորուսյալ Հայրենիքի գաղափարը («Ինչն է աղմկում գետը» եւ «Մարոյան եղբայրներից» մինչեւ «Կարոտ»), համախմբվելու, միասնական լինելու երազանք-գաղափարի հետ մեկտեղ («Բարեւ, ես եմ», «Եռանկյունի», «Մենք», «Հայրիկ» եւ նույնիսկ՝ «Տղամարդիկ» կատակերգության մեջ): Ինչ վերաբերում է ժամանակակից հայ կլինոյին, ապա այս տեսանկյունից դիտարկելով վերջին տասնհինգ տարիներին Հայաստանում նկարահանված ֆիլմերը, կարող ենք ասել՝ դեռեւս (գոնե կլինոյում) չի ձեւավորվել մերօրյա «երազանք», եւ անգամ պարզ չէ, թե ինչպիսին է մեր վերաբերմունքն անցյալի, ինչպես նաեւ անցյալի երազանքների հանդեպ: Այնինչ երազանքը ինքնությունը երեւակող պարագա է: Չուր չէ, որ ասում են՝ մարդու (ուրեմնե՝ ազգի) մասին կարելի է դատել ըստ նրա երազանքների: Եվ արդի գլոբալացման պայմաններում նույնիսկ ողջ աշխարհում հաճախ է կարեւորվում ինքնության, նրա փոփոխման ու նոր ժամանակներում որոնման խնդիրը, ինչն անշուշտ արվում է կլինոյի միջոցներով եւ, առաջին հերթին, նրանում թաքնագրվող երազանքների օգնությամբ: Ուշագրավ է անցյալ դարի ամենահայտնի սցենարիստներից մեկի՝ Ժան-Քլոդ ֆարիերի (վերջինս համագործակցել է այնպիսի խոշոր ռեժիսորների հետ, ինչպիսիք են Լյուիս Բունյուելը, Ֆոլկեր Շյոնդորֆը, Փիթեր Բրուքը) դիտարկումը. «Այն ժողովուրդը, որն այլեւս իր կերպարները չի ստեղծում, դատապարտված է անհետացման: Այն ժողովուրդը, որը XXI դարում իրեն չի ճանաչի առաջարկված կերպարներում՝ գեղարվեստական ֆիլմերում, կարող է անհետանալ»:

Քսաներորդ դարը, անշուշտ, կլինոյի դար էր, եւ առավելապես, արվեստի այս տեսակի օգնությամբ էին տարբեր ժողովուրդներ ստեղ-

ծում իրենց ներկայացուցչական կերպարը, այսինքն՝ կոմերցիոն կողմից բացի, կինոն ուներ ռազմավարական նշանակություն: Թերեւս մի շարք երկրների կինեմատոգրաֆում այսօր էլ նկատվում է այդ մոտեցումը, որքան էլ որոշ քննադատներ պնդեն, թե գնալով ընդգծվում է կինոյի «անդրազգային» բնույթը: Ու որքան էլ առատանում են համատեղ արտադրության ֆիլմերը, միեւնոյն է, դրանցում աչքի են ընկնում նախազծի մասնակից տարբեր կողմերի շահերը, եւ հաճախ՝ բացահայտ կերպով:

Եվրոպայի եւ Ասիայի խաչմերուկում գտնվող Հայաստանը պիտի կարողանար մշակութային տիրույթում հավասարակշռված դիրք գտնել՝ նորովի ապրելով Արեւմուտքի եւ Արեւելքի սահմանագծում: Լինելով հին մշակույթ ունեցող ժողովուրդ, որը կրում է գեղարվեստական գիտակցության թե՛ արեւելյան, թե՛ արեւմտյան գծեր, մենք կարող էինք առաջատար լինել տարածաշրջանում, դառնալ մշակութային կենտրոն: Վերջապէս, վաղուց ժամանակն է հազարամյակներ հարատեւած մեր գեներտիկ հիշողությունն ու կենսափիլիսոփայությունը կինոօբյեկտիվի միջով տեսնելու եւ վերաիմաստավորելու: Մի՞թե հնադարյան մեր սովորույթները, բանահյուսական վիթխարի նյութը չեն սպասում դրան, եւ արդիական անդրադարձով էկրան հանվելու դեպքում զուրկ կլինեն կինեմատոգրաֆիական գրավչությունից: Ի վերջո, ինքներս այնքան ենք օտարվել մեր ունեցածից, որ թերեւս առաջինը կզգայինք այդ ամենի տարաշխարհիկ հմայքը: Միայն վերջին երկու տասնամյակը ինչպիսի՞ ահռելի նյութ է մեզ տվել: Իսկ մե՞նք... Ո՞ր նյութն ենք համարում գեղարվեստական իմաստավորման արժանի, մեր իրականության ո՞ր մասն ենք փորձում ընդհանրացնել եւ պատկերել:

Համաշխարհային արդի կինոարվեստի կենտրոնական դեմքերից մեկը դարձած Էմիր Կուստուրիցան իր արդեն գոյություն չունեցող երկրին՝ Հարավսլավիային բաժին ընկած ողբերգություններն ու աղետները որպէս գեղարվեստական նյութ մարսելով՝ ստեղծեց ամբողջատիրական երկրի կերպարն ամփոփող կինեմատոգրաֆիական լայն կտավ՝ «Ընդհատակը»: Այս ֆիլմի մեջ նա ներմուծեց սերբական դիցաբանական մոդելը՝ իր ծիսական ու կերպարային համակարգով. «փակի տակ պահված» ջրհորների ու ջրերի ազատագրում, պայմանական ընդհատակյա հարսանիք, թեւավոր-սմբակավոր հարսնացու եւ այլն: Բայց այդ բոլոր առասպելական տարրերը օրգանապէս ներհյուսվեցին մնացած իրական կերպարներին, առանց խոչընդոտելու դեպի համաշխարհային հանդիսատես տանող ճանապարհը: Քսաներորդ դարի կոնկրետ իրականությանը ձուլելով ոչ միայն հնագույն դիցաբանության, այլեւ հենց նույն դարաշրջանի «տոտալիտար դիցաբանության» հերոսներին՝ կոմունիստական բռնապետերին, մեծատաղանդ այս ռեժիսորը վերաիմաստավորեց ներկան եւ մոտ անցյալը հավերժական ժամանակի համատեքստում, արդիականությունը վերաբնա-

կեցրեց նախապատմական ժամանակներում: Այդկերպ՝ «բալկանյան» եւ ոչ միայն բալկանյան ողբերգությունների մասին կինեմատոգրաֆիկ անարխիայի տրամաբանությամբ պատմող ֆիլմում ներկայացավ եւ ամփոփվեց որոշ տիեզերական արժեքների կորստյան եւ ձեռքբերման շղթան՝ դասելով այս երկը արտաժամանակային մեծ գործերի շարքը:

Ամեն մի ժողովրդի դիցաբանության, առասպելի մեջ թաքնագրված է նրա գոյության կողը: Այնպես որ, դրանից հեռանալը բերում, կանգնեցնում է փակուղու առջեւ: Ավելորդ չէ խոսել այն մասին, թե ինչպես կարող էր հարստանալ մեր կինոարվեստը, գեղարվեստական ինչ մակարդակի կարող էր հասնել, եթե հայ բեմադրիչներն էլ դիմեին մեր առասպելաբանությանն ու դիցաբանությանը (հասկանալի է, բնավ նկատի չունենք ուղղակի «էկրանավորում» ասածը կամ ասենք՝ «Արա Գեղեցիկ եւ Շամիրամի», «Սատուցի Դավթի» հեղինակային կինոտարբերակների ստեղծումը, թեւեւ դա մտադիր էր անել Փարաջանովը)՝ յուրացնելով դրանցում առկա այլաբանական աշխարհայացքն ու մտածողությունը, որ բխում է մեր կենսափիլիսոփայությունից, հատուկ է մեր տեսակին ու մեր կեցությանը, բայց միեւնոյն ժամանակ, համամարդկային է: Առասպելի ազդեցությունը մեր գիտակցության վրա պայմանավորված է թե՛ նրա համընդհանուր անգիտակցական բնույթով, թե՛ նրանում առկա խորհրդանշաններով, որոնք ներգործում են մեզ վրա՝ անկախ մեր գիտակցությունից: Ակնհայտորեն, ինչպես նշեցվեց արդեն, այլաբանության լեզուն բերում է համամարդկային լեզվի, բայցեւ (այստեղ հակասություն չկա) կապում է ազգային բանահյուսության, ազգային մշակութաբանական գիտակցության հետ: Պատահական չէ, որ մեր ազգային կինոյում ուրույն տեղ են զբաղեցրել ժողովրդական հեքիաթների, բանահյուսական ստեղծագործությունների թումանյանական մշակումները: Այդ էկրանավորումներն անասելի հարստացրել են նաեւ կարճամետրաժ ֆիլմերի հայկական դպրոցը: Բացի դրանից, մեծ գրողի թողած ժառանգությունը իր հետաքրքիր անիմացիոն մեկնաբանությունը գտավ մեր ազգային մուլտիպլիկացիայում՝ Ռոբերտ Սահակյանցի եւ Լյուդմիլա Սահակյանցի ստեղծագործության մեջ փոխակերպվելով յուրօրինակ պատկերային մտածողության:

Մեր կինոբեմադրիչներին, իհարկե, միշտ գրավել է այլաբանական մտածողությունը. դրա բարձրակետերն են Փարաջանովի «Նռան գույնը», Փելեշյանի «Մենքը» եւ «Տարվա եղանակները»: Խորհրդային շրջանի վերջին եւ հետխորհրդային, հատկապես, առաջին տասնամյակի հայկական ֆիլմերը (այնպիսի հեղինակների գործերը, ինչպիսիք են օրինակ՝ Ս.Բաբայանը, Վ.Չալոբանյանը, Մ.Դովլաթյանը, Տ.Խզմալյանը, Է.Բաղդասարյանը), ունենալով գեղարվեստական տարբեր մակարդակներ, կրում են այլաբանական կինեմատոգրաֆի տարրեր: Սակայն հարկ է նշել, որ թեւեւ ակնհայտ է այս ռեժիսորների «կինոյի զգացողությունը», ինչպեսեւ ժամանակի՝ «էպոխայի զգացողությունը», առկա

է նաեւ մարդկային հուզական, զգայական շերտը, նրանք ֆիլմը որոշ առումով մտահայեցողական կառույցի ճանապարհով են ստեղծում: Իհարկէ, դրանցում շոշափվում են կյանքի, ժամանակի ցավոտ կետերը, սակայն շոշափվում է նաեւ կինոյի համար այդքան անհրաժեշտ կենսականության պակասը, որի արդյունքը հաճախ կյանքի արհեստական «ռեկոնստրուկցիան» է:

Հաշվի առնելով վերջին երեսուն տարում արեւելյան՝ չինական, կորեական, մանավանդ՝ պարսկական (ոչ թանկարժեք, ոչ այնքան ծախսատար) կինոյի վերելքը համաշխարհային կինոգործընթացում, կարելի է ուղենշել մի ուրիշ ճանապարհ եւս. արեւելյան պարզության առավելությունները՝ տարողունակ ու խոր, բազմաշերտ ու ընդգրկուն: Հիրավի, գուցե ավելի ցանկալի է վերադառնալ առավել պարզ կինեմատոգրաֆիական լեզվի զինանոցին, դիմել մարդկային պարզ ճշմարտությունները վերհանող դիպաշարերին, քանի որ դա կարելի է անվերջ նորովի անել եւ անգամ տարբեր եղանակներով հասցնել այլաբանական բազմաշերտ հնչողության՝ մանավանդ, երբ առկա են տաղանդը, ճաշակը, սեփական աշխարհայացքը:

Կինոն տեխնիկական միջոցներից զատ, ոչ պակաս կարիք ունի գեղարվեստական արտահայտչամիջոցների ու ձեւերի նորոգման, գեղարվեստական «նոր գաղափարների» կարիք, քանի որ ամեն մի ժամանակաշրջան իր հետ բերում է իր թեմաներն ու արտահայտչական իր եղանակները: Նոր լեզվի ծնունդն ավելի հաճախ կապված է լինում նոր սերնդի մուտքի հետ, որն իր հետ բերում է նոր կինոմտածողություն: Բայց արվեստը շահում է, երբ ոչ թե կտրականապես մերժում, այլ ինչ-որ տեղ նաեւ վերափմաստավորում է անցյալի ավանդույթները, նվաճումները: Վերջապես, կինո ստեղծելու համար շատ կարեւոր է երկրում կինոմթնոլորտի առկայությունը: Սակայն նոր ժամանակներում ոչ միայն ստեղծագործողները հայտնվեցին մեկուսացած վիճակում, այլեւ ինքը կինեմատոգրաֆը: Կտրվեց նրա կապը հանդիսատեսի հետ: Հիմա հանդիսատեսն առաջվա պես չի նետվում կինոթատրոն. միայն պրեմիերաների օրերին է կինոդահլիճը լեփլեցուն լինում: Գուցե մեծ սպասելիքներ չունի կամ ընտելացել է հեռուստացույցին: Ցավալին այն է, որ հեռուստատեսությամբ ցուցադրվելու դեպքում էլ դրանք չեն հասնում հայ հանդիսատեսին: Վերջինս կարծես հետ է վարժվել հայկական կինո տեսնելուց կամ լավագույն դեպքում, երբեմն կարոտից, թե՛ սովորության ուժով, դիտում է հին ու բարի հայկական ֆիլմերը: Այնինչ հասարակությունն ուզում է իր այսօրվա օրը, այսօրվա խնդիրները տեսնել էկրանին: Իսկ մեր կինեմատոգրաֆը մեծամասամբ այդպիսի բովանդակության նմուշներ չի առաջարկում եւ այդտեղ «շահում են» ժողովրդի հոգու լարերի վրա նվազող հեռուստատեսիվները, թեւ դրանք ցածրորակ են եւ իրենց արժարժած թեմաների առումով եւ դրանց դրամատուրգիական ու լեզվական մշակման տեսանկյունից:

Ռեժիսուրա դրանցում առայժմ կարելի է ուղղակիորեն ասել՝ չկա, եւ մի սենյակից մյուսը տեղափոխվող հերոսների՝ ժամանակ առ ժամանակ փողոց դուրս գալն ու թանկ ավտոմեքենաներ նստելն էլ դրությունը չի փրկում, դերակատարումներն էլ մակերեսային են, աններելի նատուրալիստական կամ կեղծ թատերային: Վերջապես, ովքեր են դրանց հերոսները, ինչ ապրելակերպ եւ «իդեալներ» են դրանք քարոզում:

Այնուամենայնիվ, հնարավորինս անաչառ լինելու համար ասենք, որ գնալով հմտանում են որոշ սերիալների վրա աշխատող մարդիկ, եւ դիտվում է որակական որոշ տեղաշարժ: Կայացած դերասանների ներկայությունը նույնպես ինչ-որ տեղ հարստացնում է հայտնի գծապատկերներով գործող, այդ գծապատկերների ծնունդ հանդիսացող սերիալային կերպարներին. անհատական կնիք, հետաքրքիր ֆակտուրա ունեցող դերակատարների ներգրավումը թույլ է տալիս առավել խորացված ցույց տալ ժամանակակից իրականության այն կողմերը, որոնց գրեթե չի անդրադարձել մեր կինեմատոգրաֆը: Բայց միեւնույն է, ընդհանուր առմամբ, մեր հեռուստատեսիալները առավելապես սոցիալական երեւոյթ են եւ պրոֆեսիոնալ տեսանկյունից դեռեւս շատ հեռու են կինոյի հետ առնչություն ունենալու համար: Բավական է համեմատել դրանք որոշ հեռուստաալիքներով ցուցադրվող ռուսական (էլ չենք ասում՝ եվրոպական) բազմասերիանոց ֆիլմերի հետ, որոնք նկարահանվում են կինոյի հիմունքներով եւ որոնցում առկա են կինեմատոգրաֆիկ լուծումները: Այդ ֆիլմերի ծախսերն, իհարկե, համապատասխանաբար շատ ավելի են: Բայց, ամենայն հավանականությամբ, մեծ դրամական միջոցների հատկացումը հազիվ թե փրկեր դրությունը մեր միջավայրում: Ինչ է, քիչ ֆիլմեր կան կինոյի պատմության մեջ, որ նկարվել են մի տան սահմաններում: Այսինքն՝ եթե անգամ տեխնիկական եւ ֆինանսական նկատառումներով, սերիալների հեղինակները նախընտրում են անհամեմատ էժան՝ «օձառապղպջակային օպերաներ» ստեղծելու ճանապարհը, ապա կարելի է որակ ապահովել՝ աշխատելով դրանց բովանդակության, հերոսների երկխոսությունների վրա: Աշխարհում ոչ մի երկրի հեռուստատեսություն չի խուսափել սերիալներից: Եվ վստահորեն կարող ենք ասել, որ դրանք իրարից տարբերվում են իրենց մակարդակով, այսինքն՝ նույնիսկ տվյալ հեռուստաալիքի մակարդակի մասին կարելի է դատել՝ ելնելով ցուցադրվող սերիալների որակից:

Ժամանակին մարդուն, անհատին ձեւավորում էին գրականությունը եւ թատրոնը: Բայցեւ դժվար թե եղած լինեն ժամանակներ, երբ գրական ստեղծագործություններում ու թատերական բեմում հնչող լեզուն չի տարբերվել խոսակցականից: Իրենց հերթին խոսակցական լեզվի փոփոխությունները միշտ ազդել են ստեղծագործական լեզվի վրա: Հակառակ դեպքում, օրինակ, քսաներորդ դարի դրամատուրգների հերոսները կխոսեին հին հունական հերոսների վերամբարձ ոճով: Չմոռանանք նաեւ, որ հատկապես այդ դարաշրջանում ի հայտ եկավ,

այսպէս կոչված, «մասսկուլտուրան»՝ զանգվածային արվեստը, էլ չենք խոսում կինեմատոգրաֆի, իսկ ավելի ուշ՝ հեռուստատեսության ծննդի մասին: Եվ ահա գրականությունն ու թատրոնը իրենց կրթող եւ մտածողություն ձեւավորող դերը սկսեցին կիսել նախ կինոյի, իսկ հետո նաեւ հեռուստատեսության հետ: Այսօր մի կողմ դնելով, թե աշխարհում ինչպիսին է «իրերի դրությունը», մեր իրողությունն ու կենցաղը վերլուծելով, կարող ենք ասել, որ հասարակություն ձեւավորողն առաջին հերթին հեռուստատեսությունն է, գերակշիռ տոկոսը նրան է պատկանում, եւ հետո նոր փոքր չափաբաժիններ հասնում են համացանցին, մամուլին, այնուհետեւ, էլ ավելի փոքր՝ գրականությանը, թատրոնին ու կինոյին (երբ ասում ենք կինո, նկատի չունենք հայկական կինոարտադրանքը, որին, անկախ որակից, անտեղյակ է մեր հասարակությունը, ինչպէս արդեն նշել ենք):

Իսկ թե ինչ լեզու է հնչում մեր եթերում (նկատի ունենք զանգվածային հաջողություն վայելող հեռուստաշոունները, երաժշտական հաղորդումները եւ սերիալները), ինչ մտածողություն եւ ապրելակերպ են քարոզվում՝ ապա դա մեր հետընթացին ու հոգեզրկմանը տանող ուղղակի ճանապարհն է, եթե չասենք, որ դարերի ընթացքում ձեւավորված մեր նկարագրի կորսման, անհետացման ճանապարհը: Այդ եթերային (առանց չակերտի) աղբն է այսօր սերունդ ձեւավորում, եւ ոչ այնքան՝ ընտանիքը, ու առավել եւս՝ ոչ դպրոցը, որը վաղուց կորցրել է իր որակավորումը, դերն ու նշանակությունը: Խոսելով հեռուստատեսության լեզվի մասին, մանավանդ, զվարճալի ծրագրերի եւ «թոք-շոունների»՝ գրուցարան-ցուցանքների մասին, ինչպէս նաեւ՝ սերիալների, բնավ նկատի չունենք, որ դրանցում պետք է հնչի գրական, ակադեմիական հայերենը: Ավելին՝ լեզուն միշտ շարժման, դինամիկայի մեջ է, քանի որ կենդանի օրգանիզմ է, ոչ թե թանգարանային նմուշ: Այն միշտ թարմանալու, ինչո՞ւ չէ, նաեւ զարգանալու կարիք ունի: Նույնիսկ գրականությունից է հայտնի, որ ոչ միայն յուրաքանչյուր գրող ունի, բերում է իր լեզուն՝ լեզվամտածողությունը, այլեւ նույնիսկ ամեն մի հերոս խոսում է իր լեզվով: Կինեմատոգրաֆում նույնպէս ժամանակին ծագել է լեզվի հարցը: Որպէս «իրականության լեզվով խոսող» արվեստ, կինոն լուրջ խնդրի առջեւ կանգնեց հնչյունային անցնելուց հետո: Բավական է դիտել, օրինակ, անցյալ դարի 30-50-ական թվականների ֆիլմերը, ընդ որում, նշանակություն չունի՝ հայկական, ռուսական, թե՛ ասենք, ամերիկյան, համոզվելու համար, որ այն ժամանակ կինոհերոսները խոսել են խիստ թատերային, գրական պերճաշուք ոճով, որն ինչ-որ տեղ արհեստական է հնչում, մանավանդ այսօր: Ուրիշ հարց, որ շատ բան հաճախ կախված է նաեւ նրանից, թե ով է հերոսը, եւ առավել եւս՝ ով է դերակատարը:

Համաշխարհային կինոյում, այսպէս կոչված, լեզվի ազատականացումը սկսվել է Երկրորդ աշխարհամարտից հետո: Դա առաջինն արեցին իտալական նեոռեալիզմի ներկայացուցիչները, երբ կինոյի-

ցիկը տաղավարներից դուրս բերեցին փողոց եւ «աստղերից» երես դարձնելով, սկսեցին նկարահանել հասարակ մարդկանց, որոնք խտում էին իրենց առօրյա լեզվով, եւ իտալական տարբեր բարբառներին զուգահեռ հաճախ հնչում էր նաեւ փողոցի լեզուն՝ Ժարգոնը: Այդպիսով՝ Ժողովուրդը եւ նրա առօրյան դարձան կինոարվեստի նյութ: Այդ պահին նրանց մոտեցումն ընկալվում էր որպես սխրագործություն, որպես դիմադրություն ֆաշիզմի քսանամյա իշխանությանը Իտալիայում եւ «ֆաշիստական» ուժացված, կեղծ ձեւերով, իրական կյանքի հետ ոչ մի առնչություն չունեցող արվեստին: Սակայն կինոյի պատմության մեջ շրջադարձային այս ուղղության ռեժիսորները եւ սցենարի հեղինակները մշակույթի կրող ինտելեկտուալներ էին եւ խմբագրում, հղկում էին ոչ միայն իրենց ֆիլմերում տեղ գտնող առօրեական պատմությունները, այլեւ իրենց հերոսներին ու նրանց լեզուն՝ արվեստի փաստ դարձնելով նրանց:

Բոլոր Ժողովուրդների լեզուներում կան տարբեր շերտեր, որոնք պայմանավորված են այն կրողի սոցիալական պատկանելությամբ, անհատական գծերով եւ այլն: Վերջապես՝ զինվորականը, ոստիկանը կամ քրեական հանցագործը, գործարարը կամ ավտոսպասարկման ծառայողը չեն կարող խոսել «վարժապետի» լեզվով: Բայց կարելու է, որ ամենատարբեր թեմաներով գրող, ամենատարբեր հերոսների ծնունդ տվող հեղինակը (գրող, թե՛ սցենարիստ) գրագետ եւ միաժամանակ, ճկուն լինի, տիրապետի լեզվին՝ ամենալայն իմաստով, այսինքն՝ իմանա գրական, ակադեմիական լեզուն, միաժամանակ ծանոթ լինի Ժողովրդական բարբառներին եւ անգամ, Ժամանակակից լեզվական այն դարձվածներին, որոնք հիմնականում ծագում եւ արմատավորվում են Ժարգոնի՝ պենզի մեջ, սակայն նույնպես լեզվական ինչ-որ շերտ են կազմում (տեղին է հիշել Բեռնարդ Շոուի «Պիզմալիոն» պիեսի հերոս պրոֆեսոր Հիգինսին): Հայտնի է, որ մեր գրական եւ խոսակցական լեզուների միջեւ եղած խզումը բավականին մեծ է: Թե որքանով կհաջողվի հավասարակշռություն ձեռք բերել դրանց միջեւ, կախված է հեղինակների լեզվական խորիմացությունից ու ճկունությունից: Վերջիվերջո, բոլոր ասպարեզներում հայտնի օրենք է՝ կանոնի իմացությունը պարտադիր է՝ այն գրագետ ձեռով խախտելու համար, ինչպես որ ավանգարդ մեծ նկարիչ լինելու համար պետք է դասական ոճով նկարել իմանալ (Վան Գոգն առայժմ միակ բացառությունն է):

Դիտելով 1960-80թթ. հայկական բավական թվով ֆիլմեր՝ կարելի է համոզվել, որ մեր լեզուն ամենեւին էլ կարծր չէ, այլ ընդհակառակը, ունի ներքին մեծ հնարավորություններ: Այսպես՝ «Մենք ենք, մեր սարերը», «Հայրիկ» ֆիլմերի հերոսների հայերենը գրական է, գեղեցիկ, միեւնույն ժամանակ, կենդանի, հավաստի: Փայլուն դերակատարումներով հերոսները խոսում են Հրանտ Մաթեոսյանի եւ Աղասի Այվազյանի լեզվով:

Այն տարիներին մեծ թվով ռուսական ֆիլմեր կրկնօրինակվում էին, ինչպես որ ռուս գրականությունն էր թարգմանվում հայերեն, թեև ռուսաց լեզուն ընկալման առումով ոչ մի խնդիր չէր ներկայացնում: Եվ այն օրերի շատ հեռուստադիտողներ նույնիսկ բնօրինակին գերադասում էին, օրինակ՝ «Ոսկե հորթը», «Չի կարող պատահել» եւ շատ ուրիշ ֆիլմերի հայկական տարբերակները: Այսինքն՝ լեզվի խնդիր չէր ծառանում: Պետական անկախության ձեռքբերումով անկախացավ եւ հեռուստատեսությունը. խորհրդային տարիներին անհասանելի բարձրարվեստ շատ կինոնկարների հետ մեկտեղ այն հեղեղվեց նաև ռուսերեն անորակ թարգմանված ու կրկնօրինակված տեսաերիզներով տարածվող ֆիլմերով: Եվ մեր հեռուստադիտողը պարզապես հետ վարժվեց «հայերեն խոսող» հերոսների լսելուց, առավել եւս՝ գրական, ճիշտ հայերենից: Այդ իսկ պատճառով վերջին տարիներին հայկական որոշ հեռուստաալիքներով ցուցադրվող ֆիլմերի հայկական կրկնօրինակումները սրերով են դիմավորում շատ հեռուստադիտողներ, նույնիսկ անկախ այն բանից, թե որքանով են տիրապետում ռուսերենին, եւ անկախ կրկնօրինակումների որակից, որն ակնհայտորեն լավացել է: Եվ նկատելի է, որ որոշ թարգմանիչներ աշխատում են հնարավորինս ճկուն թարգմանել «խիստ ազատ» խոսող արեւմտյան կինոհերոսներին՝ միաժամանակ հետեւելով լեզվի պատշաճ մակարդակին:

- Taking into account the fact that Karabakhi Azerbaijanis are not represented directly by the Azerbaijani government and their voices and opinions are not heard the international community should consider either encouraging their representation through the Azerbaijani official entity or direct representation at the negotiation table; engaging the non-recognized authorities or entities into the negotiation process would not be a form or recognition but means of breaking their isolation and building confidence;

- International organizations, foreign governments or entities should make stronger pledges in support of a resolution of the Nagorno-Karabakh conflict. The conflict is routed in the clash between a series of principles. But today at the negotiations, the Armenian side is claiming that it needs security and a guaranteed right to self determination to withdraw from the occupied territories of Azerbaijan around Nagorno-Karabakh. The EU, for example, can help provide both. Firstly with regards to security: with the deployment of an EU peacekeeping force. Secondly with regards to the organization of a referendum – it can provide confidence in the democratic process and the rule of law. The EU can engage with Nagorno-Karabakh de facto authorities, start democratization and legal reform projects in the entity, and offer to send a civilian advisory mission should a comprehensive peace settlement be signed<sup>48</sup>;

- Preservation of stability is also essential for the current status quo, and the role of international entities here is instrumental – whether foreign governments or international organizations, it is crucial for them to continuously urge the parties concerned to refrain from any armed hostilities or hostile, militaristic calls for resumption of war; international organizations to which the parties concerned are signatories should demand stronger guarantees reassuring the non resumption of war;

- International organizations should also aim at allocating resources and developing specific training programs for students, teachers, journalists and other target groups from both countries aimed at better mutual understanding, tolerance and reconciliation;

- The collaboration among different international organizations and foreign governments at the national and regional level in developing and implementing peace-building programs should be further improved, mainly for each program to incorporate both governmental and civil society sectors, whereby the collaboration among the international organizations and/or foreign governments leads to their stronger influence on the governments of the countries concerned (to, for example, engage the civil society);

- Continue to involve the representatives of civil society, particularly experts and representatives of independent research centers, into the process of elaboration of recommendations on conflict settlement and peace building;
- International organizations should also promote women's initiatives for confidence building between the parties in conflict, and should urge the governments concerned to increase female involvement in conflict prevention, management and resolution<sup>49</sup>;
- In general international organizations should design interventions that create more favorable conditions for minority groups and governments to negotiate rather than fight. These kind of interventions, for example, would include a clearer statement from official international bodies about the conditions under which secession will be deemed acceptable under international law; would provide a mediated process in which minority groups and governments can convene to discuss their concerns and interests; and would foster collaboration between official and non-official third parties in the negotiations to draw upon the strengths of both in assisting minority groups and governments to work through their differences;
- Above all, the international community cannot rely on top-down approaches. They need to involve the public in debates and discussions about what is possible as well as in the implementation process<sup>50</sup>.

The Nagorno-Karabakh peace process illustrates the limitations of peace processes focusing solely at the level of political elites. A more comprehensive, inclusive and multi-levelled peacemaking strategy is required that binds a broader spectrum of stakeholders into the process. The most concerned and crucial stakeholder in this process is the civil society, which requires empowerment, encouragement and assistance not only from its respective government but also from international organizations and foreign governments. Ultimately, the conflict resolution process has a chance of success only if the capacity within Armenian and Azerbaijani societies is enhanced, and the peacebuilding agenda is promoted from within the countries concerned as well as from the foreign stakeholders<sup>51</sup>.

In due course, a negotiated solution depends on three factors: "the degree of urgency felt by the parties to the conflict to reach a solution; sufficient political capital held by their leaders to sell a compromise solution to publics used to hard-line rhetoric; and the combined and determined support of regional and international players to support such a solution"<sup>52</sup>. While a negotiated long-term and feasible solution depends on three rather dissimilar factors: the political will of the parties to the conflict to reach a solution, the success of state-society relations and the engagement of civil society in conflict resolution. As it has been illustrated the role of three major stakeholders – the civil society, international community and governments – is essential for the achievement of this long-term and feasible solution. These roles should not necessarily be conducted under one major scenario. Today each stakeholder fears a major policy or strategy change and doubts that it could offset the already fragile peace, instead, however, each stakeholder can take small but determined and coordinated steps, which would ensure quiet, slow but rather probable success.

## BIBLIOGRAPHY

### *Books*

- Bournoutian, G., (introduction and annotated translation), *The Chronicles on the History of Karabakh, Mirza Jamal Javanshir's Tarikh-e Karabagh and Mirza Adigozal Beg's Karabagh-name*, Mazda Publishers, Inc., Costa Mesa, California, 2004;
- Chorbajian, L., ed., *The Making of Nagorno-Karabagh. From Secession to Republic*, Palgrave, New York, 2001;
- Cohen, L., Aratao, A., *Civil Society and Political Theory*, Massachusetts Institute of Technology, 1994;
- Heradstveit, D., *Democracy and Oil: The Case of Azerbaijan*, Reichert Verlag Wiesbaden, 2001, Germany;
- Herzig, E., *The New Caucasus. Armenia, Azerbaijan and Georgia*, Chatham House Papers, Royal Institute of International Affairs, 1999;
- Lederach, J.P., *Preparing For Peace: Conflict Transformation Across Cultures*, Syracuse, NY, Syracuse University Press, 1995;
- Lederach, J.P., *Building Peace: Sustainable Reconciliation in Divided Societies*, Washington DC, United States Institute of Peace Press, 1997;
- Panosian, R., *The Irony of Nagorno-Karabakh: formal Institutions Versus Informal Politics*, eds., Hughes, J., and Sasse, G., *Ethnicity and Territory in the former Soviet Union. Regions in Conflict*, Frank Cass Publishers, London, 2002;
- Ramsbotham, O., Woodhouse, T., Miall, H., *Contemporary Conflict Resolution*, Cambridge, Polity, 2005;
- Ulubabian, B., *Artsakhian goyapaikare [The Struggle for Survival of Karabakh]*, Gir Grots, Yerevan;

### *Brochures, Reports and Articles*

- Beyond Intractability, *A User Guide For Peacebuilders on Peacebuilding and Post-Conflict Reconstruction in Difficult and Intractable Conflicts*, available at the organization's website: [http://www.beyondintractability.org/user\\_guides/peacebuilders/](http://www.beyondintractability.org/user_guides/peacebuilders/) ;
- Babbitt, E., *Mediating Rights-Based Conflicts: Making Self-Determination Negotiable*, International Negotiation, Vol. 11, no 1, 2006, pp. 185-208;
- Broers, L., ed., *The Limits of leadership: Elites and societies in the Nagorny Karabakh peace process*, Conciliation Resources, ACCORD, 2005;
- Conciliation Resources, *The Limits of Leadership: Elites and Societies in the Nagorno Karabakh Peace Process*, Policy briefing, January 2006, available at: <http://www.c-r.org/our-work/practice-policy/nagorny-karabakh-policy-briefing.php>;
- Crisis Management Initiative, *Multi-track Dialogue in Resolution of the Black Sea*, discussion summary of the spring seminar, May, 13, 2008; summary available at: <http://www.cmi.fi/?content=news&id=560&print=1>;

De Waal, T., *The Nagorny Karabakh conflict: origins, dynamics and misperceptions*, Conciliation Resources, Accord, 2005;

Freizer, S., *Responding to South Caucasus Conflicts in the European Neighborhood*, European Parliament, Brussels, February 2006; electronic version of the article is available at: [http://www.europarl.europa.eu/comparl/afet/hearings/20060222/freizer\\_speech\\_en.pdf](http://www.europarl.europa.eu/comparl/afet/hearings/20060222/freizer_speech_en.pdf);

Faber, M.-J., Kaldor, M., *Human Security in the South Caucasus*, LSE Publications, 2005; electronic version of the study is available at: <http://www.lse.ac.uk/Depts/global/Publications/HumanSecurityReport/SouthCaucasuspaper.pdf> ;

Gahramanova, A., *Peace Strategies in "Frozen" Ethno-Territorial Conflicts: Integrating Reconciliation into Conflict Management, the Case of Nagorno Karabakh*, Mannheim University working paper No. 103, 2007; available at: <http://www.mzes.uni-mannheim.de/publications/wp/wp-103.pdf>

Garb, P., Allen Nan, S., *Negotiating in a Coordination Network of Citizen Peacebuilding Initiatives in the Georgian-Abkhaz Peace Process*, International Negotiation, Vol, 11, no. 1, p. 7-35;

Global Partnership for the Prevention of Armed Conflict, *The Role of Civil Society in the Prevention of Armed Conflict. South Caucasus Regional Action Agenda*, serial Brochure, Februar 9, 2005, electronic version of the brochure is available at: <http://www.gppac.net/tcb/uploads/File/Regions/Caucasus/South%20Caucasus/South%20Caucasus%20Regional%20Action%20Agenda.pdf>;

Hasanov, A. and Ishkhanian, A., *Bridging Divides: Civil Society Peacebuilding Initiatives*, Conciliation Resources, ACCORD (2005);

Hashmi, A., *Donor Interventions and Civil Society in Developing Countries*, Working paper presented at the annual meeting of the International Studies Association 48th Annual Convention, Chicago, 2007; [www.isa.org](http://www.isa.org);

Hauss, C., *Reconciliation, Beyond Intractability*, the article is available at the organizations website: <http://www.beyondintractability.org/essay/reconciliation/>;

Helsinki Citizens' Assembly, *A strong protest for a peaceful conflict resolution in Nagorno Karabakh by Arzu Abdulayeva*, September 2009, article from *Azadlig* newspaper, adapted by the HCA, electronic version available at: <http://www.resistingwomen.net/spip.php?article217>;

Libaridian, G., *The Elusive 'Right Formula' at the 'Right Time': A Historical Analysis of the Official Peace Process*, Conciliation Resources, Accord, 2005;

Matveeva, A., *The Conflict Prevention Capacities of Local NGOs in the Caucasus*, Royal Institute of International Affairs, January, 2000; electronic version of the paper available at: <http://www.reliefweb.int/rw/rwb.nsf/AllDocsByUNID/0a7eb61df29dafaec125687e00677969>

Parliamentary Assembly, *The conflict over Nagorno Karabakh region dealt with by the OSCE Minsk Conference*, Report of the Political Affairs Committee, 29 November, 2004, Doc. 10364; electronic version of the report is available at: <http://assembly.coe.int/Documents/WorkingDocs/doc04/EDOC10364.htm>

Report of the UN Secretary General pursuant to the statement adopted by the Summit Meeting of the Security Council on January 31<sup>st</sup>, 1992, *An Agenda For Peace: Preventive Diplomacy, Peacemaking and Peace-Keeping*, A/47/277 – S/24111, 17 June, 1992;

Smith, D., *Towards a Strategic Framework for Peacebuilding: Getting their Act Together*,

Overview Report of the Joint Utstein Study of Peacebuilding, the Royal Norwegian Ministry of Foreign Affairs, 2004;

### **Websites consulted**

*London School of Economics and Political Science, Center for Civil Society:*  
[http://www.lse.ac.uk/collections/CCS/what\\_is\\_civil\\_society.htm](http://www.lse.ac.uk/collections/CCS/what_is_civil_society.htm)

*Institute for Democracy in Eastern Europe:* <http://www.idea.org/wic.html>

*Consortium Initiative:* <http://www.consortium-initiative.org/>

### **Endnotes**

1. Global Partnership for the Prevention of Armed Conflict, *The Role of Civil Society in the Prevention of Armed Conflict. South Caucasus Regional Action Agenda*, serial Brochure, February 9, 2005, electronic version of the brochure is available at: <http://www.gppac.net/tcb/uploads/File/Regions/Caucasus/South%20Caucasus/South%20Caucasus%20Regional%20Action%20Agenda.pdf>;
2. Bournoutian, G., (introduction and annotated translation), *The Chronicles on the History of Karabakh, Mirza Jamal Javanshir's Tarikh-e Karabagh and Mirza Adigozal Beg's Karabagh-name*, Mazda Publishers, Inc., Costa Mesa, California, 2004, p. x;
3. Ibid;
4. Panossian, R., *The Irony of Nagorno-Karabakh: formal Institutions Versus Informal Politics*, eds., Hughes, J., and Sasse, G., *Ethnicity and Territory in the former Soviet Union. Regions in Conflict*, Frank Cass Publishers, London, 2002, p. 144
5. Heradstveit, D., *Democracy and Oil: The Case of Azerbaijan*, Reichert Verlag Wiesbaden, 2001, Germany; p. 54;
6. Herzig, E., *The New Caucasus. Armenia, Azerbaijan and Georgia*, Chatham House Papers, Royal Institute of International Affairs 1999, p.65;
7. Panossian, R., *ibid*;
8. Ulubabian, B., *Artsakhian goypaikare [The Struggle for Survival of Karabakh]*, Gir Grots, Yerevan, pp. 164-199;
9. Chorbajian, L., ed., *The Making of Nagorno-Karabagh. From Secession to Republic*, Palgrave, New York, 2001; p. 16;
10. Panossian, R., *ibid*, p. 145;
11. Gahramanova, A., *Peace Strategies in "Frozen" Ethno-Territorial Conflicts: Integrating Reconciliation into Conflict Management, the Case of Nagorno Karabakh*, Mannheim University working paper No. 103, 2007; p. 6;
12. Broers, L., *Accord* (2005)
13. Herzig, E., *op cit*, p. 68

14. Ibid.;
15. Ibid.;
16. Ibid.;
17. Ibid.;
18. Broers, L, *op cit*;
19. Hasanov, A. and Ishkhanian, A., *Bridging Divides: Civil Society Peacebuilding Initiatives*, ACCORD (2005);
20. London School of Economics and Political Science, Center for Civil Society, the official definition is available at the follow URL: [http://www.lse.ac.uk/collections/CCS/what\\_is\\_civil\\_society.htm](http://www.lse.ac.uk/collections/CCS/what_is_civil_society.htm)
21. Cohen, L., Aratao, A., *Civil Society and Political Theory*, Massachusetts Institute of Technology, 1994;
22. Hashmi, A., *Donor Interventions and Civil Society in Developing Countries*, Working paper presented at the annual meeting of the International Studies Association 48th Annual Convention, Chicago, 2007; [www.isa.org](http://www.isa.org);
23. Report of the UN Secretary General pursuant to the statement adopted by the Summit Meeting of the Security Council on January 31<sup>st</sup>, 1992, *An Agenda For Peace: Preventive Diplomacy, Peacemaking and Peace-Keeping*, A/47/277 – S/24111, 17 June, 1992;
24. Smith, D., *Towards a Strategic Framework for Peacebuilding: Getting their Act Together*, Overview Report of the Joint Utstein Study of Peacebuilding, the Royal Norwegian Ministry of Foreign Affairs, 2004, p. 19;
25. Lederach, J.P., *Preparing For Peace: Conflict Transformation Across Cultures*, Syracuse, NY, Syracuse University Press, 1995; p. 82-83;
26. Beyond Intractability, *A User Guide For Peacebuilders on Peacebuilding and Post-Conflict Reconstruction in Difficult and Intractable Conflicts*, available at the organization's website: [http://www.beyondintractability.org/user\\_guides/peacebuilders/](http://www.beyondintractability.org/user_guides/peacebuilders/) ;
27. Hauss, C., *Reconciliation*, Beyond Intractability, the article is available at the organizations website: <http://www.beyondintractability.org/essay/reconciliation/>;
28. Ibid.;
29. See Lederach's Pyramid on page 18 of this paper;
30. Lederach, J.P., *Building Peace: Sustainable Reconciliation in Divided Societies*, Washington DC, United States Institute of Peace Press, 1997, p. 39;
31. Ramsbotham, O., Woodhouse, T., Miall, H., *Contemporary Conflict Resolution*, Cambridge, Polity, 2005, p. 216;
32. Hasanov, A., Ishkhanian, A., *op cit*;
33. Matveeva, A., *The Conflict Prevention Capacities of Local NGOs in the Caucasus*, Royal Institute of International Affairs, January, 2000; electronic version of the paper available at: <http://www.reliefweb.int/rw/rwb.nsf/AllDocsByUNID/0a7eb61df29dafec125687e00677969>
34. Matveeva, A. *op cit*;
35. Helsinki Citizens' Assembly, *A strong protest for a peaceful conflict resolution in Nagorno Karabakh by Arzu Abdulayeva*, September 2009, article from *Azadlig* newspaper, adapted by the HCA, electronic version available at: <http://www.resistingwomen.net/spip.php?article217>;
36. For more information on the program see the website of the *Institute for Democracy in Eastern Europe*: <http://www.idea.org/wic.html>
37. See the official website of the *Consortium Initiative*: <http://www.consortium-initiative.org/>

38. Hasanov, A, Ishkanian, A., *op cit*;
39. De Waal, T., *The Nagorny Karabakh conflict: origins, dynamics and misperceptions*, Broers, L, ed., *The Limits of leadership: Elites and societies in the Nagorny Karabakh peace process*, Conciliation Resources, 2005 ACCORD;
40. Bournoutian, G., (introduction and annotated translation), *The Chronicles on the History of Karabakh, Mirza Jamal Javanshir's Tarikh-e Karabagh and Mirza Adigozal Beg's Karabagh-name*, Mazda Publishers, Inc., Costa Mesa, California, 2004, p. xi;
41. Herzig, E., *op cit*, p. 73
42. *Ibid.*;
43. Broers, L., Accord (2005)
44. Global Partnership for the Prevention of Armed Conflict, *op cit*;
45. Parliamentary Assembly, *The conflict over Nagorno Karabakh region dealt with by the OSCE Minsk Conference*, Report of the Political Affairs Committee, 29 November, 2004, Doc. 10364; electronic version of the report is available at: <http://assembly.coe.int/Documents/WorkingDocs/doc04/EDOC10364.htm>
46. Global Partnership for the Prevention of Armed Conflict, *op cit*;
47. Crisis Management Initiative, *Multi-track Dialogue in Resolution of the Black Sea*, discussion summary of the spring seminar, May, 13, 2008; summary available at: <http://www.cmi.fi/?content=news&cid=560&print=1>;
48. Freizer, S., *Responding to South Caucasus Conflicts in the European Neighborhood*, European Parliament, Brussels, February 2006; electronic version of the article is available at: [http://www.europarl.europa.eu/comparl/afet/hearings/20060222/freizer\\_speech\\_en.pdf](http://www.europarl.europa.eu/comparl/afet/hearings/20060222/freizer_speech_en.pdf);
49. Global Partnership for the Prevention of Armed Conflict, *op cit*;
50. Faber, M.-J., Kaldor, M., *Human Security in the South Caucasus*, LSE Publications, 2005; electronic version of the study is available at: <http://www.lse.ac.uk/Depts/global/Publications/HumanSecurityReport/SouthCaucasuspaper.pdf> ;
51. Conciliation Resources, *The Limits of Leadership: Elites and Societies in the Nagorno Karabakh Peace Process*, Policy briefing, January 2006, available at: <http://www.c-r.org/our-work/practice-policy/nagorny-karabakh-policy-briefing.php>;
52. Gerard J. Libaridian, *The Elusive 'Right Formula' at the 'Right Time': A Historical Analysis of the Official Peace Process*, Broers, L., ed., *op cit*;

## Ռիչարդ Կիրակոսյան

Ռազմավարական և ազգային հեղափոխությունների հայկական կենտրոնի տնօրեն

### Պատահաբերական դարաբաղյան հրադադարը

#### Ներածություն

1994 թվականին, Լեռնային Ղարաբաղի պատերազմի ավարտից հետո, տարածաշրջանում անվտանգության իրավիճակն արդեն կայունացավ, երբ 15 տարի առաջ այս ամսին կողմերը եկան հրադադարի պայմանակարգի համաձայնության: 1994թ. մայիսի 12-ի հրադադարի համաձայնագիրը ճանաչվել էր միջազգային հանրության կողմից որպես կայունության և անվտանգության հիմք և Ղարաբաղի ապագայի վերաբերյալ բանակցությունների շրջանակ: Հետագայում հրադադարը դարձավ անվտանգության հիմք այնպիսի միջնորդ կազմակերպության ջանքերի շնորհիվ, ինչպիսին է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության՝ ԵԱՀԿ (նախկինում հայտնի որպես ԵԱՀԽ՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության Խորհրդաժողով) այսպես կոչված «Մինսկի խումբը»:

1994-ի մայիսի հրադադարն ամրապնդվեց 1994թ. հուլիսի 26-ին Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարների և Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի կողմից ստորագրված համաձայնագրով, որի համաձայն՝ կողմերը պարտավորվում են չխախտել հրադադարը, շարունակել բանակցությունները բազմակողմանի քաղաքական համաձայնության հնարավոր եզրահանգման վերաբերյալ և խոստանում էին զերծ մնալ թշնամական որևէ գործողությունից, որը կարող է վտանգի տակ դնել հրադադարի պայմանակարգը: Նշանակալի է, որ ժողովրդավարորեն ընտրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հրադադարի համաձայնագրի կողմերից մեկն էր և այդպիսին էլ ճանաչվում էր բոլոր բնագավառներում, չնայած այն բանին, որ Ղարաբաղին անարդար կերպով մերժել են զբաղեցնել իրեն հասանելիք տեղը և ունենալ այն նույն կարգավիճակը, ինչ Ադրբեջանը ներկայիս խաղաղ գործընթացում՝ որպես համարտող կողմ:

Չնայած հրադադարն արդեն տասնհինգ տարի ուժի մեջ է՝ միայն չնչին և բացառիկ խախտումներով, առանց լուրջ սպառնալիք հանդիսանալու համաձայնագրին, այնուամենայնիվ՝ նոր մտահոգություններ են առաջանում, որ հրադադարը կարող է վտանգի տակ հայտնվել հատկապես երկու միտումի պատճառով. 1) եթե շարունակվի սպառա-

զինությունների մրցավազքը տարածաշրջանում եւ 2) եթե խախտվի տարածաշրջանում առկա ռազմական հավասարակշռությունը:

### Տարածաշրջանային «սպառազինությունների մրցավազք»

Առաջին միտումը, որ վտանգում է հրադադարի պայմանագրի կենսունակությանը տարածաշրջանում, «սպառազինությունների մրցավազքի» ի հայտ գալն է: Վերջին տարիներին այս մրցավազքն առաջացել է պաշտպանության ծախսերի մակարդակի աճի հետեւանքով: Չնայած այն բանին, որ զինված ուժերին հատկացվող ծախսերի ճշգրտությունը տարածաշրջանի ամեն երկրի համար տարբեր է, պաշտպանությանը հատկացվող գումարները վերջին հինգ տարիների ընթացքում պարբերաբար ավելացել են, եւ ամեն երկիր իր սահմանափակ եկամտից եւ միջոցներից գնալով ավելի շատ գումար է հատկացնում պաշտպանության ոլորտին:

Նշմարելի է, որ Ադրբեջանը նախաձեռնել է պաշտպանության բյուջեի կայուն եւ լուրջ աճ, ինչը պայմանավորված է հարստության ներհոսքով էներգետիկայի բնագավառից: 2004թ. \$175 միլիոնից Ադրբեջանը 2009թ.-ին իր ռազմական բյուջեն հասցրել է \$2,5 միլիարդի: Սակայն, նկատի ունենալով երկրում արմատավորված կոռուպցիան, տարեկան ռազմական բյուջեի աճը չի զուգակցվում լուրջ ներդրումներով զինված ուժերի կատարելագործման եւ վերապատրաստման գործում, ինչպես նաեւ բավարար ժամանակակից զենքեր ձեռք բերելու գործընթացով: Նմանատիպ, բայց կայունության առումով ավելի քիչ աճ է տեղի ունեցել Հայաստանի պաշտպանական ոլորտում, որն ավելի շուտ Ադրբեջանից հետ չճնալու տրամաբանությամբ է արվել:

### Տարածաշրջանում ռազմական հավասարակշռության խախտում

Վրաստանում 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո տարածաշրջանում ուժերի հավասարակշռության փոփոխումը դարձավ ակնհայտ՝ այսպիսով ավելի լուրջ մարտահրավերներ նետելով տարածաշրջանային կայունությանն ու անվտանգությանը: Սպառազինությունների մրցավազքի միտումի լույսի ներքո պաշտպանությանը հատկացվող բյուջետային ծախսերն ավելացան, իսկ վերազինման նոր ալիքի վտանգը ռազմականացման մթնոլորտի պայմաններում նշանակում է, որ տարածաշրջանի ուժերի փխրուն հավասարակշռության մեջ ցանկացած փոփոխություն կարող է լուրջ սպառնալիք հանդիսանալ հրադադարի հետագա ապահովմանը: Իսկ այսօր, երբ Լեռնային Ղարաբաղը տարածաշրջանի միակ «սառեցված» հակամարտությունն է, զինված ուժե-

րում ցանկացած նոր անկայունություն սպառնում է տարածաշրջանում հարաբերական խաղաղության ու կայունության ապահովմանը:

Բացի դրանից, տարածաշրջանի նման ռազմականացման երկարաժամկետ ազդեցությունը եւս անհանգստության պատճառ է հատկապես Հայաստանի համար, քանի որ Ադրբեջանն իր նավթային եկամուտներն օգտագործում է էլ ավելի «լիցքավորելու» իր ռազմական բյուջեն: Հայաստանին ամենից շատ անհանգստացնում է Ադրբեջանի մշտական` Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ուժային ճանապարհով լուծելու հռետորությունը, որն արդեն մի քանի տարի է` ստանում է միլիարդավոր դոլարների հատկացումներ ունեցող բյուջեի աջակցությունը: Ռազմական այդ հռետորության եւ ծախսերի միաձուլումն այսօր ամենալուրջ սպառնալիքն է տարածաշրջանի անվտանգությանն ու կայունությանը:

### Եզրակացություն

Այս երկու միտումների առկայության պարագայում հրադադարի ապահովման իրական առանցքը Հայաստանի եւ Ղարաբաղի զինված ուժերն են` որպես սթափեցնող հանգամանքներ: Ավելի ստույգ` վերջին տասնհինգ տարիների ընթացքում նախկին խորհրդային երկրներից հենց Հայաստանն է մշտապես գնահատվել որպես սթափեցնող ռազմական ուժ ունեցող երկիր: Հայաստանի ռազմական մշակույթը ճանաչվել է բարձրակարգ` իր զինվորական ոգով, բարոյահոգեբանական հատկանիշներով, պատրաստվածությամբ, սակայն Ադրբեջանի ռազմական ներուժը պարտադրում է Հայաստանին բավականին լուրջ սպառնալիք, ինչն էլ ենթադրում է արդյունավետ ռազմական բարեփոխումների հրամայական:

Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը` շատ դեպքերում գերազանցելով Հայաստանի զինված ուժերին, գնահատվում են որպես ավելի արհեստավարժ եւ մարտունակ: Չնայած իր սակավաթիվ լինելուն, Ղարաբաղի բանակը գտնվում է մշտական բարձր պատրաստվածության վիճակում, ավելի լուրջ եւ տեսական մարտական զորավարժություններ է անցկացնում, քան նախկին խորհրդային որեւիցե այլ բանակ: Սակայն Ղարաբաղի բանակի ամենազգալի առավելությունը բարոյահոգեբանական բարձր որակներն են, որոնք էլ փոխլրացվում են բարձր արհեստավարժությամբ: Ղարաբաղյան ուժերը նաեւ տարբերվում են ինքնաբավության աստիճանով, համեմատաբար լավ կազմակերպվածությամբ ու կարգապահությամբ, բացի դրանից` բավարար զինված են, մշտապես վերապատրաստվում ու կատարելագործվում են եւ ունեն դեկավար լավ կազմ: Ղարաբաղյան զինված ուժերի մեկ այլ նշմարելի առավելությունն է սպայական անձնակազմի բարձր պատրաստվածությունը:

Ե՛վ որպես շատ լուրջ հակառակորդ, ե՛ն որպես կայացած ռազմական ուժ՝ Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը հանդես են գալիս որպես տարածաշրջանային ռազմական հավասարակշռության շատ կարևոր բաղադրիչ: ԼՂՀ ռազմական ներուժը, միեւնույն ժամանակ, մարտական գործողությունների հնարավոր վերսկսման խափանիչ գործոն է: Ի տարբերություն Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանի զինված ուժերը շարունակում են մնալ թույլ եւ վատ զինված: Այդուամենայնիվ, չի բացառվում, որ Ադրբեջանը կարող է նոր պատերազմ հրահրել Ղարաբաղը վերադարձնելու համար: Թեեւ, հաշվի առնելով Ադրբեջանի զինված ուժերի ներկայիս տխուր վիճակը, ինչը պայմանավորված է կոռուպցիայով եւ վատ պայմաններով, այս երկիրն առնվազն 8-10 տարվա ճանապարհ ունի անցնելու ռազմական լուրջ ուժ դառնալու համար:

Այսպես թե այնպես, սա վտանգավոր զարգացում է, ինչը Երեւանն ու Ստեփանակերտը պետք է ըստ ամենայնի գիտակցեն եւ բոլոր միջոցները ձեռնարկեն Հայաստանի ու Ղարաբաղի անվտանգությունն ապահովելու համար, քանի դեռ շատ ուշ չէ: Հայաստանը գերակշռող ռազմական ուժ է տարածաշրջանում, բայց վտանգը կայանում է նրանում, որ այդ գերակշռությունը կարող է ժամանակավոր լինել: Հայաստանը պետք է քայլեր ձեռնարկի եւ արագացնի պաշտպանական ոլորտի բարեփոխումները՝ պատրաստ լինելու համար առաջիկա տասնամյակում ավելի ուժեղ ադրբեջանական բանակի հետ գործ ունենալուն:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա այն չպիտի անտեսի ապագայում վերազինված եւ վերահաստատված Ադրբեջանի՝ հրադադարը խախտելու սպառնալիքները: Համենայն դեպս, որոշ ժամանակով Ղարաբաղն ապահովել է իր անվտանգությունը՝ շնորհիվ սեփական զինված ուժերի բարձր արհեստավարժության ու պատրաստվածության՝ ի տարբերություն Ադրբեջանի զինված ուժերում առկա անմխիթար վիճակի: Ղարաբաղյան զինված ուժերի ամենամեծ առավելությունը, թերեւս, երեւակված է խրամատներով եւ այլ պաշտպանական-ինժեներային ամուր կառույցներով պայմանավորված մարտավարական ոլորտում, ինչը նշանակում է մարտական գործողությունների միջին-տեսական հեռանկարում հուսալի պաշտպանություն:

Բայց, իհարկե, տարածաշրջանային կայունության եւ հրադադարի ապահովման, մարտական գործողությունների վերսկսումը կանխելու ավելի ազդեցիկ երաշխիք կարող են լինել Հայաստանի եւ Ղարաբաղի պրոֆեսիոնալ բանակները:

**Richard Giragosian**

*ACNIS Director*

## **ASSESSING THE NAGORNO-KARABAGH CEASEFIRE**

### **Introduction**

Since the end of open warfare over Nagorno-Karabagh in 1994, the overall security situation in the region has been stabilized by a ceasefire agreement reached fifteen years ago this month. The ceasefire agreement, formally reached on 12 May 1994, has been widely recognized by the international community as the basis for stability and security and has served as the framework for negotiations over the future of Karabagh. The ceasefire has further been incorporated as the foundation for security for the mediation efforts of the Organization for Security and Cooperation in Europe's (OSCE, formerly known as the CSCE, or *Conference for Security and Cooperation in Europe*) so-called "Minsk Group."

The May 1994 ceasefire was reinforced by a related agreement signed on 26 July 1994 by the Ministers of Defense of both Armenia and Azerbaijan, and the Commander of the Nagorno-Karabakh Self-Defense forces, formally affirming each party's commitment to observe the ceasefire, pursue talks over the eventual conclusion of a comprehensive political agreement, and pledging to refrain from any hostile act which may jeopardize the ceasefire regime. Most significantly, the democratically-elected Republic of Nagorno-Karabagh was an equal party to the ceasefire agreement, and was recognized as such in all aspects, despite the fact that Karabagh has been unfairly denied its proper place within the current peace process as a party to the conflict with the same status as Azerbaijan.

Although the ceasefire has now been in effect for fifteen years, with only minor and sporadic violations and no serious threat to the agreement, there are new concerns that the ceasefire may become threatened by two specific trends: (1) the continuation of a regional "arms race" and (2) a shift in the "regional balance of power."

### **A Regional "Arms Race"**

The first trend that threatens the viability of the ceasefire agreement is the emergence of an "arms race" in the region. In recent years, this arms race has been driven by rising levels of defense-related expenditures. Although the precise composition of military spending differs among each country in the region, defense spending has steadily and consistently increased over the past five years, with each country devoting an ever-larger share of limited revenue and resources to defense spending.

Most notably, Azerbaijan has initiated a steady and serious increase in its defense budget, largely driven by the influx of wealth from its energy sector, increasing its defense

budget from \$175 million in 2004 to almost \$2.5 billion for 2009. But given the extent of corruption within the country, the increase in the annual defense budget has not been used to either invest in developing or training a more capable armed forces, or for procuring modern military weapons. A similar, but much less substantial, increase in defense spending has also been underway in Armenia, largely due to the pressure of feeling compelled to keep pace with Azerbaijan.

### **The Shifting Military Balance of Power**

Since the August 2008 war in Georgia, the shift in the region's delicate balance of power has become apparent, actually presenting an even more serious challenge to regional stability and security. In light of the trend toward an "arms race" of rising defense spending, the danger of a new wave of rearmament, amid an overall climate of militarization, suggests that any change in the fragile military balance of power in the region could pose a serious threat to the security of the ceasefire. And with Nagorno Karabagh now standing as the last "frozen" conflict in the region, any new imbalance of military power threatens the capacity for maintaining relative peace and stability in the region.

In addition, there is a related worry over the long-term impact from such a militarization of the region, especially for Armenia, as Azerbaijan has been using its oil wealth to fuel ever-larger defense budgets. Most worrying for Armenia, the constant drone of Azerbaijan's militant rhetoric to "solve" the Nagorno Karabagh conflict by force has been bolstered by several years of billion-dollar-plus defense budgets. That combination of militant rhetoric and military spending now poses one of the most serious threats to regional security and stability.

### **Conclusion**

In the face of these two trends, the real key for the security of the ceasefire lies with the military capabilities of Armenia and Karabagh, as a deterrent. More specifically, for the past fifteen years, Armenia has been consistently rated as one of the most formidable military powers among all of the former Soviet states. Armenia's military prowess is generally identified traced to its high level of discipline, morale and training, although Azerbaijan's potential as a military power suggests that Armenia is in danger of losing its comparative edge within the coming decade, necessitating a much more intensive program of military reform.

In many ways even surpassing the highly rated Armenian armed forces, the Nagorno Karabagh military is assessed as an even more capable and professional force. Despite its small size, the Karabagh army is in a state of constant readiness, undergoing more serious and sustained combat training and operational exercises than any other former Soviet army. But the most significant advantage for Karabagh is in terms of unit morale, marked by an impressive degree of professionalization and discipline within its ranks. The Karabagh forces also hold a degree of self-sufficiency and a significant small-force

capability, are relatively well-organized and equipped, and enjoy a high degree of training and leadership. There is also a high degree of operational readiness and consistent maintenance of its combat systems and equipment. The other significant advantage of the Karabagh forces is the quality of its officer corps and its strategic leadership.


As both a formidable foe and as an established military power in its right, the Nagorno Karabagh military serves as critical component to the regional balance of power, however, and its military strength and capability acts as a deterrent to the possible resumption of hostilities. In contrast to both Armenian and Nagorno Karabagh, Azerbaijan has a military that remains weak and poorly equipped. Nevertheless, Azerbaijan is dangerously committed to launching a new war to retake Karabagh. But given the poor state of the Azerbaijani armed forces, which is seriously undermined by corruption and poor conditions, Azerbaijan remains at least 8-10 years away from becoming a serious military power.

Thus, this is a dangerous development that Yerevan and Stepanakert must recognize and respond to in order to ensure the security of Armenia and Karabagh before it is too late. Armenia is the dominant military power in the region, but this dominance is in danger of being temporary, and Armenia must take steps now and accelerate its defense reforms now to prepare for the possibility of a stronger Azerbaijani military in the coming decade.

And for Nagorno Karabagh, the threats to the ceasefire posed by a re-armed and re-assertive Azerbaijan can not be ignored. For the time being at least, Nagorno Karabagh remains fairly secure, mainly due to the impressive professionalism and high state of readiness of the Karabagh military, in contrast to the generally poor state of affairs within the Azerbaijani armed forces. Most crucially, the tactical advantages of the Karabagh military's well-entrenched defensive fortifications also deter Azerbaijani aggression in the medium-term. But the true key to regional stability and the security of the ceasefire is the strong deterrence offered from a powerful and professional armed forces of both Armenia and Karabagh.



**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ**  
**SOCIO-ECONOMIC TOPICS**



## Մարատ Ատովյան

*Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի մարդու իրավունքների, եվրասիական գրասենյակի և միջազգային համագործակցության հասնելաժողովի ղեկավար*

### **Մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրականացման ապահովումը Հայաստանում**

Հայաստանը գտնվում է ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն կառուցելու ճանապարհին: Հանրապետությունում դեռևս ընթանում են դատաիրավական բարեփոխումներ, միջազգային իրավական հանրաճանաչ սկզբունքների հիման վրա ձեւավորվում է ազգային օրենսդրությունը: Աստիճանաբար ձեռք ենք բերում մարդուն, նրա իրավունքները և արժանապատվությունը հարգելու, օրինական կարգով նրանց պաշտպանելու ավանդույթներ, որոնք, ցավոք, չենք ունեցել նախկինում: Մակայն մարդու իրավունքների լիարժեք ապահովմանը հնարավոր է հասնել միայն արդյունավետ գործող մեխանիզմներ ստեղծելով: Անհրաժեշտ է կյանքի կոչել իրավունքի գերակայության, օրենքի առջեւ բոլորի հավասարության, պատժի անխուսափելիության սկզբունքները, ձեւավորել անկախ դատական իշխանություն, բարձրացնել ազգաբնակչության վստահությունը պետական իշխանությունների և նրանց վարած քաղաքականության հանդեպ և այլն: Առանձնահատուկ կարեւորություն ունեն նաև հասարակության իրավական մշակույթի բարձրացումը, իրավական ժխտողականության վերացումը, իրենց իրավունքների ու պարտականությունների մասին մարդկանց իրազեկության բարձրացումը, քանզի սեփական իրավունքների և ազատությունների վերաբերյալ անտեղյակությունը, դրանց ապահովմանը հետամուտ չլինելը պարարտ հող են հանդիսանում պետական մարմինների, նրանց պաշտոնյաների կողմից մարդու իրավունքների խախտման համար: Բազմաթիվ անելիքներ կան այս ճանապարհին, և այն պետք է անցնել միասնաբար՝ համախմբելով պետության և հասարակության ողջ ջանքերը, քանզի Հայաստանը բոլորիս երկիրն է, և մենք ու միայն մենք պետք է կառուցենք ու շենացնենք այն:

Համոզված ենք, որ իրավական մշակույթի բարձրացումը, մարդու իրավունքներն ու արժանապատվությունը հարգելու, օրինական կարգով պաշտպանելու ավանդույթների ձեւավորումը պետք է սկսել հենց դպրոցից: Պատմությունը վկայում է՝ յուրաքանչյուր սերունդ «դատապարտված» է պաշտպանել անձի իրավունքները, քանի որ մարդկու-

յանը տակավին հայտնի չէ այնպիսի իրավիճակ, որը կբացառեր այդ ուղղությամբ ջանքերի գործադրումը: Յուրաքանչյուր սերունդ յուրովի է արձագանքում պատմության հավերժական այդ մարտահրավերին՝ կապված այնպիսի վեհ արժեքների պահպանման հետ, ինչպիսիք են ազատությունը և մարդու իրավունքները:

Մարդու իրավունքները բնական և անօտարելի են, ոչ ոք չի կարող զրկել մարդուն իր բնական իրավունքներից՝ կյանքի, անձնական անձեռնմխելիության, խղճի, խոսքի, արտահայտվելու ազատության, ընտանեկան կյանքի գաղտնիության և այլ իրավունքներից: Ժամանակակից աշխարհն անհնար է պատկերացնել առանց ազատության, հավասարության, արդարության վրա հիմնված՝ մարդու իրավունքների, որոնք իրենց բնույթով ունիվերսալ են:

Մարդու իրավունքների կայացումը և զարգացումը թույլ են տալիս բացահայտել քաղաքակրթության տեսակը, նրա մակարդակը, քանի որ մարդու և պետության փոխհարաբերությունները այս կամ այն քաղաքակրթության էությունը բնորոշող կարեւորագույն հատկանիշ են, իսկ պետությունը իրավական կամ ոչ իրավական ճանաչելու չափորոշիչ: Իրավական, ժողովրդավարական պետությունը ճանաչում է մարդու իրավունքների առաջնայնությունը՝ այդ իրավունքներով սահմանափակելով իր իշխանական գործառույթները: Գործում է հանրաճանաչ այն սկզբունքը, ըստ որի՝ մարդն իրավունք ունի անել այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով, իսկ պետական մարմինները՝ միայն այն, ինչը իրենց թույլատրված է օրենքով:

Մարդու իրավունքների վերաբերյալ սկզբունքները ձեւավորվում էին պատմականորեն, հարստացվում, կատարելագործվում, և այսօր մարդկային մշակույթի անբաժանելի մասն են:

Մարդու իրավունքների պատմական զարգացման ընթացքում ձեւավորվեցին մարդու իրավունքների և ազատությունների «սերունդները»: Երեք սերունդների վերաբերյալ տեսությունը 1979թ. առաջին անգամ առաջ քաշեց Կարել Վասակը: Այս տեսությունը լայն արձագանք գտավ և բազմաթիվ կողմնակիցներ ձեռք բերեց: Մակայն որոշ մասնագետներ համաձայն չեն դրան<sup>1</sup>:

Մարդու իրավունքների **առաջին սերնդին** պատկանում են այն ավանդական ազատական արժեքները, որոնք ձեւավորվել են բուրժուական հեղափոխությունների ընթացքում, իսկ հետագայում որոշակիացվել ու ընդլայնվել են ժողովրդավարական պետությունների օրենսդրությունում և պրակտիկայում: Խոսքը անձնական (քաղաքացիական) և քաղաքական իրավունքների մասին է: Քաղաքացիական իրավունքների ու ազատությունների շարքն են դասվում անձի կյանքի և արժանապատվության իրավունքը, ազատության, անձնական անձեռնմխելիության, ինչպես նաև մասնավոր կյանքի, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, տեղաշարժի և բնակության վայրի ընտրության

ազատությունը, խղճի ազատությունը, ազգության եւ հաղորդակցման լեզվի ընտրության ազատությունը: Քաղաքական իրավունքներն ու ազատություններն են՝ ընտրական իրավունքը, խոսքի ազատությունը, որի բաղկացուցիչ տարրերն են մտքի ազատությունը, ՀԼՄ-ների ազատությունը, տեղեկատվություն ստանալու իրավունքը, խաղաղ ժողովների, ցույցերի, երթերի ազատությունը, միավորման իրավունքը, դիմելու իրավունքը:

**Երկրորդ սերունդը** ձեւավորվել է իրենց տնտեսական դրության բարելավման, մշակութային կարգավիճակի բարձրացման համար ժողովուրդների պայքարի ընթացքում: Նրանց թվին են դասվում տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքները: Տնտեսական իրավունքներն են՝ աշխատանքի իրավունքը, սեփականության իրավունքը, ձեռնարկատիրությամբ զբաղվելու իրավունքը, գործադուլների իրավունքը եւ այլն: Սոցիալական իրավունքների թվում են սոցիալական ապահովության իրավունքը, բավարար կենսամակարդակի իրավունքը, ընտանիքի, մայրության եւ մանկության պաշտպանության իրավունքը, ֆիզիկական եւ հոգեկան առողջության իրավունքը եւ այլն: Մշակութային իրավունքներն են՝ կրթության իրավունքը, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, ստեղծագործելու ազատությունը եւ այլն:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսեց ձեւավորվել մարդու իրավունքների **երրորդ սերունդը**: Դրանց էությունը քննարկման առարկա է: Այդ իրավունքների առանձնահատկությունն այն է, որ վերջիններս կոլեկտիվ են եւ կարող են իրագործվել հանրության, ընկերակցության կողմից: Այդ սերնդի իրավունքների շարքն են դասվում կոլեկտիվ իրավունքները, այսպես կոչված, «համերաշխության իրավունքները»: զարգացման իրավունքը, խաղաղության իրավունքը, առողջ շրջակա միջավայրի իրավունքը, մարդկության ընդհանուր ժառանգության իրավունքը, հեռահաղորդակցության իրավունքը եւ այլն:

Արդեն անցած դարի կեսերին աստիճանաբար ձեւավորվեցին մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների մասին պատկերացումները: Խոսքն ըստ էության մարդու արժանապատիվ ապրելակերպն ապահովելու՝ պետության պարտականությունների մասին է: «Երկրորդ սերնդի» այս իրավունքների հայեցակարգի առաջացումը եւ միջազգային իրավական փաստաթղթերում դրանց ամրագրումը թերեւս տեղի ունեցան երկու գործոնների ազդեցության ներքո: Առաջինը սոցիալիստական եւ սոցիալ-ժողովրդավարական շարժումների զարգացումն էր, որոնք նպատակ էին հետապնդում հասնել սոցիալական արդարության եւ սոցիալական հավասարության: Երկրորդը՝ միջազգային ասպարեզում ԽՍՀՄ ղեկավարության քարոզչական գործունեությունը, որը ԽՍՀՄ-ում եւ սոցիալիստական այլ երկրներում մարդու քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների կոպիտ խախտումների վերաբերյալ արեւմտյան պետություններից հնչող մեղադրանքներին ի պատաս-

խան՝ մատնանշում էր սոցիալական ոլորտում իր հաջողությունները (համատարած զբաղվածություն, գործազրկության բացակայություն, անվճար առողջապահություն, կրթություն և այլն) և արեւմտյան պետություններում մարդկանց սոցիալական խոցելիությունը: Նշված գործոնները, ինչպես նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի աղետալի հետեւանքները արագ վերացնելու ցանկությունը նպաստեցին մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների արժեւորմանը և միջազգային իրավական ակտերում դրանց ամրագրմանը:

Ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, նոր հասարակության կերտման, հասարակական կյանքի բոլոր ասպարեզների նկատմամբ պետության համապարփակ հսկողության, պետության կողմից կարգավորվող տնտեսության, նոր տիպի մարդու դաստիարակման, զանգվածային զբաղվածության ապահովման խորհրդային փորձը տխուր ավարտ ունեցավ: Ի տարբերություն՝ կապիտալիստական երկրները տնտեսական և սոցիալական համակարգերի զարգացման ճիշտ մոդելներ կիրառելով՝ ոչ միայն կարողացան արագ հաղթահարել Երկրորդ աշխարհամարտի ավերիչ հետեւանքները, այլև արագ զարգացում ապրեցին: Մեր դիտարկմամբ՝ ժողովրդավարության և մարդու արժանապատվության հարգանքի վրա հիմնված այդ մոդելի հիմնաքարերն են ազատ տնտեսական համակարգը, արդյունավետ կրթական համակարգը և օրինապաշտությունը:

Մարդու իրավունքների հայեցակարգի համար հիմնական է հանդիսանում մարդկային արժանապատվություն հասկացությունը, որն անկապտելի է և տրված է նրան ի ծնե: Մարդու արժանապատվությունը բխում է հենց մարդկության էությունից. այն բնորոշ է ինչպես նորածին մանուկին, որը դեռ չի հասցրել ոչ մի բան անել, այնպես էլ կարծրացած հանցագործին: Մարդկային արժանապատվությունը նույնը չէ, ինչ՝ անձնական արժանապատվությունը, որն ավելի մոտ է պատիվ հասկացությանը: Անձնական արժանապատվությունը մենք վաստակում ենք ինքներս. այն մեծանում է, եթե մենք պահում ենք մեզ արժանավայել, և նվազում է, եթե ստոր քայլեր ենք կատարում: Մեր իրավունքներն ու ազատությունները մեզ, մեր մարդկային արժանապատվությունը պետության ոտնձգություններից պաշտպանող վահանն են: Մարդու իրավունքներն ի վիճակի չեն տրամադրել մեզ երաշխիքներ, որ մեզ կսիրեն ու կփայփայեն, չեն երաշխավորում երջանկություն կյանքում, դրանք սոսկ պաշտպանում են մեզ ստորացուցիչ վերաբերմունքից և մեր արժանապատվության հանդեպ ոտնձգություններից, այն էլ ամենաուժեղ խախտողի՝ պետական իշխանության կողմից, որը տիրապետում է բռնության տարբեր միջոցների:

Մարդկային արժանապատվությունից բխում են երկու հիմնական հասկացություններ՝ հավասարություն և ազատություն: Պատմա-

կանոններն ազատության վերաբերյալ ձեւավորվել է երկու հայեցակարգ: Առաջինը (ամերիկյանը) հռչակում է ազատություն պետությունից եւ պետությանը վերապահում է միայն «պահակի» դեր, որը զուտ մարդուն պաշտպանելու համար է:

Երկրորդ հայեցակարգը (եվրոպականը) վերաբերում է պետության միջոցով ազատությանը: Այս մոտեցման կողմնակիցների կարծիքով՝ պետությունը, կարգի հրավիրելով որոշակի իշխանությամբ օժտված մարդկանց (խոշոր հողատերեր, իշխանավորներ եւ այլք), իրենց ազատություն կշնորհի: Այսպիսի ազատության հետ հույսեր էին կապում, թե պետությունը կերջանկացնի յուրաքանչյուր մարդու: Ազատության եվրոպական հայեցակարգից բխող մոտեցումներն անմիջականորեն անդրադարձել են այս մայրցամաքի ամբողջ պատմության վրա. հենց այստեղ էին ի հայտ գալիս կառավարիչներ, առաջնորդներ, որոնք հավատում էին, որ գիտեն, թե ինչ է պետք ժողովրդին, ինչպես երջանկացնել մարդկանց: Ցավոք, նրանցից ոմանք փորձում էին կյանքի կոչել դա:

Հավասարության կարեւորագույն տարրերն են՝ իրավունքների հավասարությունը եւ հավասարությունն օրենքի առջեւ: Իրավունքների հավասարությունն հասկացությունն իր ընկալմամբ շատ մոտ է խտրականության արգելմանը: Խտրականությունը ցանկացած, տրամաբանական հիմնավորում չունեցող, ֆիզիկական կամ կենսաբանական հատկանիշների վրա կառուցված իրավունքների տարբերակում է: Օրինակ՝ ամենեւին էլ խտրականություն չէ կույրերին կամ երեխաներին ավտոմեքենա վարել արգելելը, քանի որ այն տրամաբանորեն հիմնավորված է: Սակայն խտրականություն կլիներ կանանց կամ ճաղատների վարորդական վկայական տրամադրելու վերաբերյալ արգելքը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, կարելի է ստեղծել դիսկրիմինացիոն դրույթներ չպարունակող իրավական համակարգ, սակայն շատ ավելի բարդ է հասնել օրենքի առջեւ բոլորի հավասարությանը: Այսպես՝ պաշտոնատար անձինք լրիվ այլ կերպ են վերաբերվում հարուստ, ազդեցիկ եւ/կամ անվանի մարդկանց, քան ցածր սոցիալական կարգավիճակ ունեցողներին:

Աշխատանքի միջազգային կոնֆերանսի 97-րդ նիստում 2008թ. հունիսի 10-ին ընդունված՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության «Արդար գործալացման նպատակներով սոցիալական արդարության մասին» հռչակագրում իրավացիորեն նշվում է, որ ազատության, մարդու արժանապատվության, սոցիալական արդարության պաշտպանվածության եւ անվտանգության, խտրականության բացառման հիմնարար արժեքները կայուն տնտեսական ու սոցիալական զարգացման եւ արդյունավետության հիմնարար տարրերն են:

Մարդու տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների ապահովումը՝ ի տարբերություն քաղաքական եւ քաղաքացիա-

կան իրավունքների, ուղղակիորեն կախված է պետության տնտեսական վիճակից եւ, ի վերջո, հենց քաղաքացիների աշխատանքի արդյունավետությունից: Պետության տնտեսական վիճակից նշված իրավունքների ապահովման կախվածությունը հատկապես ակնհայտ է դառնում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պարագայում, երբ շատ երկրներում ընկերություններ են սնանկանում, աճում են գործազրկությունը, հանցավորությունը, մեծանում է աղքատ մարդկանց թիվը եւ այլն:

Պետությունը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը ձեւավորելիս պետք է լինի առավելագույնս իրատեսական եւ ելնի իր իրական հնարավորություններից: Հեշտ է, հատկապես նախընտրական շրջանում, ընդունել բնակչության սոցիալական ապահովությանն ուղղված լրացուցիչ միջոցառումների վերաբերյալ որոշումներ, մանավանդ եթե ընդունող մարմինը չի դա իրականացնում, սակայն խիստ դժվար է իրական միջոցների բացակայության պարագայում այդ որոշումները կյանքի կոչել:

Մարդու տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների ապահովման եւ զարգացման հետ ուղղակիորեն կապված է սոցիալական պետությունը: Նրա առջեւ, առաջին հերթին, դրված է մարդու համար պատշաճ, արժանապատիվ կենսամակարդակ ապահովելու խնդիրը: Սոցիալական պետությունը պարտավոր է աջակցել հաշմանդամներին, ծերերին, գործազուրկներին եւ, առհասարակ, բոլոր նրանց, ովքեր ինչ-ինչ հանգամանքներից ելնելով՝ չեն կարողանում իրենց համար ապահովել նվազագույն կենսապայմաններ: Սոցիալական պետության գործունեությունն առնչվում է սոցիալական արդարության սկզբունքներին համապատասխան հասարակությունում առկա բարիքների վերաբաշխմանը: Դրա համար պետությունը գրագետ տնտեսական քաղաքականությամբ խթանում է ձեռնարկատիրության, արտադրության զարգացումը եւ տնտեսական աճը, ինչն ինքնին հանգեցնում է աշխատատեղերի ավելացման, գործազրկության եւ աղքատության կրճատման, ֆինանսավորում է կրթական, առողջապահական, գիտության ու մշակույթի աջակցությանն ուղղված ծրագրեր, մարդու ստեղծագործական ունակությունների զարգացման համար ստեղծում նպաստավոր պայմաններ, աջակցում գործազուրկներին, հաշմանդամներին, ծերերին, երիտասարդ ընտանիքներին, անչափահասներին, փախստականներին:

Սոցիալական պետության վրա է դրված նաեւ գլոբալ մրցակցությամբ թելադրված իրավիճակին քաղաքացիների նախապատրաստման առաքելությունը, այն է՝ նոր աշխատատեղերի ստեղծում, մասնագիտական կրթության եւ կադրերի վերապատրաստման կազմակերպում, աշխատանքի անվտանգության ու հիգիենայի երաշխիքներ, ապահովագրական համակարգի զարգացում, քաղաքացիների գործարար

ջանքերի խթանում եւ այլն: Սոցիալական պետության գործունեությունը գլխավորապես պետք է ուղղված լինի աղքատության հաղթահարմանը, գույքային անհավասարության կրճատմանը, միջին դասի ձեւավորմանը, դեպի առողջ ապրելակերպ մարդկանց կարիքների կառուցվածքի փոփոխմանը:

Մարդու տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների իրականացմանը կարող են խոչընդոտել մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ կոռուպցիան, որը, ցավոք սրտի, մեր իրողության մեջ բավականին խոշոր չափերի է հասնում: Կոռուպցիան պետության տնտեսական զարգացման լուրջ եւ հիմնական արգելքներից է, որը կարող է ձախողել բարեփոխումների գործընթացը: Այն խոչընդոտում է մարդու սեփականության, աշխատանքի, կրթության, առողջության պահպանության եւ այլ իրավունքների արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես՝ կրթական համակարգում կոռուպցիան լուրջ խոչընդոտ է լավ կրթված եւ բարոյական արժեքների կրող սերունդներ ունենալու համար: Հանրահայտ է, որ վատ կրթված, ոչ արհեստավարժ պետական պաշտոնյաները չեն կարող լավ կառավարել եւ հարգել մարդու իրավունքները: Նշվածի ընկալումը հանգեցրեց լավ կառավարման հայեցակարգի ձեւավորման: Լավ կառավարումը ներառում է իրավունքի գերակայությունը, պետական մարմինների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը, մարդու արժանապատվության ու իրավունքների հարգումը, պահպանումը եւ պաշտպանությունը, որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների իրական մասնակցությունը: Միջազգային կազմակերպություններն ընդգծում են լավ կառավարման կարեւորությունը՝ այն շաղկապելով ժողովրդավարության եւ մարդու իրավունքների հետ: 2000թ. սեպտեմբերի 8-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված՝ Հազարամյակների հռչակագրի 5-րդ գլուխը կոչվում է «Մարդու իրավունքները, ժողովրդավարությունը եւ լավ կառավարումը»:

Կոռուպցիան նպաստում է նաեւ այնպիսի արատավոր սոցիալական երեւոյթների առաջացմանը, ինչպիսիք են՝ մարդկանց վաճառքը, օրգանների փոխպատվաստումը, խորացնում է հասարակության մեջ խտրական վերաբերմունքի, օրենքի եւ դատարանի առջեւ բոլորի հավասարության, պատժի անխուսափելիության սկզբունքների խախտման դրսևորումները: Կոռուպցիան բացասաբար է ազդում նաեւ երկրի բնապահպանական իրադրության վրա:

Պետք է փաստել, որ Հայաստանում պետական կառավարման համակարգը թերզարգացած է եւ չի համապատասխանում լավ կառավարման չափանիշներին, ուստի պատահական չէ, որ միջազգային կազմակերպությունները Հայաստանի առջեւ անընդհատ բարձրացնում են այդ խնդիրը: Լավ կառավարման սկզբունքի ներդրումը նաեւ «Արեւելյան գործընկերության» ծրագրի պահանջներից է:

Գիտարկվող իրավունքներն իրենց վերջնադրույնքում ապահովում են մարդու ազատությունը տնտեսական, սոցիալական ու մշակութային ոլորտներում եւ նրան հնարավորություն են տալիս պաշտպանել իր կենսական շահերը: Կենսապահովման հարցերում մարդկանց մեծ մասը չի կարող ապավինել միայն սեփական ուժերին: Ուստի հասարակության շահերից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջանում պաշտպանել մարդուն տնտեսական կամայականությունից եւ սոցիալական անարդարությունից, ինչպես նաեւ հնարավորություններ ստեղծել նրա հոգեւոր զարգացման եւ իր ընդունակությունների դրսեւորման համար:

Մարդու տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքները ամրագրված են ունիվերսալ եւ տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների կողմից տարբեր տարիների ընդունված իրավական ակտերում եւ բազմաթիվ երկրների սահմանադրություններում: Հատկանշական է, որ ոչ բոլոր (նույնիսկ զարգացած երկրների) սահմանադրություններն են ներառում մարդու բոլոր՝ տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքները, սակայն դա իրենց չի խանգարում զարգացած տնտեսություն եւ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգ ունենալ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ամրագրում է մարդու բոլոր՝ տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքները, սակայն խնդիրը դրանց իրականացումն ապահովելու մեջ է:

### *Սեփականության իրավունք*

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասը հռչակում է, որ մեր երկրում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը: Ըստ Սահմանադրության 31-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության եւ պետության իրավունքներն ու օրինական շահերը: Հոդվածը նախատեսում է սեփականությունից զրկելու երկու ձեւ՝ օրենքով նախատեսված դեպքերում դատական կարգով եւ սեփականության օտարումը հասարակության ու պետության կարիքների համար, որը կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: Նշված դրույթն առկա է նաեւ բազմաթիվ երկրների սահմանադրություններում: ՀՀ Սահմանադրության նշված հոդվածը եւ ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածը սահմանափակում են օտարերկրացիների՝ Հայաստանում հողի սեփականատեր դառնալու հնարավորությունը: Հայաստանում օտարերկրյա

քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող հողի նկատմամբ ունենալ սեփականության իրավունք: Նրանք կարող են լինել միայն հողօգտագործողներ: Բացառություն են կազմում միայն Հաստատանում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք:

Սեփականության իրավունքի եւ այլ գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների (մտավոր սեփականություն) ծագման հիմքերն ու իրականացման կարգը սահմանվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով եւ իրավական այլ ակտերով: Քաղաքացիները կարող են սեփականության իրավունքով ունենալ գույք, ինչպես նաեւ կտակել եւ ժառանգել այն:

Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով եւ իրավական այլ ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգտագործման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաեւ դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաձի եւ այլ ձեւերով: Տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ իր հայեցողությամբ կատարել օրենքին չհակասող եւ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման եւ տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Սեփականատերը կարող է իր գույքը հանձնել այլ անձի հավատարմագրային կառավարման: Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում սեփականության իրավունքի փոխանցման: Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է գույքը կառավարել ի շահ սեփականատիրոջ կամ նրա կողմից նշված երրորդ անձի:

Գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո: Գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով: Օրենքներով սահմանվում են գույքի այն տեսակները, որոնք կարող են գտնվել միայն պետության կամ համայնքների սեփականության ներքո: Բոլոր սեփա-

կանատերերի իրավունքները պաշտպանվում են հավասարապես:

Պետությունը կարող է իր սեփականության ներքո գտնվող գույքը հանձնել քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությանը: Օգտվելով իր այդ հնարավորությունից պետությունը քաղաքացիներին անհատույց մասնավորեցրել է պետական և հանրային բնակարանային ֆոնդի բնակարանները: 2002թ. նոյեմբերի 20-ին ընդունված համապատասխան օրենքի հիման վրա 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների համար կառուցված բնակարանները սեփականության իրավունքով փախստականներին հատկացվեցին: Ի կատարումն «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի` ՀՀ կառավարությունը 2001թ. մայիսի 14-ի N 404 որոշմամբ հաստատել է 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց` պետական, բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքների սեփականաշնորհման կարգը: Սակայն այս գործընթացը նույնպես զերծ չմնաց ավելորդ բյուրոկրատական քաշքշուկից:

Հատկապես Երևան քաղաքում ինքնակամ կառույցները մեծ թվի են հասնում և հասարակական պահանջ էր առաջացել իրավական լուծում տալ այդ խնդրին: Ելնելով դրանից, 2008թ. հունիսի 10-ին ընդունվեց «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը: Ըստ օրենքի, Երևան քաղաքի վարչական տարածքում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված և 2008թ. հուլիսի 20-ի դրությամբ առկա (ներառյալ` բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում) այն անհատական բնակելի տները և դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և/կամ հողահատկացման հիմքերը, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում` ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը` որպես սեփական գույք:

Ինչպես նշել ենք, ՀՀ Սահմանադրությունը հնարավորություն է վերապահում գերակա հանրային շահերի դեպքերում սեփականությունը օտարել հասարակության և պետության կարիքների համար: Այս խնդիր-

րը վերջին 5-6 տարիներին մեր հասարակությունը հուզող արդիական հարցերից է: Այդ մասին է վկայում փաստը, որ խնդրին պարբերաբար անդրադառնում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան զեկույցներում և նույնիսկ 2005թ. նա հրապարակեց արտահերթ զեկույց: Օտարվող գոտիներում գտնվող բնակտարածությունների սեփականատերերի իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու նպատակով ստեղծվել են մի շարք հասարակական կազմակերպություններ:

Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման հիմքը, կարգը, օտարվող սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը, բացառիկ՝ գերակա հանրային շահ հասկացությունը և դրա որոշման կարգը սահմանվում են 2006թ. նոյեմբերի 27-ին ընդունված՝ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով: Մինչև օրենքի ընդունումը սեփականության օտարման գործընթացը կարգավորվում էր ՀՀ կառավարության մի շարք որոշումներով, ինչն անօրինական էր: Մինչև Սահմանադրության փոփոխությունների ընդունումը գործող սահմանադրական համապատասխան դրույթը նախատեսում էր, որ սեփականությունից զրկելը թույլատրվում է միայն դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Սեփականության օտարման հարցին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր 1998թ. փետրվարի 27-ի որոշմամբ և գտել է, որ հասարակության կամ պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկ անհրաժեշտությունը և օտարման կարգն ու պայմանները յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է սահմանվեն օրենքով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մինասյանը և Սեներջյանը ընդդեմ Հայաստանի» գործով 2009թ. հունիսի 23-ին վճիռ կայացնելով՝ արձանագրել է, որ խախտվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով սահմանված սեփականության պաշտպանության իրավունքը:

Երեւանի կառուցապատման ծրագրերով առաջ է եկել քաղաքացիների սեփական բնակարանները, շինությունները և հողատարածքները հասարակական կարիքների համար վերցնելու անհրաժեշտությունը: Այդ անհրաժեշտությունը մինչև 2006թ. նոյեմբեր սահմանվել է ոչ թե օրենքով, ինչպես սահմանված է Սահմանադրական դատարանի հիշյալ որոշմամբ, այլ ՀՀ կառավարության որոշումներով՝ «Երեւանի Հյուսիսային պողոտայի կառուցապատման ծրագրի իրականացման միջոցառումների մասին»՝ 2001թ. հուլիսի 16-ի թիվ 645, «Երեւանի Հյուսիսային պողոտայի և Երեւան քաղաքի օտարման այլ գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը գնելու, վերցնելու գնային

առաջարկի ձեւավորման եւ իրացման կարգը հաստատելու մասին»՝ 2001թ. հոկտեմբերի 5-ի թիվ 950, նշված թիվ 950 որոշման մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին՝ 2002թ. օգոստոսի 1-ի թիվ 1169, 2004թ. հունվարի 29-ի թիվ 57, «Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին»՝ 2002թ. օգոստոսի 1-ի թիվ 1151, «Երեւան քաղաքի վարչական սահմաններում գտնվող օտարման գոտիներում առանց մրցույթի հողամասեր տրամադրելու մասին»՝ 2004թ. մարտի 4-ի թիվ 399, «Երեւան քաղաքի Գլխավոր պողոտայում քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով պետության կարիքների համար վերցված տարածքում կառուցապատման ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով առանց մրցույթի հողամասեր տրամադրելու մասին»՝ 2004թ. հունիսի 17-ի թիվ 909: Բացի դրանից, հղում էր կատարվում քաղաքացիական եւ հողային օրենսգրքերի դրույթներին:

ՀՀ մարդու իրավունքների առաջին պաշտպանի դիտարկմամբ՝ առանձին օրենքի բացակայության հետեւանքով է, որ այդ գործընթացում զանգվածաբար խախտվել են սեփականատերերի եւ օգտագործողների իրավունքները, եւ գործընթացի տնտեսական արդյունքը գնահատվում է բացասական:

Մարդու սեփականության եւ տնտեսական իրավունքների խախտումներին վերաբերող հարցերը Պաշտպանը դիտարկում է աղքատության հաղթահարման ծրագրային խնդիրների շրջանակներում:

Հարցն այն է, որ Երեւան քաղաքի բարեկարգման ու կառուցապատման լայնածավալ ծրագրի իրականացման հետ կապված՝ քաղաքացիներից վերցվում էին սեփականության կամ օգտագործման իրավունքով նրանց պատկանող հողատարածքներն ու բնակարանները, եւ հարյուրավոր ընտանիքներ դառնում էին անտուն, քանի որ տրվող փոխհատուցման գումարները չէին կարող համարժեք համարվել եւ բավարար չէին մեկ այլ բնակարան ձեռք բերելու համար: Դրան զուգահեռ արհեստականորեն բարձրացվում են բնակարանների շուկայական գները, բնակարանի կարիք ունեցող այլ անձինք նույնպես զրկվում էին բնակարան գնելու հնարավորությունից:

Բնակտարածության կարիք ունեցողների առկա բանակը փաստորեն համալրվեց այս ծրագրերով բնակարանագուրկ դարձող քաղաքացիներով, ինչը Երեւանի կառուցապատման այդ ծրագրերի առաջին տնտեսական անշահավետությունն է, անհամապատասխանությունն «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» խնդիրներին:

ՀՀ մարդու իրավունքների գործող պաշտպանը իր 2006թ. տարեկան զեկույցում մանրամասն անդրադարձ կատարեց Երեւանի կառուցապատման ծրագրերի իրականացման կապակցությամբ հասարա-

կությանն և պետության կարիքների համար սեփականության օտարման գործընթացին: 2007թ. զեկույցում Պաշտպանը անդրադարձավ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումից հետո ձեռնարկված գործողությունների և ընդունված ակտերի վերլուծությանը:

2006թ. ապրիլի 18-ին կայացված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 218-րդ, հողային օրենսգրքի 104-րդ, 106-րդ և 108-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշման դրույթները ճանաչեց ՀՀ Սահմանադրության 31-րդ (3-րդ մաս), 43-րդ հոդվածների, ինչպես նաև մի շարք այլ հոդվածների պահանջներին չհամապատասխանող:

Հետեւաբար, համապատասխան իրավական ակտերով, որոնց հիման վրա իրականացվել է հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման գործընթացը, և որոնք հետագայում ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել են ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթներին հակասող, խախտվել են քաղաքացիների՝ ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված իրավունքները:

Պաշտպանի կարծիքով՝ 2006թ. նոյեմբերի 27-ին ընդունված «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում պետք է հանգամանալի անդրադարձ լիներ վերոնշյալ հարցերին: Խնդրո առարկա օրենքում առկա են նաև մի շարք այլ վիճահարույց դրույթներ, որոնց վերաբերյալ Պաշտպանը կարծիք է ներկայացրել դեռևս 2006թ. իր զեկույցի հավելված 7-ում:

Նշված օրենքի համաձայն, հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշման սկզբունքներն են՝

ա) հանրային շահը պետք է գերակա լինի օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից.

բ) գերակա հանրային շահի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց տվյալ սեփականության օտարման.

գ) գերակա հանրային շահից ելնելով՝ սեփականության օտարումը չպետք է չհիմնավորված վնաս պատճառի սեփականատիրոջը.

դ) հանրային շահը գերակա է ճանաչվում կառավարության որոշմամբ.

ե) գերակա հանրային շահի առկայության փաստը կարող է վիճարկվել դատական կարգով:

Գերակա հանրային շահը կարող է հետապնդել հետեւյալ նպատակները՝

ա) պետության պաշտպանության, պետության ու հասարակության անվտանգության ապահովումը.

բ) ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովումը.

գ) միջազգային եւ հանրապետական նշանակության պատմության եւ մշակութային արժեքների կամ հուշարձանների, ինչպես նաեւ բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կամ պահպանության ապահովումը.

դ) շրջակա միջավայրի պահպանության ապահովումը.

ե) կրթության, առողջության, սպորտի, ինչպես նաեւ գիտության կամ մշակույթի զարգացման ապահովումը.

զ) էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի հետախուզման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հաղորդակցության ոլորտների կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարելու նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը.

է) անձանց կյանքի, առողջության կամ սեփականության պաշտպանությունը.

ը) արտակարգ իրավիճակների կանխումը, արտակարգ իրավիճակների հնարավոր հետեւանքների նվազեցումը, արտակարգ իրավիճակների հետեւանքների վերացումը:

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջե լրացուցիչ եկամուտների ապահովման նպատակն ինքնին չի հանդիսանում բացառիկ՝ գերակա հանրային շահ:

Հասարակության եւ պետության կարիքը չի կարող համարվել բացառիկ՝ գերակա հանրային շահ, եթե օտարման նպատակի իրագործումը չի սկսվելու բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո յոթ տարվա ընթացքում:

Բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ կամ շահագրգիռ այլ անձի կողմից կարող է բողոքարկվել դատարան՝ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Սեփականությունն ուսումնասիրելու մասին կառավարության որոշումն ուսումնասիրման ենթակա սեփականության սեփականատիրոջ կամ շահագրգիռ այլ անձի կողմից կարող է բողոքարկվել դատարան՝ սեփականությունն ուսումնասիրելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

Ձեռքբերողը պարտավոր է մինչեւ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշմամբ սահմանված սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը օտարվող սեփականության սեփականատերերին եւ օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին պատշաճ

ձեռով ուղարկել սեփականության օտարման պայմանագրի նախագիծը: Օտարվող սեփականության սեփականատերն օտարման պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, պարտավոր է պատշաճ ձեռով հայտնել ձեռքբերողին օտարման սեփականության նկատմամբ այն գույքային իրավունքներ ունեցողների մասին, որոնք օրենքով սահմանված կարգով պետական մարմնում չեն գրանցվել կամ ենթակա չեն եղել պետական գրանցման: Եթե նշված ժամկետում օտարվող սեփականության սեփականատերն իրեն հայտնի օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում չունեցող գույքային իրավունքներ ունեցողների մասին չի հայտնում ձեռքբերողին, ապա առանց այդ գույքային իրավունքներ ունեցողների մասնակցության սեփականության օտարման հետեւանքով նրանց պատճառված վնասների համար պատասխանատվությունը կրում է օտարվող սեփականության սեփականատերը: Օտարվող սեփականության սեփականատերը կամ օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներն իրավունք ունեն պատշաճ ձեռով գրավոր առարկություններ կամ առաջարկություններ ներկայացնելու օտարման պայմանագրի նախագծի վերաբերյալ: Ձեռքբերողն իրավունք ունի պայմանագիրը կնքելու նպատակով բանակցություններ վարել օտարվող սեփականության սեփականատիրոջ եւ օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողների հետ: Սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռքբերողի եւ օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջեւ կնքվող պայմանագրի համաձայն: Այս դեպքում կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձեւը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը: Եթե օտարվող սեփականության նկատմամբ կան ձեռքբերողին հայտնի գույքային իրավունքներ ունեցողներ, ապա օտարման պայմանագրի կողմ պետք է հանդիսանան նաեւ օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողները:

Օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Համարժեք է համարվում օտարվող գույքի շուկայական արժեքից 15 տոկոս ավելի գումարը: Օտարվող սեփականության շուկայական արժեքը բաց է մրցակցային շուկայում սեփականություն հանդիսացող գույքի վաճառողի եւ գնորդի գիտակցաբար, արդարացի առետրի պայմանների պահպանմամբ եւ օրինական գործողությունների արդյունքում ձեւավորվող, գույքի վաճառքի առավել հավանական գինն է: Եթե օտարվող սեփականության համար առկա չէ համապատասխան բաց է մրցակցային շուկա, ապա սեփականության շուկայական արժեքը որոշվում է այնպիսի հաշվարկման մեթոդով, որն արդարացի կհամարի դատարանը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահա-

տումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Օտարվող սեփականության շուկայական արժեքը չպետք է ներառի սեփականության արժեքի որևէ նվազեցում կամ ավելացում, որը պայմանավորված է հետեյալ պատճառներից որևէ մեկով՝

ա) այն նպատակով, որի համար օտարվում է սեփականությունը.

բ) հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման հանգամանքով.

գ) ձեռքբերողի ցանկացած նախնական գործողությամբ, որը կապված է հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման հետ (այդ թվում՝ նախնական ուսումնասիրությունը).

դ) սեփականության նկատմամբ առկա գույքային իրավունքներով:

Սեփականության օտարման հետ կապված օտարվող սեփականության սեփականատիրոջ համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այդ կապակցությամբ առաջացող ֆինանսական պարտավորությունները (հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ) հատուցում է ձեռքբերողը: Օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին փոխհատուցումը տրվում է օտարվող սեփականության դիմաց տրվող փոխհատուցման գումարից:

Օտարվող սեփականության սեփականատերը, մինչեւ դրա օտարումը կամ օտարումից ծագող իրավունքների պետական գրանցումն իրավունք ունի այն տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու, ինչպես նաեւ կատարելու միայն այնպիսի բարելավումներ, որոնք ապահովում են տվյալ սեփականության օգտագործումն իր նշանակությանը համապատասխան: Դատական կարգով օտարված անշարժ գույքի սեփականատերը, ինչպես նաեւ անշարժ գույքի նկատմամբ իրավունք ունեցող այլ անձինք իրավունք ունեն սեփականության օտարման օրվանից սկսած՝ երկամսյա ժամկետում, անհատույց օգտագործելու օտարված անշարժ գույքը: Պայմանագրով կամ դատական կարգով հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման պահից օտարվող սեփականության սեփականատերն ազատվում է օտարվող սեփականության մասին կնքված գործարքներով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար նախատեսված պատասխանատվությունից, եթե պարտավորությունների չկատարումը կամ անպատշաճ կատարումը պայմանավորված է սեփականության օտարմամբ: Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման պահից օտարված սեփականության նկատմամբ եղած բոլոր գույքային իրավունքները դադարում են, եթե այլ բան չի նախատեսվում օտարման

պայմանագրով:

Ի կատարումն նշված օրենքի ՀՀ կառավարությունը արդեն ընդունել է մի շարք որոշումներ:

Մտավոր սեփականությանն անդրադառնալով՝ նշենք, որ մտավոր սեփականություն ասելով սովորաբար հասկանում են օրենսդրությամբ ամրագրված իրավունքներ, որոնք ամենալայն իմաստով վերաբերում են արդյունաբերության, գիտության, գրականության եւ գեղարվեստի բնագավառներում մտավոր գործունեության արդյունքներին:

Սովորաբար մտավոր սեփականությունը բաժանում են իրավունքների երկու հիմնական ոլորտների՝ «արդյունաբերական սեփականություն» եւ «հեղինակային իրավունք»: Արդյունաբերական սեփականության պահպանության օբյեկտներն են՝ գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները, ապրանքային նշանները, սպասարկման նշանները, ֆիրմային անվանումները, ծագման նշումները կամ ծագման տեղանունները եւ անբարեխիղճ մրցակցության կանխումը:

Հեղինակային իրավունքը հիմնականում տարածվում է գրական, երաժշտական, արվեստի, լուսանկարչական եւ տեսալսողական ստեղծագործությունների նկատմամբ, որը որոշակի իրավունքներ է վերապահում դրանց հեղինակներին՝ որոշակի ժամանակահատվածում թույլատրելու կամ արգելելու իրենց ստեղծագործության այս կամ այն ձևի օգտագործումը: Ավելի լայն իմաստով հեղինակային իրավունքը ներառում է ուղղակի իմաստով հեղինակային իրավունքը, ինչպես նաև, այսպես կոչված, «հարակից իրավունքների» պահպանության մասին դրույթներ<sup>2</sup>:

Հայաստանում մտավոր սեփականության հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով, «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքով, «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով, «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքով եւ մի շարք ենթաօրենսդրական ակտերով: 2005թ. ապրիլի 14-ին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց «Մտավոր սեփականության բնագավառում պետական կարգավորման» հայեցակարգին:

Չնայած Հայաստանում ունենք մտավոր սեփականությանը վերաբերող օրենսդրություն, սակայն մեզանում մտավոր սեփականությունը չափազանց թույլ է պաշտպանված: Մեր առօրյայում շատ հաճախ կարելի է հանդիպել գրագողության, կեղծ տեսաերիզների եւ ձայներիզների եւ այլն:

Շուկայական հարաբերությունների պայմաններում քաղաքացիների սեփականության իրավունքի առաջացման հիմնական աղբյուր են վարձու աշխատանքը եւ սեփական տնտեսական գործունեությունը:

Ճնշող մեծամասնությամբ քաղաքացիների սեփականությունն առաջանում է վարձու աշխատանքի դիմաց ստացվող վարձատրության եւ սեփական պահանջմունքների բավարարման համար իրականացվող տնտեսական գործունեության (օժանդակ տնտեսությունում, տնամերձ հողատարածքում) հետեւանքով ստացվող պտուղների եւ եկամուտների հաշվին:

Տնտեսական գործունեությունը սեփականության իրավունքի առաջացման հիմքն է նաեւ այն դեպքում, երբ շահույթ ստանալու նպատակով այդպիսի գործունեությամբ զբաղվում են գործարարները: Գործարարությունը կարող է իրականացվել ինչպես իրավաբանական անձ ստեղծելու, այնպես էլ այդպիսին չստեղծելու միջոցով<sup>3</sup>:

### **Աշխատանքի իրավունք**

Աշխատանքի իրավունքը արտահայտում է մարդկային կեցության եւ անձի համակողմանի զարգացման պայմանների ապահովման համար անհրաժեշտ տարրական նյութական նախադրյալների ստեղծման մարդու մշտական կարիքը: Աշխատանքը սեփականության իրավունքի սկզբնական առաջացման հիմնական պայմաններից է:

Աշխատանքի իրավունքի ապահովումը բոլորովին չի նշանակում, որ պետությունը անխտիր բոլորին պետք է ապահովի աշխատանքով, ինչպես օրինակ դա արվում էր Խորհրդային Միությունում: Պետությունը պետք է վարի այնպիսի տնտեսական քաղաքականություն, որը հնարավորինս կհանգեցնի զբաղվածության աճին եւ գործազրկության կրճատմանը: Պետությունը պետք է նաեւ ապահովի մարդկանց պաշտպանությունը ա/ հարկադիր աշխատանքից, բ/ աշխատանքի եւ զբաղվածության ոլորտում խտրականությունից: Զբաղվածության աճին նպաստելու նպատակով պետությունը պետք է հիմնի անվճար զբաղվածության կենտրոններ: Մեզանում առկա են պետական եւ մասնավոր զբաղվածության կենտրոններ:

ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերի, չի ամրագրում աշխատանքի իրավունքը, այլ միայն հռչակում է յուրաքանչյուր անձին պատկանող աշխատանքի ընտրության ազատություն, որը աշխատանքի իրավունքի տարրն է հանդիսանում: Մեր պետություն Հիմնական օրենքի 32-րդ հոդվածը նաեւ ամրագրում է, որ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի եւ օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաեւ անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք: Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական եւ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք: Մինչեւ 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է:

Հարկադիր աշխատանքն արգելվում է:

Յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը եւ ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տեսողությունը սահմանվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով:

ՀՀ կառավարությունը որոշ քայլեր ձեռնարկում է երկրում բիզնես ակտիվությունը խթանելու եւ զբաղվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ, սակայն դրանք, հատկապես ֆինանսատնտեսական ճգնաժամի պարագայում, բավարար չեն:

Աշխատողների իրավունքների պաշտպանության նպատակով 2005 թվականին ձեւավորվել է ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը: Սակայն Հայաստանում աշխատողների իրավունքների պաշտպանվածության մակարդակը ցածր է: Դրանում բացասական դեր է խաղում նաեւ արհեստակցական միությունների կրավորական պահվածքը: Փոքր եւ միջին բիզնեսի ընկերություններում արհմիությունները կամ իսպառ բացակայում են, կամ էլ անվերապահորեն կատարում են գործատուի կամքը:

Խելամտորեն անցկացնելով ազատականացումը, որը շուկային անցնելու պարագայում անխուսափելի է, չափազանց կարեւոր է, որ արհմիություններն արդյունավետ կատարեն իրենց գործառույթները: Հզոր արհմիություններն անհրաժեշտ են ոչ միայն պաշտպանական գործառույթներ իրականացնելու եւ կոլեկտիվ պայմանագրեր կնքելու, այլեւ սոցիալական գործընկերների շահերի հավասարակշռության քաղաքականություն ապահովելու համար:

Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունների առկա վիճակի վերլուծությունը վկայում է, որ աշխատանքային իրավունքները մեր իրականության մեջ, գերազանցապես մասնավոր ոլորտում, զանգվածաբար ոտնահարվում են: Դրան նպաստում են օբյեկտիվ եւ սուբյեկտիվ բնույթի մի շարք գործոններ: Կարեւորագույն գործոններից մեկը սոցիալ-տնտեսական իրավիճակն է, որն ազդում է հասարակական հարաբերությունների վրա: Բացասական գործոն է նաեւ պետության կողմից աշխատանքային օրենսդրության կիրառման նկատմամբ ոչ բավարար հսկողությունը եւ վերահսկողությունը:

Աշխատավարձի վճարման ուշացումները, անօրինական արձակումները, առանց աշխատավարձի պահպանման հարկադիր արձակուրդներ ուղարկելը կարելի է պատճառաբանել տնտեսական ճգնաժամով, սակայն օրենքի խախտումների մեծ մասը չի կարելի բացատրել տնտեսական պատճառներով, եւ տարեցտարի կրկնվող խախտումները դառնում են «ավանդական»:

Աշխատանքային իրավունքների խախտումը սկսվում է հենց պայմանագրի կնքումից: Աշխատանքային պայմանագիրը երբեմն չի կնքվում կամ իրավական պատշաճ ձեւով չի կնքվում՝ հակասում է ՀՀ

աշխատանքային օրենսգրքին: Աշխատանքային գրքույկը հաճախ չի ձեակերպվում կամ պատշաճ ձեով չի ձեակերպվում, ինչը հետագայում բարդություններ է առաջացնում աշխատողի համար: Բազմաթիվ ընկերություններում չեն պահպանվում աշխատանքի անվտանգության տարրական պայմանները, ինչի հետեանքով առաջանում են մասնագիտական հիվանդություններ, արտադրական խեղումներ և առողջության այլ խաթարումներ:

Արտադրության կրճատման պարագայում ձեռնարկություններում դժբախտ պատահարների փաստերը կարելի է բացատրել գործատուների սոցիալ-տնտեսական կացությամբ, որի հետեանքով նրանք չեն մտածում աշխատանքի անվտանգ պայմանների մասին, քանի որ դրա ապահովման համար անհրաժեշտ են բավականին լուրջ գումարներ և համապատասխան որակավորում ունեցող կադրեր: Վերջիններիս պակասը մեզանում նույնպես լուրջ խնդիր է: Որոշ ձեռնարկություններում աշխատանքի անվտանգության ծառայությունները դադարեցրին իրենց գոյությունը, առաջին օգնության և պրոֆիլակտիկայի ծառայությունների ստորաբաժանումները նույնպես լուծարվեցին, իսկ նոր ձեռնարկություններում դրանք չեն էլ ստեղծվում: Կա նաև սուբյեկտիվ գործոնը:

Փաստ է, որ շարունակվող տնտեսական վերափոխումների և ձեռնարկությունների սեփականաշնորհման ընթացքում աշխատանքի պաշտպանության համակարգի բարեփոխումը զգալիորեն ետ է մնացել:

Գործատուները հաճախ շահագործում են աշխատողներին: Որոշ ընկերություններում աշխատողի համար սահմանվում է աշխատանքային օր, որը զգալիորեն գերազանցում է նորման: Աշխատավարձի չափը սահմանվում է ոչ թե աշխատանքային փորձին կամ որակավորմանը համապատասխան, այլ ելնելով անձնական նվիրվածությունից կամ զանազան ծառայությունների մատուցումից: Ելնելով իրենց ծանր կացությունից՝ մարդիկ հաճախ համաձայնում են այդ պայմաններին: Գործատուներն աշխատողներին վերաբերում են որպես միջոցի, որի օգնությամբ ստանում են շահույթ, ինչի մասին նրանք ավելի շատ են մտածում, քան աշխատողների սոցիալ-աշխատանքային իրավունքների և շահերի մասին:

Մեզանում սովորական են դարձել աշխատանքի ընդունման մասին հայտարարությունները, որտեղ պահանջվում են մինչև 35 տարեկան որակյալ գլխավոր հաշվապահներ, կամ 18-25 տարեկան բարեսե վաճառողուհիներ, մատուցողներ, հավաքարարներ, խոհարարներ և այլն:

Մեր հասարակության որոշ հատված (40-63 տարեկան) գտնվում է սոցիալական առավել ռիսկային գոտում, քանի որ չափազանց ցածր են նրանց հնարավորությունները աշխատաշուկայում, չեն կարող ստանալ

կենսաթոշակ, պատահում է՝ չեն ստանում ընտանեկան նպաստներ, քանի որ համարվում են աշխատունակ:

Քիչ չեն դեպքերը, երբ գործատուները աշխատողներին աշխատանքից ազատում են՝ խախտելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգը (ազատում են օրենսգրքով չնախատեսված հիմքերով, նախօրոք չեն ծանուցում աշխատանքային պայմանագրի լուծման մասին եւ այլն):

Լինում են դեպքեր, երբ գործատուի կողմից խախտվում է աշխատողին յուրաքանչյուր տարի արձակուրդ տալու վերաբերյալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջը եւ արձակուրդները չեն տրվում տարիներով, ինչը վերջիվերջո բացասաբար է անդրադառնում նրա առողջական վիճակի վրա, առաջանում է գերհոգնածություն եւ որպես հետեւանք՝ կտրուկ ընկնում է արտադրողականությունը: Կան աշխատանքային իրավահարաբերությունների մեջ գտնվող հղի կանանց իրավունքների խախտումներ:

Իրավական եւ բարոյական բոլոր նորմերի խախտում է նաեւ այն, երբ գործատուն անձին ընդունում է աշխատանքի՝ պայմանով, որպեսզի նա մի քանի ամիս աշխատի անվճար, որպես «փորձաշրջան», եւ եթե անցնի այդ «փորձաշրջանը», կստանա աշխատավարձ: Անձն այդ ամիսների ընթացքում օրական աշխատում է 12-14 ժամ, սակայն նրան ոգետրում է «փորձաշրջանն» անցնելու միտքը: Այնուհետեւ գործատուն աշխատողին հայտարարում է, որ նա «փորձաշրջանը» չի անցել, եւ նրանց միջեւ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն աշխատած ժամանակը չի վարձատրվում:

Աշխատանքային հարաբերությունների ոլորտում ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ: Աշխատանքային հարաբերությունների կարգավորման համալիր մոտեցումը կարգախոս չէ, այլ ցանկացած սոցիալ-տնտեսական խնդրի լուծման օբյեկտիվ պահանջ, այդ թվում մարդկային գործունեության հիմնական՝ աշխատանքի ոլորտում:

Առաջին հերթին պետք է կատարելագործել ՀՀ աշխատանքային օրենսդրությունը՝ վերացնելով ամկա թերություններն ու բացթողումները: Այդ ուղղությամբ արդեն աշխատանքներ կատարվում են: Կարելի է աշխատանքային օրենսդրության կիրառման նկատմամբ պետական հսկողության ուժեղացումը: Անհրաժեշտ է, որ աշխատանքի պետական տեսչությունը ապահովի աշխատանքային օրենսդրության անշեղ կատարումը բոլոր ձեռնարկություններում եւ կազմակերպություններում՝ նրանց սեփականատերի հասարակական եւ գույքային դիրքից անկախ: Դրա իրականացման համար անհրաժեշտ են կամքի ամկայություն, սկզբունքայնություն եւ կատարվող աշխատանքների հանդեպ արհեստավարժ մոտեցում:

Մեզանում շատ կարեւոր է արհեստակցական միությունների դերի բարձրացումը, որոնք աշխատանքի պետական տեսչությանը զուգահեռ պետք է իրականացնեն հասարակական վերահսկողություն աշխատանքային օրենսդրության կիրառման նկատմամբ: Կյանքի հրամայականներից է բնակչության, այդ թվում՝ գործատուների եւ աշխատողների իրավական մշակույթի բարձրացմանն աջակցելը:

Այսպիսով՝ աշխատանքային օրենսդրության կատարելագործումը, սոցիալական գործընկերության համակարգի ձեւավորումը, աշխատանքային օրենսդրության կիրառման նկատմամբ պատշաճ հսկողությունն ու վերահսկողությունը զգալիորեն կբարելավեն աշխատանքային հարաբերությունների ներկա անմխիթար վիճակը, կբարձրացնեն աշխատանքի արդյունավետությունն ու արտադրողականությունը, կնպաստեն հասարակական հարաբերությունների ներդաշնակությանը:

Ինչպես նշեցինք, սահմանադրորեն ամրագրված է, որ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի եւ օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք: Ինչպես նաեւ աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական եւ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք:

Ներկայիս դրությամբ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ այդ աշխատավարձը կազմում է 30 հազար դրամ: Ոչ բոլոր պետություններն ունեն նման օրենք: Այդ երկրներում կա տարիների ընթացքում ձեւավորված նվազագույն շեմ, որից ցածր գործատուն ուղղակի իրեն թույլ չի տա վարձատրել աշխատողին:

Գործադուլը կոլեկտիվ աշխատանքային վեճի լուծման նպատակով մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի լրիվ կամ մասնակի ժամանակավոր դադարեցումն է: Գործադուլի իրականացման կարգն ու սահմանափակումները սահմանվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Գործադուլին վերաբերող ՀՀ աշխատանքային օրենսգրքում ամրագրված որոշ դրույթներում 2009թ. մայիսի 20-ին կատարվել են փոփոխություններ: Դա պայմանավորված է եղել դրանով, որ ՀՀ սահմանադրական դատարանը 2007թ. փետրվարի 7-ի իր որոշմամբ այդ դրույթները ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր:

Կարեւոր ենք համարում նշել նաեւ այն, որ ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ աշխատանքային օրենսգրքի հետ կապված 2009թ. փետրվարի 24-ին կայացրել է եւս մեկ կարեւոր որոշում, ըստ որի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր են ճանաչվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի այն դրույթները, որոնք գործատուին հնարավորություն էին վերապահում լուծել ծերության կենսաթոշակ (65 տարեկան) ստանալու իրավունք ունեցող կամ այդ կենսաթոշակը ստացող

աշխատողի աշխատանքային պայմանագիրը:

Նշված որոշման օրինակով կուզենայինք անդրադառնալ մեր երկրում առկա հանրային իրազեկման անբավարար մակարդակին: Հանրության լայն շերտերին վերաբերող իրավական ակտերում տեղի ունեցող փոփոխությունների, սահմանադրական դատարանի որոշումների, եվրոպական դատարանի վճիռների մասին մեր հասարակությունը գրեթե չի տեղեկացվում: Այս առումով շատ կարևոր է զանգվածային լրատվության միջոցների դերը, որոնք, ցավոք սրտի, այս հարցում ցուցաբերում են անտարբերություն:

### ***Ճեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու իրավունք***

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մեր երկրում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը: Սահմանադրության 33.1 հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը եւ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են: Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները եւ դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար»:

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Հայաստանում ձեռնարկատիրական գործունեություն սկսելու նպատակով անհրաժեշտ է գրանցվել որպես առետրային իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր: Իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առետրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող եւ ստացված շահույթը մասնակիցների միջեւ չբաշխող (ոչ առետրային) կազմակերպություններ: Առետրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների եւ ընկերությունների ձեռով: Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առետրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առետրային) կազմակերպություններ: Ոչ առետրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել հասարակական միավորումների, հիմնադրամների, իրավաբանական

անձանց միությունների, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ ձեւերով: Ոչ առետրային կազմակերպությունները կարող են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նրանք ստեղծվել են, եւ համապատասխանում է այդ նպատակներին: Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ոչ առետրային կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից: Նշենք, որ որոշ երկրներում հասարակական կազմակերպություններն իրավունք ունեն ուղղակիորեն զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ:

2001թ. ապրիլի 3-ին ընդունված «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից եւ իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է: Անհատ ձեռնարկատեր կարող են լինել ՀՀ եւ օտարերկրյա գործունակ քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող այն անձինք, որոնց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը չի սահմանափակված օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ հոդվածը սահմանում է, որ տնտեսական ընկերակցություններ եւ ընկերություններ են համարվում իրենց հիմնադիրների (մասնակիցների)՝ բաժնեմասերի բաժանված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ունեցող առետրային կազմակերպությունները: Հիմնադիրների (մասնակիցների) ավանդների հաշվին ստեղծված, ինչպես նաև տնտեսական ընկերակցության կամ ընկերության գործունեության ընթացքում արտադրված եւ ձեռք բերված գույքը նրան է պատկանում սեփականության իրավունքով: Նշված օրենսգրքով նախատեսված դեպքերում տնտեսական ընկերություն կարող է ստեղծել մեկ անձը: Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության (կոմանդիտային ընկերակցության) ձեւով: Տնտեսական ընկերությունները կարող են ստեղծվել սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության ձեւով: Լիակատար ընկերակցությունների մասնակիցներ ու վստահության վրա հիմնված ընկերակցությունների լիակատար ընկերներ կարող են լինել միայն անհատ ձեռնարկատերերը եւ/կամ առետրային կազմակերպությունները: Տնտեսական ընկերությունների մասնակիցներ ու վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատուներ կարող են լինել քաղաքացիները եւ իրավաբանական անձինք: Պետական եւ տեղական ինքնակառավար-

ման մարմիններն իրավունք չունեն հանդես գալու որպես տնտեսական ընկերակցությունների ու ընկերությունների մասնակիցներ: Տնտեսական ընկերակցությունները եւ ընկերությունները կարող են լինել այլ տնտեսական ընկերակցությունների ու ընկերությունների հիմնադիրներ (մասնակիցներ), բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Տնտեսական ընկերակցության կամ ընկերության գույքում ներդրված ավանդը կարող է լինել դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային իրավունքներ, ինչպես նաեւ դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ: Տնտեսական ընկերության մասնակցի ավանդի դրամական գնահատումը կատարվում է ընկերության հիմնադիրների (մասնակիցների) միջեւ համաձայնությամբ եւ ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից՝ օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով:

Իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման բնագավառում առաջացող հարաբերությունները, իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող պետական ռեգիստրի իրավասությունները սահմանվում են 2001թ. ապրիլի 3-ին ընդունված «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով: Պետական ռեգիստրը գործում է ՀՀ արդարադատության նախարարություն համակարգում: Անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պետական ռեգիստր ներկայացնելուց եւ նույն օրը տարածքային ստորաբաժանման փաստաթղթերի ընդունման մատյանում գրառում կատարելուց հետո ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում, պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը պետք է կատարի համապատասխան պետական գրանցումը, ինչպես նաեւ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների գրառմամբ պայմանավորված պետական գրանցումը: Նշված օրենքի 11-րդ հոդվածով սահմանված, պետական գրանցման (ստեղծման) համար անհրաժեշտ փաստաթղթերի նմուշային ձեւերով պետական գրանցումը, ինչպես նաեւ անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումն իրականացվում է ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում: Առանձին կազմակերպական-իրավական ձեւ ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ համապատասխան օրենքներով կամ այլ օրենքներով կարող են սահմանվել պետական գրանցման այլ ժամկետներ: Իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումներն իրականացվում են 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ինչպես տեսնում ենք, իրավաբանական անձանց պետական գրանցման համար օրենքը սահմանում է բավականին սեղմ ժամկետներ:

Ձեռնարկատիրական գործունեության որոշ տեսակների իրականացման համար պահանջվում է լիցենզիա՝ տվյալ գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտ-

վություն, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները սահմանվում են 2001թ. մայիսի 30-ին ընդունված «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով:

Մեր երկրում կան մի շարք բնական մենաշնորհներ, օրինակ, գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, ֆիքսված հեռախոսակապի եւ համանման այլ ոլորտներում (հանրային ծառայությունների ոլորտ): Սակայն մեր շուկայում կան նաև ընկերություններ, որոնք գերիշխող դիրք ունենալով՝ թելադրում են գնային քաղաքականությունը եւ խոչընդոտում են շուկայի այդ հատվածում մրցակցության զարգացումը:

Հայաստանում հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնում է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որի ստեղծման եւ գործունեության կարգը սահմանված է 2003թ. դեկտեմբերի 25-ին ընդունված «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքով: Հանրային ծառայությունների ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն նշված օրենքով, այլ նաև ՀՀ ջրային օրենսգրքով, «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին» եւ ՀՀ այլ օրենքներով:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների եւ պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների եւ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձեւավորմանն ու զարգացմանը եւ խթանել միջոցների արդյունավետ օգտագործումը:

Կարգավորման հիմնական սկզբունքներն են՝

ա) կարգավորման իրականացումն ինքնուրույն պետական մարմնի կողմից՝ օրենքներով լիազորված իրավասությունների շրջանակում.

բ) կարգավորող մարմնի որոշումների ընդունման կոլեգիալությունը.

գ) կարգավորման թափանցիկության ապահովումը հասարակության համար.

դ) սպառողների կամ որեւէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականության բացառումը.

ե) սպառողների եւ կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը.

զ) մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սահմանափակումը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ նախագահ, նախագահի տեղակալ եւ երեք անդամ: Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է ունենա իրավաբանական եւ մեկը՝ տնտեսագիտական կրթություն: Հանձնաժողովի անդամներին նշանակում է ՀՀ նախագահը՝ վարչապետի ներկայացմամբ՝ տարեկան ռոտացիոն սկզբունքով (յուրաքանչյուր տարի հանձնաժողովի մեկ անդամի նշանակմամբ), հինգ տարի պաշտոնավարման ժամկետով: Նախագահը՝ վարչապետի ներկայացմամբ, նշանակում է հանձնաժողովի նախագահ եւ նախագահի տեղակալ: Հանձնաժողովի անդամի պաշտոնավարման առավելագույն տարիքը 65 տարին է: Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով, որի կառուցվածքը եւ աշխատակիցների ծառայողական պարտականությունների շրջանակը հաստատում է հանձնաժողովը: Աշխատակիցների թվաքանակը հաստատում է հանձնաժողովը՝ համաձայնեցնելով ՀՀ վարչապետի հետ:

Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում ընդունում է որոշումներ՝ բաց քվեարկությամբ: Որոշումներն ընդունվում են նիստերի միջոցով, որոնք դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող կամ հանձնաժողովի ներքին կանոնակարգային հարցեր: Հանձնաժողովի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ: Հանձնաժողովի իրավական ակտերը կարող են բողոքարկվել դատական կարգով: Հանձնաժողովի սահմանած սակագնի մեծությունը դատական կարգով կարող է բողոքարկվել սակագնի մեծությունը սահմանող հանձնաժողովի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից՝ 7-օրյա ժամկետում: Դատական կարգով բողոքարկումը չի կասեցնում սակագնի մեծությունը սահմանող հանձնաժողովի իրավական ակտի գործողությունը: Սակագնի մեծությունը դատական կարգով բողոքարկվելու դեպքում դատարանը ստուգում է դրա համապատասխանությունն օրենքներին: Օրենքների խախտման փաստի առկայության դեպքում դատարանն ընդունում է հանձնաժողովի կողմից սակագնի սահմանման մասին նոր որոշում ընդունելու առաջարկության վերաբերյալ վճիռ՝ մատնանշելով հանձնաժողովի իրավական ակտի օրենքների պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը՝ իրավակարգավորման այնպիսի միջոցների միաժամանակյա գործադրմամբ, որոնք հանձնաժողովին հնարավորություն կտան ողջամիտ ժամկետում ընդունելու սակագնի սահմանման մասին նոր որոշում: Հանձնաժողովը քննարկում է դատարանի վճիռը եւ ընդունում համապատասխան որոշում: Հանձնաժողովի սահմանած սակագների մեծությունները դատական կարգով փոփոխման ենթակա չեն:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի՝ մինչեւ հոկտեմբերի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում Ազգային ժողովում հրապարակվե-

լիք հաջորդ տարվա իր գործունեության ծրագիրը, ինչպես նաև յուրաքանչյուր տարի մինչև մայիսի 1-ը, մամուլում հրապարակում է նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող եւ ծառայություն մատուցող անձինք, որոնց համար հանձնաժողովը սահմանում է կարգավորվող սակագներ, համարվում են կարգավորման պարտադիր վճարներ վճարողներ: Կարգավորման պարտադիր վճարները ՀՀ օրենքներով սահմանված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճարներ են:

Հայաստանում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների հաշվարկման եւ վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 2005 թվականի նոյեմբերի 11-ին ընդունված «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքով: Օրենքը սահմանում է նաև կարգավորման պարտադիր վճարներ հասկացությունը, կարգավորման պարտադիր վճարներ վճարողների շրջանակը, վճարման կարգը, ինչպես նաև պատասխանատվությունը օրենքի խախտման համար:

Հայաստանում ազատ տնտեսական մրցակցությունը պաշտպանելու եւ խրախուսելու, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու, ձեռնարկատիրության զարգացմանը եւ սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելու նպատակով 2000 թվականի նոյեմբերի 6-ին ընդունվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը: Օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն նպատակաուղղված գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը: Օրենքը չի տարածվում մտավոր սեփականության իրավունքներին առնչվող հարաբերությունների վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ իրավունքներն օգտագործվում են մրցակցության կանխման, սահմանափակման կամ արգելման նպատակով:

Նշված օրենքը արգելում է հակամրցակցային համաձայնությունները եւ տնտեսվարող սուբյեկտների կողմից մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը:

Հակամրցակցային համաձայնություններ են համարվում

տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների կողմից ընդունված որոշումները, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել որեւէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհի դիրք ունեցող, եթե որպես իրացնող (ձեռքբերող) չունի մրցակից: Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե որպես իրացնող (ձեռքբերող) իրացման (ձեռքբերման) ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը: Ապրանքային շուկայում իրացման (ձեռքբերման) առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող (ձեռքբերող) իրացման (ձեռքբերման) ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը: Ապրանքային շուկայում իրացման (ձեռքբերման) առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող (ձեռքբերող) իրացման (ձեռքբերման) ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը:

Տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհի կամ գերիշխող դիրքի որոշման, ինչպես նաև գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանի (ռեեստրի) վարման կարգը սահմանում է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը: Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում) գրանցվում, ինչպես նաև այդ դիրքը կորցնելու դեպքում՝ գրանցումից հանվում է հանձնաժողովի որոշմամբ:

Դիտարկվող օրենքը արգելում է նաև անբարեխիղճ մրցակցությունը: Անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները: Յուրաքանչյուր շահագրգիռ անձ, այդ թվում՝ սպառողը, որն անբարեխիղճ մրցակցության հետեւանքով վնաս է կրել, իրավունք ունի անբարեխիղճ մրցակցությունը դադարեցնելու պահանջով դիմելու դատարան: Այս իրավունքը վերապահվում է

նաեւ շահագրգիռ անձանց տնտեսական շահերը պաշտպանելու իրավասություն ունեցող կազմակերպություններին:

Ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն: Ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ ցանկացած կեղծ կամ անհիմն հայտարարություն, որը վարկաբեկում է կամ կարող է վարկաբեկել տնտեսվարող սուբյեկտին, նրա գործունեությունը կամ առաջարկած ապրանքները, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն: Ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն: Ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը շփոթություն առաջացնելուց անկախ վնասում է կամ կարող է վնասել տնտեսվարող սուբյեկտի համբավը կամ վարկարժեքը (ոչ նյութական ակտիվը), համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Պետական օժանդակությունը, որն ուղղակի կամ անուղղակի կերպով հանգեցնում կամ կարող է հանգեցնել որեւէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը կամ վնասում կամ կարող է վնասել սպառողների շահերը, արգելվում է՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Խնդրո առարկա օրենքի իմաստով պետական օժանդակություն է համարվում կառավարության, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, պետական կամ պետական մասնակցությամբ կազմակերպության կողմից կոնկրետ տնտեսվարող սուբյեկտի կամ տնտեսվարող սուբյեկտների որոշակի խմբի տրամադրվող ցանկացած օժանդակությունը (ներառյալ ֆինանսական միջոցներ, այդ թվում՝ օգնություն, վարկ, փոխառություն, գույք, արտոնություններ կամ այլ պայմաններ): Նշվածը չի տարածվում պետական այն օժանդակությունների վրա, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պաշտպանությանը, սոցիալական բնույթի խնդիրների լուծմանը, բնական աղետների կամ այլ բացառիկ դեպքերի հետեւանքով առաջացած վնասների փոխհատուցմանը, օրենքով կամ միջազգային պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը:

Հանձնաժողովը ստեղծվել է տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման նպատակով:

Հանձնաժողովի խնդիրներն են՝ ձեռնարկատիրության զարգացման եւ սպառողների շահերի պաշտպանության նպատակով տնտեսա-

կան մրցակցության պաշտպանումն ու խրախուսումը, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը, հակամրցակցային գործունեության կանխարգելումը, սահմանափակումը և նախազգուշացումը, տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը:

Իր խնդիրներն իրականացնելու համար հանձնաժողովը կատարում է հետևյալ հիմնական գործառույթները՝ վերահսկողություն է իրականացնում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ, քննարկում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերը և ընդունում է որոշումներ, վարում է գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանը (ռեեստրը), դիմում է դատարան՝ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերի կապակցությամբ, մասնակցում է տնտեսական մրցակցության զարգացմանը և այդ բնագավառում պետական քաղաքականությունը կարգավորող իրավական ակտերի մշակմանը և դրանց սահմանված կարգով ներկայացմանը, մասնակցում է իր իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ միջպետական համաձայնագրերի կնքմանը, համագործակցում է օտարերկրյա պետությունների պետական մարմինների և ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ, մշակում և իրականացնում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումները կանխող միջոցառումներ, ամփոփում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրառման փորձը և առաջարկություններ է մշակում դրա կատարելագործման ուղղությամբ, ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը, հրատարակում է տեղեկագիր, կատարում է հրապարակային բացատրական աշխատանք՝ նշված օրենքի դրույթներով սահմանված պատասխանատվության մասին հասարակությանն իրազեկ դարձնելու նպատակով, իրականացնում է իր իրավասությանը վերապահված այլ գործողություններ:

Հանձնաժողովն օժտված է բավականին լայն լիազորություններով: Այն կազմված է յոթ անդամից՝ նախագահ, տեղակալ և հինգ անդամ: Հանձնաժողովի անդամներին նշանակում է ՀՀ նախագահը: Հանձնաժողովի անդամները՝ բացառությամբ առաջին կազմի, նշանակվում են հինգ տարի ժամկետով: Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է աշխատակազմի միջոցով, որի կանոնադրությունը հաստատում է հանձնաժողովը:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի՝ մինչև հոկտեմբերի 1-ը, Ազգային ժողովում հրապարակում է հաջորդ տարվա իր գործունեության տարեկան ծրագիրը, ինչպես նաև յուրաքանչյուր տարի՝ մինչև մայիսի 1-ը, հրապարակում է նախորդ տարվա իր գործունեության

հաշվետվությունը:

Նշված օրենքի խախտման դեպքում, նախնական ծանուցմամբ, հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ կիրառելու օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ, այդ թվում՝ տալու նախազուշացում եւ խախտումները շտկելու եւ/կամ հետագայում բացառելու հանձնարարություն եւ/կամ նշանակելու օրենքով նախատեսված չափերով տուգանք եւ/կամ որոշակի ժամկետով կասեցնելու համակենտրոնացումը եւ/կամ ուժը կորցրած ճանաչելու այն:

Հանձնաժողովի որոշումը տնտեսվարող սուբյեկտների, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ նրանց պաշտոնատար անձանց կողմից ենթակա է կատարման որոշման մեջ նշված ժամկետում: Հանձնաժողովն իր որոշման չկատարման դեպքում իրավասու է հայցով դիմել դատարան: Հանձնաժողովի որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը (կատարումը):

Գիտարկվող օրենքը նախատեսում է նաեւ պատասխանատվություն տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների եւ հանձնաժողովի որոշումները ու օրենքի պահանջները չկատարելու համար:

Նշենք, որ հանձնաժողովը որոշ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառել է օրենքով նախատեսված պատժամիջոցներ, սակայն դեռեւս չի հաջողվում մեզանում հաստատել ազատ եւ առողջ մրցակցություն, որն անհրաժեշտ նախապայման է արդյունավետ եւ մրցունակ տնտեսություն ունենալու համար:

### *Սոցիալական ապահովության իրավունք*

Սոցիալական իրավունքները մարդուն ապահովում են արժանապատիվ կենսամակարդակ եւ սոցիալական պաշտպանվածություն: Սոցիալական կարեւոր իրավունքներից է սոցիալական ապահովության իրավունքը: Այդ իրավունքի էությունն այն է, որ պետությունը երաշխավորում է այն քաղաքացիներին անհրաժեշտ միջոցների տրամադրումը, որոնք օբյեկտիվ հանգամանքների բերումով զրկված են աշխատելու եւ եկամուտ վաստակելու կարողությունից կամ հնարավորությունից, ինչպես նաեւ երեխաների ծննդյան կապակցությամբ ընտանիքին ցուցաբերվող օգնությունը:

Մարդկային կյանքը շատ փխրուն է: Կյանքի ընթացքում յուրաքանչյուր անձ գտնվում է այնպիսի հանգամանքների վրա հասնելու վտանգի առջեւ, որոնք կարող են ամենաանմիջական ձեռով անդրադառնալ իր առողջական վիճակին եւ հանգեցնել աշխատավարձի՝ գոյության միջոցների հիմնական աղբյուրի կորստյան: Այդպիսի հանգամանքների շարքն են դասվում, օրինակ, հիվանդությունը, ծերությունը, հաշմանդամությունը, կերակրողին կորցնելը եւ այլն: Ինքնուրույն

հաղթահարել հանկարծահաս ձախորդությունը՝ շատ դեպքերում անհնար է, քանի որ այն կանխորոշված է օբյեկտիվ սոցիալ-տնտեսական պայմաններով, խիստ կապակցված արտադրական գործունեության հետ և գործնականում կախված չէ առանձին մարդու կամքից: Սակայն նման երեւոյթներն ուղղակիորեն ազդում են հասարակւոյթյան սոցիալական կայունւոյթյանը, ուստի պետւոյթյունն իր վրա է վերցնում դրանց հետ կապված պատասխանատւոյթյան որոշ մասը՝ հիմնելով սոցիալական պաշտպանւոյթյան համակարգ և տրամադրելով պետական կենսաթոշակներ, սոցիալական նպաստներ ու ծառայւոյթյուններ:

Սոցիալական ապահովւոյթյան էւոյթյունն առավել պարզորոշ դրսեւորվում է նրա գործառւոյթներում. **տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական, վերականգնողական** և այլն:

**Սոցիալական ապահովւոյթյան տնտեսական գործառւոյթը** տարիքի, անաշխատունակւոյթյան կամ կերակրողին կորցնելու կապակցւոյթյանը կորցված վաստակի փոխարինման որոշակի կենսական հանգամանքների վրա հասնելու դեպքում լրացուցիչ ծախսերի մասնակի փոխհատուցումն է, ինչպես նաև չունեւոր քաղաքացիներին նվազագույն դրամական կամ բնական օգնւոյթյան ցուցաբերումը:

**Քաղաքական գործառւոյթը** նպաստում է հասարակւոյթյունում սոցիալական կայունւոյթյան ապահովմանը:

**Ժողովրդագրական գործառւոյթը** կոչված է խթանելու ազգաբնակչւոյթյան վերարտադրւոյթյունը, որն անհրաժեշտ է երկրի բնակատն զարգացման համար:

**Սոցիալ-վերականգնողական գործառւոյթն** ուղղված է անաշխատունակ քաղաքացիների և բնակչւոյթյան սոցիալապես խոցելի այլ խմբերի հասարակական կարգավիճակի վերականգնմանը, որը նրանց թոյլ է տալիս իրենց զգալ հասարակւոյթյան լիարժեք անդամ:

Հայաստանի Հանրապետւոյթյունը՝ հռչակելով իրեն սոցիալական պետւոյթյուն, պարտավոր է իրականացնել մարդկանց արժանապատիվ ապրելակերպի ապահովմանը միտված որոշակի սոցիալական քաղաքականւոյթյուն: ՀՀ Սահմանադրւոյթյան 37-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ծերւոյթյան, հաշմանդամւոյթյան, հիվանդւոյթյան, կերակրողին կորցնելու, գործազրկւոյթյան և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովւոյթյան իրավունք: Մարդու այս իրավունքն ապահովելու համար մեր երկրում տարբեր տարիներ ընդունվել են համապատասխան իրավական ակտեր և ստեղծվել մեխանիզմներ: Օրինակ՝ զինծառայողների սոցիալական ապահովւոյթյան հետ կապված հարցերը հիմնականում կարգավորվում են 1998թ. հոկտեմբերի 27-ին ընդունված «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովւոյթյան մասին» ՀՀ օրենքով: Հաշմանդամների սոցիալական պաշտպանւոյթյան իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին

հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները սահմանվում են 1993թ. ապրիլի 14-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:

Ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքերում անձը կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ կենսաթոշակ: Հայաստանում կենսաթոշակային ապահովության հարաբերությունները հիմնականում կարգավորվում են 2002թ. նոյեմբերի 19-ին ընդունված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության մի շարք որոշումներով: Նշված օրենքին նախորդել են 1992թ. և 1995թ. ընդունված «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» օրենքները: Ներկայումս մեզանում իրականացվում են կենսաթոշակային համակարգի բարեփոխումներ: Այդ նպատակով ՀՀ կառավարությունը 2008 թվականի նոյեմբերի 13-ին ընդունված N 1487-Ն որոշմամբ հաստատել է ՀՀ կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը:

«Պետական կենսաթոշակների մասին» գործող օրենքը սահմանում է կենսաթոշակի հետեւյալ տեսակները.

1. ապահովագրական՝ տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մասնակի,

2. սոցիալական՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում:

Տարիքային կենսաթոշակի իրավունք ունի 63 տարին լրացած անձը՝ 25 տարվա ապահովագրական ստաժի առկայության դեպքում: Մինչև այդ տարիքի հասնելը կանայք կենսաթոշակի անցնելու իրավունք ունեն ըստ օրենքով նախատեսված սանդղակի: Տարիքային ապահովագրական կենսաթոշակի իրավունք չունեցող անձին 65 տարին լրանալու դեպքում նշանակվում է ծերության սոցիալական կենսաթոշակ:

Կենսաթոշակառուի մահվան, ինչպես նաև հաշմանդամ ճանաչված անձի՝ հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը լրանալուց հետո երեք ամսվա ընթացքում վերափորձաքննության չներկայանալու և մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին հիմնական կենսաթոշակի քսանհնգապատիկի չափով վճարվում է թաղման նպաստ՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակառուի մահվանից հետո վեց ամսվա ընթացքում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում: Նշված գումարը վճարվում է դիմումը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված, բայց կենսաթոշակ նշանակելու համար չդիմած անձի մահվան դեպքում հուղարկավորությունը կատարած անձին վճարվում է թաղման նպաստ, եթե հաշմանդամը մահացել է հաշմանդամ ճանաչվելու օրվանից հետո 3 ամսվա ընթացքում:

Նշված օրենքով եւ «Ձինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված կենսաթոշակներ ստացող կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման նպաստ է վճարվում այն օրենքով, որով հաշվարկված նպաստի չափն ավելի բարձր է: Կենսաթոշակառուին հասանելիք եւ նրա մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարը վճարվում է մահացողի ընտանիքի անդամին՝ դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կենսաթոշակառուի մահվանից հետո վեց ամսվա ընթացքում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում: Սահմանված ժամկետում չստացված կենսաթոշակի գումարը ենթակա է ժառանգման:

ՀՀ կառավարությունը 2003 թվականի հունիսի 13-ի N 707-Ն որոշմամբ սահմանել է բազային եւ հիմնական կենսաթոշակների չափերն ու ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը: Ներկայումս այն կազմում է. «Ձինժառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բազային կենսաթոշակի չափը՝ 5800 դրամ, «Հայաստանի փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված բազային կենսաթոշակի չափը՝ 5800 դրամ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 17-րդ եւ 18-րդ հոդվածներին համապատասխան՝ ա) հիմնական կենսաթոշակի չափը՝ 8000 դրամ, բ) ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 450 դրամ:

ՀՀ բնակչության զբաղվածության իրավական հիմքերը, բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, աշխատանքի եւ զբաղվածության ազատ ընտրության եւ գործազուրկների սոցիալական պաշտպանության պետական երաշխիքները սահմանված են 2005 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունված «Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով: Այդ օրենքին նախորդել են 1991թ. եւ 1996թ. ընդունված «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքները:

Հայաստանում սոցիալական ապահովության համակարգի շրջանակներում կենսաթոշակներից բացի տրամադրվում են նաեւ նպաստներ: Պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 2005 թվականի հոկտեմբերի 24-ին ըն-

դուրսված «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով եւ ՀՀ կառավարության մի շարք որոշումներով: Մինչ այդ նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում էին կառավարական որոշումներով:

Պետական նպաստների տրամադրման նպատակն է աղքատ ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը օժանդակելը, ինչպես նաև ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի (երեխայի ծննդյան) կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձի աշխատավարձի մասնակի հատուցումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, Հայաստանի սահմանների պաշտպանության իրականացման ժամանակ կամ պաշտոնական պարտականությունները կատարելիս զոհված՝ հետմահու «Հայաստանի ազգային հերոս» ՀՀ բարձրագույն կոչում ստացած կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքին նյութական աջակցության ցուցաբերումը:

Պետական նպաստների տեսակներն են՝ ընտանեկան նպաստը, երեխայի խնամքի նպաստը, երեխայի ծննդյան միանվագ նպաստը, զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստը:

Բացի դրանից, գործազուրկի կարգավիճակ ստացած այն անձանց, ովքեր չեն ստանում կենսաթոշակներ (բացառությամբ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող անձանց) եւ ունեն առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ, գործազրկության նպաստ է նշանակվում: Առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկի մահվան դեպքում վճարվում է թաղման նպաստ:

Բնակչության սոցիալական պաշտպանության կարևոր բաղադրիչներից է սոցիալական աջակցությունը: Սոցիալական աջակցության հիմնական նպատակն է բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջումները, ստեղծել պայմաններ հասարակության մեջ ինտեգրվելու համար, խթանել նրանց ինքնօգնության եւ ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացումը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը, ինչպես նաև օժանդակել սոցիալական, ֆինանսական խնդիրների լուծմանը: Հայաստանում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 2005 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով:

Ինչպես տեսնում ենք, մեր պետությունը ստեղծել է բնակչության սոցիալական պաշտպանության համընդգրկուն համակարգ եւ յուրաքանչյուր տարի այդ համակարգի շրջանակներում բավականին մեծ գումարներ է ծախսում: Սակայն այդ համակարգի գլխավոր թերությունն այն է, որ վերջինս չի կարող ապահովել մեր ազգաբնակչության

արժանապատիվ կենսամակարդակը: Մեր հասարակության համար դեռևս լուրջ հիմնահարց են սոցիալական բեռնացվածությունը, աղքատությունը, գործազրկությունը:

### *Առողջության պահպանության իրավունք*

Առողջությունը հիրավի համարվում է մարդու բարձրագույն անօտարելի առաջնային արժեք, առանց որի այս կամ այն չափով իմաստագրվում են շատ այլ բարիքներ ու արժեքներ, քանի որ անառողջ մարդու հնարավորությունները աշխատանք ընտրելու, կրթություն ստանալու, ձեռնարկատիրությամբ զբաղվելու, ստեղծագործելու, ազատ տեղաշարժվելու եւ այլն որոշակիորեն սահմանափակ են:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության Կանոնադրության նախաբանում նշվում է, որ առողջությունը լիարժեք ֆիզիկական, հոգեկան եւ սոցիալական բարեկեցության իրավիճակ է, եւ ոչ միայն հիվանդությունների ու ֆիզիկական արատների բացակայություն: Առողջության հնարավորինս բարձր մակարդակ ունենալը ցանկացած մարդու հիմնական իրավունքներից մեկն է: Բոլոր ժողովուրդների առողջությունը խաղաղության եւ անվտանգության ապահովման հիմնական գործոնն է եւ կախված է առանձին անհատների ու պետությունների լիիրավ համագործակցությունից: Առողջության բարելավման եւ պաշտպանության ոլորտում ցանկացած պետության ձեռքբերումները արժեք են ներկայացնում բոլորի համար: Տարբեր երկրներում առողջապահության եւ հիվանդությունների դեմ՝ հատկապես վարակիչ, պայքարի ոլորտում միջոցների անհամաչափ զարգացումը համընդհանուր վտանգ է ներկայացնում: Երեխայի առողջ զարգացումը առաջնային կարեւորություն ունի, միջավայրի փոփոխվող պայմաններում ներդաշնակ ապրելու ունակությունը այդպիսի զարգացման հիմնական պայմանն է: Բոլոր ժողովուրդներին բժշկության, հոգեբանության եւ նրանց հարակից գիտությունների բոլոր ձեռքբերումներից օգտվելու հնարավորության ընձեռումը առողջության բարձրագույն մակարդակի ձեռքբերման անհրաժեշտ պայմանն է: Լուսավորված հանրային կարծիքը եւ հասարակության ակտիվ համագործակցությունը խիստ կարեւոր են ժողովրդի առողջության բարելավման համար: Կառավարությունները պատասխանատվություն են կրում իրենց ժողովուրդների առողջության համար, եւ այդ պատասխանատվությունը պահանջում է սոցիալական բնույթի ու առողջապահության ոլորտում համապատասխան միջոցառումների իրականացում:

Քաղաքացիների առողջության պաշտպանությունը ենթադրում է քաղաքական, տնտեսական, իրավական, սոցիալական, բժշկական, սանիտարահիգիենիկ եւ հակահամաճարակային բնույթի միջոցների անբողջություն, որոնք ուղղված են յուրաքանչյուր մարդու ֆիզիկա-

կան ու հոգեւոր առողջության պահպանությանը եւ ամրապնդմանը, նրա երկարամյա ակտիվ կյանքի ապահովմանը, առողջության կորստի դեպքում նրան բժշկական օգնության տրամադրմանը:

ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք:

Մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական եւ ֆինանսական հիմունքները սահմանված են 1996թ. մարտի 4-ին ընդունված «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքով:

Բժշկական օգնության եւ սպասարկման հիմնական տեսակներն են՝

ա) առաջնային բժշկական օգնությունը՝ որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների եւ տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության եւ սպասարկման տեսակ, որը երաշխավորվում է պետության կողմից.

բ) մասնագիտացված բժշկական օգնությունը՝ որպես ախտորոշման եւ բժշկական առանձնահատուկ մեթոդների ու բարդ բժշկական տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության եւ սպասարկման տեսակ:

Բժշկական օգնությունը եւ սպասարկումը կազմակերպվում են հիվանդանոցային ձեւով, երբ անհրաժեշտ է բժշկական միջոցառումների համալիր կիրառում՝ ախտորոշում, բուժում, տեսական հսկողություն եւ հատուկ խնամք, արտահիվանդանոցային ձեւով, երբ դրա իրականացման համար չեն պահանջվում հիվանդանոցային պայմաններ:

Հայաստանում արգելվում է էվթանազիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը որեւէ գործողությամբ եւ միջոցներով: Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են էվթանազիայի կամ իրականացնում են այն, կրում են քրեական պատասխանատվություն:

Մարդու վերարտադրողական առողջության պահպանման, վերարտադրողական իրավունքի ապահովման, վերարտադրողականության ոլորտում տեխնոլոգիաների կիրառման կարգի ու պայմանների, ինչպես նաեւ դրանց հետ կապված այլ հարաբերություններ՝ ՀՀ Սահմանադրությանը եւ օրենքներին, ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան, կարգավորվում են 2002թ. դեկտեմբերի 11-ին ընդունված «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքով:

Նշված օրենքը պարունակում է նաեւ մարդու կյանքի իրավունքին վերաբերող դրույթներ: Դրանցից մեկը մասնավորապես վերաբերում

է արորտին: Յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման իրավունք: Հղիության արհեստական ընդհատումը մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է կնոջ դիմումի համաձայն: Հղիության արհեստական ընդհատումը մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կարող է կատարվել բժշկասոցիալական ցուցումների դեպքում՝ կնոջ համաձայնությամբ: Հղիության արհեստական ընդհատումն անչափահասի դիմումով կատարվում է նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկական հանձնաժողովի արձանագրության հիման վրա: Հղիության արհեստական ընդհատումից առաջ եւ հետո առողջապահական հաստատությունը կնոջը տրամադրում է անվճար բժշկասոցիալական խորհրդատվություն՝ անցանկալի հղիությունից պաշտպանվելու միջոցների ընտրության վերաբերյալ:

Մեր երկրում դեղերի շրջանառությունը, որն ընդգրկում է դրանց արտադրությունը, պատրաստումը, կշռաչափումը, փաթեթավորումը, գրանցումը, որակի հսկողությունը եւ այլ գործողություններ՝ դեղերի ստացման կամ ոչնչացման նպատակով, դեղերի ձեռքբերումը, պահպանումը, պահեստավորումը, բաշխումը, բացթողնումը, վաճառքը, արտահանումը, ներմուծումը, դրանց մասին տեղեկատվությունը, գովազդը կարգավորվում են 1998թ. հոկտեմբերի 27-ին ընդունված «Դեղերի մասին» ՀՀ օրենքով:

Բնակչությանը դեղերով ապահովում են դեղատներն ու դեղատնային կրպակները: Դեղատներն ու դեղատնային կրպակները կարող են բացվել եւ շահագործվել միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

Դեղատներն ու դեղատնային կրպակներն իրավունք ունեն ձեռք բերել եւ վաճառել այն դեղերը, որոնք գրանցված են ՀՀ-ում: Դեղատներն ու դեղատնային կրպակները թմրադեղերի, հոգեմետ դեղերի շարքին դասված դեղերը բաց են թողնում միայն հաստատված ձեռի համապատասխան դեղատոմսերով, որը գրում է բժիշկը:

Հիվանդն իրավունք ունի բժշկից կամ դեղագետից սպառիչ տեղեկություններ ստանալ նշանակված դեղի ազդեցության, հնարավոր կողմնակի ազդեցության, տարբեր դեղերի փոխազդեցության մասին եւ իմանալ դրա օգտագործման կարգը: Դեղագործը պարտավոր է դեղը բաց թողնելիս սպառողին բացատրել դրա օգտագործման եւ պահպանման կարգը:

Դեղերի հայաստանյան շուկայում կարելի է հանդիպել ժամկետանց եւ կեղծ դեղերի, որոնց օգտագործումը վնաս է պատճառում մարդու առողջությանը: Լինում են նաեւ դեպքեր, երբ բժիշկները սխալմամբ կամ շահադիտական նկատառումներով ավելորդ կամ ոչ պետական դեղեր են նշանակում հիվանդին:

Պետությունը բնակչության սոցիալապես խոցելի խմբերին երաշ-

խավորում է անվճար բժշկական օգնությունն եւ սպասարկում: Բժշկական օգնության եւ սպասարկման ձեւերը եւ դրանից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Ողջունելի է 2008թ. հուլիսի 1-ից ծննդօգնության պետական հավաստագրի ներդրումը, որը տեղի ունեցավ ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. մայիսի 30-ի թիվ 761-Ա հրամանի հիման վրա:

ՀՀ կառավարությունը՝ կարեւորելով բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության որակը 2002թ. հոկտեմբերի 31-ին հավանություն է տվել ՀՀ բնակչությանը տրամադրվող բժշկական օգնության որակի բարելավման եւ կառավարման հայեցակարգին: Հայեցակարգով սահմանվում են այնպիսի պահանջներ, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգության ու հանրության առողջության պաշտպանության համար: Բուժօգնությունների որակի բարելավումը եւ դրա ապահովման մեխանիզմների ստեղծումն առողջապահական ոլորտի բարեփոխումների կարեւորագույն բաղկացուցիչ մասն է: Հանրապետության բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշների վատթարացման միտումները պայմանավորված են ոչ միայն վերջին տարիներին երկրի բարդ սոցիալ-տնտեսական իրադրությամբ, այլեւ բուժօգնություն ստացողի եւ այն իրականացնողի իրավունքները, շահերն ու պարտականությունները հստակեցնող մեխանիզմների բացակայությամբ:

Ցավոք սրտի, ՀՀ առողջապահության համակարգում առկա են բավականին լուրջ խնդիրներ, որոնց լուծումից է կախված նաեւ մարդու առողջության պահպանության իրավունքի իրականացման ապահովումը:

Հայաստանի առողջապահության համակարգում ընթացող բարեփոխումները սկսվել են ԽՍՀՄ փլուզումից եւ անկախության նվաճումից հետո՝ 1992-1993թթ.: Այդ տարիներին սկիզբ առած տնտեսական ճգնաժամը առավել սրեց առկա խնդիրները, որոնք բնորոշ էին կենտրոնացված պլանավորման վրա հիմնված բոլոր երկրների առողջապահական համակարգերին: 1993-1998թթ. ընթացքում ձեռնարկվեցին մի շարք քայլեր առողջապահության համակարգի կառուցվածքի, կառավարման եւ ֆինանսավորման մեխանիզմների բարեփոխումների ուղղությամբ, որոնք, սակայն, դրական առաջխաղացումների հասնելու առումով տվեցին միայն մասնակի արդյունքներ, իսկ որոշ դեպքերում հանգեցրին նույնիսկ սպասվածից էապես տարբեր հետեւանքների: Այսպես՝ բուժհիմնարկներին ինքնուրույն տնտեսվարող սուբյեկտների (պետական ձեռնարկությունների, այնուհետեւ՝ պետական փակ բաժնետիրական ընկերությունների) կարգավիճակ շնորհելու եւ հանրապետության նոր վարչատարածքային բաժանման անցնելու հետ կապված վարչական ապակենտրոնացման գործընթացը նախորդ տարիներին զուգակցվել է առողջապահության համակարգի ֆունկցիոնալ կառավարման եւ բուժօգնության որակի վերահսկման մեխանիզմների

Էական թուլացմամբ (դրանց դերի համարժեք ուժեղացման փոխարեն), ինչի արդյունքում խիստ իջել է համակարգի կառավարելիությունը: Ճեղքվածք է առաջացել առողջապահության տարբեր օղակների միջև (հանրապետական, մարզային, գյուղական): Լրջագույն հիմնախնդիր է դարձել բուժօգնության մատչելիության նվազումը (հատկապես բնակչության սոցիալապես առավել անպաշտպան խավերի համար), որի հետևանքով հիվանդացության աճի պայմաններում կտրուկ իջել է ժամանակին բուժօգնության դիմող անձանց թիվը: Անվճար բուժօգնության (պետական պատվերի) գործող համակարգը մեծամասամբ դեկլարատիվ է, վատահոյություն չի վայելում բնակչության եւ բուժաշխատողների շրջանում:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ առողջապահության համակարգում սկսված ու ընթացող բարեփոխումների արդյունքները չեն բավարարում առողջապահության քաղաքականության գլխավոր նպատակներին՝ դրանք չեն նպաստել բնակչության հիվանդացության մակարդակի իջեցմանը, բուժօգնության մատչելիության բարձրացմանը, թափանցիկության ապահովմանը, բուժհիմնարկների գործունեության բարելավմանը: Խնդիր է նաեւ բժշկական կրթության որակը:

Անհրաժեշտ ենք համարում նաեւ բազմաթիվ երկրներում արդյունավետ գործող բժշկական ապահովագրության ներդրման ուղղությամբ գործնական քայլերի ձեռնարկումը: Նշենք, որ ՀՀ կառավարությունը 2000թ. օգոստոսի 10-ին հավանություն է տվել Հայաստանում բժշկական ապահովագրության ներդրման հայեցակարգին:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը քաղաքացիական-իրավական, իսկ ՀՀ քրեական օրենսգիրքը՝ քրեաիրավական պատասխանատվություն է նախատեսում մարդու առողջությանը վնաս պատճառելու համար:

### **Կրթության իրավունք**

Մշակութային իրավունքները երաշխավորում են մարդու հոգեւոր զարգացումը, օգնում են յուրաքանչյուր անհատին դառնալ քաղաքական, հոգեւոր, սոցիալական եւ մշակութային առաջընթացի մասնակից: Մշակութային կարելորագույն իրավունքներից է կրթության իրավունքը:

Կրթություն ստանալու յուրաքանչյուր անձի իրավունքը ամրագրված է մեր Սահմանադրության 39 հոդվածում, ըստ որի՝ հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն եւ այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք: Պետությունն օրենքով նախա-

տեսված դեպքերում եւ կարգով ֆինանսական եւ այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն եւ այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ու դրանցում սովորողներին:

Հայաստանում կրթության բնագավառը կարգավորվում է մի շարք օրենքներով: 1999թ. ապրիլի 14-ին ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները եւ կրթական համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը: Ըստ օրենքի, Հայաստանը հռչակում եւ երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարեւորագույն գործոն: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող եւ համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության եւ մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձեւավորումն է: Մեր կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգեւոր եւ մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային եւ համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաեւ հայ եկեղեցին:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

1) կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի եւ առողջության, անհատի ազատ ու համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության եւ բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.

2) կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը եւ համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստակա-նության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ.

3) կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.

4) միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը.

5) սկիյռքում հայապահպան կրթական գործունեությանն աջակցելը.

6) ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը.

7) ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը.

8) պետական եւ ոչ պետական ուսումնական հաստատություն-

ներում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը.

9) ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը:

Հայաստանում իրականացվող կրթական ծրագրերն են՝

- 1) հանրակրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ).
- 2) մասնագիտական կրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ):

Հանրակրթական ծրագրերը նպատակաուղղված են անհատի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձեւավորմանը, նախասիրություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը:

Հանրակրթական հիմնական ծրագրերը ներառում են՝

- 1) նախադպրոցական կրթությունը.
- 2) տարրական ընդհանուր կրթությունը.
- 3) հիմնական ընդհանուր կրթությունը.
- 4) միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը.
- 5) հատուկ ընդհանուր կրթությունը:

Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձեւավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը:

Մասնագիտական հիմնական կրթական ծրագրերն են՝

- 1) նախնական մասնագիտական (արհեստագործական).
- 2) միջին մասնագիտական.
- 3) բարձրագույն մասնագիտական.
- 4) հետբուհական մասնագիտական:

Լրացուցիչ կրթական ծրագրերը (հանրակրթական և մասնագիտական) նպատակաուղղված են հիմնական ծրագրերից դուրս սովորողների ու մասնագետների կրթական պահանջմունքների բավարարմանը և նրանց որակավորման բարձրացմանը:

Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձեւերով: Կրթության բոլոր ձեւերի համար նույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է միասնական պետական կրթական չափորոշիչը:

Հայաստանում բարձրագույն և հետբուհական մասնագիտա-

կան կրթության բնագավառում իրավական, կազմակերպական եւ ֆինանսական հարաբերությունները կարգավորվում են 2004 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով:

Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել անընդհատ եւ/կամ ընդհատումներով՝ ըստ աստիճանների:

Հայաստանում սահմանվում է բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան որակավորման համակարգ: Ամփոփիչ ատեստավորում անցած անձին շնորհվում է՝ 1) առաջին աստիճանում՝ բակալավրի որակավորում, 2) երկրորդ աստիճանում՝ մագիստրոսի որակավորում: Հայաստանում պահպանվում է նաեւ դիպլոմավորված մասնագետի որակավորումը:

Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի ուսուցման տեւողությունն է՝ 1) բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 4 տարի, բժշկական մասնագիտությունների համար՝ առնվազն 5 տարի, 2) դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 5 տարի, արվեստի եւ ֆիզիկական կուլտուրայի մասնագիտությունների համար՝ առնվազն 4 տարի, 3) մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 1 տարի, բժշկական մասնագիտությունների համար՝ մինչեւ 4 տարի, 4) հետազոտողի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 3 տարի:

Հայաստանում բացի ավանդական պետական ԲՈՒՀ-երից, գործում են նաեւ մի շարք արտասահմանյան եւ ոչ պետական ԲՈՒՀ-եր:

Նախադպրոցական կրթության համակարգի գործունեության իրավական, կազմակերպական եւ ֆինանսական հիմքերը կարգավորվում են 2005 թվականի նոյեմբերի 15-ին ընդունված «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով: Նախադպրոցական կրթությունը Հայաստանում շարունակական կրթահամակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է, իսկ նախադպրոցական տարիքը՝ երեխայի ֆիզիկական, հոգեբանական եւ սոցիալական կայացման ժամանակաշրջանը: Նախադպրոցական տարիքային փուլերն են՝ վաղ տարիք՝ մինչեւ 3 տարեկան, կրտսեր նախադպրոցական՝ 3-ից մինչեւ 5 տարեկան, ավագ նախադպրոցական՝ 5-ից մինչեւ 6 տարեկան: Նախադպրոցական ուսումնական հաստատությունները կարող են լինել պետական, համայնքային ենթակայության եւ ոչ պետական:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության եւ ուսուցման համակարգում Հայաստանի պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական եւ ֆինանսատնտեսական հիմքերը կարգավորվում են 2005 թվականի հուլիսի 8-ին ընդունված «Նախնական մասնագիտական

(արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով:

Արհեստագործական կրթությունը եւ ուսուցումը իրականացվում են արհեստագործական ուսումնարաններում, քոլեջներում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, կազմակերպությունների ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում, համապատասխան լիցենզիա ունեցող եւ անհատական մասնագիտական ուսուցում իրականացնող վարպետների մոտ:

Միջին մասնագիտական կրթությունը եւ ուսուցումը իրականացվում են քոլեջներում, համապատասխան մասնագիտությունների գծով կրթություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություններում (դրանց առանձնացված ստորաբաժանումներում)՝ լիցենզիայի առկայությամբ:

Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթությունը կազմակերպվում է պետական կրթական չափորոշիչների, գործատուների առաջարկությունների հիման վրա համապատասխան ուսումնական հաստատության մշակած ու հաստատած ուսումնական պլանների եւ առարկայական ծրագրերի միջոցով:

Կրթության ոլորտը մեզանում զգալի վերափոխումների է ենթարկվել, սակայն նրանում առկա են բավականին լուրջ հիմնախնդիրներ՝ կոռուպցիոն երեւոյթներ, կրթության ապահովման ոչ բավարար որակ եւ այլն: Ուշագրավ է նաեւ այն փաստը, որ մեր հայրենակիցների մեծ մասը ավելի ձգտում է ստանալ բարձրագույն կրթություն, քան՝ արհեստագործական եւ միջին մասնագիտական: Արդյունքում ձեւավորվում է ԲՈՒՀ ավարտած, սակայն ոչ բավարար մակարդակի կրթություն ստացած անձանց բանակ, եւ հակառակ դրան ունենք որակյալ արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթություն ստացած մասնագետների կարիք:



Մեր երկրի Մայր օրենքի 48-րդ հոդվածը հռչակում է տնտեսական, սոցիալական եւ մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրները՝

- 1) պաշտպանել եւ հովանավորել ընտանիքը, մայրությունը եւ մանկությունը.
- 2) նպաստել բնակչության զբաղվածությանը եւ աշխատանքի պայմանների բարելավմանը.
- 3) խթանել բնակարանային շինարարությունը, նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը.
- 4) իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, օժանդակել արդյունավետ եւ մատչելի բժշկական սպասարկման

պայմանների ստեղծմանը.

5) նպաստել երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցությանը.

6) խթանել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը.

7) իրականացնել հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին.

8) նպաստել անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացմանը.

9) աջակցել գիտության և մշակույթի զարգացմանը.

10) իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն.

11) նպաստել ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը.

12) ապահովել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակը:

Պետությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել վերոնշյալ խնդիրների իրականացման համար:

Եկեք համախմբված աշխատենք` Հայաստանը զարգացած և հզոր տնտեսություն ու մշակույթ, սոցիալական ապահովության, կրթության և առողջապահության համակարգ ունեցող պետություն դարձնելու համար: Դրանից կշահենք և մենք, և պետությունը:

## Ծանոթագրություններ

1. Այդ մասին առավել մանրամասն տես` Է.Ասրյորն, Ա.Ռոզաս, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ. համընդհանուր մարտահրավերներ» հոդվածը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ, դասագիրք, խմբ.` Է.Ասրյորն, Կ.Կրաուզե., Ա.Ռոզաս, Երևան, 2009:
2. Մտավոր սեփականության մասին առավել մանրամասն տես` Փոքր և միջին ձեռնարկության ոլորտը Հայաստանում, տեղեկագիր, Երևան, 2008, էջ 15-20:
3. Բարսեղյան Տ.Կ. ՀՀ քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, Երևան, 2004, էջ 275:

## Թաթուլ Մանասերյան Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

### Ֆինանսական «գրիպի» համաճարակը եւ ազգային տնտեսության մարտահրավերները

Հայրնի է, որ տնտեսագետները չունեն իրենց «Հիպոկրատի երդումը»: Թեեւ դրա փոխարեն կարելի էր կիրառել ավելի պարզ սեփական երկրին, նրա հող ու ջրին համապարփուն ծառայելու երդումը, սակայն ամեն ինչ բովանդակագուրկ կլինի, եթե չկա բուն պարասիսանապրության զգացումը: Միգուցե սովորական օրերին կարելի էր լռել, սակայն տնտեսության համարարած անկման պայմաններում հենց այս զգացումն է դրդել լրջորեն մտախոզվել արեղծված իրավիճակով եւ ներկայացնելով արդեն բերվող վերլուծությունը, ակնկալել գործընկեր-տնտեսության «բժիշկներին»՝ տնտեսագիտության դոկտորների մասնակցությունը տնտեսության սպաքինման հեռանկարներին:

Այս առումով պատահական չի ընտրված տնտեսագիտության համեմատությունը առաջին հայացքից բոլորովին այլ ոլորտի՝ բժշկության հետ:

#### Եվ այսպես՝ հիվանդի ու հիվանդության մասին

Ինչպես համաշխարհային ֆինանսական ճգնաժամի, այնպես էլ Հայաստանում դրա առաջին իսկ հետեւանքների ի հայտ գալուն պես, տնտեսության պատասխանատուներն ու տնտեսագետները սկսեցին միանգամից խոսել տնտեսության առողջացման մասին: Տնտեսության «բժիշկները» կարծես մոռացան, որ ցանկացած հիվանդության բուժումը սկսում է ճիշտ ախտաճանաչումից (diagnosis). Առանց դրա, տրվող ցանկացած դեղամիջոց կարող է բուժելու փոխարեն, ավելի խորացնել հիվանդությունը:

Հայտնի եւ անհայտ փորձագետների, ինչպես նաեւ պետությունների ղեկավարների հրապարակային գրեթե բոլոր ելույթներում ախտաճանաչման փոխարեն հիմնականում տեղ է գտնում իրադարձությունների ժամանակագրությունը: Լավագույն դեպքում խոսվում է հետեւանքների եւ դրանց բացասական ազդեցությունների մասին: Ունանք նույնիսկ համարձակ կանխատեսումներ են ներկայացնում՝ առանց տեղյակ լինելու, թե ինչից է այս ամենը սկսել եւ ինչ ընթացք կարող է ունենալ: Մինչդեռ ախտաճանաչումը միայն կարող է տնտեսագիտական լուրջ եզրահանգումների, գնահատականների, վերլուծության եւ կանխատեսումների իրական հիմք հանդիսանալ:

## Ախտաճանաչում

Տնտեսագիտական ախտաճանաչման (դիագնոստիկայի) մեր մտեցումները հիմնված են տարածքային, հիմնահարցային և երեւութային գործոնների վրա:

Եթե ընդունում ենք, որ ֆինանսական շուկան, բանկային համակարգը և ապրանքային բորսաները տնտեսության սիրտն են, ապա պետք է փորձենք ուսումնասիրել տնտեսության արյունատար անոթների վիճակը՝ մազանոթներից մինչև սիրտը սնուցող զարկերակն ու սրտամկանները: Բաց, շուկայական տնտեսության պայմաններում դա նույնն է, ինչ հետազոտել ներքին շուկան, տարածաշրջանային գործընթացները և համաշխարհային տնտեսության զարգացումները: Այլ խոսքով՝ ախտաճանաչման տարածքային գործոնն այս պարագայում թույլ է տալիս վերլուծել ձգնաժամը ծնող պատճառները ոչ թե մեկուսի, այլ միմյանց հետ փոխկապակցված, միաժամանակ հնարավորություն ընձեռելով գնահատել յուրաքանչյուր ենթագործոնի (տեղական, տարածաշրջանային, գլոբալ) դերը հիվանդության առաջացման և տարածման հարցում: Ի դեպ, այս հիվանդությունը, որն արագ տարածվել է աշխարհում, պայմանականորեն կարելի է անվանել նաև տնտեսական համաճարակ, որն իր ցնցումների և վնասների առումով չի խնայում ոչ զարգացած, և ոչ զարգացող երկրներին:

Դանդաղել են ոչ միայն ԱՄՆ-ի, այլ նաև համաշխարհային տնտեսության աճի տեմպերը: Եթե 2007թ. գրանցվել էր մոտ 5% տնտեսական աճ, ապա 2008թ. ավարտին այն կազմեց 3,2%: 2009թ. աճի փոխարեն կգրանցվի շուրջ 0,5%-1% անկում: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա այս երկրի տնտեսությունն, իրոք, անմխիթար վիճակում է գտնվում: Ներկայումս ԱՄՆ-ի պետական պարտքը գերազանցել է 11 տրիլիոն դոլարը, իսկ ռեզերվները հավասարվել են զրոյի: Միակ միջոցը, որքան էլ դա անցանկալի է սղաճի տեսանկյունից, փողի նոր էմիսիան է և պետական պարտատոմսերի թողարկումն ու վաճառքը:

## Տնտեսական համաճարակը՝ ձգնաժամը

Մեր համոզմամբ՝ տնտեսական համաճարակի առաջացման հարցում միաժամանակ առկա են տարածքային բոլոր երեք գործոնները:

**Գլոբալ առումով** ձգնաժամի պատճառների ողջ համալսմբից անհրաժեշտ է առանձնացնել ամենահիմնականները:

**Նախ**՝ զարգացած երկրները, կոչ անելով զարգացող և անցումային փուլում գտնվող երկրներին ազատականացնել իրենց տնտեսությունները՝ ներառյալ ներքին և արտաքին առևտրի ոլորտները, շատ հաճախ իրենք են կոպտորեն խախտում խաղի կանոնները և պետական հովանավորչությամբ, արտաքին առևտրի լայնածավալ սուբսի-

դավորմամբ անհավասար պայմաններ ստեղծում մրցակցության համար: Ուստի խոսքը ոչ թե ազատ, այլ արդար մրցակցության մասին է: Արդյունքում մեծ հարված է հասցվում մրցունակությանը թե՛ զարգացած եւ թե՛ զարգացող երկրներում, քանի որ զարգացած երկրներում սուբսիդավորված ապրանքները հեռանում են բնական մրցունակությունից եւ չեն կարող գոյատևել առանց պետության աջակցության, իսկ զարգացող երկրներում, ուր պետական բյուջեների սուղ միջոցները թույլ չեն տալիս նման սուբսիդավորում իրականացնել, կորչում են մրցակցային առավելություններն իրացնելու բոլոր հնարավորությունները եւ անկում է ապրում տեղական արտադրությունը: Սա, թերեւս, կարելի է համարել գլոբալ ամենամեծ տնտեսական հակասությունը, որ չէր կարող չհանգեցնել համաշխարհային տնտեսական ճգնաժամի:

**Երկրորդ`** զարգացող երկրների ապրանքների արհեստական մրցունակության պահպանմանն ուղղվող ֆինանսավորումը կատարվում է աղքատության, սովի եւ սոցիալական այլ խնդիրների հաշվին: Մի կողմից կրճատվում են սոցիալական ծախսերը, մյուս կողմից ավելանում են սուբսիդավորման գումարները: Միայն Եվրամիության անդամ երկրներում մեկ գլուխ կովին բաժին հասնող սուբսիդիաներն ավելին են, քան, ասենք, Ռուսաստանում մեկ գյուղացու միջին տարեկան եկամուտները: Սա է նաեւ պատճառը, որ 1996թ. Հռոմի գագաթաժողովի ժամանակ աշխարհի բոլոր պետությունների (առաջին հերթին` զարգացած) կողմից ստանձնած պարտավորություններն առ այն, որ մինչեւ 2015թ. պետք է աղքատությունն աշխարհում կրճատել առնվազն կիսով չափ, այդպես էլ չեն կատարվում: Ավելին` աղքատների եւ սոված մարդկանց թիվն աշխարհում ոչ թե կրճատվում է, այլ ընդհակառակը` աճում:

**Երրորդ`** սկսած 1964 թվականից, երբ զարգացող երկրների պահանջով հիմնադրվեց եւ սկսեց գործել ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման համաժողովը` UNCTAD, օրակարգային հարց դարձավ միջազգային նոր տնտեսակարգի ձեւավորումը: Այդ մասին խոսեց նաեւ Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունը 2009թ. Դավոսի համաժողովի ընթացքում: Սակայն որեւէ լուրջ տեղաշարժ նույնպես չի արձանագրվում: Իրականում անտեսվում է զարգացող երկրների դերը համաշխարհային տնտեսական գործընթացներում` նրանց մատնելով որոշակի մեկուսացման: Ինչ վերաբերում է նման երկրներին ֆինանսական միջոցների տրամադրմանը, ապա առկա է այն միտումը, որ այդ միջոցներն ուղղվեն հիմնականում սոցիալական բնույթի ծրագրերի ֆինանսավորմանը եւ ոչ երբեք` աջակցելու տեղական արտադրությունների կայացմանն ու զարգացմանը: Բնականաբար, զրկված լինելով պատրաստի արտադրանք ստանալու իրական հնարավորություններից, զարգացող երկրներն, ի վերջո, դառնում են զարգացած աշխարհի հանքահումքային կցորդը: Իսկ սա, իր հերթին, խախտում է բոլոր տնտեսական համա-

մասնությունները եւ, ի վերջո, բերում տնտեսական ծանր հետեւանքների թե գարգացող եւ թե գարգացած երկրների համար:

**Տարածաշրջանային** մակարդակով ճգնաժամի պատճառները հիմնականում պայմանավորված են տնտեսական ինտեգրման բացակայությամբ կամ դրա թերի բնույթով: Աշխարհի բոլոր մայրցամաքներում տարածաշրջանային ինտեգրման բոլոր փորձերը հանգում են ազատ առետրի գոտու կամ լավագույն դեպքում մաքսային միության ձեւավորմանը: Հյուսիսամերիկյան ազատ առետրի գոտին, իր ստեղծման պահից մինչ օրս չի վերաճել անգամ մաքսային միության: Նույնը կարելի է ասել թե՛ Հարավարեւելյան Ասիայի երկրների տնտեսական ինտեգրման, թե՛ ԱՊՀ, եւ թե՛ Լատինական Ամերիկայի նման գործընթացների վերաբերյալ: Տարածաշրջանային ինտեգրման առումով միակ բացառությունը, թերեւս, Եվրամիությունն է, որը թեւակոխել է տարածաշրջանային ինտեգրման վերջին՝ տնտեսական եւ քաղաքական միության կայացման փուլը: Այդուամենայնիվ, մրցակցության ծավալման առումով այստեղ առկա է որոշակի մեկուսացում արտաքին աշխարհից, որը պայմանավորված է ապրանքների եւ ծառայությունների հանդեպ ԵՄ անդամ երկրների ներսում առաջնահերթ պահանջարկի ձեւավորման եւ այլ երկրներից նման ապրանքներից հրաժարվելու հանրնդհանուր միտումով: Սա, իր հերթին, սահմանափակում է այլ երկրների ԵՄ շուկայում իրենց ապրանքներն ու ծառայություններն իրացնելու հնարավորությունները:

Այսպիսով՝ տարածաշրջանային ինտեգրման հնարավորություններն աշխարհում խիստ սահմանափակ են: Երկրների մեծ մասն այսօր առետրատնտեսական գործընկերներ է որոնում հեռավոր արտերկրում, մինչդեռ որեւէ երկիր չի կարող հավակնել համաշխարհային տնտեսությունում լիարժեք ինտեգրվելուն, եթե նրան չի հաջողվել հասնել տնտեսական ինտեգրման բարձր մակարդակի՝ սեփական տարածաշրջանում:

Միաժամանակ, տարբեր տարածաշրջաններում՝ ներառյալ ԱՊՀ-ն եւ ՄՕՏՀ-ն (Մեծովյան տնտեսական համագործակցություն), ինտեգրման գործընթացները հիմնականում քաղաքականացված են եւ պայմանավորված հիմնական դերակատարների երկկողմ դաշնակցային շահերով: Սա եւս առողջ միտում չի կարող դիտվել եւ հանգեցնում է իրական տնտեսական համագործակցության վիժեցման:

**Տեղական** շուկայում ճգնաժամի բաղադրիչները առկա էին համաշխարհային տնտեսական աղետից առաջ: Հիմնականում անմրցունակ տնտեսության գոյության պատճառները պետք է որոնել մենաշնորհների առաջացման եւ տնտեսության մեջ դրանց բարձր տեսակարար կշռի մեջ: Կարելու է հաշվի առնել նաեւ ստվերային տնտեսության մակարդակը, որը թույլ չի տալիս հաշվառելի դարձնել ազգային տնտեսությունը եւ իրականացնել համապետական նշանակության ռազմա-

վարական ծրագրեր՝ տնտեսական կողմնորոշիչների բացակայության պայմաններում: Տնտեսական սպառնալիքների շարքում իրենց էական տեղն ունեն նաև կոռուպցիան, ինչպես նաև ֆինանսական, ֆինանսաբանկային, ներդրումային, արդյունաբերական, պարենային, սոցիալական եւ տնտեսական անվտանգության ոլորտների ապահովման մյուս իրական սպառնալիքները: Ընդհանուր առմամբ՝ տեղական շուկայի վրա ազդում են կառավարելի եւ անկառավարելի գործոնները, որոնք պարարտ հող են ստեղծում տնտեսական ճգնաժամի համար: Եթե այս ամենին հավելենք նաև արտահանման համեմատ ներմուծման ծավալների շեշտակի ավելացումն ու առետրային հաշվեկշռի բացասական սալդոյի աննախադեպ աճը, ապա պարզ կդառնա, թե ինչու եւ ինչպես համաշխարհային ֆինանսական ճգնաժամը կարող է ազդել ազգային տնտեսության վրա:

### **Հարուցիչները**

Ինչ վերաբերում է ճգնաժամի հարուցիչներին՝ հիմնահարցային եւ երեւոթային գործոններին, ապա դրանք կարելի է պայմանականորեն դասակարգել հետևյալ կերպ.

- համակարգային
- գաղափարախոսական
- պատասխանատվության
- վստահության:

Ճգնաժամը հստակ ցույց տվեց, որ հիվանդ է ոչ միայն ֆինանսական ենթակառուցյալը, այլև ողջ իմունային համակարգը, որին պետք է ծառայեր ֆինանսական ոլորտը: Տպավորություն է ստեղծվում, որ վերջին տասնամյակներին ոչ թե ֆինանսական համակարգն է ծառայել տնտեսությանը, այլ ընդհակառակը՝ տնտեսությունը ծառայել է ֆինանսական եւ բանակային համակարգերի զարգացմանը: Ավելին՝ ֆինանսական հարաբերությունները ձեռք են բերել որոշակի ինքնուրույնություն, անգամ սկսել են զարգանալ սեփական օրենքներով եւ օրինաչափություններով, ինչն էլ դրանց կտրել է իրական տնտեսությունից եւ ձեւավորել «վիրտուալ տնտեսություն»: Ի վերջո՝ կտրվելով իրականությունից եւ խզելով կապը դրա հետ, ֆինանսների աշխարհն ինքն իրեն դատապարտել է ճգնաժամի եւ ծանր հարված հասցրել ողջ տնտեսական համակարգին՝ արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը, շինարարությանը, ծառայությունների ոլորտին եւ այլն: Այսպիսով՝ ակնհայտ է դառնում, որ ճգնաժամն առնչվում է ոչ թե առանձին ֆինանսների ոլորտին, այլ ողջ տնտեսական համակարգին, ուստի կարելի է կոչել **համակարգային ճգնաժամ**:

Գաղափարախոսական կարելի է անվանել ճգնաժամն այն պատճառով, որ հենց այս փուլում առավել ցայտուն կերպով դրսևորվում են

ոչ միայն ազատական տնտեսության արատները, այլև վերջնականապես կարելի է արձանագրել, որ աշխարհում չի մնացել որեւէ երկիր, որն ունենա բացարձակ ազատական տնտեսություն: Անգամ ճգնաժամից շատ առաջ Արեւմուտքի զարգացած արդյունաբերական երկրները շարունակաբար օգտագործում էին տնտեսավարման մեթոդներ, որոնք ավանդաբար բնորոշ են վարչաիրամայական համակարգին: Խոսքը վերաբերում է պլանավորմանը, որն օգտագործվում է ինչպես միկրո մակարդակում, այսինքն՝ առանձին ընկերությունների կտրվածքով, այնպես էլ մեզո եւ մակրո մակարդակներում: Չարգացած երկրների կառավարություններն անգամ կոորդինացնում են պլանները միջպետական մակարդակով: Դրա փայլուն օրինակն այսօր Եվրամիությունն է եւ նրա վարած համակարգված, միասնական տնտեսական քաղաքականությունը:

Ազատական համակարգի հետ մյուս կարեւոր հակասությունը պետական, հանրային սեփականության առկայությունն է եւ դրա ծավալների ավելացումը: Հատկապես ճգնաժամի փուլում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, այլ երկրների կառավարությունները ակտիվորեն մասնակցում են տնտեսական մրցակցությանը, շուկայական հարաբերություններին եւ մեծ գումարներ են հատկացնում մասնավոր բանկեր եւ արդյունաբերական խոշոր ընկերություններ ձեռք բերելու համար: Արդյունքում ավելանում է հանրային սեփականության տեսակարար կշիռը: Այսպիսով՝ ակնհայտորեն իրեն սպառել է տնտեսագիտության դասական դպրոցի ուսմունքը, համաձայն որի՝ ապրանքների գները որոշվում են շուկայական ուժերի՝ պահանջարկի եւ առաջարկի հիման վրա, եւ որ պետությունը չի կարող միջամտել մրցակցությանը: Ի դեպ, ֆինանսատնտեսական ճգնաժամը տարբերվում է գաղափարախոսական ճգնաժամից նրանով, որ տնտեսությունը վաղ թե ուշ դուրս է գալու այս փուլից, մինչդեռ *գաղափարախոսական ճգնաժամից* դժվար թե ելք գտնվի եւ հազիվ թե որեւէ երկրում հնարավոր լինի այլևս պահպանել ազատական գաղափարախոսության իմունային համակարգը եւ բացարձակ արժեքները: Պարզ է նաեւ, որ ճգնաժամի փուլը հաղթահարելուց հետո աշխարհում գրեթե ոչ մի երկիր ի վիճակի չի լինի «վայրի կապիտալիզմի» բացարձակ ազատական մեթոդներով ապահովել կայուն զարգացում: Պետության որոշ միջամտությունը շուկայի կարգավորման հարցերում իրեն միշտ զգալ կտա:

Երեւոթային գործոններից չի կարելի անտեսել *պատասխանատվության ճգնաժամը*: Ինչպես ներքին շուկայում, այնպես էլ համաշխարհային տնտեսությունում քիչ չեն տեղական եւ միջազգային ֆինանսատնտեսական կառույցները, որոնցից յուրաքանչյուրը գործել է իր գործառույթների շրջանակում եւ անտեսել խմբային կամ թիմային պատասխանատվությունը: Այլ կերպ ասած՝ ցանկացած երկրի (բացառությամբ Եվրամիության) ֆինանսների նախարարությունը, Կենտրո-

նական բանկը, այլ կառույցներ, ինչպեսև Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկը եւ այլք փորձել են «հիվանդին» տնտեսությունը, բուժել իրենց նեղ մասնագիտական ուժերի եւ գիտելիքների շրջանակներում՝ թողնելով մնացածը դեպքերի ու միտումների քմահաճույքին: Մահմանափակելով պատասխանատվությունը կամ թողնելով այն միմյանց վրա, իրականում ոչ ոք չի ստանձնել գլխավոր, համընդհանուր պատասխանատուի կամ «գլխավոր բժշկի» դերը: Իրականում այդ դերը վերապահված է ՄԻԱՅՆ պետությանը՝ իր կարգավորիչ եւ վերահսկիչ գործառույթներով, իսկ անկախացումից ի վեր, ըստ էության, վերացրել են նաեւ գլխավոր պատասխանատուի հաստիքը եւ հանդեպ, որ «հիվանդին» ինքն իրեն պետք է բուժի, այսինքն՝ շուկան ինքնակարգավորվող է, եւ արդյունքում վերացել է նաեւ պատասխանատվություն հասկացությունը: Անգամ այնտեղ, որտեղ շրջանառության մեջ է մտցվում ոչ միայն սեփական, այլև համաշխարհային արժույթը՝ հիմնական վարակակիրը, համաճարակի տարածման համար, ըստ էության, ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվում: Մինչդեռ համաշխարհային տնտեսության ցանկացած ցնցում կարող է լրջորեն անդրադառնալ ԱՄՆ դոլարի փոխարժեքի վրա, իսկ ԱՄՆ տնտեսության եւ արժույթային համակարգի հետ կապված ցանկացած էական փոփոխություն փոխազդում է համաշխարհային տնտեսությանն ինտեգրված երկրներին:

Միամտություն կլինի մտածել, թե որեւէ մեկը կապաշխարի կամովին եւ կստանձնի այս ամենի պատասխանատվությունը: Պատասխանատվության ձգնաժամի ելքը, մեր համոզմամբ, հակակշիռների եւ զսպումների մեխանիզմի ստեղծումն է համաշխարհային տնտեսությունում եւ անցումը միաբեւեռ աշխարհից դեպի բազմաբեւեռ աշխարհ, որ գլոբալ մակարդակով կիրականացվեն կարգավորիչ եւ վերահսկիչ գործառույթները՝ հիմնական խաղացողների կողմից: Իսկ յուրաքանչյուրի դերը պայմանավորված է իրավունքի եւ պատասխանատվության խելամիտ հարաբերակցությամբ: Բնավ ընդունելի չէ, երբ իրավունքները տրվում են անսահման քանակությամբ, իսկ պատասխանատվությունը կրում է ձեւական բնույթ: Անընդունելի է նաեւ հակառակը՝ չափից ավելի պարտականություններով ծանրաբեռնումը առանց համարժեք իրավունքների, ի վերջո, կարող է հանգեցնել անցանկալի լարվածության: Անպատասխանատու կեցվածքը բուրգի գագաթից կարող է անցնել ամբողջ կառույցներին եւ կաթվածահար անել դրանց արդյունավետ գործունեությունը: Այս վտանգից ապահովագրված չեն ոչ միայն մասնավոր, այլև պետական հատվածներում՝ իրենց տարբեր ենթահամակարգերով: Ֆինանսական ձգնաժամի ներկա փուլում ոմանք կարծես դիտորդի կարգավիճակում են: Անգամ նրանք, ովքեր անմիջական պատասխանատվություն են կրում ստեղծված իրավիճակի համար՝ օրենսդիրն ու գործադիրը իրենց մասով, գործարարն ու սպառողը՝ իրենց:

Մարդկության պատմության տարբեր հատվածներում հենց պատասխանատվության ոչ բավարար գիտակցումը, իսկ երբեմն էլ դրա բացակայությունն է պատճառ դարձել բազմաթիվ հետընթացների եւ ճախողումների, որոնց հետեւանքները վերացնելու համար պահանջվել են տասնամյակներ ու հարյուրամյակներ:

Ի վերջո, նախորդ գործոնների ճգնաժամի պայմաններում անխուսափելի է դառնում նաեւ *վստահության ճգնաժամը*: Տնտեսական ողջ համակարգի հիմքերի սասանման, դասական ազատական գաղափարախոսության հոգեվարքի եւ պատասխանատվության գիտակցության դեֆիցիտի պայմաններում զարմանալի կլիներ, եթե փոխադարձ վստահությունը պահպանվեր բավարար մակարդակում: Ընդամենը՝ վստահությունը փոշիանում է ինչպես առանձին երկրների ներսում՝ բանկերի, ապահովագրական ընկերությունների, այլ կառույցների հանդեպ հաճախորդների, սպառողների տարբեր խմբերի, այնպես էլ կառավարությունների, Կենտրոնական բանկերի հանդեպ քաղաքացիների վստահությունը: Ավելին՝ վստահությունը հազվադեպ է առկա առանձին միջազգային կազմակերպությունների հանդեպ տեղական կառույցների կամ անհատների վերաբերմունքում: Չնչին բացառությամբ՝ իրար չեն վստահում նաեւ տարածաշրջանային մակարդակում, գնալով բարդանում են հարեւանների հետ քաղաքական եւ առետրատնտեսական հարաբերությունները: Դրանք հաճախ միջնորդվում են այլ երկրների կամ կառույցների հետ կապերով, որը երկրորդ պլան է մղում վստահության գործոնը: Արդյունքում տնտեսական համաճարակի փուլում աստիճանաբար թուլանում է վստահությունը տնտեսության առողջացման հարցում դերակատարություն ունեցողների հանդեպ:

### *Տնտեսության առողջացման ներմուծված եւ ժամկետակ դեղերը*

*տնտեսական Concillium եւ psychoteraphy*

Վերը նշված գործոններն ուղղակիորեն առնչվում են այնպիսի կարեւոր հիմնահարցի, ինչպիսին հիվանդության համար ճիշտ բուժման ընտրությունն է: Իսկ առանց վստահության, ինչպես հայտնի է, քիչ արդյունք կարող է ապահովել այլոց համար անգամ ամենաարդյունավետ համարվող դեղամիջոցը:

Բժշկության մեջ լայն տարածում ունի հոգեբանական գործոնը, եւ շատ դեպքերում բժշկի հանդեպ վստահությունն ու բժշկի կողմից հոգեբանական ներգործությունը կարող են ավելին տալ հիվանդին, քան ամենաարդիական դեղամիջոցները: Նույնը՝ տնտեսության ներսում: Մեր համոզմամբ՝ ճգնաժամից չի կարելի դուրս գալ առանց լավատեսության ու հավատի, ինչպես նաեւ սեփական երկրի իշխանությունների հանդեպ տաճած վստահության: Այլապես այլ երկրներից ներմուծված

դեղամիջոցները (տվյալ դեպքում՝ տնտեսության զարգացման տարբեր մոդելները) չեն կարող տալ ակնկալվող արդյունքը: Հատկապես, երբ դրանց մի մասն ուղղակի ժամկետանց է, իսկ մյուս մասը պարունակում է կողմնակի ազդեցություններ (side effects), այսինքն՝ բուժելով հիվանդության մի տեսակը, կարող են առաջացնել միանգամից մի քանի այլ հիվանդություններ եւ բացասաբար անդրադառնալ օրգանիզմի տարբեր մասերի (մեր դեպքում տնտեսության տարբեր ճյուղերի) վրա:

Մեր համոզմամբ՝ բոլորովին հիմնավոր չէ տարբեր հիվանդների համեմատությունը, ասել է թե՛ **ներկայիս ձգնաժամի** համեմատությունը 1929-1933թթ. համաշխարհային տնտեսությանը համակաճ **Մեծ դեպրեսիայի** հետ, առավել եւս այս երկու հիվանդությունների բուժման նմանությունների կամ գուցահեռների ներկայացումը: Նախ՝ այն պատճառով, որ տարբեր են ձգնաժամի առաջացման գործոնները: Եթե ներկայումս ամեն ինչ սկսեց հիփոթեկային եւ, ընդհանուր առմամբ, ֆինանսական շուկայից, ապա 1929-1933թթ. դեպրեսիայի պատճառները հիմնականում տնտեսական էին (արդյունաբերական ապրանքների գերարտադրություն, պահանջարկի հանդեպ առաջարկի գերազանցում, ֆերմերային տնտեսությունների կազմալուծում եւ այլն): Երկրորդ՝ քսաներորդ դարի առաջին կեսին համաշխարհային տնտեսության ներսում չկար եւ չէր կարող լինել ազգային տնտեսությունների միջեւ փոխկապակցվածության այնպիսի մակարդակ, ինչպես քսանմեկերորդ դարի սկզբին, ուստի եւ տնտեսական ձգնաժամն այդքան սրընթաց չէր կարող տարածվել բոլոր երկրներով եւ ունենալ նույն խորությունը: Չպետք է մոռանալ, որ կային երկրներ, որոնք առանձնապես մեծ վնասներ չեն կրել 1929-1933թթ. դեպրեսիայի արդյունքում, ինչը չի կարելի ասել ներկայիս ձգնաժամի մասին: Երրորդ՝ 1929-1933թթ. դեպրեսիայի ժամանակ համաշխարհային հիմնական արժույթը ոսկին էր եւ մասամբ՝ բրիտանական ֆունտը, իսկ այսօր ոսկին դուրս է մղված միջազգային հաշվարկներից, իսկ այդ դերում հիմնականում ԱՄՆ դոլարն է, իսկ մասամբ՝ ԵՄ միասնական արժույթը: Չորրորդ՝ 1929-1933թթ. դեպրեսիայի տարիներին բոլոր երկրներում գործում էին ֆիքսված փոխարժեքները, իսկ այսօր գերազանցապես կիրառում են լողացող փոխարժեքներ: Հինգերորդ՝ 1929-1933թթ. դեպրեսիայի տարիներին աշխարհը քաղաքական առումով երկբեւեռ էր, ուստի կային որոշակի հակակշիռներ, իսկ ներկայումս ձգնաժամը զարգանում է միաբեւեռ աշխարհում եւ իրական հակակշիռներ դեռեւս ձեւավորված չեն: Վեցերորդ՝ զարգացման առումով առաջատար երկրներին բնորոշում էր անցումը ագրարային ուղղվածությունից դեպի ագրարային-ինդուստրիալ եւ ինդուստրիալ ուղղվածության, իսկ այսօր զարգացած երկրները հիմնականում բնութագրվում են որպես հետինդուստրիալ եւ ծառայությունների ուղղվածության սպառողական հասարակություններ: Տարբերությունների շարքը կարելի է շարունակել՝ հիմնավորելու այն իրողությունը, որ եթե

տարբերություններ կան հիվանդությունների ախտանշաններում, ապա դրանց բուժումը եւս չի կարող նույնը լինել: Կարելի է նշել նաեւ, որ համաշխարհային եւ ազգային տնտեսությունների առողջացման գործում ակնկալիքները հիմնական դերակատարներից եւս չեն կարող նույնը լինել, քանի որ Արժույթի միջազգային հիմնադրամը եւ Համաշխարհային բանկը, որոնք ստեղծվեցին հայտնի տնտեսագետ Ջոն Մեյնարդ Քեյնսի առաջարկած մոդելներով, այլեւս ի վիճակի չեն կատարել նույն գործառնությունները, ինչի համար իրականում կյանքի էին կոչվել: Բացի վերը նշված պատճառներից եւ բացի այն իրողությունից, որ դրանք վերջին տասնամյակներին հիմնականում սպասարկել են զարգացած երկրների շահերը: Չկա, օրինակ, մի հետխորհրդային երկիր, որտեղ դրանց մոդելները հաջողություն բերեն ազգային տնտեսություններին կամ հենց հիշյալ կառույցներին: Այլ խոսքով ասած՝ այս երկու ֆինանսատնտեսական «հիվանդանոցները» հիմնականում սպասարկել են էլիտար հիվանդների, ինչը տեսադաշտից դուրս է թողել աղքատներին, որոնց պատած հիվանդությունները չբուժվելով՝ հետագայում կրել են համատարած բնույթ, վերածվել համաճարակների եւ ստիպել միջազգային այս «կլինիկաներին» փոխել բուժսպասարկման ներկա ռազմավարությունը: Դրա մասին է խոսում նաեւ այն փաստը, որ վերջին տարիներին այս երկու միջազգային կառույցներն իրենց իսկ գործունեության անհաջողությունների շրջանից փորձում են դուրս գալ համատեղ՝ պարբերաբար գումարելով միացյալ համաժողովներ՝ ընդհանուր մտահոգությունների օրակարգերով: Ի հայտ են եկել տարածաշրջանային եւ միջազգային նոր դերակատարներ, որոնց հետ հին կառույցները ստիպված կլինեն հաշվի նստել:

### *Ազգային տնտեսության իմունային համակարգը*

Կարիք կա նաեւ դիտարկել ճգնաժամի հնարավոր ազդեցությունները Հայաստանի տնտեսության վրա այսօր եւ տեսանելի հեռանկարում: Մի բան պարզ է, որ Հայաստանը չի գտնվում տնտեսական համաճարակի (ճգնաժամի) էպիկենտրոնում միանգամից մի քանի պատճառով: Նախ՝ չնայած օրենսդրական եւ նորմատիվային անհրաժեշտ փաստաթղթերի առկայությանը, առայժմ Հայաստանում չի ձեւավորվել եւ չի գործում արժեթղթերի շուկան: Ֆինանսական շուկան հիմնականում ներկայացված է բանկերի եւ ապահովագրական ընկերությունների տեսքով: Մյուս բաղադրիչները կայացման փուլում են: Այս ամենը Հայաստանին թույլ չի տալիս լիարժեք ինտեգրվելու միջազգային ֆինանսական շուկային եւ իր վրա կրելու դրա դրական կամ բացասական ազդեցությունները տնտեսության զարգացման տարբեր փուլերում: Երկրորդ՝ հանրապետության տնտեսությունն այսօր վերականգնման եւ կառուցվածքի ձեւավորման գործընթացների մեջ է եւ, բնականաբար, չի

կարող ունենալ ակնկալվող մրցունակության մակարդակը եւ ինտեգրվել համաշխարհային շուկային: Երրորդ՝ սպասվող ազդեցությունները կարող են լինել միջնորդված. ներմուծվող ապրանքների գների տատանումների տեսքով, հիփոթեկային շուկայում կատարվող օտարերկրյա ներդրումների կրճատման առումով, բանկային համակարգում կանոնադրական կապիտալի օտարերկրյա մասնաբաժինների կրած ազդեցություններով եւ վերը նշվածից ածանցյալ այլ գործոններով: Այս ամենով հանդերձ, առկա են բացասական հետեւանքներ՝ սկսած համաշխարհային շուկայում պղնձի գների անկմամբ պայմանավորված Հայաստանի լեռնամետալուրգիական արդյունաբերության ծավալների կրճատումից եւ վերջացրած արտերկրից ստացվող տրանսֆերտների նվազումով:

### ***Տնտեսական համաճարակի դասերը***

Չնայած բոլոր երկրների ջանքերին, հիվանդությունը կարող է երկար տևել: Դասերի մասին սովորաբար խոսվում է ձգնաժամը հաղթահարելուց հետո, սակայն անգամ այսօր նկատվում են օրինաչափություններ, որոնց արժե անդրադառնալ: Նախ, ներկայիս ձգնաժամի գոյություն ունեցող բնական եւ արհեստական, կամ այլ խոսքով ասած՝ օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառների մասին:

Մոտ մեկ տասնամյակ տեւած տնտեսական վերելքից հետո Իրաքյան պատերազմի սկզբին՝ 2003թ., նկատվեցին լճացման եւ ձգնաժամի առաջին նախանշանները, որոնք հիմնականում պայմանավորված էին ռազմական ծախսերի կտրուկ ավելացմամբ, տնտեսության իրական հատվածի զարգացման տեմպերի կրճատմամբ եւ արտաքին առևտրի բացասական սալդոյի աճով: Այս միտումները շարունակվեցին նաեւ հետագա տարիներին, սակայն պետության միջամտությունը հանգեցրեց նրան, որ իր բնական ընթացքով վերելքից դեպի լճացում, հետո՝ դեպի ձգնաժամ թեւակոխելու փոխարեն արհեստական ազդակներով սկսվեց «տնտեսական վերակենդանացումը», որն արտահայտվեց «էժան դոլարի» քաղաքականությամբ ամերիկյան տնտեսության մրցունակության բարձրացման փորձերում: Մյուս կողմից՝ կարելու է նկատել, որ նույն ժամանակահատվածում շարունակվում էր ԱՄՆ դոլարի եւ Եվրամիության միասնական նոր շրջանավորող արժույթի՝ եվրոյի միջև սուր մրցակցությունը: Այս պայմաններում եվրոյի նկատմամբ դոլարի փոխարժեքի արհեստական իջեցումն ունեցավ երկակի ազդեցություն: Նախ իջան դոլարով արտահայտված ապրանքների եւ ծառայությունների գները, որն ավելացրեց դրանց նկատմամբ գոյություն ունեցող պահանջարկը, հետեւաբար նաեւ՝ արտահանման ծավալները ԱՄՆ-ից, որն էլ զգալիորեն բարելավեց ԱՄՆ-ի արտաքին առևտրային հաշվեկշիռը: Դրա հետեւանքով բարձրացան եվրոյով արտահայտված

Եվրամիության անդամ երկրների ապրանքների եւ ծառայությունների գները, ինչը զգալի վնաս հասցրեց Եվրամիության անդամ երկրների արտաքին առետրին՝ կրճատելով արտադրության ծավալները եւ ավելացնելով գործազրկության մակարդակը:

Այս ամենին զուգահեռ, տնտեսության արտաքին խթանիչները հանգեցրին նրան, որ ավելի սրընթաց տեմպեր հաղորդելով տնտեսության զարգացմանը, գրեթե անխուսափելի դարձրին տնտեսության նույնքան սրընթաց անկումը: Սովորաբար պետության դերն այս փուլում դրսևորվում է տնտեսության աճի տեմպերի հնարավոր դանդաղեցմանն ուղղված վարկային տոկոսադրույքների բարձրացման եւ ավանդների դիմաց առաջարկվող տոկոսադրույքների իջեցման եւ նման այլ քայլերով՝ նպատակ ունենալով հնարավորինս մեղմել նաև վերելքին հաջորդող լճացման եւ ճգնաժամի արագությունն ու դրանց վնասները: Հակառակ վերը նշված տրամաբանության, պետությունը սկսեց ոչ թե զսպել սղաճը, այլ դուլարի նոր զանգված շրջանառության մեջ մտցնելով, խթանեց դուլարի հետագա արժեզրկումը՝ այդ արժույթի տնտեսապես չարդարացված առաջարկի չափերով: Դուլարի մեծ զանգվածները հիփոթեկային եւ այլ վարկերի տեսքով բանկերը տվեցին դրանց կարիքն ունեցողներին՝ գրեթե անարգել: Արդյունքում վարձով ապրող ամերիկաբնակների մի զգալի մասն այսօր արդեն ապրում է պարտքով, դրանով իսկ սնանկացնելով ֆինանսական մի շարք հաստատություններ: Իսկ երբ մոտեցան մարման ժամկետները, պարզվեց, որ խախտվել է վարկի կարետրագույն սկզբունքներից մեկը՝ վերադարձելիությունը, եւ տնտեսությունն իր վրա զգաց առաջին ծանր հարվածները բորսաներում: Գործընթացն այսօր վերահսկողությունից դուրս է գտնվում եւ չնայած 2008թ. նոյեմբերին ԱՄՆ հանրապետական վարչակազմի հաստատած 700 մլրդ դուլար արժողությամբ եւ 2009թ. փետրվարին դեմոկրատների կողմից իրականացվող 787 մլրդ դուլար արժողությամբ Փրկության ծրագրերին, ԱՄՆ տնտեսության առողջացման դիպաշարերը, մեր համոզմամբ, խիստ վտանգված են: Դրանք կարող են ընդհանրապես ոչ մի արդյունք չբերել նաև այն պատճառով, որ ծրագրվում է տնտեսությունը հանել ճգնաժամից ոչ թե բնական, այլ արհեստական գործոնների եւ խթանիչների հաշվին:

Ճգնաժամի առաջին դասը, թերեւս, այն է, որ տնտեսությունը պետք է զարգանա ոչ թե արհեստական խթանիչներով, այլ բնականորեն, ասել է թե՛ ՀՆԱ-ի առանցքը կազմող տնտեսությունների բնականոն զարգացման հաշվին եւ ոչ՝ ֆինանսական շուկայի իրական հատվածից կտրված ինքնուրույն զարգացումներով:

Երկրորդ՝ պետության կարգավորիչ եւ վերահսկիչ գործառնությունները կարող են դրական ներգործություն ունենալ միայն կարճ ժամանակահատվածում, ավելի երկար պետական միջամտությունը կարող է հանգեցնել տնտեսական եւ ֆինանսական ծանր հետեւանքների:

Երրորդ՝ ինչպես դա ակնհայտ դարձավ մեկ տասնամյակ առաջ Արգենտինայում տեղ գտած ֆինանսական ճգնաժամից, ֆինանսական վերնախավը պետք է փորձի սպասարկել ոչ այնքան քաղաքական վերնախավի շահերը, որքան ծառայի տնտեսության իրական հատվածի իրական զարգացմանը՝ մասնավորապես սերտորեն համագործակցելով արդյունաբերական վերնախավի հետ, եւ ճանապարհ հարթի փոքր բիզնեսի աշխուժացման համար:

Չորրորդ՝ համաշխարհային ճգնաժամի կործանարար հետեւանքներից խուսափելու նպատակով Հայաստանը պետք է նպատակ դնի վերացնելու տնտեսական կախվածությունը մեկ-երկու երկրից եւ փորձի բազմազանեցնել իր թե՛ առեւտրատնտեսական կապերը, թե՛ արտաքին ներդրումների աղբյուրները:

Հինգերորդ՝ Հայաստանը պետք է հնարավորինս կրճատի ներկայիս կախվածությունը ներմուծումից (ներմուծման ծավալները երեք եւ ավելի անգամ գերազանցում են արտահանման ծավալները): Սա թույլ կտա կրճատել կախվածությունը համաշխարհային շուկայի կողմից պարտադրվող ցնցումներից:

Վեցերորդ՝ համաշխարհային ճգնաժամի ներկա փուլում պետք է ձգտել առավելագույն օգուտներ քաղել սպրանքների եւ ծառայությունների այն գներից, որոնք առավել նպաստավոր են երկրի տնտեսության համար:

### ***Հնարավոր օգուտները***

Այդ իմաստով կարելու է անցում կատարել տեղի ունեցած երեւոյթներին արձագանքելու (այլ խոսքով՝ ռե-ակտիվ) քաղաքականությունից դեպի ավելի նախաձեռնողական, նախահարձակ տնտեսական քաղաքականության (այլ խոսքով՝ պրո-ակտիվ), որը թույլ կտա ոչ թե հարկադրված լինել պաշտպանվելու վնասներից, այլ անգամ փորձել օգուտներ քաղել երկրի հետագա զարգացման համար: Բժշկության մեջ սա կոչվում է կանխարգելիչ, պրոֆիլակտիկ մոտեցում: Այս իմաստով նպատակահարմար է ոչ թե մեկ, այլ մի քանի դիպաշարերի մշակում, ինչը թույլ կտա որոշ պարագաներում անկանխատեսելի զարգացումների դեպքում պետական քաղաքականության զինանոցում ունենալ պատրաստի մոտեցումներ՝ դիմակայելու մեկ դիպաշարի ձախողման հետեւանքներին: Հիշեցնենք, որ տնտեսական ճգնաժամն առաջին հերթին եւ ավելի ուժգին հարվածելով համաշխարհային տնտեսությանն ու դրա ֆինանսական շուկաներին լավագույնս ինտեգրված երկրներին, հանգեցնում է այդ երկրների տնտեսությունների մրցունակության կտրուկ անկման, ուստի եւ մրցակցային դիրքերի թուլացման: Չարգացող երկրներն այս պարագայում իրենց մրցակից զարգացած երկրներից ճգնաժամի փուլում կարող են ավելի նպաստավոր գներով ձեռք բերել այն

տեխնոլոգիաներն ու արդիական սարքավորումները, որոնք այլապես տնտեսական աշխուժացման եւ վերելքի փուլերում գրեթե անհնար է: Սա նաեւ այն պատճառով, որ ոչ միշտ են զարգացած երկրները պատրաստ վաճառել նման սարքավորումներ՝ իրենց հավանական մրցակիցներին: Ճգնաժամից այս կարեւոր հանգամանքով օգտվելու համար պարզվում է՝ բավարար չէ նպաստավոր գնով արդիական սարքավորումներ ձեռք բերելը: Չնոռանանք, որ դրանք պետք է նաեւ մաքսային օրենքներով եւ ընդունված որոշումներով մաքսազերծել-ներմուծել, որն ինքնին բավական ծախսատար գործընթաց է: Անհրաժեշտ է գոնե այս փուլում վերանայել մաքսային քաղաքականությունը եւ ամենից առաջ իջեցնել սարքավորումների ու արդիական այլ տեխնոլոգիաների համար սահմանված մաքսատուրքերը՝ խթանելու համար դրանց մուտքն ու կիրառումը հանրապետությունում: Մեր համոզմամբ՝ կարեւոր է արտադրության հիշյալ միջոցները մաքսազերծել ոչ թե շուկայական արժեքով, այլ փաստացի ձեռք բերված invoice-ի հիման վրա: Ի դեպ, շուկայական արժեքի մասին: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետեւանքով ոչ միայն սարքավորումների, այլեւ մի շարք սպառողական ապրանքների գները կտրուկ նվազել են, իսկ մաքսազերծման համար դրանց կիրառվող արժեքները մնում են բարձր՝ այսպիսով թույլ չտալով սպառողին օգտվել ճգնաժամի ընձեռած հնարավորություններից: Հետեւաբար, դրանց մաքսային արժեքները պետք է վերահաշվարկվեն: Այս փուլում պետությունն ինքը կարող է ձեռք բերել սպառողական ապրանքների մեծ խմբաքանակներ ոչ միայն այն պատճառով, որ դրանք ձեռնտու լինեն սպառողների լայն շրջանակների համար եւ գները պահել խիստ վերահսկողության տակ՝ զերծ մնալով շուկայում մենաշնորհային բարձր գների ձեւավորումից: Նպաստավոր իրավիճակ է ստեղծվել նաեւ կառավարության համար՝ համալրելու եւ ավելացնելու պետական պաշարամիջոցները հացամթերքի, նավթամթերքի եւ այլ կարեւորագույն ապրանքների գծով: Ըստ որում, այդ գործը պետք է հանձնարարել ոչ թե մասնավոր ընկերությունների ու միջնորդների, այլ արտադրողից՝ անմիջական գնումների միջոցով:

***Տնտեսական ապաքինում եւ ստողջ ապրելակերպ***  
*Նոր տնտեսական քաղաքականության ուղիագծերն ու լոկոմոտիվները*

Ինչպես հայտնի է, ճգնաժամը նաեւ շանս է՝ վերադիրքավորվելու եւ դուրս գալու ստեղծված իրավիճակից ավելի մրցունակ տնտեսությամբ: Սա, իր հերթին, ենթադրում է ոչ միայն առանձին միջոցառումների, այլեւ որակապես նոր տնտեսական քաղաքականության իրականացում: Ըստ որում, անհրաժեշտություն է առաջանում տարանջատել իրական եւ թվացյալ զարգացման միտում բնութագրող գործընթացները: Մասնավորապես՝

- արտաքին առևտրային ապրանքաշրջանառության ավելացումը դեռ չի նշանակում մրցունակության բարձր մակարդակ եւ արտահանման ավելացում. այն կարող է ավելանալ ներմուծման աճի հաշվին եւ ավելացնել արտաքին առևտրի պակասուրդը,

- ներմուծման փոխարինման քաղաքականությունը դեռեւս չի նշանակում արտահանման խթանման քաղաքականություն, որը թույլ է տալիս առևտրային միսիաներով, գործարար համաժողովներով, արտոնյալ վարկավորմամբ եւ արժույթային արդյունավետ քաղաքականությամբ խթանել երկրի արտահանման կարողությունը,

- տնտեսական մրցակցության աջակցությունը չի կարող նույնացվել հակամենաշնորհային պայքարի հետ, որը վերջ կդնի կլանների կողմից գների վերաբերյալ հանցավոր համաձայնություններին, որից տուժում են թե՛ բարեխիղճ ձեռներեցները եւ թե՛ սպառողներն ու տնտեսության մրցունակությունը ընդհանրապես,

- նոր աշխատատեղերի ստեղծումը դեռ չի նշանակում գործազրկության կրճատում եւ տնտեսության զարգացում, քանի որ միաժամանակ կարող են կրճատվել աշխատատեղեր տնտեսության այլ ոլորտներում,

- ներդրումների առկայությունը կարող է պայմանավորված լինել քաղաքականացված արտաքին ներդրումներով եւ դեռ չի նշանակում ներքին ներդրումների աճ եւ վստահության ձեւավորում:

Այս տարբերությունները նկատելով, անհրաժեշտ է մշակել ազգային տնտեսության առանձնահատկություններից բխող տնտեսական դեղատոմսեր եւ «բուժումը» սկսել այնտեղից, որտեղից սկիզբ է առել հիվանդությունը, եւ բարձրացնել տնտեսական օրգանիզմի դիմադրողականությունը, ինչը նշանակում է.

1. ծավալում եւ նպատակային ներդրումներ կատարել մարդկային կապիտալի մեջ,
2. արտոնյալ պայմաններ ստեղծել ինովացիաների եւ նոր տեխնոլոգիաների զարգացման ու դրանց կիրառման համար,
3. ըստ ամենայնի աշխուժացնել փոքր եւ միջին ձեռներեցությունը հանրապետությունում,
4. պետական աջակցությամբ խթանել բնակարանային եւ արտադրական շինարարության ոլորտը,
5. արտոնյալ վարկեր տրամադրելիս առաջնահերթություն սահմանել կառուցվածքատեղծ արտադրությունների եւ այլ գործարար ծրագրերի համար, որոնց իրականացնողներն առավել կենսունակ ու մրցունակ են եւ իրենց ետեւից լոկոմոտիվի պես կարող են շարժել-տանել նաեւ մյուսներին,
6. պետության նախաձեռնությամբ զարկ տալ հանրային աշխատանքներին՝ հատկապես ենթակառուցվածքների զարգացման ասպարեզում,

7. մատչելի պայմաններով սկսել հիփոթեկային վարկավորում, որը դրականորեն կներազդի ընդհանուր տնտեսության առողջացման վրա,

8. կոշտ հարկային վարչարարության փոխարեն անցում դեպի ճկուն հարկային քաղաքականություն՝ աստիճանաբար անցում կատարելով նաեւ դեպի հարկային շրջանայնացում՝ հանրապետության ողջ տարածքով մեկ, ուր գործարարության խթանման նպատակով յուրաքանչյուր մարզի եւ բնակավայրի համար կսահմանվեն Երեսանի ու նրա ազդուներացիայից տարբեր հարկային դրույքաչափեր,

9. ձեւավորել ազատ տնտեսական գոտիներ,

10. իրականացնել տարբերակված մաքսային քաղաքականություն, որն ուղղված կլինի նոր սարքավորումների, նոր տեխնոլոգիաների ներմուծման խթանմանը, հետեւաբար նաեւ՝ տեղական արտադրության մրցունակության բարձրացմանը,

11. անցում կատարել դեպի ցածր վարկերի տրամադրման նպատակային քաղաքականություն՝ խթանելու գործարար աշխուժությունը,

12. անցնել «էժան» դրամի քաղաքականության, որը դրականորեն կանդրադառնա տնտեսության տարբեր ճյուղերի (մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, այլ ոլորտների) մրցունակության բարձրացմանը եւ կարող է հանգեցնել առեւտրային հաշվեկշռի բացասական սալդոյի կրճատմանը:

Այս ամենը կարող է թույլ տալ խուսափել այն սխալներից, որոնք եղան 1998թ. ասիական, ապա եւ՝ ռուսական ֆինանսական ճգնաժամի շրջանում, եւ առավելագույնս օգուտներ քաղել ստեղծված իրավիճակից: Այս ամենից հետո կարելի է կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, տնտեսական առումով առողջ կենսակերպի արմատավորումը, որն առանձին վերլուծության առարկա է: Այդուհանդերձ, կանխարգելիչ մոտեցումներով միայն կարելի է առողջացնել տնտեսական միջավայրը, այլապես լավագույն դեղամիջոցներն ընդունելուց հետո վարակված միջավայրում երկար գոյատևելն անհնար է կդառնա:

### ***Հիվանդության կանխարգելում եւ սոցիալական բաղադրիչի կարելիություն***

#### ***սոցիալական շուկայական տնտեսություն***

Այս իրավիճակում մեզ համար կարելի է խնդիրներն են ոչ միայն տնտեսության վրա ֆինանսական ճգնաժամի հետեւանքների վերացումը, այլեւ առաջացած սոցիալական խնդիրների ժամանակին եւ արդյունավետ լուծումները: Տեղի է ունեցել նաեւ աշխատատեղերի որոշակի կրճատում, որին ավելացել է արտագնա աշխատանքից վերադարձածների՝ աշխատանք գտնելու մտահոգությունը: Սոցիալական վիճակի վրա իր ազդեցությունն ունեցավ դրամի արժեզրկումը:

Իսկ դա ուղղակիորեն առնչվում է մարդկանց գնողունակության մակարդակին, հատկապես 2009թ. մարտի 3-ին դրամի 30% արժեզրկումից հետո ապրիլի 1-ին գազի, էլեկտրաէներգիայի, ջրի սակագների բարձրացումները եւս առնչվում են նույն խնդրին: Կարելի է գնահատել իրատեսությունն եւ հստակ պատկերացում կազմել հասարակության սոցիալապես առավել խոցելի խմբերի վերաբերյալ եւ փոխհատուցել այն վնասները, որ այդ ընտանիքները կարող են ունենալ այս ամենի հետեւանքով: Իհարկե, մի ճանապարհն այն է, որ պետությունը փորձի սակագների բարձրացման արդյունքում վնասները փոխհատուցելու նպատակով՝ սուբսիդավորման ճանապարհով օգնել գնողունակության ցածր մակարդակում հայտնված մարդկանց: Կարելի է մտածել նպաստները, կենսաթոշակներն ու աշխատավարձերը բարձրացնելու մասին: Սակայն մեզ համար ավելի կարելի է ստեղծել այնպիսի միջավայր, որը կնպաստի տեղական եւ օտարերկրյա ներդրումների աճին, դրանով պայմանավորված նաեւ նոր աշխատատեղերի ստեղծմանը: Հայ մարդը միշտ էլ իր ստեղծագործ աշխատանքով է հոգացել իր կենսական կարիքները: Այսօր էլ պետք է օգնել մարդուն՝ իր գիտելիքների եւ հմտությունների համապատասխան աշխատանք գտնելու եւ բարձրացնելու իր ընտանիքի կենսամակարդակը: Մեր համոզմամբ՝ միայն համակարգված գործողությունների շնորհիվ կհաջողվի թոթափել համաշխարհային ձգնաժամի մեզ հարկադրված բեռը:

Ընդհանուր առմամբ՝ վերը նշված եւ դրանցից ածանցյալ այլ միջոցառումների իրականացման պարագայում հնարավոր է համեմատաբար տեսանելի ապագայում զսպել ձգնաժամային ռիսկերը եւ երկրի տնտեսության համար ապահովել աշխուժացման միտումներ: Մի բան ակնհայտ է, Հայաստանը կարող է եւ պետք է ավելի շուտ եւ ավելի նպաստավոր դիրքավորված փորձի դուրս գալ ֆինանսական ձգնաժամից, քան ավելի մեծ տնտեսություն ունեցող եւ համադրելի մակարդակներում գտնվող երկրները:

Այսօր ավելի քան երբեք Հայաստանը կարիք ունի ձեւավորելու սոցիալական շուկայական տնտեսություն, որը, մեր համոզմամբ, այլընտրանք չունի: Այնպիսի տնտեսության, ուր բարեփոխումների կենտրոնում կլինի մարդն՝ իր հոգսերով ու իրավունքներով: Այլապես ֆինանսական ձգնաժամից դուրս գալու բոլոր փորձերը դատապարտված են ձախողման: Մասնավորապես, եթե այսօր հայկական դրամի փոխարժեքի անկման հետեւանքով տեղ գտած ապրանքների գների բարձրացումը, որն ուղեկցվելու է գազի, էլեկտրաէներգիայի եւ ջրի սակագների թանկացմամբ, չստանա համարժեք փոխհատուցում՝ հատկապես սոցիալապես անապահով խավի համար, ապա կարող է ստեղծվել սոցիալական անցանկալի լարվածություն, որն ավելի կարող է բարդացնել իրավիճակը: Ավելին՝ ազգաբնակչության գնողունակության պահպանման նպատակով անհրաժեշտ է ոչ թե կրճատել (հինչպես անհարկի

պնդում են ոմանք), այլ ավելացնել պետբյուջեի ծախսային մասը, մասնավորապես իրականացնել աշխատավարձի ինդեքսավորում՝ նվազագույն մակարդակը 30 հազար դրամից բարձրացնելով առնվազն 40 հազարի: Նույնը վերաբերում է կենսաթոշակներին և տարբեր նպաստներին: Իսկ նման պարագայում առաջացող պետբյուջեի պակասուրդը հնարավոր է ծածկել ինչպես ներքին աղբյուրների (պետական պարտատոմսերի թողարկման), այնպես էլ միջազգային ֆինանսական կառույցներից արդեն իսկ ակնկալվող փոխառու միջոցների հաշվին:

## Ջոյա Թադեոսյան *Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ*

## Գիանա Գալոյան *Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

### **« Արևելյան Եվրոպայի երկրների միջև առևտրային կապերի օրինաչափություններն ու դրանց ընդլայնման հիմնական խոչընդոտները**

#### *Արևելյան Եվրոպայի երկրների փոխադարձ առևտրի վերլուծությունը*

Չարգացող երկրների շրջանակներում համագործակցության գաղափարը ծագել է արեւմտաեվրոպական տնտեսական սերտաճման կամ, ինչպես ընդունված է ասել, ինտեգրման հաջողությունների համատեքստում: Սակայն, եթե Արեւմտյան Եվրոպայի երկրների համագործակցությունը տնտեսական աճի բարձր տեմպեր ունեցող երկրների փոխլրացման համաձայնություն է, ապա զարգացող երկրների համար ինտեգրումը արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակը հաղթահարելու, ներքին շուկայում զարգացած երկրների մրցակցությանը դիմակայելու, համաշխարհային շուկայում իրենց դիրքերն ամրապնդելու ձգտում է:

Չարգացող երկրների տնտեսական սերտաճումը չի կարելի համարել երկրների միջև անընդհատ խորացող տնտեսական կապերի օրենադրական, հարկային, սոցիալական ոլորտների միջպետական կոորդինացման գործընթաց: Այսօր զարգացող երկրների տնտեսական համագործակցությունը կարելի է գնահատել որպես ինտեգրացիոն գործընթացների նախապատրաստական աստիճան: Համագործակցության շարժիչ ուժը ազգային տնտեսական ներուճակության իրական առավելությունների միավորման օգտագործումն է, տնտեսական կյանքի միջազգայնացումն ու հատկապես առևտրային կապերի արգասավորումը, իսկ վերջնական նպատակը լայնածավալ տնտեսական տարածքի ձեւավորման պայմաններում ազգային տնտեսությունների արդիականացումն է: Միեւնոյն ժամանակ զարգացող երկրների համագործակցության նպատակը տնտեսական աճի համար բարենպաստ պայմանների ձեւավորումն է (ավելի տարողունակ ներքին շուկան տնտեսության արդիականացման ու կառուցվածքային վերափոխումների հաջողության կարելու պայման է), որին կարելի է հասնել համատեղ գործելու դեպքում:

Զարգացող երկրների ինտեգրացիան ավելի շուտ մասնակից պետությունների տնտեսական քաղաքականության համաձայնեցում է, քան տնտեսական փոխկապվածության եւ փոխլրացման առարկայական գործընթաց: Այսպես, Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի (ԿԱԵ) երկրների ինտեգրումը Եվրամիությանը (ԵՄ), որն ուղեկցվեց ներտարածաշրջանային առևտրի ազատականացմամբ եւ լայնածավալ տնտեսական տարածքի ստեղծմամբ, թույլ տվեց խթանել մասնակից պետությունների ներմուծմանը փոխարինող արտադրությունների զարգացումն ու արդյունաբերական ձեռնարկությունների թվի ավելացումը: Այդ ճանապարհով բացառապես բավարարվում էին ներքին շուկայի պահանջմունքները, որի շնորհիվ էլ ներտարածաշրջանային ապրանքաշրջանառությունը բավականին աճեց: Ինչ վերաբերում է տնտեսական միությանը, ապա դա ստեղծվեց այն ժամանակ, երբ երկրների փոխադարձ առևտրի տեսակարար կշիռը գերազանցեց սեփական ապրանքաշրջանառության ծավալը:

Սույն վերլուծության հիմնական նպատակն է տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների ռազմավարության եւ այդ ուղղությամբ դիտարկվող, տարածաշրջանում առկա տնտեսական ինտեգրման նախադրյալների վերլուծության հիման վրա մշակել ՀՀ եւ ԿԱԵ տնտեսական համագործակցության համեմատաբար արդյունավետ տիպոլիզացիան, որը կարող է առավելագույնս նպաստել ՀՀ տնտեսական առաջընթացին, դառնալ ապագա զարգացումների հիմնական ուղենիշը:

Նշված նպատակի իրացումը գործնական հիմքերի վրա փոխադրելու, տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներին Հայաստանի մասնակցությունն աշխուժացնելու նկատառումներով հետազոտության մեջ խնդիր է դրվել վերլուծել ՀՀ եւ ԿԱԵ երկրների առևտրային հարաբերությունները, բացահայտել դրանց թերություններն ու առավելությունները, համագործակցության առավել նախընտրելի ոլորտները եւ այն ուղիները, որոնք էապես կխթանեն ՀՀ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացները:

Սակայն մինչ հետազոտության բուն թեմային անցնելը, հարկ ենք համարում նախ ուսումնասիրել ԿԱԵ երկրների փոխադարձ առևտրի ծավալները ԵՄ անդամ դառնալուց առաջ եւ հետո, ինչը թույլ կտա մեզ զուգահեռներ անցկացնել ՀՀ-ԵՄ համագործակցության առումով:

Այսպես, Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրները՝ գտնվելով ԵՄ հետ նույն տարածաշրջանում, կարծես թե ստիպված էին որդեգրել «առօսադրերի» կարգավիճակ, քանի որ Արեւմտյան Եվրոպայի երկրները միմյանց հետ տնտեսական հարաբերությունների ծավալման առումով դրսևորում էին շոշափելի արդյունքներ ապահովող հետետղականություն: Ուստի տարածաշրջանային տնտեսական սերտաձման նախադրյալների մեկը՝ «դոմինոյի էֆեկտը», այս երկրների

միջև տնտեսական հարաբերությունների ծավալման առումով դրսևտրվեց անմիջապես: Մակայն միայն ինտեգրման ցանկությունը բավարար չէ արդյունավետ սերտաճում ծավալելու համար: Անհրաժեշտ է, որպեսզի ինտեգրվող երկրներն ունենան փոխարացման բավարար մակարդակ:

Այդ նկատառումներից ելնելով՝ հարկ ենք համարում պարզել, թե արդյո՞ք Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրները նախքան Եվրամիությանն անդամակցելը ունեին փոխադարձ առևտրի անհրաժեշտ մակարդակ: Շեշտը դնում ենք արտաքին առևտրի վերլուծության վրա, քանի որ ազատ առևտրի համաձայնագրի կնքման եւ մաքսային միության ձեւավորման համար առաջին հերթին կարելուվում է հենց փոխադարձ առևտրի ծավալների վերլուծությունը: Մեր կողմից կատարված հետազոտությունը թույլ կտա պարզել նաեւ, թե ինչպես է փոփոխվել այս երկրների փոխադարձ առևտուրը ԵՄ անդամ դառնալուց հետո: Ուստի անհրաժեշտ ենք համարում վերլուծել ԿԱԵ 10 երկրների փոխադարձ արտահանման ծավալները 2000թ., այսինքն՝ նախքան ԵՄ-ին անդամակցելը (աղյուսակ 1) եւ 2006թ., այսինքն՝ անդամակցությունից երկու տարի անց (աղյուսակ 2):

**Աղյուսակ 1**

**Կենտրոնական եւ Արևելյան Եվրոպայի երկրների փոխադարձ արտահանման ծավալները 2000թ.<sup>1</sup> (մլն եվրո)**

Արտահանող	Չեխիա	Էստոնիա	Կիպրոս	Լատվիա	Լիտվա	Հունգարիա	Մալթա	Լեհաստան	Սլովենիա	Սլովակիա
<i>Ներմուծող</i>										
Չեխիա	---	6	4	11	39	509	5	1.304	165	2.210
Էստոնիա	54	---	0	108	87	21	0	98	4	4
Կիպրոս	5	2	---	1	7	8	1	49	5	4
Լատվիա	9	242	0	---	576	29	0	225	8	22
Լիտվա	116	97	0	154	---	49	0	614	19	19
Հունգարիա	591	26	1	3	8	---	8	707	183	626
Մալթա	4	1	2	0	0	2	---	14	2	1
Լեհաստան	1.711	22	0	33	215	655	1	---	245	752
Սլովենիա	255	0	0	6	0	303	1	143	---	127
Սլովակիա	2.420	2	2	11	3	314	1	477	76	---

Աղյուսակից երևում է, որ արտահանման առավել ակնառու ծավալներ ունեն Չեխիան, Հունգարիան, Լեհաստանը եւ Սլովակիան, մինչդեռ Մալթան եւ Կիպրոսը անդամակցող երկրներից եւ ոչ մեկի հետ փոխարացման բավարար մակարդակ չեն ցուցաբերում: Առանձին երկրների կտրվածքով փոխադարձ առևտրի մեծ ծավալներ ունեն Լատ-

վիան, Լիտվան եւ Էստոնիան, ինչը բացատրվում է նրանով, որ այս երկրների տնտեսություններն ինտեգրված էին դեռ ԽՍՀՄ գոյության տարիներից: Այս երկրների միջև առևտուրը հիմնված է համեմատական առավելությունների վրա: Նույնը կարելի է ասել նաև Չեխիայի եւ Սլովակիայի վերաբերյալ: Այս երկրները նույնպես տարիներ շարունակ եղել են միեւնույն տնտեսական տանիքի տակ եւ դրանց տնտեսություններն այնքան սերտաձած են, որ փոխադարձ արտահանման ծավալները մի քանի անգամ գերազանցում են ԿԱՅ մյուս երկրների նույն ցուցանիշները: Ինչ վերաբերում է Սլովենիային, ապա ԿԱՅ 10 երկրների արտահանման ընդհանուր ծավալի 95%-ը բաժին է ընկնում Չեխիային, Լիտվային, Լեհաստանին ու Սլովակիային: Փաստորեն, չնայած առանձին երկրների միջև առևտրի մեծ ծավալներին, կարելի է պնդել, որ մինչև ԵՄ անդամ դառնալը ԿԱՅ 10 երկրները, ընդհանուր առմամբ, չունեին աշխատանքի միջազգային բաժանման եւ համեմատական առավելությունների վրա հիմնված փոխլրացնող առևտրային հոսքեր:

Այժմ դիտարկենք արտահանման ծավալները ԵՄ անդամ դառնալուց հետո:

*Աղյուսակ 2*

**Կենտրոնական եւ Արևելյան Եվրոպայի երկրների փոխադարձ արտահանման ծավալները 2006թ.<sup>2</sup> (մլն եվրո)**

Արտահանող	Չեխիա	Էստոնիա	Կիպրոս	Լատվիա	Լիտվա	Հունգարիա	Մալթա	Լեհաստան	Սլովենիա	Սլովակիա
<i>Ներածող</i>										
Չեխիա	---	29	5	31	91	2.033	17	4.888	439	4.579
Էստոնիա	116	---	1	602	729	94	0	452	17	17
Կիպրոս	27	3	---	14	19	47	3	37	4	32
Լատվիա	168	701	1	---	1.246	85	0	632	19	69
Լիտվա	254	371	2	694	---	160	0	1.310	44	89
Հունգարիա	2.267	139	2	20	44	---	22	2.682	525	2.035
Մալթա	11	1	4	9	2	5	---	12	3	1
Լեհաստան	4.301	92	1	114	684	2.420	8	---	570	2.075
Սլովենիա	386	2	1	3	5	621	0	286	---	289
Սլովակիա	6.379	9	4	12	17	2.320	1	1.845	305	---

Աղյուսակների համադրումից միանգամայն պարզ է դառնում, որ ԿԱՅ երկրների փոխադարձ առևտուրն էապես աճել է ԵՄ անդամակցությունից հետո, ընդ որում՝ այդ աճը վերաբերում է գրեթե բոլոր երկրներին: Բացառություն են կազմում Լատվիա-Սլովենիա (արտահանումը 2000թ. համեմատ 2006-ին նվազել է 50%-ով), Լեհաստան-Կիպրոս

(14,2%), Լեհաստան-Մալթա (24,4%) եւ Սլովենիա-Կիպրոս (20%) արտահանման ծավալները:

Միաժամանակ՝ Լեհաստանից Չեխիա արտահանումը դիտարկվող ժամանակահատվածում աճել է մոտ 4 անգամ, իսկ Չեխիայից Լեհաստան՝ 2,5 անգամ: Հսկայական աճ է գրանցվել նաև Հունգարիա-Չեխիա (299%), Լեհաստան-Հունգարիա (279%), Լեհաստան-Սլովակիա (286%), Հունգարիա-Լեհաստան (269%), Սլովակիա-Լեհաստան (175%), Չեխիա-Սլովակիա (163%) արտաքին առևտրում:

Փաստորեն 10 երկրներից յուրաքանչյուրի համախառն արտահանման ծավալները դիտարկվող ժամանակահատվածում ցուցաբերել են աճի միտում: Ամենամեծ աճը գրանցել են Լատվիան՝ 4,5%, Հունգարիան՝ 4,1%, այնուհետև Էստոնիան եւ Լեհաստանը՝ յուրաքանչյուրը 3,3%: Արտահանման ապրանքային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս<sup>3</sup>, որ գրեթե բոլոր երկրների արտահանման ծավալներում դիտարկվում է արդյունաբերական ապրանքների արտահանման աճ: Միեւնույն ժամանակ՝ արդյունաբերական ապրանքների արտահանման տեսակարար կշիռը համախառն արտահանման մեջ ունի նվազման միտում: Այսպես՝ 2006թ. Լեհաստանի արտահանման կառուցվածքում արդյունաբերական ապրանքների արտահանումը 2002թ. համեմատ աճել է 1,7 անգամ, սակայն տեսակարար կշիռը 41,7%-ից նվազել է մինչև 36,6%: Այդ նվազումը հիմնականում գյուղատնտեսական արտադրանքի եւ մեքենասարքավորումների արտահանման ծավալների աճի հետեւանք է: Դիտարկվող ժամանակահատվածում դրանք համապատասխանաբար աճել են 6%-ից 9%-ի եւ 38%-ից 40%-ի: Նույն միտումը կարելի է նկատել Չեխիայի արտահանման կառուցվածքում. արդյունաբերական ապրանքների տեսակարար կշիռը նվազել է 35,3%-ից մինչև 32,6%, սակայն կտրուկ աճ է նկատվում մեքենասարքավորումների եւ քիմիական արտադրանքի արտահանման ծավալներում՝ դրանք համապատասխանաբար աճել են՝ 2 եւ 1,8 անգամ: Էստոնիան, Լիտվան եւ Լատվիան դիտարկվող բոլոր ապրանքախմբերի առումով ունեն աճի միտում: Սակայն, եթե Էստոնիայի եւ Լատվիայի արտահանման մեջ գերակշռում են արդյունաբերական ապրանքները, ապա Լիտվան աչքի է ընկնում նաև էլեկտրաէներգիայի արտահանման մեծ ծավալներով: Հունգարիայի արտահանման կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ համեմատական առավելություններով օժտված չյուղ է վերամշակող արդյունաբերությունը, քանի որ այդ ապրանքների արտահանման տեսակարար կշիռն ընդհանուր արտահանման մեջ 2006թ. կազմել է 70,7%: Մեծ են նաև այս երկրից գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալները՝ 4,8%:

Բնական է նաև, որ Սլովակիան ու Սլովենիան ունեն միատիպ արտահանման կառուցվածք: Այստեղ մեծ մաս են կազմում մեքենասարքավորումները եւ արդյունաբերական արտադրանքը, իսկ առա-

վել փոքր ծավալներ ունեն գյուղատնտեսական արտադրանքն ու կիսաֆաբրիկատները: Ինչ վերաբերում է Մալթային ու Կիպրոսին, ապա այս երկրները ԿԱՆ մնացած երկրների համեմատ ունեն արտահանման ամենանվազ ծավալները: Իսկ որոշ ապրանքների գծով (էլեկտրաէներգիա եւ կիսաֆաբրիկատներ) արտահանման ծավալները գրեթե զրոյական են: Համեմատական առավելություններով օժտված ճյուղ Կիպրոսի համար կարելի է համարել գյուղատնտեսությունը, իսկ Մալթայի համար՝ արդյունաբերությունը:

Փոխադարձ առևտրի ծավալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ԿԱՆ երկրները ԵՄ անդամակցությունից հետո՝ մի քանի անգամ ավելացնելով իրենց փոխադարձ արտահանման ծավալները, կարողացել են ձեռք բերել փոխլրացման բավարար մակարդակ, որպեսզի դրանց տնտեսությունները կարելի լինի համարել ինտեգրված: Միեւնույն ժամանակ՝ արտահանման ապրանքային կառուցվածքի վերլուծությունը ցույց տվեց, որ արտահանման կառուցվածքում փոքր ծավալ են կազմում միանման ապրանքների հակադարձ հոսքերը, ինչը դրական է ազդում առևտրի ծավալների վրա եւ թույլ է տալիս առևտրային հարաբերությունները կառուցել՝ հենվելով համեմատական առավելությունների վրա:

### ***Կենտրոնական ու Արեւելյան Եվրոպայի երկրների եւ Հայաստանի Հանրապետության փոխադարձ առևտրի վերլուծություն***

Այժմ ուսումնասիրենք ՀՀ եւ ԿԱՆ երկրների արտաքին առևտրի ծավալները, դրանց շարժընթացը եւ կառուցվածքը /Հավելված 1/: Բնականաբար, Հայաստանը եւ ԿԱՆ երկրներն աչքի չեն ընկնում կազմակերպված ու փոխլրացման բավարար մակարդակ ունեցող արտաքին առևտրային հարաբերություններով: Դա կարելի է բացատրել նախ նրանով, որ ԿԱՆ երկրների մեծ մասը ՀՀ-ի նման նախկին սոցիալիստական համակարգի երկրներ են, որոնք մինչ այժմ չունեն արտաքին առևտրի կազմակերպված հոսքեր, եւ երկրորդ՝ ԿԱՆ երկրներն ունեն արտաքին առևտրի այնպիսի գործընկերներ, ինչպիսիք Արեւմտյան Եվրոպայի զարգացած երկրներն են, որոնց հետ առևտուրն ազատ է: Ուստի ներմուծման ենթակա բոլոր հնարավոր ապրանքներն այս երկրները կնախընտրեն ներմուծել հենց Արեւմտյան Եվրոպայից, իսկ ՀՀ-ն՝ արտահանման իր թույլ ներուժով, կարող է ծառայել միայն որպես իրացման նեղ շուկա: Արտաքին առևտրի ծավալների եւ կառուցվածքի մանրակրկիտ ուսումնասիրությունից անմիջապես պարզ է դառնում, որ ՀՀ եւ ԿԱՆ երկրները կարծես «փնտրտուքի» մեջ են: Մի շարք ապրանքներ, որոնք արտահանվել կամ ներմուծվել են 2006թ.-ին (օրինակ՝ «Ձկներ եւ խեցգետնավորներ, մանրաձուկ եւ ծովային այլ անողնաշարավորներ»,

«Կաշի եւ կաշվե հումք» ապրանքախմբերը), 2007թ.-ին ընդհանրապես դադարել են արտահանվել: Կամ հակառակը՝ 2006թ. առանձին երկրների հետ այդ ապրանքների առետուրը բացակայել է, իսկ 2007-ին հասել է մեծ չափերի («Հանքաքար, խարամ եւ մոխիր» ապրանքախումբ): Մախտում է այն մասին, որ դեռ չեն բացահայտվել համեմատական առավելություններով օժտված այն ճյուղերը, որոնց շուրջ առետուրը կարող է լինել կայուն եւ բերել բավարար արդյունքներ:

Հայաստանի եւ ԿԱԵ երկրների առետրին մասնակցում են մոտ 97 ապրանքախմբեր, որոնցից առավել մեծ չափերի են հասնում Հավելվածում ներկայացված 32 ապրանքախմբերը: Ընդ որում, արտահանվող ապրանքների ծավալները մի քանի անգամ ետ են մնում ներմուծման ծավալներից: Այնուամենայնիվ՝ դիտարկելով Հավելվածում բերված 32 ապրանքախմբերի առետուրը, կարելի է փաստել, որ ՀՀ եւ ԿԱԵ երկրների արտաքին առետրում 2006-2007թթ. նկատվում է դրական միտում: Այսպես՝ արտահանման ծավալները մեկ տարվա ընթացքում աճել են մոտ հինգ անգամ՝ 11,6 միլիոնից հասնելով 57,3 միլիոնի: Այս աճը տեղի է ունեցել հիմնականում «Ոգելից եւ ոչ ոգելից ըմպելիքներ եւ քացախ» (10,3%), «Ծխախոտ եւ ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ» (249%), «Ալյումին եւ ալյումինե իրեր» (1600%), «Հանքաքար, խարամ եւ մոխիր» (8600%) ապրանքախմբերի հաշվին: Հատկանշական է նաեւ այն փաստը, որ Բուլղարիա արտահանվող «Հանքաքար, խարամ եւ մոխիր» ապրանքախումբը 2007թ.-ին հասել է 30,1 մլն դոլարի՝ 2006թ. 100 դոլարի դիմաց: Ուստի 2007թ. ԿԱԵ երկրներ արտահանվող ապրանքների աճի 47,4%-ը տեղի է ունեցել հենց այս ապրանքախմբի հաշվին, սակայն այն արտահանվում է 12 երկրներից միայն դեպի Բուլղարիա, Չեխիա եւ Ռումինիա: Արտահանվող ապրանքների շարքում մեծ է նաեւ «Ոգելից եւ ոչ ոգելից ըմպելիքներ եւ քացախ» ապրանքախմբի արտահանման բաժինը, ընդ որում՝ այս ապրանքախումբն այն մի քանիսից է, որի կապակցությամբ արտահանումն ու ներմուծումը հավասարակշռում են: Մակայն, եթե արտահանումը դիտարկվող ժամանակահատվածում աճել է 10,3%, ապա ներմուծումը՝ 200%: Հարկ է նշել նաեւ, որ «Ձկներ եւ խեցգետնավորներ, մանրաձուկ եւ ծովային այլ անողնաշարավորներ» ապրանքախմբի արտահանումը (որը համեմատական առավելություններով օժտված ճյուղ է ՀՀ-ում) 2006թ. ունենալով արտահանման որոշակի ծավալներ, 2007թ. ընդհանրապես չի արտահանվել: Նվազել են նաեւ «Պլաստմասսա եւ պլաստմասսայե իրեր» (86%), «Կաուչուկ, ռետին եւ դրանցից պատրաստված իրեր» (7,6%), «Կաշի եւ կաշվե հումք» (100%), «Փայտ եւ փայտյա իրեր, փայտածուխ» (93,6%), «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից ու նմանատիպ նյութերից» (51,6%) եւ «Մե մետաղներ» (100%) ապրանքախմբերի արտահանման ծավալները:

Ինչ վերաբերում է ԿԱԵ երկրների շրջանակներում հիմնական գործընկերներին, ապա արտահանման առումով առաջին տեղում են

Բուլղարիան, Լեհաստանը եւ Լատվիան: Այսպես՝ 2007թ. դիտարկվող ապրանքների արտահանման 81,7%-ը բաժին է ընկնում Բուլղարիային, 11,5%-ը՝ Լեհաստանին եւ 2,1%-ը՝ Լատվիային: Փաստորեն արտահանման 95,3%-ը բաժին է ընկնում երեք երկրի, իսկ 4,7%-ը մնացած 9 երկրներին: Արտահանման ծավալներով ամենավերջին տեղում են Սլովակիան, Սլովենիան, Մալթան եւ Էստոնիան, որոնց բաժինն ընդհանուր արտահանման մեջ 2007թ. համապատասխանաբար կազմել է 0,001%, 0,007%, 0,02% եւ 0,08%: Աննշան են նաեւ Կիպրոս արտահանման ծավալները՝ 0,17%: Մերձբալթյան երկրներից առետրի առավել մեծ հոսքերը փաստորեն բաժին են ընկնում Լատվիային, իսկ արտահանման ապրանքային կառուցվածքում գերակշռում է ոգելից եւ ոչ ոգելից խմիչքների բաժինը: Երկրորդ տեղում, բնականաբար, Լիտվան է՝ արտահանման 0,16% ցուցանիշով եւ, ինչպես Լատվիայի պարագայում, այս երկիր արտահանվող ապրանքների 98,3%-ը ոգելից եւ ոչ ոգելից խմիչքներն են: Ուշագրավ է նաեւ այն հանգամանքը, որ Հունգարիայից Հայաստանը ներմուծում է դիտարկվող 32 ապրանքախմբերից 14-ը, իսկ արտահանում է միայն «Կաուչուկ, ռետին եւ դրանցից պատրաստված իրեր» ապրանքախումբը, սակայն նույնիսկ միայն այդ ապրանքախմբով ՀՀ արտահանման կառուցվածքում Հունգարիայի բաժինը կազմում է 0,9%: Եվ չնայած նրան, որ Ռումինիայից ներմուծումը մի քանի անգամ գերազանցում է արտահանմանը, այնուամենայնիվ, արտահանումը Ռումինիա կազմում է ընդհանուր արտահանման 1,2%-ը: Հարկ է նշել նաեւ, որ ԿԱՅ երկրների շրջանակներում առետրի ամենամեծ ծավալները գրանցել են Չեխիան, Հունգարիան, Լեհաստանը եւ Սլովակիան: Այս երկրների հետ բավականին ակտիվ է նաեւ ՀՀ առետուրը: Իսկ Կիպրոսը եւ Մալթան, որոնք ակտիվ առետրային հարաբերություններով աչքի չեն ընկնում նույնիսկ ԵՄ շրջանակներում, ընդգծված թույլ առետրային կապեր ունեն նաեւ ՀՀ-ի հետ:

Այսպիսով՝ կարելի է աղյուսակի միջոցով ներկայացնել ԿԱՅ երկրներից յուրաքանչյուրի տեղը եւ տեսակարար կշիռը ՀՀ արտահանման կառուցվածքում:

ԿԱՅ երկրներից ներմուծումը ՀՀ ավելի հարուստ է թե՛ն ապրանքային կառուցվածքով եւ թե՛ն ծավալային առումով: Նախ պետք է նշել, որ 2007թ. ներմուծման ծավալները 2006թ. համեմատ աճել են 63,1%-ով: Սույն աճը տեղի է ունեցել հիմնականում «Ալրադացային, ձավարեղեն արտադրանք» (288%), «Շաքար եւ հրուշակեղեն շաքարից» (132%), «Բանջարեղենի, պտուղների եւ բույսերի մասերի վերամշակումից մթերք» (26%), «Ոգելից եւ ոչ ոգելից խմիչքներ» (203%), «Հանքային վառելանյութեր, նավթ եւ նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր» (86,8%), «Դեղագործական արտադրանք» (26%) «Պլաստմասսա եւ պլաստմասսայե իրեր» (45,6%), «Փայտ եւ փայտյա իրեր, փայտածուխ» (93,8%) ապրանքախմբերի հաշվին:

ԿԱՆ երկրների հետ ՀՀ արտահանման տեսակարար կշիռը (տոկոսներով)<sup>4</sup>

Երկրի տեղը	Երկիրը	Արտահանման կառուցվածքում երկրի տեսակարար կշիռը
1	Բուլղարիա	81.7%
2	Լեհաստան	11.5%
3	Լատվիա	2.1%
4	Չեխիա	1.9%
5	Ռումինիա	1.2%
6	Հունգարիա	0.9%
7	Կիպրոս	0.17%
8	Լիտվա	0.16%
9	Էստոնիա	0.08%
10	Մալթա	0.02 %
11	Սլովենիա	0.007 %
12	Սլովակիա	0.001 %

Ներմուծման առումով հիմնական գործընկերներն են Բուլղարիան, որին բաժին է ընկնում ներմուծման 43,6%-ը, Ռումինիան՝ 35,9% եւ Հունգարիան՝ 9,5% ցուցանիշներով: Բուլղարիայից ներմուծման 76,1%-ը բաժին է ընկնում «Հանքային վառելանյութեր, նավթ եւ նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր» ապրանքախմբին, որի բաժինը 2006թ. համեմատ 2007-ին աճել է 193,8%-ով: Մեծ է նաեւ «Ապակի եւ ապակյա իրեր» ու «Պլաստմասսա եւ պլաստմասսայե իրեր» ապրանքախմբերի բաժինները՝ 5,5% եւ 5,2%: Ռումինիայից եւ Հունգարիայից ներմուծման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունի «Էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, ձայնագրող ապարատներ եւ դրանց մասեր» ապրանքախումբը՝ 5,2% եւ 61,3% ցուցանիշներով: Սակայն, եթե այս ապրանքախմբի ներմուծման ծավալները Բուլղարիայից ու Ռումինիայից 2006թ. համեմատ 2007-ին նվազել են համապատասխանաբար 52,6% եւ 45,6%-ով, ապա Հունգարիային դրանց ներմուծումը դիտարկվող ժամանակահատվածում ավելացել է 45 անգամ: Ներմուծման ծավալները չնչին են Մալթայից՝ 0,01%, Լատվիայից՝ 0,12% եւ Լիտվայից՝ 0,16%: Հարկ է նշել, որ մերձբալթյան երկրներից 2007թ. ներմուծման ծավալները կրճատվել են: Այսպես, Լատվիայից՝ 115%-ով, Լիտվայից՝ 25%-ով, իսկ Էստոնիայից՝ 78,2%-ով: Ընդ որում, եթե այս երեք երկրներից արտահանման առումով առաջին տեղում Լատվիան էր, ապա ներմուծման տեսանկյունից առաջինը Էստոնիան է՝ 0,3% ցուցանիշով: Միեւնույն ժամանակ՝ եթե Սլովակիան ու Սլովենիան արտահանման գործընկերների շարքում վերջին տեղում էին, ապա ներմուծման առումով դրանք առաջ են անցնում մերձբալթյան երկրներից ԿԱՆ-ից՝ հա-

ՀՀ-ն կենտրոնական ու կրկնյան եվրոպայի երկրների միջև արտադրային արտահանման հարաբերակցությունը 2007-ին

մախառն ներմուծման մեջ ունենալով համապատասխանաբար 0,6% եւ 1,89% ցուցանիշներ: Սլովենիայից ներմուծման մեջ ամենամեծ բաժինը «Դեղագործական արտադրանք» ապրանքախմբինն է՝ 80,2%, իսկ Սլովակիայից ներմուծման մեջ՝ «Փայտ եւ փայտից իրեր, փայտածուխ» ապրանքախմբինը՝ 47,6% ցուցանիշով:

Հատկանշական է, որ ներմուծումը Կիպրոսից ծավալային առումով մի փոքր գերազանցում է Չեխիայից ներմուծմանը, սակայն համախառն առետրում իրենց ունեցած տեսակարար կշռով դրանք գրեթե հավասարակշռում են՝ համապատասխանաբար կազմելով 1,95% եւ 1,94%: Հարկ է նաեւ նշել, որ թե՛ Կիպրոսից եւ թե՛ Չեխիայից ներմուծումը 2007-ին՝ 2006թ. համեմատ, աճել է, սակայն եթե Չեխիայից ներմուծումն աճել է 38%, ապա Կիպրոսից՝ 21 անգամ, մասնավորապես՝ «Հանքային վառելանյութեր, նավթ եւ նավթամթերք, բիտումային միջոցներ, մոնա-նյութեր» ապրանքախմբի հաշվին:

Կազմելով ներմուծման գործընկերների աղյուսակը, որը ցույց կտա ԿԱԵ երկրներից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը եւ տեղը ներմուծման մեջ, հնարավոր կլինի փաստել, որ ՀՀ գործընկերներն արտահանման եւ ներմուծման կառուցվածքում զբաղեցնում են միանգամայն տարբեր տեղեր: Բացառություն է կազմում միայն Բուլղարիան, որը երկու դեպքում էլ զբաղեցնում է պատվավոր առաջին տեղը:

**Աղյուսակ 4**

**ԿԱԵ երկրների հետ ՀՀ ներմուծման տեսակարար կշիռը (տոկոսներով)<sup>5</sup>**

Երկրի տեղը	Երկիրը	Արտահանման կառուցվածքում երկրի տեսակարար կշիռը
1	Բուլղարիա	43.6%
2	Ռումինիա	35.9%
3	Հունգարիա	9.5%
4	Լեհաստան	3.5%
5	Կիպրոս	1.95%
6	Չեխիա	1.94%
7	Սլովենիա	1.89%
8	Սլովակիա	0.6%
9	Էստոնիա	0.3%
10	Լիտվա	0.16%
11	Լատվիա	0.12%
12	Մալթա	0.01%

Այսպիսով՝ ՀՀ եւ ԿԱԵ արտաքին առետրային շրջանառության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ եվրոպական առետրին մեր երկրի մասնակցության չափերը կախված են ներքին շուկայի ապրան-

քայլին հազեցվածության մակարդակից: Ներմուծման հաշվին ներքին շուկայի պահանջների բավարարումը տանում է արտաքին աշխարհից կախվածության մեծացման, որն ի վերջո սպառնում է երկրի տնտեսական անվտանգությանը: Ներմուծման փոխարինման քաղաքականության արմատավորումն ու արտահանման խթանումը համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխանող ապրանքների առաջարկի ձեւավորման ճանապարհով` ՀՀ տնտեսական աճի եւ ԵՄ-ին առավելագույնս արդյունավետ սերտաձելու նախընտրելի ուղին է: Սակայն առանց էական պետական աջակցության այսօրվա պայմաններում ՀՀ-ից արտահանումը ԿԱԵ՝ թե՛ իր ծավալներով եւ թե՛ կառուցվածքով ոչ միայն չի կարող բավարարել այդ երկրների հետ փոխշահավետ համագործակցության զարգացման պահանջները, այլեւ տեղի կունենա ներմուծման վճարման համար անհրաժեշտ արտարժուրթային միջոցների շարունակական արտահոսք: Ուստի միայն արտադրական հզորությունների ամբողջական օգտագործումը կտանի ցանկացած երկրի արտահանման ներուժի զգալի մեծացման, ինչի արդյունքում կավելանան ներմուծումը վճարելու համար անհրաժեշտ արտարժուրթային մուտքերը: Այդ տեսանկյունից ՀՀ տնտեսական աճի ապահովման համար ավելի նախընտրելի է ավելացված մեծ արժեք պարունակող արտադրությունների զարգացումը:

ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականության նախաձեռնությունների ընտրության ժամանակ պետք է խելամտորեն հաշվի առնել ոչ միայն դրա տնտեսական, այլև աշխարհաքաղաքական կողմը, որն իր մեջ ներառում է քաղաքական շահերի առկայությունը, տրանսպորտային կառուցվածքի զարգացումը, ընդհանուր քաղաքական գործոնները եւ այլն: Ի՞նչ կարող է տալ մեզ Եվրամիություն-Հայաստան տնտեսական հարաբերությունների զարգացումը եւ այժմ ի՞նչ փուլում է գտնվում այն, ի՞նչ խոչընդոտող կամ խթանող գործոններ կան այս ճանապարհին: Այս խնդիրը վերջին տասնամյակում դարձել է մի շարք մասնագետների ուսումնասիրության առարկա, որը կապված է ինչպես մեր տարածաշրջանում եւ, մասնավորապես, ՀՀ-ում այսօր տեղի ունեցող տնտեսական-քաղաքական նոր գործընթացների եւ նոր իրողությունների, այնպես էլ համաշխարհային բեմահարթակում Եվրամիության դերի եւ ազդեցության մեծացման հետ:

**Հայաստանի Հանրապետության եւ Եվրամիության երկրների առևտրային հարաբերությունների հիմնական օրինաչափություններն ու խոչընդոտները**

Հայաստան-Եվրամիություն տնտեսական հարաբերությունների հաստատումն ու ամրապնդումը, ինտեգրման գործընթացների զարգացումն առաջնային կարեւորություն ունեն, եւ մոտ ապագայում կմնան

համաշխարհային տնտեսության մեջ ՀՀ-ի ներգրավման հիմնական ուղ-  
The key to defeating the power of the oligarchs is to attack the economic monopolies and cartels that comprise the oligarchic system by introducing greater competition and law-based enforcement, regulation and supervision. Generally, such cartels and monopolies flourish within “closed” economies, averting the transparency and competition that dominate the more open marketplace. But in addition to the need for greater anti-trust legislation and stronger state regulatory bodies empowered to limit or breakup monopolies, it is the rule of law and political will that is needed to overcome this “cronyism.”


Thus, the closed nature of the Armenian political system, utilized by a new dual clan-based and oligarchic elite, has significantly eroded the state’s most important asset—legitimacy. This has also been matched by a steady decline in “good governance,” with a tendency for both public policy and national security formulated by self-interest over national interest. Thus, one can only hope that the combination of new opportunities and challenges will serve as “agents of change” to force open and reform the overly restrictive and rigid political and economic systems that have become so entrenched as to deny the legitimacy, political will and efficacy so necessary to move the country forward.

## Endnotes

1. The embargo and related sanctions of Armenia by Azerbaijan and Turkey meet the minimum threshold of the most current interpretation of the term “blockade” under international law, which notes the applicability of blockade on both sea and land by citing “the actual investment of a port or place by a hostile force....”
2. Robertson, Horace, “Specific Means and Methods of Application of Force,” *Duke Journal of Comparative and International Law*, Vol. 1 No. 1, 1991.
3. Republic of Turkey government declaration, 3 April 1993; cited in Gültekin, Burcu, “The Stakes of the Opening of Turkish-Armenian Border,” *Turkish-Armenian Business Development Council* (TABDC), October 2002, P.2.
4. Polyakov, Evgeny, *Changing Trade Patterns after Conflict resolution in the South Caucasus*, World Bank, 2000.
5. Polyakov (2000).
6. Armenian-European Policy and Legal Advice Centre (AEPLAC), *Study of the Economic Impact on the Armenian Economy from Re-Opening of the Turkish-Armenian Borders. Implications for External Trade*, Yerevan, Armenia, 2005.
7. Ibid, P.4.
8. Ibid, P. 4.
9. Ibid, P. 6.
10. Ibid, P. 8.
11. Ibid, P. 9.
12. Ibid, P. 5.
13. Gültekin (October 2002), P.11.
14. Polyakov ( 2000), P. 15.
15. Interview with senior Russian diplomat in Armenia.
16. Ibid.
17. Armenian-European Policy and Legal Advice Centre (AEPLAC), *Study of the Economic Impact on the Armenian Economy from Re-Opening of the Turkish-Armenian Borders. Implications for External Trade*, Yerevan, Armenia, 2005.
18. Interview with leading Armenia-based business executive.
19. “Aftereffects of Open Border with Turkey Discussed,” *Armenpress News Agency*, 30 September 2004; Markarian, Atom, “Transport Minister Hopes for Open Border with Turkey,” *RFE/RL Armenia Report*, 4 February 2004.
20. Yeghiazarian, Ashot, “Prospects of Armenian-Turkish Economic Relations,” *Yerkir Online*, 18 July 2003; Interview with Tatul Manasarian.
21. Interview with Tatul Manasarian.
22. Armenian-European Policy and Legal Advice Centre (AEPLAC), *Study of the Economic Impact on the Armenian Economy from Re-Opening of the Turkish-Armenian Borders. Implications for External Trade*, Yerevan, Armenia, 2005, P. 10.
23. Ibid, P. 10.
24. Giragosian, Richard, “Armenia: Turkish Businessman Pessimistic About Open Border,” *Radio Free Europe/Radio Liberty* (RFE/RL) Feature, 18 January 2007.
25. Giragosian, Richard, “Turkish Military Seeks Armenian Détente,” *Jane’s Islamic Affairs Analyst*, 12 February 2007; interview with senior US military Pentagon planner, via email, January 2009.



**ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.  
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
FOREIGN POLICY CHALLENGES AND  
POSSIBILITIES**



## Ռիչարդ Կիրակոսյան

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն

### ՏԱՐԱԾԱԶՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՆՏԱԿՆԳՈՒԹՅՈՒՆԸ

#### Իրավիճակային նկարագիրը

Հարավային Կովկասի տարածաշրջանը երկար ժամանակ մրցասպարեզ է եղել տարածաշրջանային մրցակցող ուժերի համար: Անցած երկու դարերի ընթացքում այն մեծ մասամբ հանդիսացել է տարածաշրջանային շատ ավելի խոշոր ուժերի, մրցակցային հետաքրքրությունների պատանդ, քանի որ հարեւան Ռուսաստանը, Թուրքիան եւ Իրանը ամեն գնով իշխանության ու ազդեցության են ձգտել: Եվ հենց այդ նույն պատմական ուժերը՝ Ռուսաստանը, Թուրքիան եւ Իրանը, այսօր էլ շարունակում են ազդել որպես տարածաշրջանի գերիշխող դերակատարներ:

Այս մրցակցությունը ոչ միայն շարունակվեց Խորհրդային Միության փլուզումից հետո, այլև խորացավ էներգակիրների հետ կապված նոր շահերի ազդեցությամբ: Տարածաշրջանի երեք երիտասարդ պետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի համար քաղաքական լեգիտիմության, փխրուն տնտեսությունների եւ մի քանի չլուծված կամ «սառեցված» հակամարտությունների համակցությունը նրանց ետ պահեց իրենց հարեւան, առավել խոշոր տարածաշրջանային ուժերի հզոր ազդեցությանը դիմակայելուց:

Սակայն, ինչն առավել նշանակալից է, պատմական ժառանգության եւ արդի իրողությունների համակցությունը տարածաշրջանային անվտանգության մեջ կտրուկ փոփոխությունների է հանգեցրել: Անվտանգության ասպարեզում այս փոփոխությունները ոչ միայն ընդհանուր տարրեր են ներառում, որոնք տարածվում են էներգետիկ անվտանգության մարտահրավերներից մինչև չլուծված «սառեցված» հակամարտություններից բխող ճնշումներ, այլ նաև յուրահատուկ միտումներ՝ ներառյալ վերջին ժամանակներս Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջև լարվածության սրման նոր ալիքը:

Անվտանգության ասպարեզում դիմամիկ փոփոխությունների խորապատկերին Հարավային Կովկասի տարածաշրջանի երեք պետություններից յուրաքանչյուրը բախվեց տնտեսական եւ քաղաքական բարեփոխումների, համակարգային անցման եւ պետության կառուցման բարդ գործընթացին: Տարածաշրջանը շարունակեց պայքարել

նաեւ խորհրդային իշխանության յոթանասուն տարիներից ժառանգած ճնշումները եւ դրանցից բխող մարտահրավերները հաղթահարելու համար:

Տարածաշրջանային այս իրողությունների համատեքստում պետություններից յուրաքանչյուրը տարբեր ուղղություններով ընթացավ: Հայաստանը, որը, սակայն, հաստատուն կերպով արմատավորվել է ռուսական ուղեծրում, սատարվում է աշխարհասփյուռ հայության կողմից: Ադրբեջանն օգտագործում է կասպիական պաշարամիջոցները եւ Թուրքիայի հետ պատմական կապերի լծակները: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա 1990-ականների ավերիչ քաղաքացիական պատերազմի ժառանգությունը, ինչպես նաեւ անջատողական շրջանների՝ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի կորուստը, հուշեցին Վրաստանին փոխել ռազմավարական կողմնորոշումը, այն է՝ իր հիմնական «տարանցիկ պետության» դերի շահարկումը, երկրի տարածքը եւ սեւծովյան նավահանգիստները՝ որպես տարածաշրջանային էներգետիկ կենսական շղթա առաջարկելը (ներառյալ Ադրբեջանին ռազմավարական կապեր տրամադրելը ինչպես Սեւ Ծովի, այնպես էլ Թուրքիայի հետ) եւ որպես Արեւմուտքի դաշնակից հանդես գալը:

Սակայն խոշոր տերությունների միջեւ վերջերս տեղի ունեցած շահերի բախումը սպառնում է տարածաշրջանը, ավելի քան մյուսները, վերածել առձակատման թատերաբեմի: Դա ակնհայտ դարձավ 2008թ. Վրաստանի եւ Ռուսաստանի օգոստոսյան հակամարտության ժամանակ, որը, դուրս գալով Հարավային Կովկասի սահմաններից, առձակատման նոր ժամանակաշրջանի խթան հանդիսացավ:

### ***Վրաստանյան հակամարտությունը***

Չնայած այն հանգամանքին, որ Վրաստանում հակամարտությունն ի սկզբանե կենտրոնացած էր անջատողական Հարավային Օսիայում, սակայն վրացական ձգնաժամն արագորեն տարածվելով՝ նոր լարվածություն առաջացրեց Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջեւ եւ լրջորեն վնասեց Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու երկար փայփայած ձգտումներին: Վրացական հակամարտության կողմնակի արդյունքը հավասարապես լուրջ էր, լի Վրաստանի նոր ձեւավորվող արեւմտամետ ժողովրդավարական կառավարության նկատմամբ ԱՄՆ-ի նվիրվածության նոր կասկածներով: Սակայն, ինչն էլ ավելի անհանգստացնող է, ձգնաժամը նաեւ ի հայտ բերեց ռազմավարական առումով մեծ նշանակություն ունեցող Հարավային Կովկասի տարածաշրջանին բնորոշ անվտանգության եւ կայունության դյուրաբեկությունը:

Չնայած Վրաստանի կարեւորությունը զգալիորեն աճեց, այսպես կոչված, «վարդերի հեղափոխությունից» հետո, որն իշխանության բերեց նոր, արեւմտամետ եւ ժողովրդավարության առումով ռեֆորմիստ

կառավարություն, սակայն Վրաստանի նախագահ Միխեիլ Սահակաշվիլին լուրջ անհաջողություն ունեցավ երկրի անջատողական Հարավային Օսիայի շրջանը Վրաստանի կենտրոնական կառավարության վերահսկողության տակ վերադարձնելու խոստումը կատարելու հաշվարկներում: Օգոստոսյան հակամարտության հետեւանքները ոչ միայն թուլացրին նրա անձնական իշխանությունը, այլև խարխլեցին երկրի՝ որպես ՆԱՏՕ-ին անդամակցության հիմնական հավակնորդի դիրքերը:

Հայաստանի համար Վրաստանի օգոստոսյան հակամարտության անմիջական հետեւանքները լուրջ էին: Երկիրը մոտ \$70 մլն-ի տնտեսական վնաս էւ կորուստներ կրեց: Վրաստանի տրանսպորտային ճանապարհների փակման հետեւանքով հինգ օրվա ընթացքում հանրապետության ամբողջ տարածքում բենզինի պակաս արձանագրվեց: Ինչ վերաբերում է Հայաստանի ազգային անվտանգությանը, հակամարտությունը կրկին հաստատեց Վրաստանից՝ որպես հիմնական առետրային եւ տրանսպորտային ուղուց, Հայաստանի կախվածության խոցելիությունը, ինչպես նաեւ էներգետիկ անվտանգության նոր ռազմավարական քաղաքականության անհրաժեշտությունը: Էներգետիկ անվտանգության առումով բենզինի համապետական մակարդակի ճգնաժամի ակնհայտ եւ անմիջական ազդեցությունն ընդգծեց Հայաստանի համապատասխան էներգետիկ պաշարներ չունենալու փաստի վտանգավորությունը:

### *Տարածաշրջանային նոր «ձգողականության կենտրոնի» որոնում*

Առավել լայն համատեքստում Ռուսաստանի հետ Վրաստանի հակամարտությունն Արեւմուտքի համար Վրաստանի տարածաշրջանային «ձգողականության կենտրոն» հանդիսանալու նախկին դերի հանդեպ նոր կասկածների տեղիք տվեց: Նախքան հակամարտությունը Վրաստանը Արեւմտյան անվտանգության քաղաքականության կիզակետ հանդիսանալու եզակի առավելություն ուներ: Սահակաշվիլու կառավարության համար Վրաստանի ապագան միանշանակ Արեւմուտքի հետ էր՝ արտացոլելով այն ռազմավարական տեսլականը, որը ՆԱՏՕ-ին եւ Եվրոպական միությանն անդամակցությունը դիտարկում էր որպես հզորացող Ռուսաստանին սահմանակից առաջին գծի պետության արտաքին անվտանգության հիմնական երաշխիք:

Ավելին՝ ակնհայտ արեւմտամետությունը դիտարկվում է որպես պետական ինքնիշխանության եւ ամբողջականության լուրջ քայքայվածությունը հաղթահարելու եւ դրան դիմակայելու ամենաարդյունավետ միջոց: Այս նոր կողմնորոշումը կարեւոր անմիջական օգուտներ է ստեղծում՝ ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի հետ ռազմական կապերը խորացնելուց սկսած մինչեւ կապիտալի ու ներդրումների ներհոսք, քանի որ

վրացական կառավարությունն ազատականացրել է տնտեսությունը եւ նոր հակակոռուպցիոն արշավ նախաձեռնել:

Դեպի Արեւմուտք այս հանդուգն կողմնորոշումը հնարավորություն ընձեռեց Վրաստանին, հիմնական տարանցիկ պետություն լինելու դերից բացի, հավակնել նաեւ Հարավային Կովկասում Արեւմուտքի նոր «ձգողականության կենտրոնի» դերին: Այս դերն ամենից ավելի ակնառու երեսաց ԱՄՆ-ի կողմից իրականացվող \$64 մլն արժողության «Վրաստան. վարժանք եւ սպառազինում ծրագրում» (ՎՎՄԾ) («Georgia Train and Equip Program» - GTEP) եւ դրան հաջորդող «Օժանդակության եւ կայունության գործողությունների ծրագրում» (ՕԳԿԾ) («Sustainment and Stability Operations Program» - SSOP), որոնցից յուրաքանչյուրը Վրաստանը դիտում էր որպէս տարածաշրջանում ԱՄՆ ռազմական գործողությունների եւ շահերի դրոշակակրի (անգամ գերազանցվեցին ԱՄՆ-ի կողմից Կասպից ծովում Ադրբեջանի զինուժի հետ անցկացված վարժանքները): Սակայն այս ամենը նպաստեց նաեւ այն բանին, որ Վրաստանը չափից ավելի ինքնավստահ դառնա, չնայած այն իրողությանը, որ ԱՄՆ ռազմական ծրագրերից եւ ոչ մեկը երբեք նպատակ չէր ունեցել Վրաստանի զինված ուժերին որեւէ իրական ռազմական պատրաստականություն կամ հարձակողական կարողություն տրամադրել:

Այսինքն՝ վարժանքի եւ սպառազինման ծրագիրն իրականում նախագծված էր որպէս ճկուն, փուլային ուսուցման նախաձեռնություն, եւ ընդամենը ուսուցում ու հանդերձանք էր տրամադրել երեք հազարից պակաս զորքի՝ նպատակ ունենալով նրանց ապահովել սահմանափակ հակահարեկչական կարողություններով: Նույն կերպ էլ ԱՄՆ-ի կողմից իրականացվող «Օժանդակության եւ կայունության գործողությունների ծրագիրը» ընդամենը նպատակ ունէր ընտրված վրացական միավորումները պատրաստել Իրաքում տեղակայելու համար, որպէսզի վերջիններս օգնեն ԱՄՆ-ի «Իրաքի ազատագրման գործողության» (ԻԱԳ) իրականացմանը (Operation Iraqi Freedom - OIF):

Սակայն Վրաստանին ապավինելու նոր կասկածները խթանեցին նաեւ Հարավային Կովկասում տարածաշրջանային «նոր ձգողականության կենտրոն» գտնելու որոնումները: Վրացական ղեկավարության հանդեպ Արեւմուտքի դժգոհությունները, թեւէ դրանց մի մասը սկսվել էր օգոստոսյան հակամարտությունից դեռեւս շատ առաջ, գազաթնակետին հասան այն բանից հետո, երբ Վրաստանի ղեկավարներն անտեսեցին Արեւմուտքի նախազգուշացումներն ու անհանգստությունը եւ շարունակեցին հակադրվել Ռուսաստանին:

Չնայած Վրաստանի արեւմտամետ կողմնորոշումը հայտարարվել էր Արեւմուտքի հաջողություն, սակայն գոյություն ունեին որոշակի սահմաններ, թե, այնուամենայնիվ, հատկապէս որքան հեռու եւ որքան արագ կարող է առաջ մղվել Վրաստանը: Այս սահմանները բխում էին ռուսական իշխանության հաստատուն պնդումներից եւ ազդեցությանը

դիմադրելու Վրաստանի սահմանափակ հնարավորություններից, ինչը հատկապես ակնառու երեսաց այն ժամանակ, երբ Մոսկվան խորհրդային ժամանակաշրջանի ռազմակայանները Վրաստանի տարածքից դժկամությամբ դուրս բերելուց հետո, դիմեց էներգետիկ եւ առետրային պատժամիջոցների կիրառմանը:

Սակայն Վրաստանի՝ ՆԱՏՕ-ի եւ ԵՄ-ի անդամ դառնալու հեռահար նպատակի երկրորդ էական սահմանափակումը Վրաստանի հանդեպ Արեւմուտքի պարտավորությունների չափն ու շրջանակներն էին: Չնայած վրացական կառավարությանը խոսքերով սատարելու փաստին, Արեւմուտքը երկար ժամանակ ձեռնպահ էր մնում Վրաստանի այն գործողությունները քաջալերելուց, որոնք Ռուսաստանի դեմ ուղղակի առձակատման կտանեին, եւ նույնիսկ առավել անհանգստացած էին Վրաստանի կողմից իր անջատողական շրջաններն ուժով գրավելու վտանգից:

### *Անօգնակասության ուռձացում*

Այս սահմանափակումների հենքին, հասկանալի է, Վրաստանի ղեկավարությունն օգոստոսյան ճգնաժամի նախօրեին լրջորեն սխալվել էր իր հաշվարկներում: Ամառվա ընթացքում մի շարք սադրանքներից հետո (հատուկեմտ հրետանային եւ ականանետային հրետակոծություններ, վրացական անօդաչու ինքնաթիռների կործանում) Վրաստանի ղեկավարությունը զինված հարձակում սկսեց Հարավային Օսիայի անջատողական շրջանի դեմ: Չնայած հակամարտության սկզբի զարգացումներին վերաբերող ստույգ ժամանակագրական տեղեկությունները կասկածելի մնացին, սակայն արդարացի կլինի եզրակացնել, որ Վրաստանի ռազմական ստրատեգիան էականորեն սխալ էր ինչպես ռուսական հակահարվածի վերաբերյալ նախնական սխալ հաշվարկի, այնպես էլ սեփական ռազմական հնարավորությունները գերազնահատելու առումով:

Եվ որ ավելի կարեւոր է, եթե Վրաստանի հարձակումը կարող էր արդյունավետ լինել Հարավային Օսիայի փոքրիկ թատերաբեմում, ապա այն ի սկզբանե ձախողման էր դատապարտված Ռուսաստանի ռազմական մեքենայի ողջ ուժին բախվելու պարագայում: Հակամարտության ընթացքում, երբ ռուսաստանյան զինուժը լայնածավալ հակահարված սկսեց ցամաքում, օդում եւ ջրում, Վրաստանի ղեկավարությունը մեծապես սխալվեց նաեւ Արեւմուտքի կողմից Վրաստանին օժանդակելու համար որպես միջնորդ հանդես գալու կամ գործընթացներին միջամտելու կարողության եւ պարտավորությունների հարցում:

Եթե քաղաքական տեսանկյունից Հարավային Օսիայի դեմ դուրս գալու որոշումն արտացոլում էր նախագահ Սահակաշվիլու՝ երկրի տարածքային ամբողջականությունը վերականգնելու հետեւողական

սպառնալիքները, սպա ԱՄՆ ուսուցանած եւ սպառնալիքները վրացական գործերի հարձակումն առաջին փորձությունն էր: Այս երկուսն էլ Արեւմուտքի համար հին եւ վատթարագույն դիպաշարեր էին: Սակայն, առավել լայն առումով, Վրաստանի ոչ ճիշտ հաշվարկները ռազմավարական կոպիտ սխալի վերածողը Ռուսաստանն էր, որը հմտորեն կարողացավ հակամարտությունն օգտագործել որպէս Վրաստանի արմատական արեւմտամետ կողմնորոշումը ստուգելու եւ դրան մարտահրավեր նետելու միջոց:

Խորհրդային գործերի՝ Աֆղանստան ներխուժումից ի վեր Ռուսաստանի սահմաններից դուրս այս առաջին ռազմական գործողությանը ռուսական պատասխանը սրընթաց էր եւ անդիմակայելի: Ռուսաստանի համար Վրաստանի ռազմավարական կոպիտ սխալն առավել լայն հնարավորություն էր, քան Հարավային Օսիան, քանի որ ռուսական ուժերն արագ շարժվեցին երկրի երկրորդ անջատողական հանրապետությանը՝ Աբխազիային սատարելու եւ ուժեղացնելու ուղղությամբ: Գերազանց իրականացնելով Հարավային Օսիայի եւ Աբխազիայի ապահովման նպատակները՝ ռուսական ուժերը հետ մղեցին ու պարտության մատնեցին վրացական զինուժին եւ Վրաստանի տարածքում անվտանգության արտաքին գոտի ստեղծեցին:

Ռուսաստանի երկրորդ կարեւորագույն նպատակը Վրաստանի հիմնական ռազմական կարողությունների ոչնչացումն էր՝ թիրախ դարձնելով որքան հնարավոր է շատ ռազմական սարքավորումներ, ռմբակոծելով վրացական ռազմական կարողություններն ու ռազմահանգրվանները, նույնիսկ նրանք, որոնք մարտական գործողություններում ներգրավված չէին: Երկրի ռազմական ենթակառուցվածքի հաջող ոչնչացումը, բացի Վրաստանի կողմից Աբխազիան եւ Հարավային Օսիան կորցնելուց, ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցելու ռազմավարական ձգտման հետաձգման ամենանշանակալի պատճառը հանդիսացավ:

Վրացական զինված ուժերի քայքայման չափերը, ի հավելումն լուրջ քաղաքական կարծիքների, նոր ֆինանսական արգելք հանդիսացան ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցության հարցում: Առավել լայն առումով հակամարտության հետեւանքները նաեւ լուրջ հարցականի տակ դրեցին Վրաստանի՝ որպէս տարածաշրջանի էներգետիկ միջոցների ապահով տարանցիկ երկրի, ինչպէս նաեւ տարածաշրջանային «ձգողականության կենտրոն» լինելու դերն Արեւմուտքի համար:

Հայաստանի համար Արեւմուտքի նոր առաջապահի կամ «ձգողականության կենտրոնի» որոնման վտանգն այն է, որ առկա է Ադրբեջանի նկատմամբ նոր ուշադրության ավելացում: Ադրբեջանն Արեւմուտքի անվտանգության շահերի տարածաշրջանային կենտրոն օգտագործելու այս նոր գնահատականը բխում է երեք հիմնական գործոններից: Առաջին. Իրանին սահմանակից լինելու փաստը շարունակում է գրավել

Արեւմուտքի ուշադրությունը, հատկապես այն պատճառով, որ Իրանի հետ գործ ունենալու հեռահար նպատակը կարող է որոշակի կետում ներառել ռազմական տարբերակ՝ Ադրբեջանը ցանկացած այսպիսի գործողությունների բեմահարթակ դարձնելով:

Երկրորդ. Արեւմուտքի եւ Ռուսաստանի միջեւ նոր լարվածությունն առկա է Կասպից ծովում Ադրբեջանի ռազմածովային հնարավորությունները Կասպիական ավազանում օֆշորային էներգետիկ միջոցների պլատֆորմների ապահովության, Ռուսաստանի եւ Իրանի ռազմածովային ուժերին դիմակայելու կարողությունը խթանելու պատրվակով:

Երրորդ. առկա է նաեւ Արեւմուտքի կողմից Ադրբեջանը որպէս Կենտրոնական Ասիա տանող հարթակ օգտագործելու շահագրգռվածությունը, ինչպէս նաեւ Ադրբեջանի օդային տարածքը որպէս Կենտրոնական Ասիայում տեղակայված արեւմտյան հենակայաններին հասնելու օդային միջանցք օգտագործելու շարունակական հոյսը, ինչը կենսական է Աֆղանստանում գործողություններ իրականացնելու համար. սա հատկապես կարեւոր է Պակիստանը որպէս Արեւմուտքի ահաբեկչության դեմ գլոբալ պայքարի հիմնական գործընկեր կորցնելուց հետո:

### *Քարտեզի վերաշեւավորում*

Ռուս-վրացական պատերազմական գործողությունների հետեւանքով առաջացած ավերածություններից զատ, օգոստոսյան ճգնաժամի ամենանշանակալի արդյունքը, մեծ հաշվով, տարածաշրջանի վրա ունեցած նրա ազդեցությունն էր: Վրացական ճգնաժամը Ռուսաստանին հնարավորություն ընձեռեց տարածաշրջանում իր իշխանությունը վերահաստատելու եւ դրա լծակներն օգտագործելու համար: Հնարավորություն, որն ըստ էության նպատակաուղղված էր Հարավային Կովկասի քարտեզի վերաձեւավորմանը եւ տարածաշրջանի ռազմավարական լանդշաֆտի պարամետրերի վերազմանը:

Ռուսական հեռանկարի տեսանկյունից տարածաշրջանային նոր իրողությունը նշանավորվում է երեք որոշակի ձեռքբերումներով. առաջին, Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի ընդլայնման ավարտ առնվազն մոտակա ժամանակների համար: Երկրորդ, տարածաշրջանում Արեւմուտքի խարսխի դեր կատարելու նկրտումների իրականացման՝ վրացական հնարավորությունների անկում: Եվ երրորդ, ընդհանուր առմամբ Արեւմուտքի հետ երեսն է գալիս հակամարտության լուրջ ազդակ:

Հատկանշական է, որ չնայած Ռուսաստանի կողմից Արխազիայի եւ Հարավային Օսիայի անկախության ճանաչումը չի կարող կարեւոր ձեռքբերում դիտարկվել, հատկապես ելնելով Ռուսաստանի այն ամուր դիրքորոշումից, թե այս քայլը ոչ մի կերպ չի կարող ենթադրել տարածաշրջանի մյուս «սառեցված» հակամարտության՝ հայաբնակ Լեռնային

Ղարաբաղի անկլավի համանման ճանաչում, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևը վերջերս «բարեկամության համաձայնություն» է ստորագրել Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ղեկավարների հետ, որով պաշտոնական հիմքերի վրա է դրվել ռազմական, դիվանագիտական եւ տնտեսական համագործակցությունը եւ բառիս բուն իմաստով նոր ռուսական հենակայան է ստեղծվել Վրաստանում:

Ռուսաստանը կարողացավ վերահաստատել նաեւ Հարավային Կովկասին հատուկ էներգետիկ անպաշտպանվածության կարծիքը՝ ի ցույց դնելով տարածաշրջանի խողովակաշարերի եւ նավահանգիստների խոցելիությունը եւ նոր կասկածներ հարուցելով Վրաստանի՝ որպես հիմնական տարանցիկ երկրի, վստահելիության շուրջ: Հետաքրքիր է, որ այս դասը նաեւ լուրջ անհանգստությունների պատճառ հանդիսացավ ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի համար: Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա էներգետիկ շղթայի առումով թուրքերին եւ ադրբեջանցիներին զայրացրեց այն, որ, ըստ իրենց, Վրաստանի կոպիտ սխալն էր իրենց որպես թույլ եւ խոցելի ներկայացնելու պատճառը:

Էներգետիկ անապահովության գործոնը կրկին հարցեր հարուցեց ԱՄՆ-ի երկարաժամկետ տարածաշրջանային էներգետիկ ռազմավարության կենսունակության վերաբերյալ, որի համաձայն՝ ԱՄՆ-ը ռուսական խողովակաշարերի ցանցը շրջանցող ուղիներ էր փնտրում՝ միեւնոյն ժամանակ մեկուսացնելով եւ բացառելով Իրանին: Իրականում, ճգնաժամի ժամանակ Վրաստանով անցնող խողովակաշարերի փակման հետեւանքները հաղթահարելու նպատակով Ադրբեջանը դիմեց իր նավթը Իրան արտահանելուն՝ օգտագործելով, այսպես կոչված, «սվափ» համաձայնագրերը, որոնց համաձայն՝ Իրանը նույն չափով նավթ արտահանեց Պարսից ծոցի իր հզորությունների միջոցով:

### *ԱՄՆ-ի հեռանկարները*

Մոսկովյան գազաթափողովում Ռուսաստանի նախաձեռնությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը կարեւոր զարգացում էր, որի հետեւանքները շատ ավելի լայն էին, քան պարզապես Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման գործընթացի ամենավերջին փուլ լինելը: Վրաստանում օգոստոսյան հակամարտությունից ի վեր Մոսկովյան գազաթափողովը Ռուսաստանի առաջին նախաձեռնությունն էր, որը ոչ միայն տարածաշրջանում Մոսկվայի կրկին ամրապնդված դիրքի ցուցադրումն էր, այլեւ կապված էր Ռուսաստանի առավել հեռահար ռազմավարության հետ, որով նա ձգտում է իրեն հարմարեցնել Թուրքիայի՝ որպես տարածաշրջանային ուժ, թուլացած դիրքերը վերահաստատելու նոր ձգտումը:

Այս համատեքստում, Ռուսաստանը նաեւ ջանասիրաբար փորձում է Արեւմուտքին կրկին համոզել, որ չնայած Վրաստանի պարագայում

լարվածության եւ Ռուսաստանի կողմից անջատողական Արխագիայի եւ Հարավային Օսիայի շրջանների ճանաչմանը, Ռուսաստանը կարող է «օգտակար» գործընկեր հանդիսանալ Լեռնային Ղարաբաղում՝ շրջան, որը հաստատուն կերպով մնում է «սառած հակամարտության» կարգավիճակում:

Սակայն Ռուսաստանի դիվանագիտական օրակարգում ավելի քան շատ բան է նախատեսված, ինչպես երեսաց երկրի պաշտպանության նախարարի վերջերս Հայաստան կատարած գաղտնի այցելությունից: Այս այցելության ժամանակ, որը նախորդեց Ռուսաստանի նախագահի այցին, Մոսկվան բացահայտեց իր առավել հանդուգն առաջարկը, այն է՝ ռուսական խաղաղապահներին տեղակայել Լեռնային Ղարաբաղում: Քայլ, որը ոչ միայն կամրապնդի ռուսական լծակները, այլ նաեւ նախատեսում է Ռուսաստանի հետագա մուտքը Հարավային Կովկաս՝ որպես գլխավոր դերակատար:

Սակայն, չնայած ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններում առկա լարվածությանը, Մոսկվան եւ Վաշինգտոնը հակված են ԵԱՀԿ Մինսկի խմբին թողնել որպես հակամարտության միջնորդական գործընթացի հիմնական եւ ամենակարեւոր մեխանիզմ: Իրականում եւ Ռուսաստանը, եւ ԱՄՆ-ը չեն ցանկանում Ղարաբաղյան հակամարտության հարցում իրենց համագործակցությունը դադարեցնել, քանի որ Մոսկվայի համար «ստատուս քվոն» նախընտրելի է եւ ամրապնդում է Ռուսաստանի դիրքերը, մինչդեռ Վաշինգտոնի համար գործընթացը կարելով է Ղարաբաղի դեմ պատերազմը վերսկսելու Ադրբեջանի ցանկացած գայթակղությունը կանխարգելելու առումով:

Եվ չնայած հոկտեմբերի սկզբներին նախագահ Սարգսյանի եւ արտգործնախարար Էդուարդ Նալբանդյանի հետ հանդիպման համար Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի Երեւան ժամանելուց հետո «Ռոսիյսկայա գազետան» հոկտեմբերի 7-ի համարում նշեց, որ երեք համանախագահները հակամարտության կարգավորման «բավական իրական հնարավորություն են» տեսնում, ենթադրելով, որ կարելի է համաձայնության հասնել դեռեւս չլուծված «երկու կամ երեք» հարցերի շուրջ, այնուամենայնիվ, Ադրբեջանը դեռեւս մնում է ցանկացած խաղաղ համաձայնության հիմնական խոչընդոտ: Ադրբեջանն իրեն տարածաշրջանի ապագա ռազմական ուժ է համարում, որն իրականություն կդառնա մոտավորապես 8-10 տարի անց: Բաքուն զգում է, որ ներկայումս լավագույն տարբերակը խաղաղության գործընթացը հետաձգելն է, մինչեւ առավել ուժեղ դիրքերում կլինի:

Ադրբեջանի դիրքորոշումը հաստատեց նախագահ Իլհամ Ալիևը, որը հոխորտաց, որ իր երկիրը երբեք չի համակերպվի Լեռնային Ղարաբաղի կորստի հետ, սակայն երկրորդ անգամ նախագահական պաշտոնում ընտրվելուց եւ երդում տալուց կարճ ժամանակ անց դադարեցրեց շրջանը ուժով հետ գրավելու սպառնալիքները: Լրատվա-

կան գործակալությունները ներկայացնում են, որ Բաքվում իր երդմնակալության արարողության ժամանակ նա ասել է. «Ղարաբաղը երբեք անկախ չի լինի»: «Ադրբեջանը երբեք չի ճանաչի այն: Ոչ հինգ, ոչ տասը, ոչ քսան տարի անց: Երբեք»: Սակայն Ալիևն ասել է. «Մենք դեռ հետաքրքրված ենք բանակցությունները շարունակելու մեջ, եւ մեր հույսերը դեռ չեն մարել» եւ սպառնացել է, որ Հայաստանը եւ Ղարաբաղը «իրականում պետք է զիջումների գնան: Իսկ իրականությունն այն է, որ այսօր դժվար է, եւ կասեի՝ անհնար է մրցել Ադրբեջանի հետ»:

Հոկտեմբերի 17-ին Երեւան կատարած այցի ժամանակ ԱՄՆ պետքարտուղարի օգնական Դենիել Ֆրիդն ասաց, որ մոտակա շաբաթների ընթացքում հակամարտության լուծման գործընթացում «հնարավոր է» առաջխաղացում՝ նշելով, որ «Վրաստանի պատերազմն այս տարածաշրջանում բոլորին հիշեցրեց, թե ինչ արհավիրք է պատերազմը», սակայն ավելացրեց, որ «հնարավոր չի նշանակում անխուսափելի, եւ որ երկու կողմերն էլ պետք է դժվար որոշումներ ընդունեն: Եթե այս հակամարտությունը հեշտ լուծում ունենար, արդեն լուծված կլիներ»:

Սեպտեմբերի 17-ին Երեւանում իր մեկնաբանությունների ժամանակ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասյեն ասաց, որ քանի որ Թուրքիան ԵԱՀԿ Մինսկի խմբի 12 անդամներից մեկն է, «Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված նրա ջանքերը բանակցությունների ձեւաչափում որեւէ փոփոխություն չեն ենթադրում»: Նա ասաց, որ Թուրքիան «միշտ կառուցողական մոտեցում է ցուցաբերել երեք համանախագահների գործողություններին աջակցելիս» եւ որ «բանակցություններին օժանդակելու նպատակով արված ցանկացած առաջարկություն, հատկապես Թուրքիայի կողմից, ցանկալի է եւ ողջունելի»: Սակայն առանց Հայաստանի հետ փակ սահմանը բացելու թուրքական կողմի ցանկության, Ղարաբաղյան հակամարտության մեջ Թուրքիայի ցանկացած դերակատարում անօգուտ կլինի եւ նույնիսկ կարող է հետ գցել խաղաղասիրական բանակցային գործընթացը:

### *Հիմնական միտումների ամփոփումը*

Վրացական ճգնաժամի ազդեցությունը նաեւ կարագացնի տարածաշրջանում արդեն իսկ ընթացող որոշ միտումներ: Դրանցից մեկը, որը վերաբերում էր Ռուսաստան-Ադրբեջան կապերի բարելավմանը, ակնհայտ դարձավ 2008թ. հուլիսին, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի Բաքու կատարած այցելության ժամանակ, որը նշանավորվեց Ադրբեջանից զգալի ծավալով բնական գազ գնելու Ռուսաստանի ծրագրի շուրջ բանակցությունների նոր առաջընթացով:

Մինչ ադրբեջանական էներգետիկան առաջնորդվում է ԱՄՆ-ի կողմից օժանդակվող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան եւ Բաքու-Թբիլիսի-Էրզ-

րում նավթագազատար խողովակաշարերի հիմնական բաղադրիչ լինելու առաջնային դերով, Ռուսաստանը ձգտում է զարգացնել ու առաջ քաշել Բաքու-Նովոռոսիյսկ խողովակաշարը՝ խաղալով Ադրբեջանի կողմից վրացական ուղիների վրա հիմնվելու կանխագազումների վրա եւ խոստանալով գնել Ադրբեջանի օրըստօրե ավելացող գազը, որի ծավալները վերջին երկու տարիների ընթացքում համարյա կրկնապատկվել են՝ հասնելով տարեկան 10,3 մլրդ խմ-ի:

Ի հավելումն, Ադրբեջանի համար նպաստավոր են նաեւ Ռուսաստանի հետ բարելավված հարաբերությունները, որոնք ավանդաբար հետեւում են Ադրբեջանի հիմնական հակառակորդ Հայաստանին աջակցող քաղաքականություններին եւ որոնք կարող են թուլացնել Հայաստանի դիրքերը Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտության խնդրում: Ադրբեջանը կշահի նաեւ հոկտեմբերին նշանակված նախագահական ընտրություններից, որոնց ժամանակ ավելի թույլ միջազգային հսկողություն կիրականացվի դրանց ցածր ժողովրդավարական մակարդակի նկատմամբ՝ ելնելով վրացական ձգնաժամի հետեւանքներից, որոնք միտված են մեղմելու ընտրական գործընթացների անցյալ չափորոշիչները:

Չնայած վրացական հակամարտության հետեւանքների ակնհայտ աշխարհաքաղաքական համատեքստին, դրանք քիչ կապ ունեն տարածաշրջանային ընդհանուր անվտանգության կամ նույնիսկ էներգետիկ գործոնների հետ: Ամենատարածված կարծիքն այն էր, որ տեղական քաղաքականությունները եւ տնտեսական հարցերը շատ ավելի կարեւոր են, քան աշխարհաքաղաքականությունը: Շատ առումներով վրացական հակամարտությունը տեղական քաղաքականություններում արտահայտվում է այնքան, որքան եւ տարածաշրջանային աշխարհաքաղաքականության մեջ: Ինչպես, օրինակ, Հարավային Օսիայի հարցի ռազմական լուծման վերաբերյալ Վրաստանի ղեկավարության որոշումը, Վրաստանի կողմից սեփական ռազմական հնարավորությունների գերազնահատումը, ինչպես նաեւ Արեւմուտքի կարողությունների ու ցանկության հարցի սխալ ընկալումը Վրաստանի ներքին որոշումներն էին:

### *Թուրք-հայկական հարաբերությունները*

Երկրորդ ուղղությունը, որի վրա ազդեց վրացական ձգնաժամը, թուրք-հայկական հարաբերությունների նոր գործընթացն էր, որը նշանավորվեց պատմության մեջ առաջին անգամ Թուրքիայի ղեկավարի՝ Հայաստան կատարած այցով: Շվեյցարիայում հայ եւ թուրք պաշտոնատար անձանց միջեւ ամիսներ տեսած գաղտնի բանակցություններից հետո, թվում էր, թե երկու կողմերն էլ կարծես պատրաստ էին դիվանագիտական հարաբերություններն ընդլայնելու եւ սահմանները բացելու:

Թուրքիայի երկարատև մերժումներից հետո պայմանականորեն բաց բանակցություններ սկսել: Սակայն վրացական հակամարտությունն էր, որ արագացրեց բանակցությունները՝ դրանց ավելացնելով առնվազն հայ-թուրքական փակ սահմանները բացելու շարժառիթը եւ երկու պետություններին էլ, որպես վրացականի երկրնտրանք, առաջարկելով հնարավորինս կարելու նոր տնտեսական եւ առևտրային ճանապարհի հնարավորություն: Վրացական գործոնից զատ, Հայաստանի եւ Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունները սկսելու գործընթացն արագացնելու մեկ այլ կարելու հանգամանք էր նաեւ Ռուսաստանի օժանդակությունը:

Մասնավորապես, ռուսական քաղաքականությունը երկար ժամանակ հակադրվում էր Հայաստանի եւ Թուրքիայի փոխհարաբերություններում որեւէ նշանակալի բարելավման հնարավորություններին, միեւնույն ժամանակ փակ սահմանը դիտարկվում էր որպես Հայաստանի նկատմամբ ռուսական ազդեցության պահպանման օգտակար միջոց: Այս փաստն ապացուցում է Հայաստանում Ռուսաստանի ռազմակայանների եւ Հայաստանի սահմաններում ռուս սահմանապահների շարունակվող ներկայությունը: Սակայն ռուսական քաղաքականությունն էականորեն փոխվեց օգոստոսյան ճգնաժամի զարթոնքի ժամանակ, երբ հայ-թուրքական հնարավոր հարաբերությունների հաստատումը միայն նպաստեց Վրաստանի առավել ամբողջական մեկուսացման, մարզինալացման եւ շրջափակման՝ Ռուսաստանի քաղաքականությանը: Սակայն Ռուսաստանը կշարունակի օժանդակել այնքան ժամանակ, քանի դեռ հայ-թուրքական հարաբերությունների հետագա զարգացումները նրա հսկողության տակ կմնան:

Ինչեւէ, Ռուսաստանն այս հարցում նաեւ հավելյալ շահեր ունի, ինչպես, օրինակ, Ռուսաստանին պատկանող հայաստանյան էլեկտրացանցերի էլեկտրաէներգիան Արեւելյան Թուրքիային վաճառելը: Մոսկվան նաեւ դիվանագիտական օգուտ է հետապնդում, որը նրանք կխլեն ամերիկացիներից, քանի որ Հայաստանի նախագահը հրապարակավ Հայաստան հրավիրեց Թուրքիայի իր գործընկերոջը, երբ պաշտոնական այցով գտնվում էր Մոսկվայում, եւ այդ գործընթացն անմիջականորեն համաձայնեցված էր ռուսական պաշտոնյաների հետ:

Թուրքիայի համար, որը երբեք չի հաշտվել Հարավային Կովկասում եւ Միջին Ասիայում իր իշխանության եւ ազդեցության նվազման հետ, ինչը չի համապատասխանել նրա տեսլականին եւ ձգտումներին, վրացական հակամարտությունը նոր դիվանագիտական նախաձեռնություններ հուշեց: Այսպես կոչված՝ «Կովկասի կայունության եւ համագործակցության պլատֆորմը» նախաձեռնություն է, որը նպատակ ունի ստեղծել հակամարտությունների կանխարգելման, բազմակողմանի անվտանգության եւ տարածաշրջանային կայունության նոր համատեղ ձեռնարկում, որը հետապնդում է նաեւ Կասպիական ավազանից

Եվրոպա տանող էներգետիկ միջոցների արտահանման ներկայումս խոցելի ուղիների անվտանգությունն ապահովելու նպատակ:

Կայունության եւ անվտանգության մասին ընդհանուր սկզբունքները կրկնելուց բացի, որոնք, մասնավորապես, ոչ նոր են, ոչ էլ նորարարություն, էներգետիկ հրամայականը նախաձեռնության բանալի է հանդիսանում, քանի որ Վրաստանում տեղի ունեցած թշնամական գործողությունների վերջին բռնկումները նոր կասկածներ հարուցեցին ոչ միայն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան եւ Բաքու-Սուփսա խողովակաշարերի կենսունակության, այլ նաեւ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի եւ ԱՄՆ-ի ու ԵՄ-ի կողմից օժանդակվող «Նաբուկո» գազատարի նախագծի նկատմամբ: Վերջինս նախատեսում է, 2020թ. գործարկվելուց հետո, լրացուցիչ 31 մլրդ խմ բնական գազ մատակարարել Եվրոպա:

### *ԱՄՆ նոր կառավարության ներգրավվածությունը*

Սենատոր Բարաք Օբամայի Ամերիկայի նոր նախագահ ընտրվելու հետ կապված՝ ակնկալիքներ կային, որ նա պաշտոնապես կճանաչի Հայոց ցեղասպանությունը: Սակայն իրականում պաշտոնական ճանաչումը քիչ հավանական է երկու հիմնական պատճառով:

**Առաջին.** չնայած նախագահական ընտրարշավի ողջ ընթացքում Օբաման շարունակաբար արտահայտվում էր Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մտադրության մասին, սակայն ակնհայտ էր, որ թեկնածուի կարգավիճակում արած նրա հայտարարությունները չեն համապատասխանելու նրա պաշտոնական քաղաքականությանը, հենց որ Օբաման ստանձնի նախագահի պաշտոնը: Պաշտոնն ստանձնելուց հետո նախագահ Օբաման իսկապես խուսափեց Ցեղասպանությունը ճանաչելուց՝ որոշելով, որ ԱՄՆ ազգային անվտանգության շահերից բխող ԱՄՆ-Թուրքիա փոխհարաբերությունների բարելավման անհրաժեշտությունն առավել կարեւոր է ԱՄՆ արտաքին քաղաքականության համար:

**Երկրորդ.** նախագահ ընտրված, բայց դեռեւս նախագահական պաշտոնը չստանձնած Օբաման չճանաչեց Հայոց ցեղասպանությունն այն պատճառով, որ նրա վարելիք արտաքին քաղաքականության համար առաջնային է ԱՄՆ-ի հիմնական դաշնակիցների՝ ներառյալ Թուրքիայի հետ հարաբերություններում վստահության վերականգնումը եւ փոխհարաբերությունների ամրապնդումը: Բացի դրանից, Օբամայի կառավարությունը գիտակցում է, որ Իրաքին վերաբերող ցանկացած ծրագիր կամ քաղաքականություն կենթադրի, որ ԱՄՆ-ը ավելի, քան երբեւէ մոտ փոխհարաբերությունների կարիք է ունենալու Թուրքիայի հետ: Այսպիսով, չնայած Օբամայի նախագահ ընտրվելը ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ կտրուկ փոփոխությունների կհանգեցնի, ինչը ենթադրում է ԱՄՆ արտաքին քաղաքականության բոլոր բնագա-

վառների լայնածավալ վերանայում, սակայն հավանական չէ, որ այս փոփոխությունները վերաբերեն Հայոց ցեղասպանությանը:

Նման զարգացումը Հայաստանի համար անպայման չէ, որ վատ կամ վնասակար լինի, քանի որ Օբամայի կառավարությունն ուղղակի կարող է հարցը փոխանցել ԱՄՆ Կոնգրես, եւ նույնիսկ կարող է օգնել օժանդակելով Հայոց ցեղասպանությունը Կոնգրեսի կողմից ճանաչելուն:

Ավելին, Օբամայի` Հարավային Կովկասին վերաբերող քաղաքականությունը պետք է նաեւ հաշվի առնի Ռուսաստանի իշխանության եւ ազդեցության վերջերս տեղի ունեցած վերահաստատման փաստը` միտում, որը միայն ամրապնդվեց Վրաստանի օգոստոսյան հակամարտության հետեւանքով: Իսկ առավել նեղ հեռանկարի առումով կարող ենք նաեւ տեսնել Հայաստանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության ձեւափոխություն, որն ավելի շատ հիմնված է ներքին քաղաքական եւ տնտեսական հարցերի, քան առավել լայն աշխարհաքաղաքական համատեքստի վրա: Մասնավորապես` Օբամայի կառավարությունը հավանաբար Հայաստանին վերաբերող նոր քաղաքականություն կընդունի, որը նոր մարտահրավեր կառաջադրի Հայաստանի առավել հարձակողական տրամադրված ռազմական պատրաստվածություն ունեցող ղեկավարությանը, որը նույնպես լրջորեն կաշկանդված է իրական ժողովրդավարական բարեփոխումներ ձեռնարկելու եւ իրավունքի գերակայություն հաստատելու լեգիտիմության պակասով:

Ընտրությունների ավարտին զուգընթաց ԱՄՆ-ի համար նոր հրամայական է դարձել այն, որ ԱՄՆ-ը այլեւս չի կարող լռել կամ երկյուղել Հայաստանի կամ նույնիսկ Ադրբեջանի նման երկրների ժողովրդավարության անընդունելի պակասից, հատկապես այն պատճառով, որ այս երկրներում շարունակական կայունություն տանող իսկական բանալին ընկած է նրանց ղեկավարներին իրենց սեփական ժողովրդի առջեւ ավելի շատ հաշվետու պահելու եւ միջազգային չափորոշիչներին ու նորմերին համապատասխանելու հիմքում: Ժողովրդավարական փոփոխությունների պահանջը եւ Հայաստանի «իշխանության գոռոզամտության» դեմ պայքարելու հրամայականը վաղուց արդեն հասունացել են:

## *Հայաստանի ազգային անվտանգության դիպլոմատիայի եւ խորհուրդներ*

### **Դիպլոմատ 1. հայ-թուրքական դիվանագիտական առաջընթաց**

Հայաստանի ազգային անվտանգության քննարկվող դիպլոմատիայի առաջինը Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների նոր

գործընթացի մարտահրավերն է: Թուրքիայի նախագահի պատմական այցը Հայաստան նշանավորվեց Հայաստան-Թուրքիա հարաբերություններում կարևոր շրջադարձային կետով: Ակնհայտ է, որ Թուրքիայի նախագահ Գյուլի՝ որպես ընդհանրապես թուրքական պետության ղեկավարի, առաջին այցը Հայաստան կարևոր քայլ էր հայկական դիվանագիտության եւ արտաքին քաղաքականության համար: Սակայն այցելության սկզբից եւեթ հարց էր մնում, թե ինչո՞ւ:

Այցի ժամանակը եւ հայ-թուրքական հարաբերություններում անպասելի ձեռքբերումը բխում է երկու կարևոր գործոններից: Առաջին. արտացոլում է այն փաստը, որ ներկայումս Թուրքիան պայքարում է իր ամենախոր եւ քայքայիչ փոփոխության՝ իր ազգային նույնականության համադրույթի հիմնավոր վերանայման դեմ, որն առաջ է եկել ներքին բարեփոխումների եւ արտաքին մարտահրավերների համակցության հետեւանքով: Իսկ բոլորովին վերջերս տեղի է ունեցել հավասարապես նշանակալի ռազմավարական վերակողմնորոշում, որը վերաբերում է առավել լայն միջազգային համատեքստում Թուրքիայի տարածաշրջանային դերին եւ նրա ապագա դիրքին:

Հայ-թուրքական հարաբերություններում ժամանակային առումով երկրորդ կարևոր գործոնն արմատավորված է տարածաշրջանային լանդշաֆտի նոր փոփոխությունների մեջ: Մասնավորապես՝ Շվեյցարիայում հայ եւ թուրք պաշտոնատար անձանց միջեւ մի քանի ամիս տեւած զգուշավոր դիվանագիտական հարաբերությունների եւ գաղտնի բանակցությունների սկզբում Գյուլի այցը Հայաստան հանդես եկավ որպես Թուրքիայի առավել ընդարձակ դիվանագիտական նախաձեռնության անբաժանելի մաս, որը տարածաշրջանում առավել մեծ կայունության էր ձգտում: Այս համատեքստում վրաստանյան վերջին հակամարտությունը, որը ոչ միայն մատնանշեց Հարավային Կովկասում իրական անվտանգության եւ կայունության անհրաժեշտությունը, այլ նաեւ հաստատեց տարածաշրջանում թուրքական քաղաքականության սահմանները, ընդամենը Թուրքիայի այս նախաձեռնությունն արագացնելու խթան հանդիսացավ:

Սակայն բանակցություններն արագացնող հիմնական պատճառը վրացական հակամարտությունն էր՝ գումարած առնվազն հայ-թուրքական փակ սահմանները բացելու շարժառիթը եւ երկու պետություններին, որպես վրացականի երկընտրանք, հնարավորինս կարևոր նոր տնտեսական եւ առևտրային ճանապարհի հնարավորության առաջարկը: Վրացական գործոնից զատ, Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերություններ սկսելու գործընթացն արագացնելու մեկ այլ կարևոր հանգամանք էր նաեւ Ռուսաստանի օժանդակությունը:

Մասնավորապես՝ ռուսական քաղաքականությունը երկար ժամանակ հակադրվում էր Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերություն-

ներում նշանակալի բարելավման հնարավորություններին, միեւնոյն ժամանակ փակ սահմանը դիտարկվում էր որպես Հայաստանի նկատմամբ ռուսական ազդեցության պահպանման շահեկան միջոց: Այս փաստի ապացույց են Ռուսաստանի ռազմակայանների ներկայությունը Հայաստանում, ինչպես նաեւ Հայաստանի սահմաններում ռուս սահմանապահների պարեկությունը, Հայաստանի տնտեսության մեջ Ռուսաստանի տնտեսական գերակշիռ դերը: Սակայն ռուսական քաղաքականությունն էականորեն փոխվեց օգոստոսյան ճգնաժամի ժամանակ, երբ հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր հաստատումը միայն նպաստեց Վրաստանն առավել ամբողջականորեն մեկուսացնելու, մարգինալացնելու եւ շրջափակելու՝ Ռուսաստանի քաղաքականությանը: Սակայն Ռուսաստանը կշարունակի օժանդակել այնքան ժամանակ, քանի դեռ հայ-թուրքական հարաբերությունների հետագա զարգացումներն իր հսկողության տակ կմնան:

Ռուսաստանը նաեւ լրացուցիչ օգուտներ ունի այս հարցում, ինչպես, օրինակ, իրեն պատկանող հայաստանյան էլեկտրացանցերի արտադրանքն Արեւելյան Թուրքիային վաճառելու հնարավորությունը: Մոսկվայի համար առկա է նաեւ դիվանագիտական շահը, որը նրանք կխլեն ամերիկացիներից, քանի որ Հայաստանի նախագահը հրապարակավ Հայաստան հրավիրեց Թուրքիայի իր գործընկերոջը, երբ պաշտոնական այցով գտնվում էր Մոսկվայում, եւ դա անմիջականորեն համաձայնեցված էր ռուսական պաշտոնյաների հետ: Թուրքիայի համար, որը երբեք չի հաշտվել Հարավային Կովկասում եւ Միջին Ասիայում իր իշխանության եւ ազդեցության նվազման հետ, ինչը չի համապատասխանել նրա տեսլականին եւ ձգտումներին, վրացական հակամարտությունը նոր դիվանագիտական նախաձեռնություններ հուշեց: Այսպես կոչված՝ «Կովկասի կայունության եւ համագործակցության պլատֆորմը» նպատակ ունի ստեղծել հակամարտությունների կանխարգելման, բազմակողմանի անվտանգության եւ տարածաշրջանային կայունության նոր համատեղ ձեռնարկում, որը նաեւ էներգետիկ միջոցների արտահանման ուղիների անվտանգությունն ապահովելու նպատակ է հետապնդում:

Սակայն մինչ Թուրքիայի այս նախաձեռնությունը Հայաստանի հետ հարաբերություններում նոր նվաճում է պարունակում, որը ներառում է սահմանի բացում եւ նոր հարաբերությունների հաստատման փորձ, այն նաեւ ներգրավվածության առավել լայն նպատակներ է հետապնդում, որոնցում Թուրքիան տարածաշրջանի առաջատարի դերում է: Ելնելով այս հեռանկարից՝ Թուրքիան այսօր Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտությունը դիտարկում է որպես տարածաշրջանային կայունության հիմնական գործոն: Սակայն Ղարաբաղի հարցում Թուրքիայի ռազմավարական տեսակետում չափազանց կարեւոր տարբերություն կա: Մասնավորապես՝ Թուրքիան արդեն չի ձգտում

պարզապես Ադրբեջանին օժանդակել Հայաստանի նկատմամբ ճնշում գործադրելով:

Իրականում Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների նոր գործընթացը, որը ձգվում է գաղտնի բանակցություններից մինչև Թուրքիայի նախագահի բարձր մակարդակի այցելությունը Երևան, փաստորեն արտացոլում է թուրքական քաղաքականության մեջ տեղի ունեցած նշանակալի փոփոխությունը, որը տարբերվում է Ադրբեջանի նկատմամբ նրա ավանդական սերտ օժանդակությունից: Սա բավական պարզորոշ երեսաց Հայաստանին Թուրքիայի ընդառաջ շարժվելուն եւ առավել բաց շփումներ նախաձեռնելուն Ադրբեջանի ղեկավարների ակնհայտ բացասական հակազդեցությունից, քանի որ ներկայումս Ադրբեջանի ղեկավարությունը լրջորեն անհանգստացած եւ վրդովված է: Ադրբեջանական ղեկավարությունը մտահոգ է, որ Հայաստանի հետ Թուրքիայի բնականոն հարաբերությունների եւ փակ սահմանների բացման հնարավորությունը կթուլացնի իրենց դիրքերը Լեռնային Ղարաբաղի հարցում:

Սակայն առավել հետաքրքրական է այն փաստը, որ Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների նոր գործընթացը թուլացնում է նաեւ հենց իր՝ Թուրքիայի դիրքերը Ղարաբաղյան հարցում: Օրինակ, կարելի է վիճել, որ Հայաստանի հետ հարաբերություններ կառուցելու Թուրքիայի քայլը կարող է նրան առավել ուժեղ լծակներ տրամադրել Ղարաբաղի հարցում, սակայն իրականում այդ քայլն արդեն իսկ լրջորեն թուլացրել եւ քայքայել է նրա հարաբերություններն Ադրբեջանի հետ:

### *Հայաստանի մասնակցություն. հեյտ ի՞նչ*

Չնայած նախորդ նախաձեռնությունների սակավությանը, հարաբերությունների նույնիսկ ամենատարրական եւ սկզբնական ձեւերից ակնկալվող հնարավոր օգուտներն ակնհայտ են յուրաքանչյուր երկրի համար: Սակայն կարող ենք հարցնել՝ «հետո ի՞նչ»: Թուրքիայի համար Հայաստանի հետ փակ սահմանների բացումը նոր ռազմավարական հնարավորություն կընձեռի երկրի աղքատ արեւելյան շրջաններում տնտեսական գործունեությունը խթանելու համար, ինչը կարող է էական դեր խաղալ արդեն իսկ անհանգիստ քրդաբնակ արեւելյան շրջանների տնտեսական կայունացման համար՝ դրանով իսկ բավարարելով ազգային անվտանգության կարեւորագույն հրամայականը՝ տնտեսական հնարավորություններով քրդական ահաբեկչության եւ անջատվողականության հիմնական պատճառներին հակադրվելու հնարավորությունը:

Թուրքիայի հետ բաց սահմանը եւս Հայաստանին ոչ միայն իր տարածաշրջանային մեկուսացումը եւ մարգինալացումը հաղթահարելու ճանապարհ կառաջարկի, այլ նաեւ դեպի առավել մեծ շուկաներ տա-

նող կամուրջ կտրամադրի, որոնք կենսական են տնտեսական աճի ու զարգացման համար: Ի հավելումն, հայ-թուրքական սահմանի բացման հետեւանքով հնարավոր առեւտրային եւ տնտեսական գործունեության աճը կնպաստի երկու երկրների միջեւ հետագա առեւտրային կապերի խորացմանը, որն իր հերթին կտանի դեպի առավել պաշտոնական համագործակցության հաստատում մաքսային եւ սահմանային անվտանգության հիմնական ոլորտներում: Իսկ փոխադարձ առեւտրային կապերի եւ միջսահմանային համագործակցության այսպիսի խորացմանը, անկասկած, կհետեւի դիվանագիտական հարաբերությունների հաստատումը:

Այսպիսով՝ հայ-թուրքական փակ սահմանի բացումը ոչ միայն կարող է բերել առեւտրային կապերի եւ տնտեսական հարաբերությունների խթանման էական հաջողություն, այլ նաեւ նպաստել հակամարտությունների հակվածություն ունեցող Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանում առավել մեծ կայունության եւ անվտանգության խթանմանը: Օգոստոսից ի վեր, չնայած Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ակնհայտ լարվածությանը, որն առավել սրվեց եւ ակնհայտ դարձավ վրաստանյան ձգնաժամի ժամանակ, Վաշինգտոնը եւ Մոսկվան ոչ միայն կողմնակից էին ԵԱՀԿ Մինսկի խմբում համատեղ աշխատելուն, այլ նաեւ համատեղ քայլեր ձեռնարկեցին, որպեսզի կանխեն Ղարաբաղյան «սառեցված» հակամարտության նոր «բորբոքումը» եւ «թեժացումը», քանի որ երկուսն էլ հավասարապես անհանգստացած են Ադրբեյջանի կողմից Ղարաբաղի դեմ թշնամական գործողությունների վերսկսումից եւ նոր պատերազմի սպառնալիքից:

Մինսկի խումբը որեւէ այլ ակնհայտ կենսունակ երկրներում չունի: Սակայն խաղաղարար գործընթացին պակասող կարեւորագույն գործոններից մեկն այն է, որ Ղարաբաղը բանակցային սեղանի շուրջ տեղ չունի: Խաղաղարար գործընթացի հաջողության իրական բանալին Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ, իհարկե, Թուրքիայի ներգրավվածությունը չէ: Խաղաղարար գործընթացի առաջընթացի իրական բանալին դրանում Ղարաբաղի ժողովրդավարական ճանապարհով ընտրված դեկավարության՝ որպես հավասար կողմի, ներգրավումն է, ինչպես նաեւ Ստեփանակերտին բանակցությունների սեղանի շուրջ հավասար տեղ հատկացնելը: Ղարաբաղը չափազանց երկար ժամանակ զրկված է Երեւանի եւ Բաքվի հետ հավասար կարգավիճակից: Այժմ արդեն Վրաստանում քաղած դասերից ելնելով, ժամանակն է Ղարաբաղը մասնակից դարձնել խաղաղարար գործընթացին:

***Նոր քաղաքական համայնություն. ապագայի հեռանկարներ***

Առավել լայն համատեքստում թուրք-հայկական հարաբերություններում գրանցված հաջողություններից բխող հնարավորությունները

հին խնդրի նոր սկիզբ են առաջարկում, ինչը բնորոշվում է արտաքին քաղաքականության հաջողությունից բխող խոստումով եւ լեզվատիրության պակասից բխող ճնշումով, ինչպես նաեւ ներկայումս առկա կարգին նետվող նոր մարտահրավերով, որը, ըստ էության, մարտահրավերներ է նետում Հայաստանի ներքին «շահագրգիռ շրջաններին»: Հայկական քաղաքականության համար, որը ներկայումս աչքի է ընկնում կլանների վրա հիմնված էլիտայով եւ բնորոշվում «իշխանության գոռոզամտությամբ», նոր հնարավորություն է ընձեռվում այս անցումային կետն օգտագործել փակ քաղաքական եւ տնտեսական համակարգերի էլ ավելի ամբողջական բարեփոխման համար: Երկար ժամանակ փակ սահմանի բացման հնարավորությունը մասնավորապես սպառնալիք կհանդիսանա փակ տնտեսական համակարգի համար: Սպառնալիքը կզգացվի նաեւ երկրի նոր, կլանների վրա հիմնված եւ վերջին տարիներին զգալի քաղաքական իշխանություն ձեռք բերած օլիգարխիկ էլիտայի շրջանում:

Թեեւ ոչ այնքան ակնհայտորեն տեսանելի, ինչպես իշխող էլիտան է, այսպես կոչված, «օլիգարխների» նոր եւ հարուստ քաղաքական ընտրանուն հաջողվել է էական քաղաքական իշխանություն ապահովել: Նրանց պատգամավոր ընտրվելու փաստը ցույց տվեց կորպորատիվ պետական, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ քրեական շահերի համընկնումը: Ի հավելումն՝ պետական քաղաքականության ձեւակերպման եւ պետական քաղաքականության ուղղվածության զգալի լծակների ուղղությամբ ձեռք բերած լուրջ ազդեցության, այս նոր օլիգարխիկ էլիտան եկել է մարմնավորելու գործող իշխանության եւ կառավարելու պատասխանատվության միջեւ առկա տարբերությունը:

Նախկին խորհրդային տնտեսական այլ համակարգերում օլիգարխների այս նոր դասակարգը ձգտում էր տնտեսական իշխանության հասնելու նպատակով նախեստաջ օգտագործել սեփականաշնորհման գործընթացը, սակայն հետագայում նաեւ քաղաքական իշխանության հասնելու ախորժակ էր ցուցաբերել: Հենց այդ քաղաքական դերն է, որ ըստ էության սպառնում է ժողովրդավարական եւ քաղաքական բարեփոխումների գործընթացին: Հայաստանում օլիգարխները կարողացան իրենց քաղաքական իշխանության ոչ պաշտոնական ցանցերն ընդլայնել ոչ պաշտոնական կարտելների եւ ապրանքային կիսամոնոպոլիաների միջոցով, եւ այսօր հսկայական տնտեսական եւ քաղաքական իշխանություն են ձեռք բերել:

Օլիգարխների իշխանությունը հաղթահարելու բանալին օլիգարխիկ համակարգը կազմող տնտեսական մոնոպոլիաներին եւ կարտելներին առավել մեծ մրցակցություն առաջարկելն է, ինչպես նաեւ օրենքի վրա հիմնված հարկադրանքը, կանոնակարգումը եւ հսկողությունը: Այսպիսի կարտելները եւ մոնոպոլիաները հիմնականում ծաղկում են «փակ» տնտեսական համակարգերում՝ շրջանցելով թափանցիկությո-

յունը եւ մրցակցությունը, որոնք գերակշռում են առավել բաց շուկաներում: Սակայն, ի հավելումն, առավել ընդարձակ հակատրեստային օրենսդրության եւ մոնոպոլիաների սահմանափակման կամ դրանք դադարեցնելու առավել մեծ լիազորություններով օժտված պետական կարգավորող մարմինների, ծանոթությամբ պաշտոնի նշանակելու «խնամիական» հարաբերությունները հաղթահարելու համար անհրաժեշտ է օրենքի գերակայություն, ինչպես նաեւ քաղաքական կամքի դրսևորում:

Այսպիսով՝ Հայաստանի քաղաքական համակարգի փակ բնույթը, որն օգտագործվում է նոր, երկակի, կլանների վրա հիմնված եւ օլիգարխիկ էլիտայի կողմից, լրջորեն քայքայել է պետության կարեւորագույն արժանիքը՝ լեգիտիմությունը: Սա նաեւ զուգորդվել է «լավ կառավարումից» («good governance») հաստատուն շեղումով, ինչպես նաեւ պետական քաղաքականության ու ազգային անվտանգության ձեւակերպման մեջ անձնական շահը պետական շահից վեր դասելու միտումով: Կարելի է միայն հուսալ, որ նոր հնարավորությունների ու մարտահրավերների համակցությունը կարող է «փոփոխության գործոն» ծառայել՝ ստիպելով բացել եւ վերափոխել լրիվ սահմանափակող ու կոշտ քաղաքական-տնտեսական համակարգերը, որոնք այնքան են արմատացել, որ մերժում են լեգիտիմությունը, քաղաքական կամքը եւ արդյունավետությունը, ինչն այնքան անհրաժեշտ է երկրի առաջընթացի համար:

## **Դիպաշար 2. հայ-իրանական հարաբերություններ**

Ելնելով նոր վտանգներից եւ մարտահրավերներից՝ Հայաստանի ազգային անվտանգությանն օժանդակելու համար քննարկվող երկրորդ դիպաշարը բխում է Իրանի հետ Հայաստանի հարաբերություններից: Նախկին Խորհրդային Միության երկրների շարքում Հայաստանը հայտնի է որպես գլխավորապես դժվար մարտահրավերների շարքի դիմակայող փոքրիկ պետություն: Դիմակայելով հարեւանների՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից հարկադրված շրջափակմանը, որը քայքայված առևտրային եւ էներգետիկ կապերից բխող հարաբերական մեկուսացման պատճառ է դարձել, ցամաքային երկիր հանդիսացող եւ մեկուսացված Հայաստանն ապավինել է ադապտացման ռազմավարությանը:

Հարմարվելու ռազմավարությունն առավել ակներեւ էր այն ժամանակ, երբ բավական առաջադեմ արտաքին քաղաքականություն էր հետապնդում, որը հայտնի է որպես «հարմարվողականություն» (կոմպլեմենտարություն), ինչն արդյունավետորեն հավասարակշռում էր նրա, ըստ էության, դեպի Արեւմուտք դիրքորոշումը Ռուսաստանի հետ ուժեղ միության նախապատվության հետ: Առայժմ այս քաղաքականության

երկակի բնույթը հանգեցրել է օգուտների սահմանափակության, Հայաստանն առավել զգալի օգուտ է քաղում մրցակցող ռազմավարական շահերի նկատմամբ համանման հավասարակշռող քաղաքականություն վարելուց: Մասնավորապես՝ առավել երկարաժամկետ այս ռազմավարական շահն արմատավորված է Հայաստանի՝ դեպի Արեւմուտք ուղղվածության եւ նրա Եվրատլանտյան անվտանգության համակարգում ինտեգրվելու ու Իրանի Իսլամական Հանրապետության հետ հարաբերությունները դինամիկ զարգացնելու ուղղությամբ հավասարակշռությունը պահպանելու եզակի կարողության մեջ:

### *Մեկուսացման հրամայականը*

Չնայած Հայաստանի եւ նրա հարավային հարեւան Պարսկաստանի միջեւ երկարատեւ սերտ կապերին, Հայաստանի եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ փոխադարձ հարաբերությունները բնականոն չեն ընթացել: Ավելի ճիշտ, հայ-իրանական հարաբերությունները պայմանավորված են երկուսի համար էլ բնորոշ հանգամանքով՝ մեկուսացվածության պատճառով համագործակցելու հրամայականով: Ավելին՝ 1990-ականներից, Լեռնային Ղարաբաղի հակամարտության դժվարին փուլի ընթացքում, Իրանը հաստատուն պրագմատիկ ուղղություն է որդեգրել, որի շնորհիվ հակամարտությունը զերծ մնաց կրոնականի վերածվելուց՝ միեւնույն ժամանակ ձգտելով նպաստել բանակցությունների միջոցով հակամարտության լուծմանը:

Առավել լայն համատեքստում Իրանը Հայաստանին բնական դաշնակիցն է՝ երկուսի համար ընդհանուր մեկուսացվածության, շրջափակման եւ արտաքին ճնշման մարտահրավերներից դրդված: Սակայն Հայաստանի նկատմամբ Իրանի նկատառումներում նույնպես առկա է հնարավորությունից օգտվելու տարրը: Այս մոտեցումը ներառում է Հայաստանի դերը որպես իրանցիների համար հանգստյան օրերին այցելությունների որոշակի վայր լինելու փաստը, ինչպես նաեւ այն, որ այսօր ավելի քան 1200 իրանցի ուսանողներ սովորում են Հայաստանի համալսարաններում եւ այլ կրթական հաստատություններում:

